


ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՓՈԽԱՆ ԽՄԲԱԳՐԱԿԱՆԻ	
* * * — Մենք Արցախի կողքին ենք	269
ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԿՈՆԴԱԿՆԵՐ	271
ԹԱՐԳՄԱՆԱԿԱՆ	
Ն.Ս.Օ.Տ.Տ. ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ — Աստուծոյ դառնալ (Turning to God).....	274
ՄԵԿՆԱԲԱՆԱԿԱՆ	
ՎԱԴԻՆԱԿ Ծ. ՎՐԴ. ՄԵԼՈՅԵԱՆ — Մեկնութիւն Մատթեոս Աւետարանի (3.1-4)	281
ՊԱՏՄԱ-ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐԱԿԱՆ	
ՍՈՒՐԵՆ ԱՐՔ. ԳԱԹԱՐՈՅԵԱՆ — 90-ամեայ հունձքը Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Դպրեվանքին	286
ՊԱՐՈՅՐ ՎՐԴ. ՇԵՐՆԷՉԵԱՆ — Ս. Պարսամայ ճգնաւորին մասունքը Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսարանի գանձարանին մէջ	291
ՓԻԼԻՍՈՓԱՅԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ	
ԴՈԿՏ. ՍԱՐԳԻՍ Ա. ԲԷՅԵԱՇԵԱՆ — Կանտի բարոյագիտութեան սորարարութիւնը	298
ԳՐԱԽՕՍԱԿԱՆ	
ԴԱԽԹ ԳԻՐԶԻՆԵԱՆ — Սարգիս Բեհեաեանի «Բարոյագիտութիւն – Փիլիսոփայական Ակնարկ» (Արեւմտահայերէնի ուսանելի գիրքը)	307
ՅՕԴՈՒԱԾ	
ՎԱԴԻՆԱԿ Ծ. ՎՐԴ. ՄԵԼՈՅԵԱՆ — Մայիսեան մեր յաղթանակներուն ճակատագրական կարեւորութիւնը	314
ՊԱՇՏՕՆԱԿԱՆՔ	322
ՀՈՎՈՒԱՊԵՏԱԿԱՆ ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆՆԵՐ	
* * * — Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոս Քուէյթի եւ Շրջակայից Հայոց թեմէն ներս.....	325
* * * — Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոս Գանատայի Հայոց թեմէն ներս	341
ՀԱՅ ԴԱՏ	374

ՏՕՆԱԿԱՆ	375
ՄԻՋ-ԵԿԵՂԵՑԱԿԱՆ	379
ԳԻՏԱԺՈՂՈՎ	380
ԴՊՐԵՎԱՆՔ	388
ՁԵՌՆԱԴՐՈՒԹԻՒՆՆԵՐ	400
ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ	405
ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ	407
Հ.Ե.Հ.Ո.Մ.	412
ԼՈՒՐԵՐ ԿԱԹՈՂԻԿՈՍԱՐԱՆԷՆ	420
ՊԱՏԱՐԱԳ ԵՒ ԶԱՐՈՉ Ս. ԱԹՈՌՈՅՍ ՄԻԱԲԱՆՆԵՐՈՒ ԿՈՂՄԷ	425



ՊԱՇՏՏՈՒՆԿԱԿԱՆ ԸՄՍԱԳԻՐ
ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԵԱՆ ՏՎՅՈՑ
ՄԵԾԻ ՏԵՆ ԿԻԿԿԻՈՅ

ՂԲ. ՏԱՐԻ 2023

ՄԱՅԻՍ - ՅՈՒՆԻՍ

ԹԻՒ 5-6

ՓՈԽԱՆ ԽՄԲԱԳՐԱԿԱՆԻ

ՄԵՆՔ ԱՐՑԱԽԻ ԿՈՂՔԻՆ ԵՆՔ*

Մայիս 28-ը սովորական տօն մը չէ. ան հոմանիշ է Հայաստանի անկախութեան եւ այդ անկախութիւնը պահպանելու, հզօրացնելու եւ ամրապնդելու մեր ազգին հաւաքական վճռակամութեան ու յանձնառութեան: Ազատօրէն ապրելու ու մտածելու եւ ինքզինք կառավարելու, այլ խօսքով՝ ժողովուրդի մը ինքնորոշման իրաւունքը աստուածատուր իրաւունք է եւ մարդկային իրաւանց ամենէն էական սկզբունքներէն մէկը:

Մայիս 28-ի նշումը այսօր յիշեցում մըն է ու միաժամանակ կոչ իւրաքանչիւր հայուն՝ ամբօրէն կառչած մնալու Հայաստանի ու Արցախի գերիշխանութեան ու անվտանգութեան ամուր պահպանման: Յատկապէս Արցախը այսօր կը գտնուի ահաւոր վտանգներու սեմին: Վտանգուած է Արցախի ինքնորոշման իրաւունքը. վտանգուած է Արցախի մեր ժողովուրդին ապահովութիւնը: Կ'ուզեմ բարձրագոյն աստիճանի կարեւորութեամբ շեշտել, թէ շրջանէն ներս ստեղծուած աշխարհա-քաղա-

* Սոյն գրութիւնը խտացումն է Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Վեհափառ Հայրապետի ուղղած պատգամին, Հայաստանի Հանրապետութեան Անկախութեան 105-րդ ամեակին առթիւ, Կիրակի, 28 Մայիս 2023-ին, Վեհարանի դահլիճէն ներս:

քական ոչ-նպաստաւոր պայմաններուն մէջ, մենք իրաւունք չունինք Արցախը լքելու, պարզապէս ըսելով՝

- թէ Հայաստանը պատրաստ է ճանչնալու Ազրայէճանի հողային ամբողջականութիւնը:

- թէ Արցախը եւ Պաքուն թող իրարու հետ բանակցին:

- թէ Հայաստան պետական շահեր միայն կը հետապնդէ:

- թէ շրջանէն ներս համապարփակ խաղաղութեան հաստատումը գիշումներ կ'ենթադրէ:

- թէ Հայաստանի տնտեսական շահերը կը պահանջեն, որ ան խաղաղ գոյակցութիւն հաստատէ իր անմիջական դրացիներուն, եւ մասնաւորաբար Թուրքիոյ եւ Ազրայէճանի հետ:


Կ'անդրադառնա՞նք արդեօք, որ ազգային շահերուն եւ պետական շահերուն միջեւ բաժանման գիծեր հաստատելը խոտոր կը համեմատի մեր պատմութեան, մեր ազգին ինքնահասկացողութեան, մեր գերագոյն եւ ընդհանրական իտեալներու իրագործման: Ազգի ու պետութեան շահերը հարկ է դիտել մէկ ամբողջութեան ծիրէն ներս, որպէս զիրար հզօրացնող ու պայմանաւորող տարածքները մեր հաւաքական պայքարին:

Կ'անդրադառնա՞նք արդեօք, որ հետզհետէ մեր ազգի կեանքէն ներս՝ Հայաստանի, Արցախի թէ Սփիւռքի մէջ, նոր ճեղքեր կը յառաջանան. փոխանակ համախմբուելու, իրարմէ կը հեռանանք, փոխանակ ի խնդիր Հայաստանի ու Արցախի հզօրացման փոխադարձ հասկացողութեան եզրեր որոնելու, զիրար կ'ամբաստանենք:

Անկախութեան համար պայքարը նուիրական է: Անկախութեան ի խնդիր պայքարող Արցախի մեր ժողովուրդին հետ ենք: Սա պահուն, Անթիլիասի Մայրավանքէն կոչ կ'ուղղենք աշխարհացրիւ մեր ժողովուրդի զաւակներուն Արցախի կողքին ըլլալու եւ Արցախի ժողովուրդին կ'ըսենք՝ վերանորոգ հաւատքով ու ամուր կամքով շարունակեցէ՛ք ձեր պայքարը յանուն անկախութեան ու արդարութեան:

Ա՛յս է պատգամը Մայիս 28-ին:

ԿՈՆԴԱԿՆԵՐ



ՎԵՅԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ ՅԱՐԴ ՀՐԱՊԱՐԱԿԱԾ ԿՈՆԴԱԿՆԵՐՈՒՆ ԵՒ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԳԻՐԵՐՈՒՆ ՀԱՄԱՔԱԾՈՆ*

ԳԻՐ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԳՆԱՀԱՏԱՆՔԻ

(Ռմէլլի Սուրբ Յարութիւն եկեղեցւոյ հիմնադրութեան 80-ամեակին առիթով)

Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Անթիլիասի Մայրավանքէն հայրապետական օրհնութեամբ ու քրիստոնէական ջերմ սիրով կողջունենք ձեզ:

Լիբանանի Հայոց թեմի Առաջնորդ Գերաշնորհ Տ. Շահէ Եպս. Փանոսեանի Մեզի ուղղած նամակէն ուրախութեամբ իմացանք, որ Խալիլ Պէտէվիի Ռըմէլլ թաղի Սուրբ Յարութիւն եկեղեցին այս տարի պիտի նշէ իր հիմնադրութեան 80-ամեակը:

Արդարեւ, ութսուն տարիներ շարունակ, Սուրբ Յարութիւն եկեղեցւոյ զանգը դօղանջեց՝ լոյս ու յոյս տարածելով մեր ժողովուրդի կեանքէն ներս: Ութսուն տարիներ շարունակ, սիրոյ ու հաւատքի առաքելութեան լծուեցաւ Սուրբ Յարութիւն եկեղեցին: Ութսուն տարիներ շարունակ, ձեր պապերու խոր հաւատքով ու ամբողջական նուիրումով կառուցուած այս եկեղեցին դարձաւ շրջանի մեր ժողովուրդի հաւաքական կեանքին առանցքը, անոր հաւատքի տոկունութեան խարիսխը, ազգային դիմագիծի պահպանման կռուանը: Այսպէ՛ս եղած է մեր եկեղեցին պատմութեան ընթացքին եւ այսպէս պէտք է

* Յունուար 2010-ի թիւով սկսանք հրատարակել Ս. Աթոռոյս Վեհափառ Հայրապետ՝ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոսի Կոնդակներու հաւաքածոն, սկսեալ 1995 թուականէն: Սոյն շարքը շարունակութիւնն է ընդհանուր հաւաքածոյին: *ԽՄԸ*:

մնայ միշտ, իր հոգեւոր ու ազգային առաքելութեամբ ու ժողովրդանուէր ծառայութեամբ:

Այսօր, երբ կը նշէք 80-ամեակը Սուրբ Յարութիւն եկեղեցւոյ, պէտք է յիշէք բոլոր անոնք, որոնք այս եկեղեցւոյ հիմնադրութեան ու առաքելութեան մէջ կարեւոր դեր ունեցան. ըլլան անոնք հոգեւորական թէ աշխարհական: 80-ամեակը նաեւ պէտք է դառնայ շրջանի ժողովուրդին համար յիշեցում մը՝ թէ առանց մեր եկեղեցւոյ ծառայական ներկայութեան, մեր կեանքը պիտի աղքատանայ, հոգեւոր թէ ազգային իմաստով: Հետեւաբար, մեր գործօն մասնակցութեամբ պէտք է Սուրբ Յարութիւն եկեղեցին պահենք պայծառ իր կեանքով ու կենսունակ՝ իր ժողովրդանուէր ծառայութեամբ:

Կաղօթենք առ Բարձրեալն Աստուած, որ Խալիլ Պետկիի Ռըմէյլ թաղին մէջ ութսուն տարիներ շարունակ ծառայած Սուրբ Յարութիւն եկեղեցին, իր հաւատացեալ ժողովուրդով, միշտ պահէ ու պահպանէ իր հոգեւոր ու ազգային առաքելութեան ճամբուն վրայ:

**ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ
ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ**

*Տուաւ Կոնդակս այս
Ի Կաթողիկոսարանիս Մեծի Տանն Կիլիկիոյ
Որ յԱնթիլիաս, Լիբանան
Ի 21-ն Փետրուարի 2014 թուին Քրիստոսի, եւ
Ի թուին Հայոց ՌՆԿԳ.
Ընդ համարաւ Շ/ՅԽԲ.*



ԳԻՐ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԳՆԱՀԱՏԱՆՔԻ

(Օրդ. Գեղանոյշ Աւշարեանին,
«Ս. Մեսրոպ Մաշտոց»ի շքանշան ստանալուն առթիւ)

Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Անթիլիասի Մայրավանքէն հոգեկան խոր գոհունակութեամբ կողջունենք Ձեզ, որպէս անխոնջ մշակ Յունաստանի մեր սիրելի գաղութի կրթական անդաստանէն ներս:

Արդարեւ, ուրախութեամբ կարդացինք Յունաստանի Հայոց թեմի Առաջնորդ Գերաշնորհ Տ. Խորէն Եպս. Տողրամաճեանի վկայութիւնը երկար տարիներէ ի վեր կրթական-դաստիարակչական մարզէն, եւ յատկապէս Ազգ. «Զա-

ւարեան» վարժարանէն ներս Ձեր ունեցած նուիրեալ ծառայութեան մասին: Վստահաբար Յունաստանի գաղութը, եւ յատկապէս ձեր դաստիարակած սերունդները շատ բան կը պարտին ձեզի, եւ բնականաբար՝ ձեր անձին նկատմամբ կը տածեն երախտագիտութեան զգացում, զոր կը նկատենք «արժան եւ իրաւ»:

Ընդառաջելով Առաջնորդ Սրբազանին եւ Ազգ. Վարչութեան խնդրանքին, եւ ի գնահատութիւն ձեր կրթանուէր ծառայութիւններուն, այսու Հայրապետական Կոնդակաւ ձեզի կը շնորհենք Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան

Ս. ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՅ ՇՔԱՆՇԱՆ

Կաղօթենք առ Ամենակալն Աստուած, որ վարձահատոյց ըլլայ ձեզի ձեր ազգանուէր գործունէութեան համար, պարգեւելով ձեզի քաջառողջ եւ երկար կեանք՝ Իր հովանիին ներքեւ:

**ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ
ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ**

*Տուաւ Կոնդակա ի Կաթողիկոսարանիս
Ի դուռն Մայր Տաճարիս Սրբոյն Գրիգորի Լուսաւորչին
Որ յԱնթիլիաս, Լիբանան
Ի 21-ն Փետրուարի 2014 թուին Քրիստոսի, եւ
Ի թուին Հայոց ՌՆԿԳ.
Ընդ համարաւ Շ/ՅԽԲ.*



ԹԱՐԳՄԱՆԱԿԱՆ

**ԱՍՏՈՒԾՈՅ ԴԱՌՆԱԼ
(Turning to God)**

ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ

Շաբաթ, 23 Մայիս 2020

Ոմանք կը հաւատան, որ բախումները պէտք է կասեցնել ու խաղաղութիւնը պարտադրել զէնքի ուժով. ուրիշներ կը հաւատան, որ կռիւները դիւանագիտութեամբ պէտք է լուծուին: Շատեր կը կարծեն, որ աշխարհի խնդիրներուն մեծ մասը կրնանք լուծել գիտութեան եւ ճարտարագիտութեան խոհեմ գործածութեամբ, իսկ ուրիշներ կը հաւատան, որ հաւատքն է լուծումը աշխարհի խնդիրներուն: Ես կը հաւատամ, որ յիշեալ միջոցներու ներդաշնակ, համապարփակ ու ճիշդ օգտագործումով կարելի է լուծել աշխարհը դիմագրաւող խնդիրներն ու տագնապները:

Մարդկութեան միութիւնը ապահովելու համար հարկ է ունենալ հասարակաց օրակարգ մը, որ բազմակառավարման սկզբունքներու վրայ հաստատուած հասարակաց համերաշխութիւն մը կ'ենթադրէ: Համաշխարհայնացումը աշխարհը անքակտելի կերպով իրարմէ կախեալ ըլլալու վիճակին դատապարտեց: Աշխարհի որեւէ մասին վրայ պատահած դէպք մը անմիջապէս իր անդրադարձը կ'ունենայ համայն մարդկութեան վրայ: Համաճարակի դաժան իրողութիւնը յառաջ բերաւ համաշխարհային համերաշխութեան հրամայական մը եւ նոր մթնոլորտ մը: Թէեւ համաճարակին դէմ դնելու ճիգին մէջ **համաշխարհային միասնութեան** աշխատանքը համեմատաբար դանդաղ սկիզբ առաւ, սակայն վիրուսին արագ տարածման հետ ան աշխուժացաւ: Մարդկութեան ինքնավստահութիւնը եւ ինքնաբաւ ըլլալու համարումը, շուտով տեղի տուաւ, ո՛չ թէ վիրուսին մահացու ըլլալուն այլ նաեւ միջազգային համայնքին մօտ իմաստուն ղեկավարման եւ կազմակերպութեան պակասին պատճառով: Արդ, անգամ մը եւս շեշտուեցաւ ազգերու միջեւ համագործակցութեան առաջնահերթութիւնը՝ հասարակաց հարցերը լուծելու համար:

Միացեալ Ազգերու Կազմակերպութեան գործունէութեան ընդարձակման եւ ուժեղացման հետ, մասնագիտական ընկերութիւններ կազմուեցան, ինչպէս նաեւ՝ ոչ-քաղաքական համաշխարհային կառոյցներ, դաշնութիւններ եւ

յատուկ հարցերու եւ շրջաններու կառույցներ: Վերջին տասնամեակներուն Միացեալ Ազգերու Կազմակերպութեան կողմէ որոշում կայացնելու եւ զայն գործադրելու եղանակին մասին յաճախակի քննադատութիւններ եղան, ինչպէս նաեւ՝ անոր օրակարգին եւ իրեն կապուած կազմակերպութիւններու աշխատանքներուն մասին: Համաճարակի հարցին գծով, քննադատութիւնը առաւելաբար կեդրոնացաւ Համաշխարհային Առողջապահական Կազմակերպութեան վրայ: Ես չեմ ուզեր քննադատել այս կազմակերպութիւններուն աշխատանքային ծրագիրն ու անոնց այժմէականութիւնը: Սակայն կը հաւատամ, որ ռեւէ կազմակերպութիւն որ համաշխարհային գործունէութիւն կը ծաւալէ, կոչուած է վերատեսութեան ենթարկելու իր գործունէութիւնը ինքնաքննական մօտեցումով եւ վերակազմակերպման, վերաորակաւորման շարունակական գործընթացով՝ ազդու կերպով դիմակալելու աշխարհի մէջ տեղի ունեցող արագ եւ արմատական փոփոխութիւններուն մարտահրաւէրները:

Մենք կոչուած ենք միասին ապրելու այս փոքր աշխարհին մէջ, փոխադարձ յարգանքի եւ ճանաչումի մթնոլորտի մէջ: Մենք միասին պէտք է ապրինք Աստուծոյ վախով եւ ոչ թէ իրարմէ վախնալով: Հասարակաց կեանք մը կ'ենթադրէ փոխադարձ պատասխանատուութիւն եւ հաշուետուութիւն: Ներկայ պայմաններուն մէջ հարց կու տամ, թէ արդեօք համաճարակը պիտի խախտէ՞ թէ աւելի զօրացնէ բազմակառավարումը: Արդեօք նոր դաշնութիւններ պիտի յառաջանան, թէ աշխարհի ընկերութիւնը յաւելեալ բաժանումներու պիտի ենթարկուի: Կը յուսամ, որ մարդկութիւնը պիտի անդրադառնայ, որ քորոնա վիրուսը ո՛չ միայն տնտեսութեան, ժողովրդավարութեան, մարդկային արժանապատուութեան եւ ազատութեան սպառնացող վտանգ մըն է, այլ նոյնինքն մարդու կեանքին եւ զինք շրջապատող բնութեան:

Յանուն ապահով աշխարհի մը եւ բարգաւաճ ապագայի մը համայն մարդկութեան համար, մարդիկ պէտք է միասին գործեն, որպէս համահաւասար գործակիցներ: Համաշխարհային ընկերութիւնը պէտք է կառուցուի արդար իրաւունքներու, կարելիութիւններու, պատասխանատուութիւններու եւ արժէքներու վրայ: Ի՞նչպէս կրնան ազգերը որպէս մէկ ընտանիք, ամբողջական գործակցութեամբ ազդու միջոցներ գտնել դիմակալելու համար համաշխարհային տագնապները: Պիտի ուզէի նկատողութիւններս ամփոփել հետեւեալ կէտերուն մէջ.–

– Ստեղծել Համաշխարհային ղեկավարման կառույց մը՝ հիմնուած մարդկային իրաւանց եւ սկզբունքներու վրայ, ազգերու միջեւ գործակցութիւնը սերտացնելու յանձնառութեամբ: Սա հրատապ անհրաժեշտութիւն է:

– Համաշխարհային գործակցութեան մէջ, պէտք է ապահովուին ու պաշտպանուին իւրաքանչիւր ազգի անկախութիւնը, շահերը ու անվտանգութիւնը:

Փոխադարձ վստահությունն ու յարգանքը պէտք է կազմեն միասնության եւ համերաշխության հիմքը:

- Համաշխարհային միասնության մէջ, առաջնահերթությունները, մեթոտներն ու համագործակցության եղանակները պէտք է յստակօրէն արտայայտուին: Գործակցիլ կ'ենթադրէ նաեւ իրարու հետ բաժնել տեղեկություններ եւ մարդուժ:

- Թափանցիկութիւնը, հաշուետուութիւնն ու պատասխանատուութեան նկատմամբ յանձնառութիւնը անհրաժեշտ են եւ ուղղեգիծ՝ առողջ գործակցության:

- Համաշխարհային կառավարութիւնը պէտք է գործադրէ թեթեւ ուժ եւ ոչ՝ զինուորական, եւ միայն իբրեւ վերջին լուծում՝ յանգի տնտեսական պատժամիջոցներ սահմանելու որոշումին, առանց գրկելու տուեալ երկրի բնակչութիւնը ապրուստի հիմնական միջոցներէն: Գիտեմ, որ այս որոշումներու մեծ մասը Միացեալ Ազգերու Կազմակերպության գործունէության սահմաններուն մէջ կ'իջնան. գիտեմ նաեւ, որ ան միայն կը յանձնարարէ, սակայն չի պարտադրեր: Առաջարկս է, որ ՄԱԿ-ը բարեկարգուի եւ իրաւասութիւնը ունենայ կտրուկ որոշումներ կայացնելու:

- Հոգեւոր առաջնորդներուն դերը առանցքային է արթնութիւն յառաջացնելու, համագործակցության կամուրջներ հաստատելու եւ յիշեցնելու դեկավարներուն՝ բարոյական արժէքներու հրամայականը, եւ՝ համաշխարհային վտանգներու նկատմամբ անմիջական քայլերու դիմելու կարիքը:

- Համաշխարհային միասնութիւն եւ համագործակցութիւն խթանելու գործին մէջ, կարելի չէ թերագնահատել քաղաքացիական հասարակության կենսական դերակատարութիւնը՝ մասնաւորաբար կարիքաւոր խաւին հիմնական պահանջներուն հասնելու, մարտահրաւէր ուղղելով բարեսիրական եւ շտապ օգնության կազմակերպություններուն:

Մարդը ինք է պատմութիւն կերտողը, ան պէտք չէ զոհը դառնայ իր սեփական սխալներուն: Ան իր ապագան ամուր հիմերու վրայ կերտելու թէ՛ կարողութիւնը եւ թէ ստեղծագործական միտքը ունի: Ա.Մ.Ն.ի նախագահ՝ Օպամայի կարգախօսը՝ «Այո՛, մենք կրնանք», տակաւին թարմ է շատերու մտքին մէջ: Այո՛ պարոն նախագահ, մենք կրնանք՝ երբ միացա՛ծ ենք. այո՛, կրնանք, երբ անձնական շահեր չենք հետապնդեր, այլ՝ ուրիշներու եւ համաշխարհային ընկերության շահերը: Կը յիշեմ Ափրիկեան ասացուածք մը, որ Եկեղեցիներու Համաշխարհային Խորհուրդի նախկին քարտուղար՝ Սէմ Քօպիան յաճախ կը կրկնէր՝ «Եթէ կ'ուզես արագ հասնիլ՝ մինակ քալէ, բայց եթէ կ'ուզես հեռուն երթալ՝ ուրիշներուն հետ քալէ»: Ես կը հաւատամ որ հասարակաց տեսլականով միասին քալելը մարդկային ընկերութիւնը պիտի առաջնորդէ դէպի բարգաւաճում եւ աշխարհը՝ դէպի ապահովութիւն:

Կիրակի, 24 Մայիս 2020

Այս առաւօտ հետեւեալ յայտարարութիւնը շարունակ կրկնուեցաւ միջազգային հեռատեսիլի մը կայանէն. «Մասնագէտներու խորհուրդին հետեւեցէք՝ դադրեցնելու համար վիրուսի տարածումը»: Ես պիտի աւելցնէի. «Մի հետեւիք քաղաքական ղեկավարներու ապատեղեկութիւններուն ու սխալ ուղղութեան»:

Գիտնականներու եւ քաղաքական անձնաւորութիւններու կողմէ տրուած հակասական թելադրութիւնները յաւելեալ շփոթ եւ վախ ստեղծած են: Մինչ մասնագէտ բժիշկներ օրն ի բուն կը պայքարին փոխանցիկ հիւանդութեան մը դէմ եւ խստօրէն կը յանձնարարեն յարգել կանխարգելիչ միջոցառումները, անդին կարգ մը քաղաքական ղեկավարներ նուազ պահանջկոտ են սահմանափակումներուն գծով, որպէսզի իրենց երկիրներուն տնտեսութիւնը չտուժէ. մասնագէտ բժիշկներ ահազանգ կը հնչեցնեն նոր վարակումներու թիւի աճին դէմ, անդին քաղաքական ղեկավարներ անպատասխանատու վերաբերում կը ցուցաբերեն համաճարակին աղիտալի հետեւանքներուն նկատմամբ: Հոգեւոր պետեր նեցուկ կանգնեցան ժողովուրդին եւ հետեւեցան գիտնականներու խորհուրդներուն, մինչ շատ մը քաղաքագէտներ անտարբեր գտնուեցան եւ նոյնիսկ հակաճանաչեցին բժիշկներու տեսակէտներուն եւ թելադրութիւններուն, որպէսզի կայուն պահեն տնտեսութիւնը՝ մեկնած իրենց քաղաքական շահերէն:

Բնականաբար, համաճարակին դէմ պայքարը պէտք է գիտնականներու միջոցաւ ըլլայ եւ ոչ թէ քաղաքական ղեկավարներու: Գիտութիւնը յստակ տուեալներով ու փաստերով կը զբաղի. հետեւաբար գիտութեան յայտնաբերումները պէտք չէ քաղաքականացուին: Համաճարակի կամ որեւէ առողջապահական հարցի վերաբերող աշխատանքներու բնոյթն ու տարողութիւնը պէտք է ճշդուին մասնագէտներու կողմէ՝ նկատի ունենալով ժողովուրդին առողջութիւնը եւ ոչ թէ տնտեսական շահը: Զիրար հակասող այս մօտեցումները պատճառ դարձան որ համաճարակը յաղթահարելու հաւաքական քննարկում ու համակարգուած աշխատանք դառնայ դանդաղ, որուն հետեւանքով, համաձայն կարգ մը դիտորդներու, մեծ թիւով զոհեր արձանագրուեցան: Իմ դատողութեամբ, անկախ տնտեսութեան ունեցած կարեւորութենէն, առաջնահերթութիւն պէտք է տրուի հանրային առողջապահութեան:

Ահաւասիկ ուրիշ դաս մը, զոր պէտք է սորվինք համաճարակէն: Գիտութիւնը, ճարտարագիտութիւնը եւ նոյնիսկ կրօնը, որոշ ժամանակներու ընթացքին եւ որոշ պարագաներու ենթակայ դարձան տնտեսական եւ քաղաքական հաշիւներու: Նման հակասական եւ կասկածելի մօտեցումներ ու կիրառումներ, յիշեալ մարզերու մասնագէտներուն եւ քաղաքացիական հասարակութեան կառույցներուն կողմէ լուրջ ու իրապաշտ քննարկում կը պահանջ-

ջեն: Գիտնականներ եւ մասնագէտներ սոսկ խորհրդատուներ չեն. անոնք էական դեր պէտք է ունենան որոշումներու կայացման մէջ: Պատերազմի մէջ, քաղաքագէտներ պէտք է լսեն զինուորական պատասխանատուները, քաղաքական լարուածութեան ժամանակ՝ դիւանագէտները, տնտեսական տագնապներու ժամանակ՝ տնտեսագէտները, հանրային առողջապահական անակնկալ դէպքերու պարագային՝ բժիշկները, եւ բարոյական ընտրութիւն պահանջող կացութեանց մէջ՝ կրօնական առաջնորդները: Խորհրդակցութիւն, կարծիքներու փոխանակում եւ քննարկում կ'առաջնորդեն դէպի յաջողութիւն եւ ճիշդ որոշումներու կայացում: Որոշում կայացնելը համապարփակ գիտութիւն, անաշու գնահատում եւ հաւաքական պատասխանատուութիւն կը պահանջէ:

Երկուշաբթի, 25 Մայիս 2020

Կ'ապրինք ժամանակի մը մէջ, երբ ամէն ինչ **մարդակեդրոնութեան** տեսանկիւնէն կը դիտուի: Չափազանց ինքնավստահութիւնը մարդ էակը գոռոզ եւ եսակեդրոն դարձուցած է: Մարդկութիւնը սահմանաւորի զօրեղ ազդեցութեան տակ, կը կորսնցնէ անսահմանի զգացողութիւնը, եւ Աստուծոյ հաշուետուութիւնը՝ «հոս եւ հիմա»ի վրայ կեդրոնացումով: Իշխելու կարողութիւնը մեզի կու տայ ինքնավստահութեան զգացումը: Տնտեսութեան օգտագործումը՝ ի նպաստ մեր անձնական շահին, մեզի կու տայ բարգաւաճ ըլլալու զգացումը: Մենք ստեղծած ենք մեր «փոքր աստուած»ները՝ «դրամի աստուած»ը, «փառքի աստուած»ը, «հաճոյքի աստուած»ը, «զօրութեան աստուած»ը, եւլն: Այս «աստուած»ները իրենց զօրեղ ազդեցութիւնը ունին մեր անձերուն վրայ եւ կորոշեն մեր կեանքին նպատակը: Աշխարհայնացումը իր ծայրայեղութիւններով ու ընկերութեան կեանքին վրայ ունեցած իր տիրապետութեամբ, մարդկութիւնը մղեց անտեսելու Աստուծոյ ներկայութիւնը իր ստեղծագործութեան մէջ: Մարդիկ զօհր դարձան իրենց իսկ ստեղծած բարոյական, ընկերային եւ կենսոլորտային իմաստով ապականած միջավայրին: Արդարեւ, մարդակեդրոնութեան որեւէ կերպ կամ կիրառում, որ կ'անտեսէ կամ կ'արհամարհէ Գերագոյնին ներկայութիւնը, կը դառնայ շարիքի աղբիւր:

Մարդ էակը անկարող է ինքզինք հասկնալ առանց իր անձէն դուրս գտնուող շրջապատը տեսնելու: Մարդ էակը համապարփակ աշխարհ մըն է, ուր նիւթական, բանական եւ հոգեւոր աշխարհները անքակտելիօրէն միաձուլուած են, եւ ուր երկինքն ու երկիրը՝ յարատեւ կապի մէջ են: Կրօնը կը մերժէ բացարձակ մարդակեդրոնութիւն մը, որ կ'անտեսէ գերագոյնին ներկայութիւնը: Համաճարակը զօրեղ կերպով հարցականի տակ առաւ մարդակեդրոն գոյութեան կարելիութիւնները, եւ պարզեց անոնց սահմանափակ ըլլալը՝ ամենակարող Աստուծոյ գերագոյն ուժին դիմաց: Ան ահազանգեց՝ որ

մարդկութիւնը կարիք ունի ազատագրուելու մարդակեղրոնութեան ստրկացնող շղթաներէն, կոյր աշխարհիկութենէն, մարդակեղրոն մշակոյթներու եւ գաղափարախօսութեանց անմարդացնող ուղղութիւններէն, որոնք ամբողջովին կը լուսանցքայնացնեն անդրանցական տարածքի կենսական կարեւորութիւնը: Յիշենք Առակաց գիրքի բառերը. «Ամբողջ սրտովդ Տիրոջ վստահէ, եւ քու դատողութեանդ մի՛ ապաւինիր: Բոլոր գործերուդ մէջ Տիրոջ դիմէ, եւ ինք քայլերդ պիտի ուղղէ» (Առ 3.5-6):

Միաստուածեան կրօնները կը հաւատան, որ մարդ էակին կեանքը իր վաւերական իմաստը, ճշմարիտ կոչումն ու իսկական նպատակը կը գտնէ միայն Աստուծոյ մէջ: Քրիստոնէութեան ուսուցումներուն համաձայն, Աստուած ո՛չ միայն իր յայտնութեան ճամբով մեզի հետ եղած է պատմութեան ընթացքին, այլ մի՛շտ մեզի հետ է՝ մարդկութեան տառապանքին մէջ, արդարութեան եւ խաղաղութեան ի խնդիր մղուող պայքարին մէջ եւ բարի գործերուն մէջ: Աստուած միշտ մեզի հետ է, եթէ պատրաստ ենք խոնարհութեամբ եւ հնազանդութեամբ արձագանգելու Աստուծոյ սիրոյն, իբրեւ Քրիստոսի արիւնով որդեգրուած Աստուծոյ զաւակներ (Ա.Կր 6.19-20, Եփ 1.7): Եթէ մարդկութիւնը իր գոյութեան պատճառը ինքնիր մէջ փնտռէ, ապա ատիկա պիտի ըլլայ մարդկութեան վախճանը: Մարդկային կեանքին մէջ անդրանցականութեան հաստատումովը միայն կրնանք յաղթել մարդակեղրոնութեան ու անոր ապականող կառոյցներն ու գաղափարախօսութիւնները եւ անոնց կործանարար հետեւանքները:

Երեւշաբթի, 26 Մայիս 2020

Վիրուսները գոյութիւն ունին միլիառաւոր տարիներէ ի վեր: Շուրջ հարիւր տարիներու ընթացքին, գիտնականներ բազմաթիւ բացատրութիւններ տուին վիրուսներու մասին: Նախ ըսուեցաւ թէ վիրուսը թոյն մըն է, ապա՝ ապրող մարմին մը, աւելի ուշ՝ իբրեւ կենսաբանական քիմիական նիւթ, իսկ այսօր վիրուսները կը բացատրուին որպէս գոյութիւն, որոնք կրնան բազմանալ միայն այն ատեն, երբ ապրող բջիջի մը մէջ գտնուին, եւ իրենց գոյութիւնը կրնայ ծանր հետեւանքներ թողուլ գիրենք պարունակող մարմնին վրայ: Գիտնականներ համաձայն են, որ վիրուսները մեծ անդրադարձ ունին կեանքի ընթացքին մէջ (տե՛ս Luis P. Villarreal, “Are Viruses Alive?” in Scientific American, Օգոստոս 8, 2008) .

Ստեղծագործութիւնը ամբողջութիւնն է ապրող էակներու, որոնք սերտօրէն կապուած են իրարու՝ փոխադարձ յարաբերութեամբ: Աստուծոյ ստեղծագործութիւնը կանգ չէ առած. ան կը շարունակուի տարբեր ձեւերով: Այս շրջագիծին մէջ կարժէ կարդալ Theilhard de Chardin-ի «Եղափոխական Ստեղծագործութիւն» եւ Henri Bergson-ի «Ստեղծագործ Եղափոխութիւն» տեսու-

թիւնները: Bergson (1859-1941) ֆրանսացի փիլիսոփայ մըն էր, որ 1927-ին Գրականութեան Նոպելեան Մրցանակին արժանացաւ: Թէեւ, բազմաթիւ քրիստոնեայ աստուածաբաններու նման իմ վերապահութիւններս ունիմ Theilhard-ի եւ Bergson-ի կարգ մը տեսութիւններու նկատմամբ, սակայն կը հաւատամ որ Աստուծոյ ստեղծագործ գործունէութիւնը ներքին կազմաւորման եւ եղափոխութեան գործընթաց մը կը ներառնէ:

Հետեւեալ հարցումներու պատասխանները կը կարօտին վերլուծման ու քննարկման լուրջ աշխատանքի.– Արդեօք վիրուսները Աստուծոյ ստեղծագործութեան մաս կը կազմեն: Վիրուսները ապրող արարածներ են: Վիրուսներու յառաջացումը ստեղծագործութեան կազմաւորման եւ յեղաշրջական գործընթացի՞ն հետեւանք է, թէ՛ մարդուն կողմէ ստեղծագործութեան շարաշահումին: Արդեօ՞ք համաճարակը մարդուն եւ ոչ բանաւոր արարածներուն միջեւ բխումի հետեւանք է՞, բան մը որ կը պատահի այսօր ահազանգային կերպով: Քովիտ-19 համաճարակը տրամաբանական հարցումներ կը յարուցէ՞ արարչութեան եւ արարածներուն, արարչութեան եւ եղափոխութեան, բանականութեան եւ հաւատքի ու գիտութեան եւ կրօնի միջեւ եղած յարաբերութեանց մասին. հարցեր, որոնք լայն եւ խոր մասնագիտական քննարկումի կարիքը ունին:

Գիտութեան եւ ճարտարագիտութեան ոլորտէն ներս կատարուած հետազօտութիւններու մեծ մասը կեդրոնացած է առեւտրական եւ տնտեսական շահերու վրայ: Արդ, հրամայական անհրաժեշտութիւն է համապարփակ ուսումնասիրութիւն մը՝ վիրուսի գոյւորման ու ապրող էակներու կեանքին վրայ ունեցած ազդեցութեան վերաբերեալ: Անհրաժեշտ է, որ աւելի խոր հետազօտութիւն կատարուի այս մարզէն ներս եւ կ'առաջարկեմ որ համալսարաններ ու հետազօտական կեդրոններ այժմէական այս նիւթին շուրջ դասախօսութիւններ եւ գիտաժողովներ կազմակերպեն, մասնակցութեամբ մանրէաբաններու, վիրուսաբաններու, կենսաբաններու, աստուածաբաններու եւ բնապահպաններու:

Անգլերէնէ թարգմանեց՝
ՄԱԿԱՐ ԵՊՍ. ԱՇԳԱՐԵԱՆ

(Շար. 12)

ՄԵԿՆԱԲԱՆԱԿԱՆ**ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ՄԱՏԹԷՈՍ ԱԲԵՏԱՐԱՆԻ
(3.1-4)**

«Այդ օրերուն Յովհաննէս Մկրտիչ սկսաւ քարոզել Հրէաստանի անապատին մէջ» (Մա 3.1):

1) «Այդ օրերուն»: Այս բառերուն եւ նախորդ գլուխի վերջին համարին միջեւ (ուր կ'ըսուի թէ Յիսուս մանուկը Նազարէթի մէջ հաստատուեցաւ) 28 տարիներու ժամանակամիջոց մը կայ. եւ հետեւաբար, «այդ օրերուն» բառերով չ'ակնարկուիր Յիսուսի մանկութեան օրերուն, որովհետեւ Յիսուսի մանկութեան օրերուն՝ Յովհաննէս ինքն ալ մանուկ էր, այլ կ'ակնարկուի Աստուծոյ կողմէ ճշդուած ժամանակին: Յիսուս մանուկը մէկուկէս տարեկան էր երբ իր ծնողներուն հետ հաստատուեցաւ Նազարէթի մէջ. 28 տարիներ ետք՝ եղաւ քսանինըուկէս տարեկան, երբ Յովհաննէս 30 տարեկան էր եւ սկսած էր իր առաքելութեան՝ «այդ օրերուն»:

2) Յովհաննէս կոչուած էր խոստացուած Փրկիչին քարոզիչը ըլլալու, բայց բնաւ չքարոզեց իր պատանութեան ու երիտասարդութեան օրերուն, մինչեւ որ Աստուծոյ կողմէ որոշուած ժամանակը հասաւ: Հոսկէ կը սորվինք, թէ երբ Աստուած առաքելութեան մը կանչէ մեզ, պէտք է պատրաստ ըլլանք զայն կատարելու, բայց պէտք չէ սկսինք զայն կատարել մինչեւ որ Աստուծոյ ճշդուած ժամանակը հասնի:

3) Մինչեւ երեսուն տարեկան, Յովհաննէսի համար հոգեւոր պատրաստութեան տարիներ եղան. անկէ ե՛տք միայն առաքելութեան սկսաւ: Աստուծոյ այգիին մէջ ոեւէ գործի սկսելէ առաջ՝ Յովհաննէսի նման հոգեւոր պատրաստութեան համար ժամանակ պէտք է յատկացնենք: Տիրոջ այգիին մէջ աշխատանքի ձեռնարկելէ առաջ՝ պէտք է աղօթքի ճամբով տիրապետենք այդ աշխատանքին:

4) Հրէաստանի անապատը ուր Յովհաննէս սկսաւ քարոզել, կ'երկարէր Երուսաղէմի արեւելքէն մինչեւ Մեռեալ ծով: Ստեփանոս Սիւնեցիին «անապատ» ըսելով կը հասկնայ «Հրէաստանը, կամ ալ ամբողջ երկիրը, որ շեղուած էր աստուածապաշտութենէն», որուն բնակիչները հոգեպէս անապատացած էին, այլ խօսքով՝ մերկացած բոլոր առաքինութիւններէն:

«Ըսելով. "Ապաշխարեցէ՛ք, որովհետեւ երկինքի արքայութիւնը մօտեցած է"» (Մտ 3.2)¹:

Ըստ Մատթէոսի, Յովհաննէս Մկրտիչ եւ Յիսուս իրենց առաքելութիւնը այս կոչով սկսան: Ուշագրաւ է, որ անոնք չըսին թէ պէտք է ապաշխարել ՈՐՊՆՆԵՐԻ երկինքի արքայութիւնը մօտենայ, այլ՝ պէտք է ապաշխարել ՈՐՈՎՆԵՏԵՐԻ երկինքի արքայութիւնը մօտեցած է: Ուրեմն, մեր ապաշխարութեամբ երկինքի արքայութիւնը չէ որ կը մօտեցնենք մեզի, այլ՝ մենք է որ կը մօտենանք երկինքի արքայութեան: Այս իրողութիւնը գիտնալը կարեւոր է, որովհետեւ ատիկա ցոյց կու տայ, թէ Աստուած ի՛նքն է որ մեր փրկութեան նախաձեռնութիւնը, այսինքն՝ առաջին քայլը կատարեց ու կը կատարէ: Աստուած ի՛նք էր որ ինքզինք մեզի մօտեցուց, եւ ո՛չ թէ մենք՝ զինք մեզի մօտեցուցինք: Եթէ Աստուած իր արքայութեամբ չմօտենայ մեր սիրտերուն՝ մեր սիրտերը ո՛չ կրնան ապաշխարութեան արցունք հոսեցնել, եւ ոչ ալ կրնան մօտենալ իրեն եւ իր արքայութեան: Եթէ մարդը կարենայ իր ապաշխարութեամբ Աստուծոյ արքայութիւնը մօտեցնել իր անձին՝ կը նշանակէ թէ ի՛նքն է որ իր անձին փրկութեան առաջին քայլը կ'առնէ, մինչդեռ եթէ ըսենք, որ Աստուած ի՛նքն է որ իր արքայութեամբ կը մօտենայ մեզի, եւ իր այդ մօտեցումով՝ ապաշխարութիւնը մեզի համար կարելի կը դարձնէ, ընդունած կըլլանք որ Աստուած ինքն է մեր փրկութեան առաջին քայլը առնողը: Եւ մենք փառքը Աստուծոյ տուած կ'ըլլանք միայն ա՛յն ատեն, երբ ընդունինք որ մեր փրկութեան առաջին քայլը առնողը ինքն է, եւ ոչ թէ մենք: Աստուած իր արիւնը թափեց մեր փրկութեան համար, բայց այդ փրկութիւնը մեր սեփականութիւնը կը դառնայ միայն ա՛յն պարագային՝ երբ դառնանք իրեն: Այս առումով, մենք Աստուծոյ չենք դառնար որպէսզի փրկուինք, այլ կը դառնանք՝ որովհետեւ փրկուած ենք: Այս ճշմարտութիւնն է որ կը բացայայտէ Աստուած երբ կըսէ. «Քու յանցանքներդ՝ մէզի պէս ու քու մեղքերդ ամպի պէս շնչեցի: Ինձի՛ դարձիւ, քանզի քեզ փրկեցի» (Յս 44.22): Աստուած չ'ըսեր «Ինձի՛ դարձիւ, որպէսզի քեզ փրկեմ», այլ՝ «Ինձի՛ դարձիւ, քանզի քեզ փրկեցի»: Ուստի, Տիրոջ արեան հեղումով մենք փրկուեցանք, բայց այդ փրկութիւնը մերը չի դառնար, մինչեւ որ դառնանք Աստուծոյ: Տէրը փրկութեան պատմուճանը պատրաստեց ու նուիրեց մեզի, բայց պէտք է դառնալ իրեն եւ այդ պատմուճանը առնել իր ձեռքէն: Մենք չենք դառնար Տիրոջ՝ ՈՐՊՆՆԵՐԻ մեր փրկութեան պատմուճանը պատրաստէ, այլ կը դառնանք՝ ՈՐՈՎՆԵՏԵՐԻ արդէն իսկ պատրաստած է մեր փրկութեան պատմուճանը իր արիւնով:

¹ Տե՛ս նաեւ Մտ 4.17-ի բացատրութիւնը:

«Այս Յովհաննեսն էր այն անձը, որուն համար Եսայի մարգարէ խօսեալ էր, ըսելով. "Անապատին մէջ աղաղակողին ձայնը կ'ըսէ.– Տիրոջ նամբան պատրաստեցիք, հարթեցիք անոր շաւիղները"» (Մտ 3.3):

1) Եսայի մարգարէն խօսած է ո՛չ միայն Մեսիային մասին, այլեւ՝ անոր նախակարապետին մասին: Յովհաննէս միակ մարգարէն է, որուն մասին մարգարէութիւն կայ Հին Կտակարանին մէջ:

2) Հրէաստանի անապատը ուր Յովհաննէս քարոզելու սկսաւ, ամբողջութեամբ ամայի տարածութիւն մը չէր. քիչ թիւով մարդիկ կը բնակէին հոն: Ան իր քարոզութիւնը սակաւբնակ վայրերու մէջ կատարեց, եւ ոչ թէ մարդաշատ, որովհետեւ իր նպատակը՝ իր հետեւորդներուն թիւը աւելցնելը չէր, այլ՝ Մեսիային հաւատացողներուն թիւը: Այսօրուան քարոզիչները թող Յովհաննէսէն սորվին Տիրոջ հետեւորդներուն թիւը աւելցնել, եւ ո՛չ թէ իրենց հետեւորդներուն թիւը:

3) «Անապատին մէջ աղաղակողին ձայնը»: Այս բառերով մեզի ցոյց կը տրուի, թէ Հրեաներուն հոգիները անապատացած էին, այլ խօսքով՝ մերկացած ու դատարկուած բոլոր տեսակի առաքինութիւններէ, ա՛յնքան մերկացած ու դատարկուած, որ շատ քիչեր միայն ականջ տուին Յովհաննէսի աղաղակող ձայնին: Թէկուզ անապատացած ըլլան մեր հոգիները, այլ խօսքով՝ մերկացած բոլոր առաքինութիւններէն, անոնք սակայն կրնան լսել Տիրոջ ձայնը՝ այս աշխարհի անապատին մէջ աղաղակող քարոզիչներուն միջոցաւ:

4) «Տիրոջ նամբան պատրաստեցիք»: Տէրը մեզի գալու համար պէտք ունի ճամբայի. այդ ճամբան հաւատքի ճամբան է. եթէ չունինք անհրաժեշտ հաւատքը՝ Տէրը չի գար մեզի, եւ ո՛չ ալ մենք կրնանք Տիրոջ գալ: Յովհաննէս կոչումը ունէր հաւատքի այդ ճամբան բանալու գինք լսող Հրեաներուն սրտին մէջ, որպէսզի անոնք կարենային ընդունիլ Յիսուսը: Մենք կրնա՞նք Յովհաննէսի նման հաւատք ու հետաքրքրութիւն արթնցնել մարդոց սրտին մէջ, որպէսզի անոնք կարենան Յիսուսին գալ:

5) «Հարթեցիք անոր շաւիղները»: Անհաւատութիւնը խորտուբորտ ճամբայ մըն է, ուրկէ ո՛չ Տէրը մեզի կու գայ, եւ ոչ ալ մենք Տիրոջ կրնանք գալ: Այդ ճամբան հարթելը՝ անհաւատութենէն հրաժարիլ եւ հաւատքը ընդգրկել կը նշանակէ: Երբ Յովհաննէս ըսաւ՝ «հարթեցիք անոր շաւիղները», հրաւիրած եղաւ Հրեաները, որ հրաժարին իրենց անհաւատութենէն, եւ որդեգրեն հաւատքի շաւիղը, որպէսզի Մեսիան կարենայ այդ շաւիղին ճամբով իրենց գալ:

6) Անցեալին ոեւէ թագաւոր երբ այլ երկիր մը պիտի երթար, իրմէ առաջ եւ իր ճամբան պատրաստելու համար կը զրկէր յատուկ անձ մը, որ կը կոչուէր մոնետիկ, եւ որուն պարտականութիւնը կ'ըլլար ժողովուրդը պատրաստել թագաւորին գիմաւորութեան: Երբ Մատթէոս Հին Կտակարանէն վկայակոչու-

Թիւն կատարելով կը պարզէ թէ Յովհաննէս Մկրտիչը Քրիստոսի գալուստն ու յայտնութիւնը կանխող մունետիկը եղաւ, խորքին մէջ լռելեայն կերպով կ'ուզէ ցոյց տալ Քրիստոսի թագաւորական հանգամանքն ու պաշտօնը: Իւրաքանչիւր հաւատացեալ պէտք է ինքզինք Քրիստոսի մունետիկը համարէ, եւ աշխատի բոլորին յայտարարել Քրիստոսի թագաւոր ըլլալը:

«Յովհաննէս ուլտի մազէ շինուած հագուստ մը ունէր եւ մէջքին՝ կաշիէ գօտի: Իր կերակուրը մաւախ եւ վայրի մեղր էր» (Մտ 3.4):

1) Յովհաննէս Մկրտիչի ուլտի մազէ շինուած հագուստը կը խորհրդանշէր հոգեւոր կուրուցիւնը Օրէնքի ուսուցիչներուն ու Փարիսեցիներուն, որոնք կը կլէին ուլտը (Մտ 23.24): Մէջքին դրուած կաշիէ գօտին կը խորհրդանշէր այն ողբը՝ որով Յովհաննէս կ'ողբար Իսրայէլի մէջքի պտուղը եւ անոնց ամուլ հոգիներու մեռելութիւնը (Մտ 11.17): Մարախ ուտելով ուզեց բացայայտել Հրեաներուն, թէ ինչպէս իրենց հոգիի կերակուրը, մարախի նման, օդագնաց եւ շարժուն էր, եւ թէ ինչպէս իրենք վէմի վրայ հիմնուած չէին: Ընտանի մեղրի փոխարէն վայրի մեղր ուտելը կը խորհրդանշէր Հրեաներուն վայրագ ու ամբարիշտ ըլլալը (Ստեփանոս Սիւնեցի):

2) Յովհաննէս ուլտի մազէ շինուած հագուստ հագնելով մարդիկը հրաւիրեց Ադամի անմեղուութեան տարիներուն, երբ ան հագուստի կարիքը չունէր: Ան իր սգաւորի հագուստով մարդիկը կը հրաւիրէր ապաշխարութեան, իսկ իր կերած մարախով ու վայրի մեղրով՝ արքայութեան: [Մարախով ու վայրի մեղրով գոհանալը եւ ուրիշ բանի կարիքը չզգալը՝ աշխարհիկին չկապուած ըլլալու իրավիճակ մը ցոյց կու տայ: Այս իրավիճակին մէջ ապրողներուն համար է արքայութիւնը]: Մէջքին գօտի դնելը՝ Աստուծոյ կամքը կատարելու կազմ ու պատրաստ իրավիճակ ցոյց կու տայ: Առաջին սուրբերը՝ Եղիա, Պետրոս ու Պօղոս միշտ կաշիէ գօտի կը կրէին իրենց մէջքին: Գօտին նաեւ կը յիշեցնէ մեզի, թէ պէտք չէ անասուններու պէս առանց կապանքներու ու սանձի պահենք մեր մէջքը, եւ հետամուտ ըլլանք մարմնաւոր ցանկութեանց կատարման: Ինչպէս մարախը կը ցատկէ դէպի վեր, այնպէս ալ, Քրիստոսի զաւակները միշտ դէպի վեր՝ դէպի երկնայինը պէտք է ցատկեն եւ երկնային առաքինութիւններու ձգտին (Ներսէս Շնորհալի Հայրապետ):

3) Վերեւ տրուած իմաստներուն կողքին, ուլտի մազէ շինուած հագուստը խորհրդանշէր է նաեւ ապաշխարութեան, իսկ իրենց մէջքին դրուած կաշիէ գօտին՝ հաւատքով գօտեպնդուած իրավիճակի: Թէ՛ Եղիա եւ թէ Յովհաննէս ապաշխարութեան կոչ ուղղեցին թագաւորներու, Եղիան՝ Աքաաբին, իսկ Յովհաննէսը՝ Հերովդէս Անտիպասին: Հրեաներուն մօտ ընդունուած ձեւ մըն էր գլխուն վրայ մոխիր ցանելը կամ մազոտ հագուստ հագնիլը ի նշան զղջումի եւ ապաշխարութեան:

4) Յովհաննէս Մկրտիչի բնակարանը՝ անապատն էր, հագուստը՝ ուղտի մազի հիւսուածք, իսկ կերակուրը՝ մարախ եւ վայրի մեղր: Ան իր արտաքին կերպարանքով սորվեցուց մեզի ընտրել աղքատութեան ճամբան, ինքնանտեսումի ճամբան: Յովհաննէսի ճամբան՝ ճգնաւորներուն ճամբան էր, աշխարհիկէն սրբուած՝ սուրբերո՛ւն ճամբան էր, երկրաւորը անտեսած՝ երկնասէրներո՛ւն ճամբան էր: Ան այս ճամբէ՛ն քալեց, եւ անոր համար ալ կրցաւ մարդոց առջեւ Տիրոջ ճամբան պատրաստել: Ան ո՛չ միայն իր խօսքով, այլեւ իր ապրած կեանքով սորվեցուց մեզի, որ եթէ կ'ուզենք մարդիկը մօտեցնել Քրիստոսի, պէտք է մենք հեռանանք աշխարհիկէն, երկրաւոր հաճոյքներէն: Պէտք է անտեսենք մեր «ես»ը, եթէ երբեք կ'ուզենք Քրիստոսը տեսանելի դարձնել մարդոց համար: Պէտք է մոխիրի տակ դնել մեր փառքը, եթէ երբեք կ'ուզենք մարդիկը առաջնորդել Քրիստոսի փառքի տեսութեան եւ Քրիստոսի փառաբանութեան:

5) Վերեւ հաստատեցի թէ ուղտի մազէ շինուած հագուստը խորհրդանիշ է սուգի եւ ապաշխարութեան: Արդ, յստակ է որ Յովհաննէս ապաշխարութեան կոչ ուղղելէ առաջ, նախ ի՛նք ապրեցաւ ապաշխարութեան կեանքը. մեղքին համար սուգ ընելու մասին խօսելէ առաջ, նախ ի՛նք սգաց մեղքին համար: Այս առումով, ան քարոզիչ ըլլալէ առաջ՝ իր քարոզը ապրո՛ղ մը եղաւ: Ան եթէ կրցաւ մարդիկը Քրիստոսի առաջնորդել, կրցաւ՝ որովհետեւ կ'ապրէր ինչ որ կը քարոզէր: Իր բերանով ըսածները՝ իր կեանքով կը կատարէր: Ա՛յս էր պատճառը որ ան յաջողեցաւ իր առաքելութեան մէջ: Եթէ այսօր քարոզիչներս չենք յաջողիր մարդիկը Քրիստոսի բերել, չենք յաջողիր՝ որովհետեւ մե՛նք Քրիստոսի չենք եկած: Երբ ապաշխարութեան մասին կը խօսինք բայց մենք ապաշխարութեան կեանք չենք ապրիր, ի՞նչպէս կրնանք ակնկալել որ մարդիկ ներշնչուին մեր խօսքէն եւ ապաշխարեն: Երբ կը խօսինք մեղքին համար սուգ պահելու մասին բայց մենք հաճոյք կ'առնենք մեղքէն, ի՞նչպէս կրնանք սպասել որ մարդիկ սգան իրենց գործած մեղքերուն համար:

ՎԱՂԻՆԱԿ Ծ. ՎՐԴ. ՄԵԼՈՅԵԱՆ

(Շար. 5)

ՊԱՏՄԱ.-ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐԱԿԱՆ

90-ԱՄԵԱՅ ՀՈՒՆՁՔԸ ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԵԱՆ ԴՊՐԵՎԱՆՔԻՆ

Տ. ԵՓՐԵՍ ԱՐՔ. ՏՈՅՍՈՒՆԻ

Ծնած է 1880-ին, Սիս (Կիլիկիա): Աւագանի անունն է Կարապետ: Նախնական ուսումը ստացած է ծննդավայրի Ազգ. Վարժարանին մէջ եւ ապա 1908-ին ընդունուած է Սսոյ Կաթողիկոսարանի ժառանգաւորաց Վարժարանը: Ուսման ընթացքը աւարտելէն ետք Սարկաւագ ձեռնադրուած է, ձեռամբ Կիրակոս Եպս. Փէքմէզեանի:

1909-ին Կուսակրօն Եկեղեցական ձեռնադրուած եւ օծուած է, ձեռամբ Սահակ Բ. Կաթողիկոս Խապայեանի, եւ վերակոչուած՝ Տ. ԵՓՐԵՄ ԱԲԵՂԱՅ:

1920-ին Ծայրագոյն Վարդապետութեան իշխանութիւն ստացած է, ձեռամբ Եղիշէ Եպս. Կարոյեանի, իսկ 1930-ին՝ Եպիսկոպոսական ձեռնադրութիւն եւ օծում, ձեռամբ Սահակ Բ. Կաթողիկոսի, Դամասկոսի Ս. Սարգիս Եկեղեցւոյ մէջ:

1937-ին, որպէս գնահատանք տարիներու իր ծառայութեան, Սահակ Կաթողիկոս Արքատառ Կոնդակով Արքութեան պատիւ եւ տիտղոս շնորհած է իրեն:

Եփրեմ Սրբազան իր ձեռնադրութեան առաջին օրէն իսկ համեստ եւ նուիրեալ ծառայող մը եղած է թէ՛ Եկեղեցական եւ թէ՛ կրթական բնագաւառներու մէջ:

Ան Սսոյ Կաթողիկոսարանի Մայրավանքէն ներս իր ստանձնած պարտականութիւններուն կողքին, որպէս ուսուցիչ, դասաւանդած է Սսոյ Ազգային եւ ժառանգաւորաց վարժարաններէն ներս:

1920-1923 հովուութեան պաշտօն վարած է յունահայ գաղութէն ներս:

1924-1925 եղած է Առաջնորդական Տեղապահ Բերիոյ Հայոց Թեմին:

1925-1929 Կաթողիկոսական Փոխանորդ նշանակուած է Լիբանանի Թեմին, հիմնելով կարգ մը վարժարաններ:

1929-1933 եղած է Կաթողիկոսական Փոխանորդ Լաթաքիոյ Հայոց Թեմին:

1933-1946 Կաթողիկոսական Փոխանորդ անուանուած է Դամասկոսի Հայ Թեմին, ուր ան պաշտօնավարած է մինչեւ իր մահը:

Եփրեմ Սրբազան իր պաշտօնավարած բոլոր վայրերուն մէջ օգտակար դարձած է Հայ Եկեղեցւոյ եւ ազգին:

1945-ին Ս. Էջմիածին մեկնած է մասնակցելու Գէորգ Զ. Չէօրէքեան Կաթողիկոսի ընտրութեան եւ օծման:

27 Նոյեմբեր 1946-ին, ծառայութեան վաստակ մը իր ետին ձգած, անակընկալ սրտի տագնապի մը հետեւանքով իր մահկանացուն կնքած է Դամասկոսի Ազգ. Առաջնորդարանին մէջ:

Երկու օր ետք, 29 Նոյեմբերին, Գարեգին Ա. Յովսէփեանց Կաթողիկոսի տնօրինութեամբ, Լիբանանի Կաթողիկոսական Փոխանորդ Խաղ Արք. Աջապահեան, ընկերակցութեամբ Ղեւոնդ Մ. Վրդ. Չէպէեանի եւ Տաճատ Վրդ. Ուրֆալեանի, Դամասկոսի Ս. Սարգիս Եկեղեցւոյ մէջ Վերջին Օծման արարողութիւնը կատարելէ ետք, հոծ բազմութեան մը ներկայութեան եկեղեցւոյ շրջափակին մէջ, հողին յանձնած են Սրբազանին մարմինը:



Տ. ՇԱՀԵ ԱՐՔ. ԳԱՍՊԱՐԵԱՆ 1882-1935

Ծնած է 20 Յունիս 1882-ին, Այնթապ (Կիլիկիա): Աւագանի անունն է Հմայեակ: Նախնական ուսումը ստացած է ծննդավայրի Ներսէսեան Վարժարանին եւ Վարդանեան Կրթարանին մէջ:

1886 Սեպտեմբերին յաճախած է Այնթապի Կեդր. Թուրքիոյ Ամերիկեան Գոլէճը, ուրկէ վկայուած է Ֆրէշմըն վկայականով:

1898 Հոկտեմբերին մեկնած է Արմաշի Դպրեվանք, ուր չորս տարի ուսանելէ ետք, 8 Սեպտ. 1902-ին ձեռնադրուած է Սարկաւազ, ձեռամբ Եղիշէ Արք. Դուրեանի:

19 Յունիս 1905-ին, աւարտելով դպրեվանքի ուսման շրջանը, Կուսակրօն Եկեղեցական ձեռնադրուած եւ օծուած է, ձեռամբ Զմիւռնիոյ Առաջնորդ Եղիշէ Արք. Դուրեանի, եւ վերակոչուած՝ Տ. ՇԱՀԷ ԱԲԵՂԱՅ: Այդ շրջանին, Արմաշի Դպրեվանքի վերատեսուչն էր Թորոգոմ Մայրապոյն Վարդապետ Գուշակեան, եւ Դուրեան Սրբազան Առաջնորդն էր Զմիւռնիոյ, ուրկէ յատկապէս եկած էր Արմաշ՝ կատարելու համար ձեռնադրութիւնը:

Ձեռնադրուելէն ետք, նորընծայ Շահէ Վարդապետ դպրեվանքին մէջ տարի մը հին ազգաց եւ հայոց քննական պատմութիւն դասաւանդած է:

1906-1908 ստանձնած է Մերսինի Առաջնորդական Փոխանորդութիւնը, միանգամայն տեսչութիւնը Ազգ. Երկսեռ Վարժարաններուն:

1908-1911 տարիներուն նշանակուած է Կաթողիկոսական Փոխանորդ Բերիոյ Հայոց Թեմին: Գիտակից յանձնառութեամբ վարած է իրեն վստահուած պատասխանատու այս պաշտօնը: Յուցաբերած է կորով եւ աշխատունակութիւն. առ այդ գնահատուած է պաշտօնական մարմիններուն կողմէ, եւ Սահակ Բ. Կաթողիկոս, 9 Օգոստոս 1909-ին Ծայրագոյն Վարդապետութեան իշխանութիւն շնորհած է իրեն եւ Լանջախաչ կրելու արտօնութիւն:

1911-1913 Ատանայի Ազգ. Գաւառական Ժողովին կողմէ միաձայնութեամբ Առաջնորդ ընտրուած է:

1913-ին մեկնած է Միացեալ Նահանգներ համալսարանական ուսման հետեւելու նպատակով: Յաճախած է Պոսթոնի արուարձաններէն Գեմպրիճի Աստուածաբանական Գոլէճը (Եպիսկոպոսական Եկեղեցւոյ լաւագոյն դպրոցներէն մին), նոյն ատեն հետեւած է Հարվըրտ Համալսարանի փիլիսոփայական ճիւղին եւ փայլուն յաջողութեամբ աւարտած՝ արժանանալով Պսակաւոր Աստուածաբանութեան վկայականին եւ տիտղոսին:

1917-1930 ստանձնած է Մեծագոյն Պոսթոնի հոգեւոր հովուութեան պաշտօնը: 13 Տարի մեծ նուիրումով ու հաւատքով ծառայած է Միացեալ Նահանգներուն մէջ, ապա իր ուսուցչին՝ Աթոռակից Բաբգէն Ա. Կաթողիկոսի հրաւերով եկած է Լիբանան, Անթիլիասի գեղածիծաղ ափունքին նորահաստատ Կիլիկեան Ս. Աթոռի Դպրեվանքը՝ ստանձնելու վերատեսչութեան պաշտօնը:

Տարիներ իր գլխաւոր երազանքը եղած էր Այնթապի մէջ դպրատուն մը բանալ, բայց չէր իրականացած, եւ այս հրաւերը հրամայական մըն էր իրեն համար՝ ստանձնելու իր սրտին այնքան հարազատ, Մեծ Եղեռնէն ետք նահատակեալ եկեղեցականներու բացը գոցելու եւ նոր ու զարգացած եկեղեցականներու սերունդ մը պատրաստելու նուիրական գործը:

Բաբգէն Աթոռակից Կաթողիկոսի ճիգերով եւ Շահէ Ծայրագոյն Վրդ. Գասպարեանի կազմակերպչական աշխատանքներով այդ իղձն ու փափաքը իրագործուած է, եւ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Դպրեվանքը իր դռները բացած է հայ պատանիներուն եւ երիտասարդներուն դիմաց:

Աթոռակից Վեհափառ Հայրը, գնահատելով Շահէ Ծ. Վարդապետին կատարած նուիրական աշխատանքը, 24 Մայիս 1931-ին Եպիսկոպոս ձեռնադրած է օժած է զինք, իսկ Սահակ Բ. Կաթողիկոս իր 117 եւ 1935 Յունուար 6 թուակիր Կոնդակով Արքութեան պատիւ եւ տիտղոս շնորհած է Սրբազանին:

Շահէ Սրբազան հինգ տարի ծառայած է Մեծի Տանն Կիլիկիոյ նորաբաց Դպրեվանքին, կազմակերպած, դասաւանդած եւ յատկապէս ոգեշնչած է սերունդներ եւ հոգեկան մեծ ցնծութեամբ եւ ոգեւորութեամբ ողջունած է նաեւ երախայրիքը դպրեվանքին, առաջին շրջանաւարտները՝ Տ. Զարեհ եւ Տ. Դե-

րենիկ Աբեղաները, ապա իր ընթացքն ու առաքելութիւնը աւարտած նկատելով՝ ներքին հոգեկան մղում մը զինք առաջնորդած է հայրենիք, որպէս ուխտաւոր, համբուրելու Իջման Ս. Սեղանը, ծնրագրելու Խոր Վիրապի բազմաշարչար Մեծ Սուրբին՝ Լուսաւորչին Հայոց Աշխարհի, խոնարհելու եւ համբուրելու «Օշականի Անհուն Մեռեալ»ին՝ Ս. Մեսրոպ Մաշտոցի շիրիմը եւ հաղորդուելու հազարամեակներու ընդմէջէն փոխանցուող Հայկազնեան աւիշով:

Ահաւասիկ վերոյիշեալ զգացումներն էին, որոնք գրգիռ հանդիսացած էին մտածել տալու Շահէ Սրբազանին, որ որոշէ հայրենիք մեկնիլ:

«Երուսաղէմ» շոգենաւով ճանապարհ ելած է ան: Ողջ ճամբորդութիւնը ապրումներով, վերլուծումներով եւ մեկնաբանութիւններով հայելիի նման կ'արտացոլան իր պահած օրագրութեան տողերուն մէջ:

Հարազատօրէն ներկայացնելու համար Շահէ Արք. Գասպարեանի անակընկալ հիւանդութեան եւ մահուան զարգացումները, ստորեւ մէջբերած ենք Ս. Էջմիածնէն Անթիլիաս առաքուած գոյժը հաղորդող տեղեկագրէն քաղուած հատուածներ.

ա.- Շահէ Սրբազան 1935 Յունուար 5 թուակիր նամակով գրած էր, թէ կը փափաքի Էջմիածին երթալ եւ միաբանիլ Մայր Աթոռին:

բ.- Հոկտ. 17-ին Թիֆլիսէն կը հեռագրէ Ս. Էջմիածին, թէ Հոկտ. 17-ին կը հասնի Երեւան: Հակառակ Երեւանի Առաջնորդարանին մէջ մասնաւոր սենեակ պատրաստուած ըլլալուն, Տ. Շահէ Արք. կիջեալի Ինդուրիստ հիւրանոցը եւ Հոկտ. 20-ին կայցելէ Առաջնորդարան: Նոյն օրը կ'առաջնորդուի Ս. Էջմիածին եւ կը ներկայանայ Վեհափառ Տ. Խորէն Կաթողիկոսի:

գ.- Վեհ. Հայրապետը քանիցս իր սեղանին կը հրաւիրէ Շահէ Սրբազանը Գերագոյն Խորհուրդի եւ Միաբանութեան աւագագոյն եւ վաստակաւոր անդամներուն հետ:

դ.- Հոկտ. 25-ին Արտակ Եպս.-ի ուղեկցութեամբ կ'այցելէ Էջմիածնի մերձակայ պատմական վանքերը եւ յատկապէս Օշական, համբուրելու Ս. Մեսրոպի գերեզմանը: «Ուսկից վերադառնում է հոգեպէս մխիթարուած բայց եւ հոգեկան յուզումներից յոգնած եւ ընկճուած»:

ե.- Վեհ. Հայրապետին կարգադրութեամբ Հոկտ. 27-ին, Գիւտ Խաչի Կիրակիին Ս. Պատարագ կը մատուցանէ եւ «Հայր մեր»ի ատեն Իջման Սեղանին առջեւ ծնրադիր կ'ընէ իր Միաբանական հաւատարմութեան ուխտը՝ Մայր Աթոռին եւ ապա կը խօսի իր ֆարձը:

զ.- Հոկտ. 29-ին կը վերադառնայ Երեւան Արտակ Եպս.-ի հետ եւ թէպէտ շատ կը փափաքէր մեկնիլ Ամերիկա, բայց հայրենիքը ճանչնալու եւ ուսումնասիրելու փափաքով՝ կը յաջողի ամիս մըն ալ մնալ հոն:

Է.- Նոյմ. 24-ին Երեւանէն Բարեգործականի ներկայացուցիչը կը հեռագրէ Վեհ. Հայրապետին. «Սրտի անհուն կսկիծով հարկ կը համարիմ յայտնել Ձերդ Վեհափառութեան, որ այսօր, առաւօտեան ժամը 7-ին, իր մահկանացուն կնքեց սրտի պայթումից Շահէ Արք. Գասպարեանը»:

ը.- Վեհ. Հայրապետի յանձնարարութեամբ նոյն օրը Գեր. Հոգ. Խորհրդոյ անդամներէն Տ. Գէորգ Արք. եւ Արսէն Եպս. Երեւան կ'երթան «հանգամանօրէն իմանալու Տ. Շահէ Սրբազանի մահացման պարագաները եւ պատշաճը տնօրինելու»:

Այս ձեւով շիջած էր մեծ եկեղեցականին կեանքի կանթեղին պատրոյգը, որուն ցոլքէն լուսաւորուած էին սերունդներ Արմաշէն մինչեւ Անթիլիաս:

Համաձայն տեղեկագրին, «Հայաստանի Առաջին Լուսաւորիչներու Ս. Թաղէոս եւ Բարթողիմէոս Առաքելներու» տօնին՝ Նոյմ. 30-ին, կատարուած է Շահէ Արք. Գասպարեանի Վերջին Օծման եւ Թաղման արարողութիւնները, եւ մարմինը ամփոփուած է Ս. Գայիանէ վանքի շրջափակին մէջ:

ՍՈՒՐԷՆ ԱՐՔ. ԳԱԹԱՐՈՅԵԱՆ

(Շար. 13)



Ս. ՊԱՐՍԱՄԱՅ ՃԳՆԱԲՈՐԻՆ ՄԱՍՈՒՆՔԸ ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ ԿԱԹՈՂԻԿՈՍԱՐԱՆԻ ԳԱՆՁԱՐԱՆԻՆ ՄԷՋ

ԱՄՓՈՓ ԿԵՆՍԱԳՐՈՒԹԻՒՆ

Ս. Պարսամ ճգնաւոր ծնած է Սամոսատ քաղաքը (ձանչցուած է նաեւ իբրեւ Շամուշատ, Եփրատ գետի աջ ափին, ոչ շատ հեռու Մծբինէն) եւ շուտով որբացած: Հասակ առած է Աբրահամ անունով ճգնաւորի մը քով, որուն շնորհիւ իր մէջ աճած է վանականութեան եւ ճգնութեան հանդէպ սէրը: Իր կեանքի ընթացքին չորս անգամ ուխտագնացութիւն կատարած է Սուրբ Քաղաք՝ Երուսաղէմ, ճանապարհորդութեան ընթացքին միշտ քարոզելով, հեթանոս տաճարները քանդելով եւ բազմաթիւ հրաշքներ կատարելով: Իր հոգեւոր կեանքին մէջ փայլած է ծոմապահութեան առաքինութեամբ եւ բժշկութեան պարգեւով, որուն պատճառով նաեւ իր մասունքը իբրեւ բժշկարար նշխար ընդունուած է հաւատացեալներու կողմէ: Թէոտոսիոս Բ.ի կողմէ հրաւիրուած է մասնակցելու Եփեսոսի տիեզերական ժողովին, 431-ին, եւ Մարկիան հերետիկոսի կողմէ հալածուած: Աւելի ուշ, մասնակցած է Քաղկեդոնի ժողովին, եւ ըմբոստացած է նախկին տիեզերական ժողովը հակասող բանաձեւին դէմ, որ կ'ընդունէր Քրիստոսը իբրեւ մէկ անձ, սակայն երկու բնութեամբ (աստուածային ու մարդկային բնութիւնները անջատ): Ս. Պարսամ երկար ժամանակ իր ըմբոստութեան պատճառով բանտարկուած է եւ տարուած է Կոստանդնուպոլիս: Ժամանակ մը ետք, ազատ արձակուելէ ետք, համաձայն Անտրիւ Փալմըրին, ճգնած է Գլաւտիոս լեռներ կոչուող վանքի մը մէջ, որ այդ օրերուն կը գտնուէր Մեծ Հայքի մէջ, Մելիտենէ կամ Մալաթիոյ շրջանը, ուր նաեւ աւելի ուշ իր անունով վանք կառուցուած է: Իր մահէն չորս օր առաջ, տեսիլքով մը գիտցած է իր մահուան գալուստը եւ վախճանած է հիւանդութեան մը հետեւանքով:

Իր կեանքը արձանագրող ձեռագիրը, կը յիշէ, թէ երբ Ս. Պարսամ ճգնաւոր կը գիտնայ իր մահուան մօտալուտ ըլլալը, գայն իր աշակերտներուն կը յայտնէ բացայայտօրէն: Իր մահուան անկողինին մէջ, կը կանչէ իր աշակերտներէն մէկը եւ կը յանձնարարէ, որ երթայ թէ՛ Պարսկաստան եւ թէ՛ Հայաստան, որպէսզի եպիսկոպոսները քաջալերէ ուղղափառ հաւատամբը պաշտ-

պանելու համար: Նոյն աշակերտը, երբ կը լսէ իր ուսուցիչին մահը, Հայաստան շրջագայութենէն կը վերադառնայ, այցելելու համար անոր շիրիմը:¹

Հետեւաբար, քանի Յայսմաուորքը կը յիշէ սուրբին Հայաստանի մէջ վախճանելու իրականութիւնը եւ ուղղափառ դաւանութեան համար պայքարելու անոր նախանձախնդրութիւնը, սուրբին մասունքը մեծարելի կը գտնենք նաեւ Հայ Եկեղեցւոյ կողմէ:

ԱՍՈՐԻ ՍՈՒՐԲԻՆ ՄԱՍՈՒՆՔԸ ՀԱՅՈՑ ՎԱՆՔԻՆ ՄԷՋ

Թէ ինչպէս Ս. Պարսամայ ճգնաւորին մասունքը Հայոց Վանք հասած է, կը մնայ անորոշ, որովհետեւ տուեալներ կը պակսին: Արտոսովոր իրականութիւն մը չէ տեսնել այլ ազգի պատկանող սուրբի մը մասունքը Հայ Եկեղեցւոյ հովանիին տակ պահպանուած: Սակայն այս մասունքի յատկանշական երեւոյթը այն է, որ սուրբին ամբողջ ձեռքն է, եւ ոչ՝ պարզապէս կտոր մը: Առաւել եւս, սուրբին ձեռքը մնացած է գրեթէ ամբողջական, նոյնիսկ՝ մորթը ոսկորին



Ուխտի օրուան թափօր Ս. Պարսամայ ճգնաւորին մասունքով

¹ “The Life of the Syrian Saint Barsauma: Euology of a Hero of the Resistance to the Council of Chalcedon,” translated by Andrew N. Palmer, California: University of California Press, 2020, p. 136.

վրայ: Այլ խօսքով, նման արժեքաւոր մասունք մը արդեօք նուէ՞ր տրուած է Ասորի Եկեղեցւոյ կողմէ, կամ արդեօ՞ք սուրբին աճիւնները կը պահպանուէին հայերուն կողմէ. այլ ենթադրութիւն մըն ալ կարելի է ընել նշելով, որ յաճախակի յարձակումներու տակ, կացութիւններու բերումով, մասունքը Հայ Եկեղեցւոյ մօտ պահպանուած է:

Այստեղ, կ'ուզեմ անդրադառնալ որոշ պատմական տուեալներու կամ արձանագրութիւններու, որոնք առնչութիւն ունին սուրբին մասունքին հետ:

Հայր Ղեւոնդ Ալիշան իր Սիսուան գիրքին մէջ Սիս քաղաքի վանքերու մասին պատմած ժամանակ, կը նշէ թէ Հեթում Ա. ի պատիւ իր բարեկամին՝ Ասորիներու Իգնատիոս պատրիարքին, Սիս քաղաքին մէջ ասորիներուն համար կաթողիկոսարան մը շինեց՝ Ս. Պարսամ անունը կրող եկեղեցիով մը, 1244-ին:² Այս եկեղեցւոյ մասին նաեւ կը վկայէ Լրնըսթ Հոնիկմընը, աւելցնելով, որ Հեթում Ա. նաեւ ներկայ գտնուած է Իգնատիոս Գ.ի օծման:³ Աւելի ուշ, Միսաք Քելէշեան, իր «Սիս-Մատեան»ին մէջ կ'անդրադառնայ Կիլիկիայէն ներս ասորիներու ներկայութեան մասին եւ կը նկարագրէ, թէ Կիլիկիոյ մէջ ասորիները ունէին երեք վանքեր. «մին Գալկաթ Միսիսի մէջ, երկու հասա ալ Սիս. մէկը փոքր, քաղաքին արուարձաններուն մէջ, իսկ Մատիկ անուն վանք մը (Մատիկ ասորերէն պարկ ըսել է) քաղաքին մէջ, այժմեան կառավարական սէրային եւ Ս. Սոփիայի աւերակներուն միջեւ: Եկեղեցիներն էին Ս. Աստուածածին եւ Ս. Պարսում: Ունէին նաեւ 25 կրօնականներ»:⁴ Այս տուեալները ցոյց կու տան Ս. Պարսամայ ճգնաւորին առնչութիւնը Կիլիկիոյ մայրաքաղաք Սիսի հետ, անոնց մէջ սակայն կը պակսի այն տեղեկութիւնը, թէ ինչպէս անոր աջը փոխանցուած կամ յայտնուած է Կիլիկիոյ Կաթողիկոսութեան մօտ:

Միքայէլ Ասորի պատմաբան պատրիարքը, իր արձանագրութիւններուն մէջ կը յիշէ պատմական դէպք մը, որ տեղի ունեցած է 1149 թուականին, երբ Եդեսիոյ Ֆրնաք Ժոսլինը, Ս. Պարսամայ մասունքը գողցած է եւ անոր հրաշքով թուրքերուն դէմ պատերազմին յաղթած է: Սակայն չի յիշեր, եթէ մասունքը վերագարձուցած իր վայրը՝ Քալասա Ռոմայնաթ անուանեալ բարձրունքին վրայ: Սակայն, յստակօրէն կը յիշէ, թէ սոյն սուրբը մեծարուած է թէ՛ հայերուն եւ թէ՛ թուրքերուն կողմէ: Այս մէկը կը նշանակէ, թէ տուեալ մասունքը Սամոսատցի Ս. Պարսամայ ճգնաւորին մասունքն է, որ հայրերը կը մեծարէին:⁵

² Ալիշան, Ղեւոնդ Վ. Ս., «Սիսուան», Վենետիկ, Ս. Ղազար, 1885, էջ 221:

³ Քելէշեան Միսաք, «Սիս-Մատեան», Պէրոյութ, Տպարան «Հայ Ճեմարանի», 1949, էջ 167:

⁴ «Սիս-Մատեան», էջ 172:

⁵ Honigmann, Ernest, «Le Couvent De Barsauma Et Le Patriar Jacobite D'Antioche Et De Syrie», Louvain, Imprimerie Orentaliste L. Durbecq, 1954, p. 46.

Մինչեւ 1500-ական թուականները, որեւէ արձանագրութիւն կամ յիշատակագրութիւն չի գտնուիր պատմելու համար, թէ սուրբին մասունքը ի՞նչ ճակատագիր կրած է: 1583 թուականին, Մալթայի լատին եպիսկոպոսը՝ Լեոնարտ Աբել (Leonard Abel of Malta), որ Սիդոնի եպիսկոպոս նշանակուած էր, կ'այցելէ Սիս եւ կը հանդիպի Ս. Պարսամայ ճգնաւորի աջէ մասունքին, արժաթեայ տուփի մը մէջ դրուած: Շատ հաւանական է, որ ճիշդ է այն ենթադրութիւնը, որ այս տուփը տարբեր տուփ եղած է, քան՝ այն ինչ որ Կիլիկիայէն Անթիլիաս բերուեցաւ, որովհետեւ Մալթայի եպիսկոպոսին այցելութիւնը տեղի ունեցած է երկու հարիւր տարիներ առաջ, իսկ այն արձանագրութիւնը, որ մեր ունեցած տուփին վրայ կը գտնուի, չի համապատասխաներ անոր:

Աւելի ուշ, 1852-1853-ին, Ֆրանսացի պատմաբան Վիքթոր Լանկլուա, իր Կիլիկիա շրջագայութեան մասին յուշագրութեան մէջ եւս կը յիշէ Ս. Պարսամայ ճգնաւորին մասունքը, իբրեւ ամբողջական աջ, ինչ որ կը հաստատէ աջին Սիս ըլլալը՝ Ս. Նիկողայոս եւ Ս. Սեղբեստրոս հայրապետներու մասունքներուն կողքին⁶:

Ի վերջոյ, 1915-ին, Հայոց Յեղասպանութեան եւ Կիլիկիոյ պարպումէն ետք, սուրբին մասունքը, ինչպէս մնացեալ աջերը եւ մասունքները, կը փրկուի եւ կը հասնին Անթիլիաս, եւ կը տեղադրուին «Կիլիկիա» թանգարանին մէջ:

ՀԻՆ ՄԱՍՆԱՏՈՒՓԷՆ՝ ՆՈՐ ԱԶ

Ինչպէս վերեւ յիշեցի, Ս. Պարսամայ ճգնաւորին մասունքը պահպանուած հասած է մեզի արժաթեայ մասնատուփի մը մէջ, որ գեղեցիկ զարդարուն խաչեր կը կրէ: Համաձայն տուփին կափարիչի երեսին վրայ արձանագրուած յիշատակագրութեան, սոյն մասնատուփը շինուած է 1723-ին մահտեսի Ղաբլան անունով անձի մը կողմէ եւ պատուիրուած է սիսեցիներու կողմէ Տէր Արիտստակէսին, Ս. Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցւոյ համար:⁷ Կը մէջբերեմ մասնատուփին վրայ արձանագրուած յիշատակագրութիւնը.

«Յ[Ի]Շ[Ա]Տ[Ա]Կ է ՍԸՍՅՈՑ Ի ԽՆԴՐՈՅ ԱԶ ԲԱՆ ԸՌԸՍԹԱԳԷՍ ՔԱՀԱՆԱ[Յ]ԻՆ ՁԵՌԱՄԲ Մ[Ա]ՀՏԵ[Ս]Ի ՂԱԲԱՆԻՆ Ի ԴՈՒՌՆ Ս[ՈՒՐ]Բ ԼՈՒՍԱԻՈՐԶ[Ի] ԱՄ ԹԻՎ ՌՃՀԲ (1172=1723) ՊԱՀԱՐԱՆՍ ՍՐԲՈՅՆ ՊԱՐՍ[Ա]ՄԱ ՃԳՆԱԻՈՐԻՆ»⁸:

⁶ Langlois Victor, Voyage Dans La Cilicie Et Dans Les Montagnes Du Taurus: Exécuté Pendant Les Années 1852-1852, 1861, Paris, 400. https://archive.org/details/bub_gb_MoQOAAAAQAAJ/page/399/mode/2up

⁷ Ս. Լուսաւորիչը նոյնիսկ Սիսի Ս. Սոփիա մայր տաճարին մէջ աջակողմեան դասը գտնուող (խորանէն դիտուած) մատուռ մըն էր, որուն մէջ կը պահուէին Ս. Աջերը եւ շատ հաւանաբար բոլոր մասունքները: Ենթադրելի է, որ Տէր Արիտստակէսը եղած է:

⁸ «The Catholicosate of Cilicia: History, Treasures, Mission» Edited by Seta Dadoyan, Lebanon: 2015, p. 184.



Ա. երես

Բ. երես

Ս. Պարսամայ Ճգնաւորին նորակերտ աջէ մասնատուփը

Նորակերտ աջի պատրաստութեան ժամանակ, արուեստագէտ ոսկերիչը ուզեց անպայմանօրէն տուփին խաչերով զարդարուն պատկերը աւելցնել աջին վրայ, որպէսզի կապը շարունակուի եւ ապագայ սերունդները գիտնան ո՞ր մասնատուփէն փոխանցուած է այս աջին մէջ:

Նորակերտ աջը, հոգեւորականի խաղաղութիւն տալու ձեւը կը պարզէ, որուն մատները՝ բութամատն ու մատնեմատը իրար կպցուցած, խաչի նշան կը կատարէ: Աջէ մասնատուփին դաստակին սկիզբը, ուրկէ մարդուն արեան երակները կը նրբանան, փորագրուած է Անթիլիասի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր Տաճարի պատկերը եւ անոր շուրջ արձանագրուած է հետեւեալ նոր յիշատակարանը.

«Աջ Սրբոյն Պարսամայ Ճգնաւորին արարեալ արժաթակերտ կազմածով, ի Հայրապետութեան Տ. Տ. Արամայ Ա. Կաթողիկոսին Մեծի Տանն Կիլիկիոյ: Բարեարութեամբ՝ Խաչատուրեան Ռաֆֆիի, ի յիշատակ ծնողաց իւրեանց՝ Խաչատուրեան Ճանիկի եւ Նուէրի, յօրհնութիւն եւ ի պաշտպանութիւն ազգիս Հայոց: Ի թուին Հայոց ՌՆՀ եւ յամի Տեառն 2021, յԱնթիլիաս, Լիբանան»:

Նոյն երեսին վրայ, տաճարի պատկերին տակ ցցուած արձաթեայ հայկական խաչ մը, որ կը խորհրդանշէ մեր հաւատքին եւ Եկեղեցիին հիմքը: Իսկ աջին դաստակին ամբողջ ծայրերը 17-րդ Սաղմոսը ամբողջութեամբ փորագրուած է, ինչ որ պահպանութեան աղօթք նկատուած է եւ սերտօրէն կ'առնչուի սոյն մասնատուփի հոգեւոր իմաստին: Ի վերջոյ, աջին ամէնէն վարի բաժինը, կղպանքի պէս շինուած է, ուր փորագրուած են Քերովբէներու երկու թեւեր, որոնք կը հսկէին Հին Կտակարանեան ուխտի տապանակին:

ԱՐԺԵՒՈՐՈՒՄ ԵՒ ՎԵՐՋԱԲԱՆ

Ս. Պարսամայ ճգնաւորի աջին մեծագոյն հրաշքը այն է, որ սուրբին աջը (որ իսկութեան մէջ ձախ ձեռքն է) չէ փճացած այնպէս, ինչպէս ռեւէ անձի մարմինը կամ մարմնի որեւէ մէկ մասը կը փճանայ մահէ ետք, այլ՝ աստուածային նախախնամութեամբ պահպանուած է: Մասունքին վրայ տակաւին զգալի է սուրբին մորթը եւ եղունգները: Այս մէկը ցոյց կու տայ սուրբին հրաշագործ զօրութիւնը, որ կանգուն մնացած է աւելի քան 16 դար: Երկար ժամանակ կտորի մը մէջ պահպանուած ըլլալուն պատճառով, կտորը ընդելուզուած է: Վստահաբար հաւատացեալները, որոնք կը մօտենան եւ սուրբին օրհնութիւնը կ'առնեն, սուրբը զօրութեամբ եւ հրաշքով զիրենք իր բարեխօսութեան արժանի կը դարձնէ:

Առաւել եւս, Ե. Դարէն մեզի հասած այս արժէքաւոր սուրբի մասունքը, ինքնին անկշռելի արժէք մըն է, որ պահպանուած է դարերու ընթացքին՝ հակառակ տիրող բոլոր աշխարհաքաղաքական կացութիւններուն, փոփոխութիւններուն եւ պայմաններուն: Ասիկա իսկապէս հրաշք մըն է, որ ներկայիս կը գտնուի Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան «Կիլիկիա» Թանգարանին մէջ:

Արամ Ա. Վեհափառ Հայրապետը իր «Միջ-եկեղեցական Տեսիլքի Փնտտութիւն» ("In Search of Ecumenical Vision") գիրքին մէջ, երբ կը խօսի Արեւելեան Եկեղեցիներու մտահոգութիւններուն եւ մարտահրաւէրներուն մասին, կը շեշտէ, թէ «Մեր եկեղեցւոյ ընտանիքի վերանորոգումը կը մնայ առաջնահերթութիւն, որ ինքնին մարտահրաւէր մըն է: Յարատեւ նորոգութեան պարագային է միայն, որ եկեղեցին (հարցերու կամ դժուարութիւններու) պատասխանող եկեղեցի կը դառնայ: Կը հաւատամ, թէ աշխարհի մը մէջ, ուր



Ս. Պարսամայ ճգնաւորին մասունքը
հին մասնատուփին մէջ

եկեղեցին մնայուն կերպով մարտահրավերի առջեւ դրուած է, որպէսզի պատշաճեցուի զգալիօրէն փոփոխուած կացութիւններու, պէտք է մեր եկեղեցիները աւելի լուրջ ուշադրութիւն դարձնեն վերանորոգութեան գործընթացին, առաւելի եւս գործնական վերանորոգութիւններ ըլլան ժողովուրդին կեանքին համար»:⁹ Նորին Սրբութեան այս հրամայական հաստատումէն թելադրուելով, Ս. Պարսամայ ճգնաւորին մասունքը կրնայ գործնականօրէն ո՛չ միայն Հայ եւ Ասորի եկեղեցիներու միջ-եկեղեցական յարաբերութեան մէջ նոր աշխուժութիւն մը բերել, այլեւ՝ գործնականօրէն հայ եւ ասորի եկեղեցւոյ հաւատացեալները ի մի խմբել: Կը հաւատամ, որ եթէ նախաձեռնութիւն մը կազմակերպուի, երկու քոյր եկեղեցիներու կողմէ, որպէսզի Ս. Պարսամայ ճգնաւորին տօնը միասնաբար տօնախմբուի, անիկա անպայմանօրէն կրնայ աշխուժացնել հայ եւ ասորի եկեղեցական եւ ժողովրդային յարաբերութիւնները: Այս առիթը կարելի է հանդիսաւոր տօնի մը վերածել երկու եկեղեցիներու մէջ, փոխն ի փոխ զայն տօնելով Հայ եւ Ասորի եկեղեցիներու մէջ, Սուրբին աջով խաչահանգիստ կատարել (ջրօրհնէք) եւ նշել երկու եկեղեցիներու դաւանակից ու լծակից ըլլալու իրականութիւնը:

Եզրափակելու համար, Ս. Պարսամայ ճգնաւորի հոգեւոր եւ պատմական արժէք ունեցող այս մասունքը վերստին կեանք կ'առնէ իր նոր աջակերպ մասնատուփով, որպէսզի հաւատացեալները սուրբին օրհնութենէն ներշնչուելով, զօրանան իրենց հաւատքին մէջ եւ վերյիշեն, թէ ինչպիսի վեհ արժէքներու տէր եկեղեցւոյ մը կը պատկանինք:

ՊԱՐՈՅՐ ՎՐԴ. ՇԷՐՆԷՉԵԱՆ

(Շար. 2 եւ վերջ)

⁹ Aram I, "In Search of Ecumenical Vision," Third Edition, Antelias, Lebanon: Armenian Catholicosate of Cilicia, 2002, p. 22.

ՓԻԼԻՍՈՓԱՅԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ

ԿԱՆՏԻ ԲԱՐՈՅԱԳԻՏՈՒԹԵԱՆ ՆՈՐԱՐԱՐՈՒԹԻՒՆԸ*

ԿԱՆՏԻ ԱԶԴԵՑՈՒԹԻՒՆԸ

1787 թուականին, ինչպես նշեցինք, լոյս կը տեսնէ Կանտի գլուխ-գործոցը նկատուող երկի («Քննադատութիւն՝ զուտ բանականութեան», գերմ. բնագիր՝ "Kritik der reinen Vernunft" (KrV), երկրորդ (վերստուգուած եւ ընդարձակուած) հրատարակութիւնը: Այնուհետեւ Կանտ կը դառնայ շատ աւելի ճանաչուած ու հռչակաւոր փիլիսոփայ մը, թէ՛ Գերմանիոյ տարածքին եւ թէ արտասահմանի մէջ: Այդ ժամանակաշրջանէն սկսեալ կարելի է խօսիլ փիլիսոփայական նոր ուղղութեան մը մասին, որ **Կանտականութիւն** (Kantianism) կը կոչուի, որ իր կարգին ունեցաւ հետեւորդներ եւ հակառակորդներ: Կանտի ազդեցութիւնը մեծ եղաւ նաեւ իր կենդանութեան սկսած եւ իրմէ ետք շարունակուած **Գերման գաղափարապաշտութիւն** (German Idealism) փիլիսոփայական ուղիին վրայ: Կանտի ազդեցութեան որպէս հետեւանք, 19-րդ դարու երկրորդ կիսուն յառաջացաւ փիլիսոփայական **Նոր-Կանտականութիւն** (Neo-Kantianism) ուղղութիւնը: Կանտի ազդեցութիւնը տակաւին շարունակուեցաւ ժամանակակից 20-րդ դարուն ու կը շարունակուի մինչեւ մեր օրերը:

➤ ԿԱՆՏԱԿԱՆՈՒԹԻՒՆ

Կանտի կենդանութեան շրջանին յառաջացած փիլիսոփայական այս ուղղութիւնը, կ'ընդգրկէր Կանտի անմիջական հետեւորդները եւ յաջորդները, որոնցմէ յիշարժան են՝ գրող-փիլիսոփայ **Ռայնհոլդ** (Carl Leonhard Reinhold, 1757-1823), բանաստեղծ-փիլիսոփայ **Շիլլէր** (Johann Christoph Friedrich Schiller, 1759-1805) եւ փիլիսոփայ **Եէաշը** (Gottlob Benjamin Jäsche, 1762- 1842), որ ինչ-

* **Նիւթը**, մեծ մասամբ քաղուած եւ յօդուածի վերածուած է հեղինակին նոր լոյս տեսած «ԲԱՐՈՅԱԳԻՏՈՒԹԻՒՆ – փիլիսոփայական ակնարկ» գիրքէն (632 էջ), Անթիլիաս, Հոկտեմբեր 2021:

պէս տեսանք, խմբագրողն ու հրատարակիչն էր «Իմմանուէլ Կանտի տրամաբանութիւնը» (գերմ. բնագիր՝ "Immanuel Kants Logik") երկին:

Ինչպէս Կանտէն ետք, նոյնպէս նոր ժամանակներուն, ընդհանրապէս Կանտի կեանքն ու գործը ուսումնասիրողները եւս կը նկատուին Կանտականութեան հետեւորդներ, ինչպէս գերման փիլիսոփաներ՝ **Հենրիշ** (Dieter Henrich, *1927), **Բաուլմ** (Manfred Baum, *1939), **Հէօֆը** (Otfried Höffe, *1943), **Պրաուս** (Gerold Prauss, *1937), **Շէօնեքըր** (Dieter Schönecker, *1962) եւ ուրիշներ:

➤ ԳԵՐՄԱՆ ԳԱՂԱՓԱՐԱՊԱՇՏՈՒԹԻՒՆ

Եթէ **գաղափարապաշտութիւնը** (Idealism) սկիզբ առաւ Հնադարեան ժամանակաշրջանին, Պլատոնի մօտ, ապա նոր Դարաշրջանի 18-րդ եւ 19-րդ դարերուն եւ Կանտի ազդեցութեան տակ, դարձեալ կարեւորութիւն պիտի ստանար այս անգամ Գերմանիոյ մէջ եւ որպէս փիլիսոփայական ուղի պիտի ստանար **Գերման գաղափարապաշտութիւն** (German Idealism) անուանումը:

Ըստ գաղափարապաշտ փիլիսոփայութեան, աշխարհի էութիւնը ո՛չ թէ անոր նիւթական կառոյցին մէջ է, այլ՝ բանականութեան մէջ տեղ գտած նիւթի գաղափարին. այլ խօսքով գաղափարներու աշխարհը կը դասուի առաջնահերթ, իսկ տեսանելի, շօշափելի կամ զգալի աշխարհը, կը նկատուի միայն որպէս երեւոյթ:

Գերման գաղափարապաշտութեան ուղին պատրաստող փիլիսոփան **Կանտն** է: Ապա իրեն կը յաջորդեն այլ գերման փիլիսոփաներ, ինչպէս՝ **Ֆիշտէ** (Johann Gottlieb Fichte, 1762 – 1814), **Շելլինգ** (Friedrich Wilhelm Joseph Schelling, 1775 – 1854) եւ **Հեգէլ** (Georg Wilhelm Friedrich Hegel, 1770 – 1831):

Կանտի աշակերտ **Ֆիշտէ**, համաձայն չէր իր ուսուցչին հետ եւ կը մերժէր հայեցողութիւնը ընդունիլ, որպէս ճանաչողութեան աղբիւր եւ կը կեդրոնանար իր ենթակայական գաղափարապաշտութեան (Subjective Idealism) վրայ: Կանտ բացասականօրէն արձագանգեց իր աշակերտի գաղափարին: **Շելլինգ** եւ **Հեգէլ** եւս անհամաձայնութիւններ ունէին Կանտի հետ: Հեգէլի մահով (1831) հետզհետէ իր աւարտին պիտի հասնէր գերման գաղափարապաշտական այս ուղին:

Այս շարքի վերջին ներկայացուցիչը կը հանդիսանայ գերման փիլիսոփայ՝ **Շոպենհաուեր** (Arthur Schopenhauer, 1788 – 1860), որ իր տեղը ունեցաւ նաեւ 19-րդ դարու փիլիսոփայական նոր ուղութեան մը մէջ, որ պիտի կոչուէր՝ **Կեանքի փիլիսոփայութիւն** (գերմ.՝ Lebensphilosophie, ֆրնս.՝ Philosophie de la vie, անգլ.՝ Philosophy of life): **Շոպենհաուեր**, մերժելով Հեգէլի ուղղութիւնը, ինքզինք Կանտի ամենակարեւոր աշակերտը կը նկատէր:

➤ ՆՈՐ-ԿԱՆՏԱԿԱՆՈՒԹԻՒՆ

19-րդ դարու երկրորդ կիսուն, Գերմանիոյ մէջ, Նիւթապաշտական (Materialism) եւ Դրապաշտական (Positivism) փիլիսոփայական ուղղութիւններուն որպէս հակաշարժում, յառաջացաւ Նոր-Կանտականութիւնը (Neo-Kantianism), «ետ՝ դէպի Կանտ» ("back to Kant") նշանաբանով: Այս նոր ուղղութիւնը, որ 1880 - 1930 թուականներուն իր փիլիսոփայական կարեւոր ներդրումով յիշատակութեան արժանի է, ունեցաւ երկու թեւ, ներկայացուած երկու տարբեր գերմանական դպրոցներով: Մարբուրգեան եւ Բադէնեան դպրոցները:

• Մարբուրգեան դպրոցը

Այս դպրոցը կոչուած է գերմանական Մարբուրգ (Marburg) քաղաքի անունով. իր գլխաւոր ներկայացուցիչները կը հանդիսանան գերման փիլիսոփաներ՝ Հ. Կոհէն (Hermann Cohen, 1842 - 1918), Պ. Նատորպ (Paul Natorp, 1854 - 1924) եւ Է. Կասիրէր (Ernst Cassirer, 1874 - 1945):

Մարբուրգեան դպրոցը կը ծանրանայ գլխաւորաբար Կանտի ճանաչողութեան տեսական փիլիսոփայութեան եւ մասնաւորաբար անդրանցական (Transcendental) դրութեան վրայ:

Յիշեալ փիլիսոփաներէն Կոհէն, նաեւ իր իւրայատուկ բարոյագիտական տեսութիւնը ունի, որ կը տարբերի Կանտի ձեւապաշտական ու պարտագիտական բարոյագիտութենէն: Կոհէնի համաձայն, նաեւ կրօնի հիմքը բարոյագիտութիւնն է:

• Բադէնեան դպրոցը

Այս դպրոցը կոչուած է Հարաւային Գերմանիոյ Բադէն (Baden) շրջանի անունով. իր գլխաւոր ներկայացուցիչները կը հանդիսանան գերման փիլիսոփաներ՝ Վ. Վինդելբանդ (Wilhelm Windelband, 1848-1915) եւ իր սերտ աշակերտը՝ Հ. Ռիկերտ (Heinrich Rickert, 1863 - 1936):

Բադէնեան դպրոցի ուշադրութեան կեդրոնը՝ արժէքաբանութիւնն (Axiology) է, Կանտի անդրանցական (Transcendental) դրութեան համապատասխան: Օրինակ, Ռիկերտի համաձայն, տրամաբանութեան գերագոյն արժէքը՝ ճշմարտութիւնն է, բարոյագիտութեան գերագոյն արժէքը՝ բարին, գեղագիտութեան գերագոյն արժէքը՝ գեղեցիկը իսկ կրօնի գերագոյն արժէքն է՝ սրբութիւնը: Վինդելբանդ եւ Ռիկերտ կը զանազանեն երկու աշխարհներու միջեւ, մէկ կողմէն՝ բնութեան առարկայական աշխարհը (բնական գիտութիւններու կամ բնագիտութեան ոլորտ, գերմ.՝ Naturwissenschaft, անգլ.՝ Natural Sciences) եւ միւս կողմէն՝ արժէքներու անդրանցական աշխարհը (մարդասիրական գիտութիւններու կամ բանասիրութեան ոլորտ, գերմ.՝ Geisteswis-

senschaft, անգլ.՝ Human Sciences կամ Humanities): Յիշեալ երկու աշխարհները, սակայն, կը միանան արժեւորող անհատի կամ ենթակայի (Subject) իմաստի կենսագործման աշխարհին մէջ:

➤ **ՆԵՐԿԱՅ** ժամանակներուն եւս, Կանտի ազդեցութիւնը եւ Կանտականութիւնը տակաւին կը շարունակուին: Կանտի հանդէպ եղած հետաքրքրութիւնը շատ մեծ է, օրինակ Կանտի մահուան 200-րդ տարուան (2004) ընթացքին, Կանտի եւ իր փիլիսոփայութեան մասին հրատարակուած են աւելի քան 1000 մենագրութիւններ: Ամենուրեք տեղի կ'ունենան Կանտի նուիրուած միջազգային համագումարներ:

Կանտի մահուան յաջորդ տարին (1805), Կանտի ծննդավայրին մէջ հիմնադրուեցաւ «Կանտի ընկերներու ընկերակցութիւնը» ("Gesellschaft der Freunde Kants"), որուն հիմնադիր անդամները եղած էին Կանտի սեղանակիցները:

Կանտի մահուան 100-րդ տարելիցին (1904), գերման փիլիսոփայ Վայհինգեր¹ (Hans Vaihinger, 1852-1933), Գերմանիոյ մէջ հիմը դրաւ «Կանտի ընկերակցութեան» (Kant-Gesellschaft), որ կը հրատարակէ «Կանտի Ուսումնասիրութիւններ» ("Kant-Studien") եռամսեայ հանդէսը, որուն ներկայ հրատարակիչներն են՝ Պաուլ² (Manfred Baum, *1939) եւ Կլեմմե³ (Heiner Klemme, *1962):

Ճապոնիայի մէջ եւս 1976 թուականին հիմնադրուեցաւ «Կանտի ընկերակցութիւն» մը, որ 2000 թուականէն սկսեալ կը հրատարակէ «Կանտի Ուսումնասիրութիւններ» տարեգիրքը: Մայրաքաղաք Տոկիոյի (Tokyo) փիլիսոփաներու տաճարին մէջ, աւելի քան 100 տարիներէ ի վեր կախուած է «աշխարհի շորս իմաստունները» կոչուած նկար մը, ուր կ'երեւին՝ Բուդդա, Կոնֆուցիոս, Սոկրատէս եւ Կանտ:

¹ **Վայհինգեր** (Hans Vaihinger, 1852–1933), գերման փիլիսոփայ, Կանտի մասնագէտ հետազոտող, Իդէալական-գործնական դրապաշտութիւն (Idealistic-pragmatic positivism) փիլիսոփայութեան ներկայացուցիչ: Գլխաւոր երկն է՝ «Իբր թէ-ին փիլիսոփայութիւնը» (գերմ. բնագիր՝ "Die Philosophie des Als Ob", անգլ.՝ "The philosophy of as if"):

² **Պաուլ** (Manfred Baum, *1939), գերման փիլիսոփայ, Կանտի մասնագէտ հետազոտող, փիլիսոփայութեան պրոֆեսոր՝ Վուփերտալի Բերգեան համալսարանի մէջ:

³ **Կլեմմե** (Heiner Klemme, *1962), գերման փիլիսոփայ, Կանտի մասնագէտ հետազոտող, փիլիսոփայութեան պրոֆեսոր՝ նախ Մարբուրգի, Վուփերտալի, Մայնցի ապա Հալլէի համալսարաններուն մէջ:

ՎԵՐՉԱԲԱՆ

Գերման գաղափարապաշտութեան (German Idealism) փիլիսոփայական ուղղութեան ներկայացուցիչ **Ֆիշտէ**⁴ անգամ մը ըսած է՝ «Թէ ինչպիսի՞ փիլիսոփայութիւն կ'ընտրես, կախեալ է անկէ, թէ դուն ինչպիսի մարդ ես»:

Թէեւ Կանտ նշանաւոր է իր իմացաբանութեամբ (Epistemology) եւ բնագանցութեամբ (Metaphysics), այսուհանդերձ Կանտի փիլիսոփայութիւնը կը տարածուի նաեւ բարոյագիտական, գեղագիտական, կրօնական, իրաւական, ընկերա-քաղաքական եւ պատմական մարզերուն վրայ: Արդարեւ փիլիսոփայութիւն մը, որու բազմակողմանի ազդեցութիւնը արդէն առկայ էր Կանտի ժամանակաշրջանին եւ տակաւին կը շարունակուի, իրմէ ետք, մինչեւ ներկայ ժամանակները:

Կանտի գործնական փիլիսոփայութեան կամ բարոյագիտութեան ոլորտի երկերը, թէ՛ իր ժամանակին եւ թէ անկէ ետք, իրենց ակնյայտ անմիջականութեան պատճառով, շատ աւելի մեծ ազդեցութիւն ունեցած են, քան անոր տեսական փիլիսոփայութեան երկերը, որու լաւագոյն նմոյշը ու Կանտի գլուխ գործոցը նշեցինք արդէն՝ «Քննադատութիւն զուտ բանականութեան» երկն է:

Կանտի բարոյագիտութեան ոլորտի անխտիր բոլոր **երկերը**⁵ կը բխին անոր սրտի խորքէն: Բարոյականութեան ազատ ինքնորոշումի հարցով Կանտ հմայուած ու ոգեւորուած է: Ի խնդիր մարդկութեան ազնուացման ու բարօրութեան, Կանտի նախանձախնդրութիւնը անսահման է, մանաւանդ իր ժամանակուան անձնական եւ հասարակական հեղձուցիչ ընկճուածութիւնը նկատի ունենալով: Խորաթափանց Կանտ իր բարոյագիտական ուսմունքով մարդու գերագոյն արժէքը կը հաստատէր ո՛չ միայն մարդու բանականութեան եւ իմացականութեան վրայ, այլեւ մարդու սրտի ու համոզումներու վրայ եւ ան իր բարոյական ուսմունքը ո՛չ միայն համալսարանի մէջ կ'ուսուցանէր, այլեւ անձնապէս կ'ապրէր՝ ամէն օր:

Կանտի բարոյագիտութիւնը, ընդհանրապէս, ինչպէս յիշուեցաւ «**Հիմնաւորում**» բաժնի սկիզբը, կը բխի Կանտի անհատականութեան կամ անձնաւո-

⁴ **Ֆիշտէ** (Johann Gottlieb Fichte, 1762–1814 թ.) – Գերման փիլիսոփայ եւ հասարակական գործիչ: Գերմանական գաղափարապաշտութիւն (German Idealism) փիլիսոփայական ուղղութեան ներկայացուցիչ: Բարոյագիտութեան առնչուած գլխաւոր երկն է՝ «Բարոյական ուսմունքի համակարգը՝ գիտութեան սկզբունքներով» (գերմ. բնագիր՝ "Das System der Sittenlehre nach den Principien der Wissenschaftslehre", 1798 թ.):

⁵ **Կանտի** բարոյագիտութեան ոլորտի բոլոր երկերը, որոշ մանրամասնութեամբ, նշուած են աշխատասիրութեան սկիզբը, «Լերածութիւն» բաժնին մէջ (տե՛ս ՀԱՍԿ 2022, թիւ 3-4, էջ 202):

բուժեան (գերմ.՝ Persönlichkeit, անգլ.՝ Personality) հիմնական սկզբունքներէն, որոնք են՝

- խորաբափանց յստակութեան եւ նշմարտացիութեան պահանջքը,
- զօրաւոր ինֆնուրոյնութիւնը,
- անողոք հետետողականութիւնը եւ
- բանականութեան գերակշռութիւնը:

Այստեղ կ'անդրադառնամ Կանտի անհատականութիւնը կամ անձնաւորութիւնը կազմող նկարագրի վերոյիշեալ գլխաւոր յատկանիշներուն եւ իր խառնուածքին:

1. ՃՇՄԱՐՏԱՑԻՈՒԹԻՒՆ

Կանտի նկարագրի գլխաւոր յատկանիշը ճշմարտացիութիւնն է, որ որպէս նախադրեալ, ելակէտ եւ հիմնական կատարելութիւն կը բացայայտուի իր բոլոր երկերուն մէջ: Կանտի համաձայն, գիտնականի մը մօտ անկեղծութեան պակասը ամենավատ սխալներէն է: Որպէս անձ, ազնիւ ու անկեղծ Կանտը նաեւ իր երկերուն մէջ ազնիւ ու անկեղծ է: Փոխան սկեպտիկութեան (Scepticism) Կանտ որդեգրած է քննադատութեան (Criticism) եղանակը, որ իրեն համար գիտութեան ուղին է:

Ճշմարտացիութեան կողքին, Կանտ իր արտայայտութիւններուն մէջ փորձած է լեզուական բծախնդրութեամբ կատարեալ յստակութեան հասնիլ: Կանտ մեծ կարեւորութեամբ կը շեշտէր՝ հասկացութիւններու (գերմ.՝ Begriff, անգլ.՝ Concept) պարզորոշութիւնն ու յստակութիւնը:

2. ԻՆՔՆՈՒՐՈՅՆՈՒԹԻՒՆ

Վերոյիշեալ բծախնդիր յստակութեան եւ ճշմարտացիութեան պահանջքը անքակտելիօրէն կապուած է Կանտի ինքնուրոյնութեան հետ, որ կը բխի Կանտի ներքին «ես»էն, որովհետեւ հաւաստիութիւնը, որքան որ մարդոց համար կարելի է, կը բխի մարդու ներքին «ես»էն: Թէեւ Կանտ որոշ չափով ազդուած է այլ փիլիսոփաներէն (օրինակ՝ Հյում⁶ եւ Ռուսօ⁷), սակայն Կանտի ներքին էութիւնը չէ ձեւափոխուած: Ինչպէս Կանտի կեանքն ու անձնաւորութիւնը, նոյնպէս անոր երկերը կը բացայայտուին ինքնուրոյնութեամբ:

⁶ Հյում (David Hume, 1711–1776 թ.) – սկոտլանդացի բարոյագէտ-փիլիսոփայի մասին տե՛ս Էջատակի 2-րդ ծանօթագրութիւնը (տե՛ս ՀԱՍԿ 2022, թիւ 7-8, էջ 487):

⁷ Ռուսօ (Jean Jacques Rousseau, 1712–1778 թ.) – ֆրանսացի գրող ու մանկավարժ-փիլիսոփայի մասին տե՛ս Էջատակի 9-րդ ծանօթագրութիւնը (տե՛ս ՀԱՍԿ 2022, թիւ 7-8, էջ 492):

«Աշխարհը այնպիսին է, ինչի որ մենք կը վերածենք» ասոյթը եթէ Կանտի տեսական փիլիսոփայական երկերուն մէջ որոշ կարեւորութիւն ունի, սակայն Կանտի գործնական փիլիսոփայութեան կամ բարոյագիտական երկերուն մէջ, որպէս կամեցողութեան ու վարմունքի աշխարհ աւելի կ'իմաստաւորուի: Եթէ Կանտի համաձայն ազատութիւնը լոկ իմ իմացական կամեցողութեան միջոցով կը բնորոշուի, եթէ Կանտի համաձայն՝ կամեցողութիւնս ազատ է կամ առանց արտաքին օժանդակութեան՝ միայն ինձմէ կախեալ է, ահա այս իմաստով տեսական ինքնուրոյնութիւնը կը վերածուի գործնականի: Ո՛չ միայն փիլիսոփայութեան մէջ, այլ մանաւանդ գործնական կեանքին մէջ պէտք է ձերբազատուինք, որպէս անշահափասներ խնամակալ ունենալէ եւ դառնանք ինքնուրոյն շահափասներ կամ նոյնինքն Կանտի բառերով՝ «ա-րիութիւնը ունեցիր ... եւ ինքդ որոշէ՝ անձիդ ընդմէջէն» ("Habe den Mut ... und bestimme Dich aus Dir selbst"):

3. ՀԵՏԵԼՈՂԱԿԱՆՈՒԹԻՒՆ

Վերոյիշեալ բժախնդիր յստակութեան եւ ճշմարտացիութեան պահանջքը, ո՛չ միայն կապուած է Կանտի ինքնուրոյնութեան հետ, այլ հանգիստ չի թողուր զինք, մինչեւ որ անողոք հետեւողականութեամբ տեղ մը չհասցնէ եւ նկարագրի յատկանիշ մը չկերտէ:

Կանտի համաձայն եւ իր իսկ բառերով, նկարագրի կերտումը «կենցաղավարութեան ներքին սկզբունքներուն բացարձակ միութիւնն է ... եւ նկարագրի այս միութեան մէջ կը կայանայ մարդու կատարելութիւնը»: Այս պատճառով, Կանտի համաձայն, մարդու առաջին գործը պիտի ըլլայ (անհրաժեշտաբար) ազատութեան սկզբունքի ներառումը՝ վերոյիշեալ միութեան մէջ: Առանց ազատութեան, մարդ կ'իյնայ մոլորութիւններու գիրկը: Այլ տեղ մը կը յիշէ.՝ նկարագրին է, որ պէտք է մարդու բնութիւնը ղեկավարէ եւ իր նկարագրովն է, որ մարդը պէտք է արժեւորուի: Ասոր կողքին, Կանտ աւելի կը նախընտրէր շար նկարագրի ունեցող մարդը, քան բարեհամբոյր, բայց թոյլ կամագուրկը:

4. ԲԱՆԱԿԱՆՈՒԹԻՒՆ

Հետեւողականութիւն կը նշանակէ սկզբունքներու միութիւն, իսկ սկզբունքները կը դրուին բանականութեան միջոցով: Կանտի համաձայն, նկարագրի մը մէջ որքան բանականութիւնը զգայական հակումներէն ու մղումներէն աւելի գերակշիռ ըլլայ, այնքան աւելի ցայտուն ու պարզորոշ կը դառնայ: Կանտի վրայ, սկզբնական շրջանի Ռուսոյի ազդեցութիւնը, երթալով կը տկարանայ եւ զգայական հակումներն ու մղումները կը նուազին ի նպաստ բանականութեան եւ դատողականութեան: Զարմանալի չէ, որ բանականութեան գերակշռութեան պատճառով, Կանտ ընդհանրապէս կը մերժէ ինչ որ գեր-

զգայական եւ ցնորական է եւ ասով կարելի է բացատրել նաեւ Կանտի իւրա-
յատուկ յարաբերութիւնը մէկ կողմէն արուեստի (բանաստեղծութիւն, երա-
ժըշտութիւն եւ գեղանկարչութիւն) հետ, ինչպէս նաեւ իր ընտանեկան եւ բա-
րեկամական շրջանակին հետ:

Կանտի մօտ բանականութեան գերակշռութեան յատկանիշը շատ աւելի
յստակ է իր բարոյագիտութեան ծիրէն ներս: Կանտի համաձայն թուլակա-
մութիւնը կամ փափկասրտութիւնը իր բառերով՝ «կեղծ կարեկցութիւններ»
են եւ կ'եզրակացնէ, որ փոխան բարեսրտութեան, հարկ է յարգանք ունենալ
մարդոց իրաւունքներուն եւ մարդոց պարտաւորութիւններուն հանդէպ, նաեւ
առաքինութիւնները պէտք է բխին զուտ բանականութեան սկզբունքներէն:

5. ԽԱՌՆՈՒԱԾՔ

Աւելի լաւ հասկնալու համար Կանտի ստեղծագործութիւնները, նկարագ-
րի վերոյիշեալ յատկանիշներու կողքին, հարկ է անդրադառնալ նաեւ անոր
մարդկային խառնուածքին:

Ընդհանրապէս Կանտի խառնուածքը հեռու էր տաքարին ու դիւրաբոր-
բոք ըլլալէ, այսուհանդերձ կարելի չէ բացառել զանոնք, մանաւանդ երբ
հարցը կ'առնչուէր իր բարոյական սկզբունքներուն, որոնց համար ան պատ-
րաստ էր սուր վիճաբանութիւններու մէջ մտնել: Կանտի խառնուածքին մէջ
բացայայտուող ու տարիքի բերումով աւելի շեշտուող հանդարտութիւնն ու
պաղարիւնութիւնը երբեք պէտք չէ շփոթել անտարբերութեան ու անզգայու-
թեան հետ: Կանտի խառնուածքին մէջ, մանաւանդ իր երիտասարդութեան
շրջանին, կը տեսնուի նաեւ մելամաղձոտ տրամադրութիւն մը, երբ Կանտ
յոռետես արտայայտութիւններ կ'ունենայ, ի տես մարդու բարոյական կեան-
քին վերաբերող ոչ գոհացուցիչ արդիւնքներուն:

Տարիքի յառաջացումով Կանտի խառնուածքը փոփոխութեան կ'ենթար-
կուի եւ ան կը դառնայ աւելի հանդարտ ու զուարթ անձնաւորութիւն մը:
Կանտ կատակասէր ու սրամիտ ըլլալով, կը նախընտրէր նաեւ կատակասէր
ու սրամիտ անձերը եւ իր նախասիրութիւններուն մաս կը կազմէին երգիծա-
բանները, իր խօսքերով՝ «աւելի լաւ է **Դեմոկրիտոսը**⁸, քան **Հերակլիտոսը**⁹»,
որովհետեւ առաջինը լաւատես ու զուարթ փիլիսոփայ մըն էր, մինչ երկրոր-
դը՝ յոռետես ու մռայլ:

⁸ **Դեմոկրիտոս** (յուն.՝ Dēmókritos, 460 – 371 մ.թ.ա.) – յոյն նախասոկրատեան փիլիսոփայ, աշակերտ՝ Լեւկիպոսի (յուն.՝ Leukippos, 500 – 440 մ.թ.ա.): Իր ուսուցչին հետ հիւմ-
նադիր «հիւլէական» (Atomism) փիլիսոփայական ուղղութեան: Իր լաւատեսութեան հա-
մար կոչուած է նաեւ՝ «խնդուն փիլիսոփան»:

⁹ **Հերակլիտոս** (յուն.՝ Herákleitos 550 – 480 մ.թ.ա.) – յոյն նախասոկրատեան բարոյախօս
փիլիսոփայ, Փոքր Ասիոյ Եփեսոս քաղաքէն: Իր յոռետեսութեան համար կոչուած է նաեւ՝
«մռայլ փիլիսոփան»:

Կանտի համաձայն երեք որակաւոր բարիքներն են.- 1) առողջ բանակա-
նութիւնը, 2) զուարթ սիրտը եւ 3) ինքնավար կամքը:

Իսկ Կանտի յարաբերութիւնը ուրիշներու հանդէպ կարելի է ամփոփել իր
բառով՝ մարդկայնութիւն (գերմ.՝ Humanität, անգլ.՝ Humanity) եզրոյթին մէջ,
որ իր բացատրութեամբ՝ «փոխադարձ բարեացակամութիւնն է, առնչուած
փոխադարձ յարգանքին»: Այս իմաստով, ան իր գրութիւններուն մէջ կը յիշէ
նաեւ մարդկայնութիւնը կարեւորող լատիներէն հետեւեալ ասոյթը¹⁰.- "Homo
sum; humani nihil a me alienum puto" (հայերէն՝ «Ես մարդ եմ եւ ինձի համար
ոչ-մարդկայինը օտար է»):

Ինչպէս յիշուեցաւ, Կանտ ունեցած է յոռետես արտայայտութիւններ, մա-
նաւանդ երբ խնդրոյ առարկայ նիւթը մարդկութեան արժեւորման կը վերա-
բերի, օրինակներ՝ «մարդը բնութեամբ շար է» կամ «մարդիկ իրարու հանդէպ
շարիք կը գործեն»: Այսուհանդերձ Կանտ երբեք չի կորսնցներ իր լաւատեսու-
թիւնը:

Մարդկութեան հանդէպ իր արտայայտութիւնները ժամանակի ընթացքին
աւելի կը մեղմէ եւ կ'ըսէ, որ մարդը անմիջական հակում չունի դէպի շարը,
այլ շարը ինքն է որ կը գայթակղեցնէ մարդը ու մարդը սաղրանքի կ'են-
թարկէ: Կանտ տակաւին կ'աւելցնէ, որ մարդուն մէջ գտնուող բարիի սերմե-
րը դեռ պէտք է աճին ու կատարելագործուին եւ ասոր համար հարկաւոր է
ազատութիւնը, իր ամբողջական իմաստով.- կամքի ու խղճի ազատութիւն,
դաստիարակչական ու քաղաքացիական ազատութիւն:

Կանտ, մինչեւ խոր ծերութիւն, կը վստահի մանաւանդ երիտասարդու-
թեան եւ կը մնայ անոր կողքին, հոն տարածելով նաեւ իր տեսական ու գործ-
նական փիլիսոփայութիւնը: Կանտի համաձայն, վերջին հաշուով, մարդկային
սերունդը յարատեւօրէն կը յառաջդիմէ դէպի աւելի լաւը:

ԴՈԿՏ. ՍԱՐԳԻՍ Ա. ՔԷՉԵԱՆԱՆ

Գերմանիա

(Շար. 9 եւ վերջ)

¹⁰ Կանտ, լատիներէն ասոյթը մէջբերած է հռոմէացի կատակերգակ-բանաստեղծ Տերեն-
տիոսէն (Publius Terentius Afer, 195 – 159 մ.թ.ա.):

ԳՐԱԽՕՍԱԿԱՆ

ՄԱՐԳԻՍ ՔԷՀԵԱԵԱՆԻ
«ԲԱՐՈՅԱԳԻՏՈՒԹԻՒՆ – ՓԻԼԻՍՈՓԱՅԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ»
Արեւմտահայերէն ուսանելի Գիրքը

Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութիւնը, 2021 Հոկտեմբերին, Անթիլիասում հրատարակեց Սարգիս Քէհեաեանի «ԲԱՐՈՅԱԳԻՏՈՒԹԻՒՆ – փիլիսոփայական ակնարկ» աշխատութիւնը (Ա. հրատարակութիւնը՝ Սբ. Էջմիածին, 2018 թ.): Առաջին հրատարակութեան համեմատ աշխատանքը զգալիօրէն ընդարձակուած է, ինչպէս եւ վերստուգուած ու վերամշակուած:

Գրքի տպագրութիւնը երաշխաւորել են Երեւանի պետական համալսարանի փիլիսոփայութեան եւ հոգեբանութեան ֆակուլտետի խորհուրդը՝ որպէս ուսումնասօժանդակ ձեռնարկ կրթական հաստատութիւնների համար:

Ինչո՞ւ որոշեցինք անդրադառնալ հենց այս գրքին, երբ հայերէն հարիւրաւոր գրքեր են լոյս տեսնում Հայաստանում եւ Սփիւռքում: Տողերիս հեղինակն էլ փիլիսոփայ կամ բարոյագէտ չէ: Ի դէպ, փոքր-ինչ ուշացումով ենք անդրադառնում գրքին, քանի որ այն բոլորովին վերջերս է հասել մեզ: Բայց գրախօսութիւնը, համոզուած ենք, որ ուշացած չէ:

Յայտնի է, որ ԵՈՒՆԵՍԿՕ-ն (UNESCO) արեւմտահայերէնը ներառել է վտանգուած լեզուների ցանկի մէջ, քանի որ տարեցտարի նուազում է արեւմտահայերէն խօսողների թիւը, արեւմտահայերէնը հանրային կեանքի տարբեր ոլորտներում եւ գիտութեան բազմաթիւ ճիւղերում խիստ սահմանափակ է գործածւում եւայլն, եւայլն...:

Ահա Գերմանիայում բնակուող բժիշկ, երկրորդ մասնագիտութեամբ բարոյագէտ-փիլիսոփայ Սարգիս Քէհեաեանը ձեռնամուխ է եղել եւ յաջողութեամբ իրագործել իր առջեւ դրած խնդիրը՝ գրել բարոյագիտութեան ուսումնական մի ձեռնարկ (այստեղ, «ձեռնարկ» բառն արեւելահայերէն իմաստով), գիրք, որը նախատեսուած է բարձրագոյն կրթական հաստատութիւններում՝ համալսարաններում գործածելու համար: Ուշագրաւ փաստ է, մի կողմից լեզուի վտանգուածութիւն, միւս կողմից՝ գիտութեան մի ճիւղի համալսարանական գիրք: Սա աշխատութեան կարեւոր նշանակութիւններից մէկն է:

Մեր կարծիքով երկրորդ նշելի իրողութիւնն այն է, որ թերեւս առաջին անգամ հայաստանեան համալսարանների համար գործածութեան է երաշխաւորուում արեւմտահայերէնով ստեղծուած ուսումնական մի ձեռնարկ: Սա ազգային-լեզուական մերձեցման եւ միասնականութեան հասնելու առումով կարեւոր քայլ է: Եթէ մենք վստահ ենք, որ բարձրագոյն կրթութիւն ստացող ուսանողը պէտք է կարողանայ օգտուել ուսերէն, անգլերէն, ֆրանսերէն կամ գերմաներէն աշխատութիւններից եւ դասագրքերից, ապա շատ աւելի դիւրին եւ ընդունելի պիտի լինի արեւմտահայերէն ձեռնարկը: Այս առումով ողջունելի է Երեւանի պետական համալսարանի, ինչպէս նաեւ Սբ. Էջմիածնի հրատարակչական խորհրդի լայնախոհ մօտեցումը:

Սոյն գրախօսութեամբ հանգամանօրէն կ'անդրադառնանք «ԲԱՐՈՅԱԳԻՏՈՒԹԻՒՆ – փիլիսոփայական ակնարկ» աշխատութեան միայն լեզուին եւ եզրաբանութեանը՝ փիլիսոփայական բովանդակային հարցերը թողնելով նեղ մասնագէտներին: Գրքի «Անսահման պատասխանատուութեան զգացումով» վերնագրուած յառաջաբանում փիլիսոփայական գիտութիւնների դոկտոր, պրոֆեսոր Սէյրան Զաքարեանը գրում է. «... հեղինակը ոչ միայն հայերէն է ներկայացնում օտարածին յայտնի եզրոյթները, այլեւ հետեւողականօրէն գըտնում եւ թարգմանում է անյայտ, նոր կամ քիչ գործածուող օտարալեզու հասկացութիւնները»: Իսկ գրքի հեղինակ Սարգիս Քէհեաեանը, «Եզրաբանութիւն» բաժնում հետեւեալ ճիշդ դիտարկումն է անում. «Որքան զօրաւոր ու ամբողջական ըլլայ լեզուի իւրայատուկ եզրաբանութիւնը, այնքան զարգացած կը նկատուի ազգային մշակոյթը»:

Փիլիսոփայութեան հայաստանցի մասնագէտներն ու ուսանողները Սարգիս Քէհեաեանի աշխատութեան մէջ կը տեսնեն բազմաթիւ նոր եզրոյթներ, ինչպէս եւ վաղուց արմատացած եզրոյթների հայերէնի վերածուած համարժէքներ: Առաջին հայեացքից նրանք կարող են ընդդիմանալ, հազար ու մի պատճառաբանութիւն գտնել, թէ իբր օտարալեզու այս կամ այն եզրոյթն արդէն ընդունուած է հայերէն գիտական խօսքում, շատերն արձանագրուած են մասնագիտական բառարաններում, ուստի պէտք չէ դրանք հայացնել: Այդպէս մտածողներին հարկ է ասել, որ հայերէնում այդ գործընթացը սկսուել է տակաւին 5-րդ դարում, երբ յունական կրթութիւն ստացած մեր թարգմանիչներն ու հեղինակները պատճէնում, ստեղծում, յարմարեցնում էին հին յունարէն գիտական (աստուածաբանական, իմաստասիրական, քերականական) մեծաթիւ եզրոյթներ, որոնց զգալի մասը փոխանցուեց հայերէնի յաջորդ փուլերին: Այդ եզրոյթներից շատերն առ այսօր գործածութեան մէջ են, եւ գործածողներից շատերն անգամ չգիտեն, որ դրանք հայոց ոսկեդարի ծնունդ են, 1600-ամեայ պատմութիւն ունեն:

Սարգիս Քէհեաեանը հետեւողականօրէն եւ համակարգուած է կատարել գիտաբառերի հայացման գործը՝ անշուշտ հետեւելով ընդհանուր հայերէնում, մասնաւորապէս արեւմտահայերէնում մշակուած մօտեցումներին ու

աւանդոյթին: Այսպէս եւրոպական եզրերի մէջ գտնուող “-ism” վերջաւորութիւնը եւ սրա տարբերակները, հայերէնի մէջ շատ յաճախ «-պաշտութիւն» եւ երբեմն՝ «-ականութիւն» կամ պարզապէս «-ութիւն» բաղադրիչներով են ներկայանում:

Մէջբերում եմ՝

• *Օրինակներ՝ «-պաշտութիւն» բաղադրիչով.-*

բանապաշտութիւն (Rationalism), գաղափարապաշտութիւն (Idealism), գոյապաշտութիւն (Existentialism), գործնապաշտութիւն (Pragmatism), կասկածապաշտութիւն (Scepticism), երկապաշտութիւն (Dualism), բազմապաշտութիւն (Pluralism), դրապաշտութիւն (Positivism), եւայլն ...:

• *Օրինակներ՝ «-ականութիւն» բաղադրիչով,*

որ կը հանդիպին յատուկ անուններու կապակցութեամբ.- Պլատոնականութիւն (Platonism), էպիկուրականութիւն (Epicureanism), Կանտականութիւն (Kantianism), Հեգելականութիւն (Hegelianism), եւայլն ...:

• *Օրինակներ՝ «-ութիւն» բաղադրիչով.-*

այլասիրութիւն (Altruism), եսասիրութիւն (Egoism), միաստուածութիւն (Monotheism), բազմաստուածութիւն (Polytheism), համաստուածութիւն (Pantheism), դրամասիրութիւն (Capitalism), ստոյկիկութիւն (Stoicism), մարդկայնութիւն (Humanism), ընկերավարութիւն (Socialism), համայնավարութիւն (Communism), եւայլն...:

Վերջ մէջբերման:

Համեմատենք Սարգիս Քէհեաեանի աշխատութեան մէջ գործածուած եզրոյթները (աշխատութեան վերջում զետեղուած «Բառացանկը» ընդգրկում է 1430 միաւոր) «Փիլիսոփայական բառարանի» (Երեւան, 1975, թարգմանութիւն է ռուսերէնից) համապատասխան միաւորների հետ:

Այսպէս՝ գործիականութիւն – ինստրումենտալիզմ (Instrumentalism), երկապաշտութիւն – դուալիզմ (Dualism), կասկածապաշտութիւն – սկեպտիցիզմ (Scepticism), նպատակաբանութիւն – տելեոլոգիա (Teleology) եւայլն...:

Համանման պատկեր է նաեւ «Բարոյագիտական բառարանում» (Երեւան, 1985, կրկին թարգմանութիւն է ռուսերէնից):

Այսպէս՝ այլասիրութիւն – ալտրուիզմ (Altruism), գոյապաշտութիւն – էկզիստենցիալիզմ (Existentialism), ոչնչապաշտութիւն – նիհիլիզմ (Nihilism) եւայլն...:

Հայաստանում հայակազմ այս եզրոյթները, որոնց մի մասը անշուշտ նոր չէ, գիրքը գործածողին սկզբնական շրջանում կարող են անսովոր թուալ յատկապէս արեւմտահայերէնին անսովոր աչքին: Կարեւորը, սակայն, մօտեցման իրազործումն է: Շարունակելով բազմադարեան աւանդոյթը՝ փիլիսոփայական (իմաստասիրական) եզրոյթները եւ այլ գիտաճիւղերում գործածուող բառերը հնարաւորութեան դէպքում պէտք է հայացնել:

Սարգիս Քէհեանի աշխատութեան միջոցով, շրջանառութեան մէջ են դրուում կամ նորովի են շրջանառուում հեղինակին կամ այլոց ստեղծած հայակազմ մի շարք եզրոյթներ, ինչպէս՝ այլօրինութիւն (Heteronomy), արտահայեցութիւն (Extraversion), արտայայտապաշտութիւն (Expressionism), բազմապաշտութիւն (Pluralism), բարեշրջականութիւն (Evolution), գաղտնաբանութիւն (Cryptology), գաղտնախոհութիւն (Occultism), գաղտնուայց (Esoteric), երջանկապաշտութիւն (Eudemonism), ինքնակարեկցութիւն (Self-pity), ծինաբարոյագիտութիւն (Genethics), ծինաբանութիւն (Genetics) եւ այլն...:

Հեղինակը մի շարք դէպքերում ընտրուած եզրոյթի կողքին նշում է հայերէն, «կիսահայերէն» (հայերէն եւ օտար բաղադրիչներ ունեցող) կամ օտար մէկ այլ համարժէք(ներ), ինչպէս՝ բռնակալութիւն - բռնատիրութիւն (Despotism), գոյաբանութիւն - էաբանութիւն (Ontology), գոյատեւել - յետապրիլ, վերապրիլ (Survive), գոյացութիւն - սուբստանց (Substance), եղանակաւորութիւն - մոդալութիւն (Modality), երեւութաբանութիւն - ֆենոմենոլոգիա (Phenomenology), երեւութապաշտութիւն - ֆենոմենալիզմ (Phenomenalism), երկսայրաբանութիւն - երկընտրանք (Dilemma), զգայապաշտութիւն - զգայականութիւն (Sensualism), ընդհանրականացում - համընդհանրականացում (Universalization), ինքնաբեր - ինքնակամ (Spontaneous), իրականութիւն - ռեալութիւն (Reality), իրապաշտութիւն - ռեալիզմ (Realism), ճակատագրապաշտութիւն - ֆատալիզմ (Fatalism), պարտագիտութիւն - դեոնտոլոգիա (Deontology) եւ այլն...:

Կայ նաեւ հակառակը, ինչպէս՝ գեմդեր - սեռ (Gender):

Այս ճկուն մօտեցումը գրքից օգտուող մասնագէտին կամ ուսանողին յուշում է, որ նա կարող է ընտրել նշուած տարբերակներից մէկը կամ ազատօրէն գործածել երկուսն էլ: Առժամայէս: Ժամանակը եւ բառի ներուժը կ'որոշեն, թէ դրանցից ո՛րը կը դիմանայ մրցակցութեանը:

Որոշ դէպքերում, երբեմն փակագծերում նշուած հայատառ օտարալեզու եզրոյթները արեւելահայ ուսանողներին եւ մասնագէտներին յուշում են, թէ հայերէն կազմութիւնն իրենց ծանօթ ո՛ր եզրոյթի համարժէքն է:

Այսպէս՝ տրամասութիւն - դիալեկտիկա (Dialectics), եւ այլն...:

Մեզ, օրինակ, ժամանակավրէպ են թւում ի յառաջագունէ - նախափորձնական (լատ.՝ a priori) եւ ի յետագունէ - յետփորձնական (լատ.՝ a posteriori) նախդրաւոր կառոյցները: Հնարաւոր է, որ լատիներէն կառոյցների դիմաց հեղինակը միտումնաւոր է դրել հնաբոյր այս կառոյցները (ի յառաջագունէ եւ ի յետագունէ): Հնարամիտ լուծում մըն է, սակայն մենք կը նախընտրէինք հեղինակի նշած երկրորդ տարբերակները: Ի դէպ, առաջինը՝ ի յառաջագունէ, կայ Ստ. Մալխասեանցի բառարանի լատիներէն արտայայտութիւնների ցանկում, երկրորդի համար Մալխասեանցն ունի՝ ըստ հետեւելոյն:

Սարգիս Քէհեանի եզրաբանական բժախնդիր աշխատանքը յիշեցնում է 19-րդ դարի Վենետիկի Միսիթարեան միաբանութեան հայերի լեզուաշինական ժրջան աշխատանքը, որ յոյժ քաջալերելի է:

Ժամանակակից գրական հայերէնի երկու տարբերակների հնչունական համակարգերի տարբերութիւնները (արեւելահայերէնի բաղաձայնական համակարգը գրաբարի պէս եռաշարք է, իսկ արեւմտահայերէնինը՝ երկշարք խլազուրկ է) եւ օտար անունների, բառերի տառադարձման տարբեր մօտեցումները յանգեցրել են մեծ խառնաշփոթի: Մենք վերջերս ուսումնասիրեցինք արեւելահայերէնի եւ արեւմտահայերէնի միայն լեզուանունների տարբերակայնութիւնը՝ մատնանշելով մի քանի տասնեակ տարբերակներ, ինչպէս՝ արեւել. բովարտերեն – արեւմտ. պովարտերէն, արեւել. նորվեգերեն – արեւմտ. նորվեկերէն, արեւել. շվեդերեն – արեւմտ. շուետերէն եւ այլն...:

Սարգիս Քէհեաեանն իր աշխատութեան մէջ դիմել է օտար յատուկ անունների ոչ թէ տառադարձման, այլ գրադարձման՝ այդ մասին գրելով «Տառադարձութիւն եւ գրադարձութիւն» բաժնում: Իբրեւ արդիւնք գրքում տեսնում ենք այսպիսի լեզուանուններ՝ պորտուգալերէն (ընդունուած փորթուկալերէն-ի փոխարէն), ճապոնեւէն (ընդունուած ճապոնեւէն-ի փոխարէն) եւ այլն...: Սա հայերէնի գրական երկու տարբերակների հնարաւորինս մերձեցման առումով ճիշտ քայլ է:

Այդպէս էլ, բնականաբար Kant ազգանունը, որ գրքում Կանտ է եւ ոչ թէ Քանթ:

Այսպէս, օտար յատուկ անունները գրային պատկերի տեսանկիւնից շատ չեն տարբերում փոխատու լեզուներում ընդունուած ձեւից: Այդպէս էլ՝ Բուդդա (Buddha), Բրոդ (Broad), Գաբլէր (Gabler), Գադամէր (Gadamer), Դիդրո (Diderot), Կոհէն (Cohen), Կոլումբոս (Columbos), Հայդեգգէր (Heidegger), Հաջիմէ (Hajime) եւ այլն:

Գրքի «Անուանացանկ» բաժնում կան 255 անուններ (առաւելաբար փիլիսոփաների):

Օտար անունները գրադարձուած ներկայացնելու շնորհիւ կը դիւրանայ դրանց հայերէն տարբերակների որոնումը նաեւ թուային տիրոջթում: Այստեղ ի հարկէ կան որոշ բացառութիւններ, ինչպէս՝ Կէօթէ (Goethe), Եւրիպիտէս (Euripidés): Լիովին հասկանալի է. զօրաւոր է աւանդոյթի ուժը: Կան նաեւ շեղումներ ընդունուած սկզբունքից, ինչպէս՝ Երազմուս Ռոդերտամոյի (Erasmus Roterodamus):

Գրքի վերջում հեղինակը յիշատակում է տողերիս հեղինակի անունը եւս՝ նշելով, որ «մեր եզրաբանական զրոյցները արգասաբեր են եղել»: Հաճոյքով ենք յիշում այդ զրոյցները, երբ որեւէ եզրոյթ էինք քննարկում, համաձայնուում կամ ոչ, փորձում տարհամոզել մէկզմէկու: Կարեւորն այստեղ այն ջանքն էր, որ գործադրում էր յանուն հայերէն բառի եւ եզրի: Դա հանգամանակից, մանրակրկիտ եւ երկուստեք գոհունակութիւն բերող աշխատանք էր: Համոզուած ենք, որ առհասարակ եզրաբանական քննարկումներին բուն մասնագէտից բացի պիտի ներգրաւուած լինի նաեւ լեզուաբանը: Բայց եւ հաշուի պիտի առնել, որ նրանք ընդհանուր առմամբ համախոհներ պիտի լինեն:

Պիտի նշենք, որ անհամաձայնություններ եւս ունեցել ենք: Օրինակ՝ չկարողացայ Սարգիս Քէհեաեանին համոզել, որ որպէս անգլերէն Discourse-ի հայերէն համարժէք գործածի Հայաստանում յատկապէս լեզուաբանութեան մէջ (գործածուած է նաեւ քաղաքականութեան մէջ) ընդունուած «խօսոյթ» եզրոյթը: Հեղինակը համոզուած ընտրեց «ֆննախօսութիւն» եզրոյթը՝ բացատրելով, որ նրա մէջ արտացոլուած են թէ՛ ֆննարկումը եւ թէ՛ խօսոյթը: Մեր նպատակը յստակ էր. հասնել արեւելահայերէն եւ արեւմտահայերէն գիտական եզրերի առաւելագոյն ընդհանրութեան:

Այդպէս էլ հիմա կարծում ենք, որ Հայաստանում պիտի օգտուել գիտական շրջանառութեան մէջ դրուած բարոյագիտական, փիլիսոփայական եւ այլ ճիւղերի նորակերտ եզրոյթներից՝ հնարաւորինս հրաժարուելով օտար միաւորներից:

Հայաստանում, օրինակ, փորձեր են արուել ընդունուած փոխառեալ սխալաւոր եզրոյթի (տառադարձուել է ռուսերէնի ազդեցութեամբ) փոխարէն գործածել հայակազմ դպրական-ը, բայց ապարդիւն: Սարգիս Քէհեաեանի գրքում կան ինչպէս դպրական-ը (սքոլաստիկ, Scholastics), այնպէս էլ դպրականութիւն-ը (Scholasticism): Հայերէն համարժէքները կրկին մրցամարտի են ելել օտար գիտաբանների դէմ:

Ընդհանրականներ կամ համընդհանրականներ (անգլ.՝ Universals, գերմ.՝ Universalien) եզրոյթի հայերէն մի համարժէքն է լեզուաբանութեան մէջ գործածուող ընդհանրոյթ եզրոյթը, բայց, ինչպէս երեւում է հեղինակը - ոյթ վերջածանցով կազմութիւնների նկատմամբ վերապահութիւն ունի:

Հեշտամահութիւն (Euthanasia) եզրոյթին զուգահեռ գործածութեան մէջ կայ նաեւ դիւրամահութիւն տարբերակը: Միեւնոյն հասկացութեան համար հայերէն երկու համարժէք ունենալը թուլացնում է նրանց ուժը, քանի որ ծանրութիւնը բաշխուած է երկու միաւորի վրայ, եւ, ի վերջոյ, շահում է օտար եզրոյթը (հայաստանեան բառարաններից մէկը արձանագրել է էվթանասիա տարբերակը):

«Բառացանկում» զետեղուած ինֆնաբեր/ինֆնակամ (Spontaneous) եզրոյթների կողքին, թուում է, կարող էր լինել նաեւ ինֆնաբուխ-ը:

Բնական է, որ գրքի գործածութեան ժամանակ կարող է քննարկում կամ բանավէճ ծաւալուել այս կամ այն եզրոյթի շուրջ: Գիտական բանավէճը օգտակար կարող է լինել հայերէն որոշ եզրոյթներ ճշգրելու եւ ճշգրտելու առումով եւս: Օրինակ, բանապաշտութիւն (Rationalism) եզրի փոխարէն գուցէ առաջարկուի բանականապաշտութիւն, քանի որ բան-բաղադրիչը «խօսք, միտք» հասկացութեան հետ է զուգորդուում: Թէպէտ միաժամանակ պիտի ընդունել, որ բանականապաշտութիւն-ն աւելի երկար է, որ կը դժուարացնի նրա գործածութիւնը (որպէս ասածիս հակափաստարկ կարող են բերուել հայերէն ուրիշ՝ կրկին երկար եզրոյթների օրինակներ. գերմաներէնի պարագայում դա

խնդիր չէ): Մեր ասածին համահունչ է հեղինակի գործածած (թերեւս ստեղծած) հիմնականապաշտութիւն (Fundamentalism) եզրոյթը:

Նոյն կերպ էլ դրապաշտութիւն (Positivism) բառի փոխարէն կարող է առաջարկուել դրականապաշտութիւն եզրոյթը. այն մտահոգութեամբ, իբր դրա-բաղադրիչը ուսանողի մտքում կարող է կապուել դիւրբ բառի հետ (հմմտ., օրինակ, դրափոխութիւն «դիրքի փոփոխութիւն»), բայց փաստ է, որ դրապաշտութիւն-ն արդէն ձեռք է բերել գոյութեան իր իրաւունքը՝ նաեւ գրանցուելով մի բառարանում:

Այդպէս հեղինակը օտար Negativism-ի դիմաց բառացանկում դրել է հայերէն երկու տարբերակ՝ ժխտականութիւն եւ ժխտականապաշտութիւն, որոնք նման են մեր նշած օրինակներին: Կրկին պիտի տեսնենք, թէ զոյգ ձեւերից ո՞րը կը բռնի ժամանակի քննութիւնը:

Փիլիսոփայութիւն ուսանողը թերեւս երկմտի կամապաշտութիւն (Voluntarism) եզրոյթի պարագայում. նրա մէջ տեսնել կա՞մբ-ը, թէ կամայականութիւն-ը:

Մեր կարծիքով աւելի լաւ կը լինէր, եթէ համարկութիւն – ինտեգրում (Integration) շարքում առաջին միաւորը եւս –ում ածանցով կազմուէր, որպէս համարկում: Վստահ ենք, որ թէ՛ համարկութիւն-ը, թէ համարկում-ը նախընտրելի են ինչպէս օտար, այնպէս էլ օտար հիմքով կազմուած միաւորներից:

Յարգ անդրադարձանք գրքում տեղ գտած բառային եզրոյթներին: Կան նաեւ նոր եւ ուշագրաւ բառակապակցութիւններ, յատկապէս «Ընտանիքի բարոյագիտութիւն» բաժնում, ինչպէս՝ կորիզային ընտանիք, միայնակ ծնողի ընտանիք, խառն ընտանիք, փոխադարձական պարտաւորութիւններ, երախտագիտական պարտաւորութիւններ, բարեկամական պարտաւորութիւններ:

Մեր խօսքի վերջում նշենք գրախօսուող աշխատանքին լեզուական առումով բնորոշ դրական մէկ յատկանիշ եւս: Ուսումնական ձեռնարկը գրուած է պարզ, հասկանալի, մատչելի լեզուով: Սա բոլոր տեսակի դասագրքերին ներկայացուող ամենակարեւոր պահանջներից մէկն է: Սարգիս Քէհեանը կարողացել է դա ապահովել:

Անշուշտ այս նիւթը, մասնաւորապէս եզրաբանութիւնը, կարելի է երկար քննարկել, սակայն ամփոփենք:

Լոյս աշխարհ է եկել բարեխղճօրէն կատարուած ուսումնական մի գիրք, որը երկար ճանապարհ ունի անցնելու: Վստահ ենք, որ անհանգիստ, պրպրտուն հեղինակը՝ Սարգիս Քէհեանը, կը շարունակի կատարելագործել, լրացնել ու կոկել իր աշխատութիւնը: Մինչեւ յաջորդ հրատարակութիւնը «ԲԱՐՈՅԱԳԻՏՈՒԹԻՒՆ – փիլիսոփայական ակնարկ» ուսումնական ձեռնարկը կը գործի ի շահ հայկական բարձրագոյն կրթութեան եւ հայերէնին:

ԴԱԻԻԹ ԳԻԻՐՋԻՆԵԱՆ

Լեզուաբան, ՀՀ Լեզուի Կոմիտէի նախագահ
Երեւան

ՅՕԴՈՒԱԾ

**ՄԱՅԻՍԵԱՆ ՄԵՐ ՅԱՂԹԱՆԱԿՆԵՐՈՒՆ
ՃԱԿԱՏԱԳՐԱԿԱՆ ԿԱՐԵՒՈՐՈՒԹԻՒՆԸ***
(ՄԱՅԻՍ 28-ի ԱՌԻԹՈՎ)

Հերոսամարտի ամիս էր 1918 թուի Մայիս ամիսը: Հերոսամարտ՝ աշխահի թատերաբեմին վրայ մեր գոյութիւնը պահպանելու համար: Մեր դիմաց դրուած էր երկու ճամբայ, կեանքի ու մահուան ճամբայ: Կա՛մ պէտք էր կռուէինք թուրքին դէմ եւ մեր արիւնով պահէինք մեր գոյութիւնը, եւ կամ պէտք էր յանձնուէինք եւ յանձնէինք մեր հայրենի հողը եւ գոյազրկուէինք: Մեր մարտիկները ընտրեցին առաջին ճամբան:

Թուրքին նպատակն էր՝ գրաւել Սարգարապատը, Բաշ-Ապարանը եւ Ղարաքիլիսէն, ներխուժել Երեւան եւ ցեղասպանութեան գործը իր աւարտին հասցնել: Առիթը ինքնաբերաբար ներկայացաւ, երբ 1915 թուականի Յուլիսի 2-ին, ռուսական զօրքերը անակնկալ կերպով քաշուեցան Կովկասէն: 1917 թուականի աւարտին, ռուսական Կովկասեան ռազմաճակատը արդէն քայքայուած էր: 1916-17 տարիներուն Արամ Մանուկեան կը գտնուէր Թիֆլիս, որովհետեւ Թիֆլիսի Ազգային Պիւրոյի անդամ էր: Ռուսական Կովկասեան ռազմաճակատի քայքայումէն ետք՝ ղրկուեցաւ Երեւան, որով պիտի դառնար Երեւանի փրկիչը: 1917-ի Դեկտեմբերէն 1918-ի Մայիսը երկարող ամիսներուն տեղի ունեցող իրադարձութիւններուն ժամանակ Արամ Մանուկեանը տիրական եւ կեդրոնական դէմք էր Երեւանի մէջ: 1918 թուականի սկիզբներուն, ռուսական զօրք գրեթէ չէր մնացած Կովկասի մէջ, եւ սա պատճառ դարձաւ որ թուրք-Անդրկովկասեան պատերազմը վերածուէր թուրք-հայկական պատերազմի: Այս իրողութիւնը վտանգի առջեւ դրաւ ո՛չ միայն Արեւմտեան Հայաստանը, այլեւ՝ Արեւելեան Հայաստանը: Թուրքը շուրջ ժամանակ կորսընցնել: Իր բանակը ուղղեց դէպի Կարս: 1918 թուականի Ապրիլի 25-ին, Կարսը առանց դիմադրութեան յանձնուեցաւ թուրքին: Սա բարոյալքիչ եւ հիասթափեցնող մեծ ազդեցութիւն ունեցաւ մեր վրայ:

1918 թուականի Մայիսի 21-ին թրքական ուժերը գրաւեցին Երեւանէն 30

* Խօսուած՝ Թեհրան, 25 Մայիս 2023 «Չհարմահալ»ի միութեան սրահին մէջ:

քիլոմետր հեռու գտնուող Սարդարապատ կայարանը եւ նոյնանուն գիւղը: Սա մեծապէս ուրախացուց Կովկասեան թուրքերը (այսօրուան ատրպէյճանցիները), որոնք որեւէ ատեն կրնային օգնութեան ձեռք երկարել թուրքին: Սարդարապատի գրաւումէն ետք, թրքական ներխուժման վտանգ կար էջմիածին ու Երեւան: Ժողովուրդը յուսալքուած վիճակի մէջ էր: Նոյնիսկ Երեւանի զօրավարը՝ Մովսէս Սիլիկեան յուսալքութեան մէջ էր: Ժողովուրդէն շատեր փախչելու մասին կը մտածէին: Շատ հայ զինուորներ համոզուած ըլլալով որ կարելի չէ թուրք բանակին դէմ կռուիլ՝ կը լքէին բանակը: Թուրքին դէմ կռուելու պատրաստակամութիւն չկար: Սեփական ուժին վստահելու եռանդը կարծէք բոլորովին շիջած էր: Հայը տակաւին քիչ ժամանակ առաջ ցեղասպանութեան ենթարկուած էր: Մեծ թիւով արեւմտահայեր գաղթած էին Արեւելեան Հայաստան: Մեծ բաժինը անոնց ո՛չ տուն ունէր, ո՛չ դեղ եւ ոչ ալ պարէն: Զէնքին քանակը քիչ էր, եւ փամփուշտներուն թիւը սահմանափակ:

Մայիսի 19-ի երեկոյեան գումարուած ազգային խորհուրդի նիստի ժամանակ առաջարկ եղաւ լքել Երեւանը եւ քաշուիլ Նոր Բայազետի լեռները եւ հոնկէ կռուիլ թուրքին դէմ: Արամ Մանուկեան վճռական կերպով մերժեց առաջարկը՝ ըսելով «Ձե՛նք դատարկեալ Երեւանը: Պէտք է կռուինք եւ դիմադրենք թշնամիին մինչեւ մեր վերջին կաթիլ արիւնը, մինչեւ մեր վերջին փամփուշտը»: Արամ Մանուկեան ինքզինք գտաւ մեծ մարտահրաւէրի առջեւ: Հայրենասիրութեան հուրը լափեց իր ողջ էութիւնը: Արմատականօրէն մերժեց անձնատուութեան գաղափարը: Բուն կերպով պայքարեցաւ յուսալքութեան դէմ: Աքէթիկերիկի հրապարակը հաւաքուած ժողովուրդին բարձրաձայն ըսաւ. «Պէտք չէ դանդաղիլ: Ով որ չ'ուզեր մեռնիլ եւ ով որ չ'ուզեր ոչխարի նման մորթուիլ, այս պահուս թող զենք վերցնէ եւ ճակատ մեկնի»: Այս խօսքէն անմիջապէս ետք, Արամ Մանուկեան արգիլեց որ հայ երիտասարդներ հեռանան Երեւանէն: Պատուիրեց մէկտեղել բոլոր հրացանները: Կանանց եւ երեխաներուն պատուիրեց տուն-տուն դառնալ եւ փամփուշտ հաւաքել: Շրջելով շուկաներուն ու հրապարակներուն մէջ, հայրենասիրական պատգամներով ներշնչեց բոլորը եւ զանոնք հայրենապաշտպան առիւծներու վերածեց: Մայիսի 19-ին, Արամ Մանուկեան քաջալերեց ու պատուիրեց զօրավար Մովսէս Սիլիկեանին որ նահանջելու գաղափարը բոլորովին հեռացնէ իր միտքէն, եւ երթայ ու արեւելեան դաշտին մէջ կռուի թշնամիին դէմ: Արամ Մանուկեան կրցաւ արիութեան հոգիով տոգորել զօրավար Մովսէս Սիլիկեանը: Խոստացաւ զինուորական ուժ ապահովել իրեն: Շուտով կազմուեցան զինուորական մարտունակ գունդեր եւ զրկուեցան ռազմաճակատ, օգնելու համար ճակատ գտնուող զինուորներուն:

Զօրավար Մովսէս Սիլիկեան, Արամ Մանուկեանին պատուէրով կ'երթայ Գէորգ Ե. Սուրէնեանց կաթողիկոսի մօտ, եւ անկէ կը խնդրէ որ անմիջապէս թողու էջմիածինը եւ երթայ Սեւանայ կղզի, իր ամառային նստավայրը, որով-

հետեւ թուրքերը այնքան մօտեցած էին էջմիածնին որ անոնց թնդանօթնե-րուն ձայնը յստակ կը լսուէր էջմիածին ու վեհարան: Կաթողիկոսը կը պատասխանէ. «Գնա եւ ըսէ հայ բանակին, ես տեղէս չեմ շարժիր եւ չեմ թողուր սուրբ էջմիածինը: Եթէ մեր զինուորները չեն կրնար էջմիածինը պաշտպանել, եւ թուրքերը մտնելու են սուրբ էջմիածին՝ իմ դիակը պիտի գտնեն սուրբ Իջման սրբավայրին մէջ»: Կաթողիկոսին պատասխանը մեծապէս կը զարմացնէ բայց միաժամանակ զօրութիւն կը ներշնչէ զօրավար Մովսէս Սիլիկեանին: Այս խօսքէն ետք, Գէորգ Սուրէնեանց Կաթողիկոս հրամայեց որ Երեւանէն մինչեւ էջմիածին, Բաշ-Ապարանէն մինչեւ Ղարաքիլիսա ու Սարդարապատ, Սեւանէն մինչեւ Դիլիջան ղօղանջեն Հայաստանեան բոլոր եկեղեցիներու զանգերը, ցերեկ ու գիշեր, ի զէն կոչելով բոլոր հայերը: Եկեղեցիներու զանգերուն ձայները լեցուցին Երեւանը եւ անոր շրջակայքը: Բոլորը լսեցին Վեհափառ հայրապետին ու Արամ Մանուկեանին կոչը ու կանչը, եւ անոնց վճիռին ու վճռակամութեան մասին: Արամ Մանուկեան իր հայրենաշունչ պատգամներով եւ Գէորգ Սուրէնեանց կաթողիկոս իր հերոսական կեցուածքով, կայծակի արագութեամբ կեանքի կոչեցին ինքնապաշտպանական խումբեր:

Մայիսի 22-ին, զօրավար Թովմաս Նազարբեկեանի հրամանով, 7000 հաշուող հայկական զօրքը կը յարձակի թուրքերուն 9000 կանոնաւոր զինուոր-ներու եւ 3000 քիւրտ հեծեալներու վրայ եւ կ'ազատագրէ Սարդարապատ կայարանն ու գիւղը: Հայերուն հարուածներուն ներքեւ՝ թուրքը 500 զոհ կու տայ եւ ստիպուած կը նահանջէ շուրջ 20 քիլոմէթր:

Մայիսի 27-ին, Դանիէլ Բեկ-Փիլոմեանի եւ Կարապետ Հասան-Փաշաեանի հրամանատարութեամբ, հայկական զօրքը կ'անցնի նոր յարձակումի թրքա-կան բանակին վրայ: Երկրորդ այս յարձակումին իր մասնակցութիւնը կը բերէ Գարեգին արքեպիսկոպոս Յովսէփեան, որ եկած էր Արցախէն, իր հետ բերելով իր իսկ ղեկավարած զինուորներու գունդը: Գարեգին արքեպիսկոպոս Յովսէփեան հետագային պիտի ըլլար Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոս, 1943 թուին: Մայիսի 30-ին, զօրավար Թովմաս Նազարբեկեանի հրամանով հակա-յարձակումը կը դադրի: Սարդարապատի ճակատամարտին, թշնամին կրեց իր առաջին մեծ պարտութիւնը: Ճակատագրական էր այս յաղթանակը հայ ժողովուրդին համար, որովհետեւ ատիկա արգիլեց թուրքին մուտքը Երեւան:

Թուրքերը տեսնելով որ չկարողացան Սարդարապատի միջոցով հասնիլ Երեւան՝ փոխեցին իրենց ուղղութիւնը: Փորձեցին 10,000 հաշուող զօրքով գրաւել Բաշ-Ապարանը եւ անկէ հասնիլ Երեւան: Մովսէս Սիլիկեան անմիջապէս Երեւանեան զօրախումբէն 5000 զինուոր ղրկեց Բաշ-Ապարան, որոնց հրամանատարն էր Դրոն: Բաշ-Ապարանցիք լսած ըլլալով Սարդարապատի փառաւոր յաղթանակին մասին, մեծապէս ոգեւորուած էին: Մեծ քաջութեամբ կռուեցան թուրքերուն դէմ. հոս հայերը իրենց երկրորդ փայլուն յաղթանակը ձեռք ձգեցին, որով կանխեցին թուրքերուն մուտքը դէպի Արարատեան դաշտ

եւ Երեւան: Փրկուեցան Արեւելեան Հայաստանի մեր եղբայրներն ու քոյրերը ստոյգ կոտորածէ:

Թշնամին այս անգամ փորձեց Երեւան մտնել Դիլիջանի վրայով: Զօրավար Թովմաս Նազարբեկեան իր սպայակոյտը տեղափոխեց Ղարաքիլիսա, եւ Ղարաքիլիսէյի մէջ կռուեցաւ թուրքին դէմ եւ արգիլեց անոր մուտքը Դիլիջան: Տարածաշրջանին մէջ էր Անդրանիկ Զօրավարը, որուն յանձնուեցաւ Ղարաքիլիսէյի հիւսիսը պաշտպանելու գործը: Ան յաջողեցաւ ետ մղել թրքական երեք յարձակումներ: Ղարաքիլիսէյի շրջակայքը կեդրոնացած հայկական զինուժը Գարեգին Նժդեհի, զօրավար Համազեանի, գնդապետներ Նիկոլա Ղորղանեանի եւ Պէյ Մամիկոնեանի, առաւել՝ Մեսրոպ Եպիսկոպոս Տէր-Մովսէսեանի, եւ Դարպաս գիւղի քահանայ՝ Տէր Կոմիտաս Սարգսեանի գլխաւորութեամբ, 7000 հաշուող բանակով հերոսաբար ճակատամարտեցան թրքական 10.000-նոց լաւապէս զինուած բանակին դէմ: Արիւնայեղ կռիւներէ յետոյ, Մայիսի 30-ին թուրքը կրցաւ գրաւել Ղարաքիլիսէն: Հայկական ուժերը քաշուեցան Դիլիջան: Այնպէս կրնայ թուիլ մեզի որ մենք պարտուեցանք, խորքին մէջ սակայն, սա պարտութիւն չէր, այլ մեծ յաղթանակ, որովհետեւ, պէտք չէ մոռնանք որ թուրքերուն նպատակը միայն Ղարաքիլիսէն գրաւելը չէր, այլ Ղարաքիլիսէյէն յետոյ՝ հասնիլ Դիլիջան եւ Դիլիջանէն ետք՝ գրաւել Երեւանը: Բայց քանի անոնք մեծ թիւով զոհ տուին Ղարաքիլիսէյի մէջ, անկէ ետք անկարող դարձան իրենց ընթացքը շարունակել դէպի Դիլիջան եւ գրաւել Երեւանը:

Ճիշդ է որ Սարգարապատի հերոսամարտին մէջ աւելի աչքի ինկած է զօրավար Թովմաս Նազարբեկեանը, Բաշ-Ապարանի մէջ՝ Դրօն, Ղարաքիլիսէյի մէջ՝ Թովմաս Նազարբեկեանը, Անդրանիկ Զօրավարն ու Գարեգին Նժդեհը, եւ սակայն Արամ Մանուկեանը ինքն էր որ Սարգարապատի, Բաշ Ապարանի եւ Ղարաքիլիսէյի հերոսամարտերու ժամանակ հայկական բանակին թիկունքին անվտանգութիւնը ապահովեց, եւ անոնց անվտանգութիւնը ապահովելով՝ ապահոված ու պաշտպանած եղաւ Երեւանի թիկունքը, իսկ ապահովելով ու պաշտպանելով Երեւանի թիկունքը, ինքն էր որ կասեցուց ցեղասպանութեան ընթացքը եւ թոյլ չտուաւ որ այդ իր ճանապարհը շարունակէր դէպի Արեւելեան Հայաստան: Կարեւորութեամբ պէտք է շեշտել, որ եթէ չըլլար Արամ Մանուկեանի քաջասրտութիւնը, ղեկավարութիւնը, իմաստուն առաջնորդութիւնը, եւ եթէ չըլլար Գէորգ Ե. Սուրէնեանց կաթողիկոսի հերոսական քայլն ու կեցուածքը, մենք կրնայինք կորսնցնել Երեւանը եւ ամբողջ արեւելեան Հայաստանը:

Ի՞նչ դասեր կրնանք քաղել Սարգարապատի, Բաշ-Ապարանի եւ Ղարաքիլիսէյի հերոսամարտերէն:

1) Հաւատքի ու հայրենիքի պաշտպանութեան համար, եկեղեցին միշտ կանգնած է եւ պէտք է կանգնի հայ բանակին կողքին: Գէորգ Ե. Սուրէնեանց

Կաթողիկոսի, Գարեգին Յովսէփեանց արքեպիսկոպոսի, Մեսրոպ եպիսկոպոս Տէր-Մովսէսեանի, Տէր Կոմիտաս քահանայ Սարգսեանի ներկայութիւնը հերոսամարտերու ժամանակ, յստակ կը պարզեն, թէ ամէն անգամ երբ մեր հաւատքն ու հայրենիքը վտանգի առաջ կանգնած են, հայ խաչն ու հայ սուրը միացած են պատերազմի դաշտին վրայ: Մեզի ամենէն ծանօթ օրինակը, 451 թուի Մայիսի 26-ին տեղի ունեցող Վարդանանց պատերազմի օրինակն է, ուր միացան Վարդանի սուրն ու Ղեւոնդ Երէցի խաչը: Եղիշէ պատմիչ կը յիշէ, թէ սրբակենցաղ Ղեւոնդ քահանան իր խօսքերով Աստուծոյ ու հայրենիքի սէրը արծարծեց բոլոր զինուորներուն սրտին մէջ: Իսկ Ղազար Փարպեցին կը յիշէ, թէ Յովսէփ Հողոցմեցի Ա. Կաթողիկոսը ինքն ալ նոյն բանը կ'ընէր: Վարդանանց պատերազմը հաւատամարտ էր, այսինքն՝ մեր հաւատքի պահպանութեան համար տեղի ունեցող մարտ, միաժամանակ հայրենամարտ էր, այսինքն՝ մեր հայրենիքին համար տեղի ունեցող մարտ: Միակ բառով մը, Վարդանանց պատերազմը ԳՈՅԱՊԱՅՔԱՐ էր: Գոյապայքար, կը նշանակէ՝ մեր գոյութիւնը պահպանելու համար մղուած պայքար մը. մեր գոյութիւնը՝ իբրեւ քրիստոնեայ եւ իբրեւ հայ: Արդարեւ, ոեւէ ազգ իր գոյութիւնը պահպանելու համար, անհրաժեշտօրէն կարիքը ունի հաւատքի ու հայրենիքի, որովհետեւ հաւատքը կը պահէ մեր հոգիի գոյութիւնը, իսկ հայրենիքը՝ մեր ֆիզիքական գոյութիւնը: Ազգ մը կը ձուլուի եթէ չունի հայրենիք, եւ կը կորսուի՝ եթէ չունի հաւատք: Վարդանանց պատերազմը միակ օրինակը չէ. մեր պատմութեան մէջ բազմաթիւ են այն էջերը, որոնք ցոյց կու տան թէ եկեղեցին հաւատքի ու հայրենիքի պաշտպանութեան համար՝ միշտ հայ բանակին կողքին կանգնած է.-

Այսպէս, 337 թուին, Պարսից Շապուհ Բ. թագաւորը կը յարձակի Հայաստանի վրայ: Բիւզանդ պատմիչ կ'արձանագրէ, թէ Սուրբ Գրիգոր Լուսաւորչի որդին՝ Վրթանէս կաթողիկոս կը կանգնի հայոց թագաւորին՝ Խոսրով Բ. Կոտակի կողքին եւ կը քաջալերէ զայն, որ Վաչէ Մամիկոնեանի սպարապետութեամբ բանակ կազմէ եւ պատերազմի երթայ:

337 թուին, Սանատրուկ Արշակունի Հայաստանի վրայ կը յարձակի եւ մինչեւ Վաղարշապատ կը հասնի: Բիւզանդ պատմիչ կ'ըսէ, թէ սուրբ Գրիգոր Լուսաւորչի որդին՝ Վրթանէս կաթողիկոսը ներկայ էր հայոց բանակին մէջ եւ իր օրհնութեամբ էր որ ճակատամարտը կը մղուէր:

370 թուին պատերազմ տեղի ունեցաւ Պարսից Շապուհ Բ. թագաւորի բանակին եւ Հայոց բանակին միջեւ: Պատմիչը կը յիշէ, թէ Մեծն Ներսէս Ա. Պարթեւ կաթողիկոսը հայոց բանակ կու գայ եւ կ'օրհնէ հայ զօրավարներուն ու հայ զինուորներուն զէնքերը, եւ կը քաջալերէ զանոնք որ երթան ու քաջաբար կռուին իրենց հաւատքի ու հայրենիքի պաշտպանութեան համար, իսկ ինք, Մովսէս մարգարէին օրինակով, ձեռքերը դէպի երկինք կը բարձրացնէ եւ վեր կը պահէ, մինչեւ որ հայոց բանակը ջախջախիչ պարտութեան կը մատնէ պարսից բանակը:

450 թուին երբ մոգերը կը յարձակին Անգղի եկեղեցիին վրայ, որպէսզի ատրուշանի վերածեն զայն, Ալեոնդ քահանան եւ հետը ուրիշներ, փայտերով, քարերով ու գէնքերով կը յարձակին ու կը ջարդեն զանոնք:

481 թուին Վահանեանց շարժումը կը սկսի Պարսկաստանի Պերոզ թագաւորին դէմ: Ազգար Փարպեցի կը յիշէ, թէ Աթիկ անունով քահանայ մը բանակին մէջ կը գտնուէր եւ բոլոր զինուորներուն ուժ կու տար որ քաջ մնան ու շուրանան իրենց հաւատքն ու հայրենիքը:

483-ի գարնան, Պարսից զօրավար՝ Հազարաուլիստ մեծ բանակով կը յարձակի Վահան Մամիկոնեանի փոքրաթիւ բանակին վրայ: Ազգար Փարպեցի կ'արձանագրէ, թէ Յովհաննէս Մանդակունի Ա. կաթողիկոսը ձի հեծած կը գտնուէր Վահանի Մամիկոնեանի զինուորներուն հետ: Բաւարարուինք յիշեալ օրինակներով:

Վրթանէս, Մեծն Ներսէս, Յովսէփ Հողոցմեցի, Յովհաննէս Մանդակունի եւ Գէորգ Սուրէնեանց կաթողիկոսներուն ներկայութիւնը հայոց բանակին կողքին՝ պատերազմի դաշտին մէջ, աներկբայ կերպով ցոյց կու տայ, որ հայ եկեղեցին միայն խաչին մէջ չէ որ փրկութիւն կը տեսնէ, այլ նաեւ՝ սուրին մէջ, գէնքին մէջ, ինչպէս Խրիմեան Հայրիկ կաթողիկոսը, ըմբոստանալով Համիտեան ջարդերուն դէմ պիտի ըսէր. «...Ելէ՛ք, ելէ՛ք, հայ ժողովուրդ, խաչին ու մանին հետ փրկարար է նաեւ սուրը»: Այո՛, փրկարար է նաեւ սուրը, որովհետեւ, եթէ խաչը կը պահպանէ մեր հոգիի գոյութիւնը, ապա սուրը՝ կը պահպանէ մեր Ֆիզիքական գոյութիւնը: Եթէ խաչը կը փրկէ մեր հոգին, ապա գէնքը՝ կը փրկէ մեր հայրենիքը: Եթէ խաչը մեզի համար կ'ապահովէ հայրենիք մը երկինքի մէջ, ապա սուրն ու գէնքը մեզի համար կ'ապահովեն հայրենիք մը երկրի վրայ:

2) 1915 թուականի Յուլիսի 2-ին ռուսական զօրքերուն անակնկալ նահանջումը Կովկասէն, կը սորվեցնէ մեզի այն կարեւոր ճշմարտութիւնը, որ մեր ազգի ու մեր հայրենիքի պաշտպանութեան համար միայն մեր ուժերուն պէտք է ապաւինինք: Արամ Մանուկեան յուսախաբ եղած ու նեղացած՝ ռուսական զօրքերուն Կովկասէն անակնկալ նահանջումէն, իր շուրջ հաւաքուող ժողովուրդին կ'ըսէ. «Հայերով ոչ ոք չէ հետաքրքրուած, շօշափելի օգնութիւն հասցնելու միտով: Հակառակը, կայ դաւադրական վերաբերմունք: Մինակ ենք ու պէտք է ապաւինինք միայն մեր ուժերուն, թէ՛ ճակատը պաշտպանելու եւ թէ երկրի ներսը կարգ հաստատելու համար»: Հրայր Դժոխքը կ'ըսէ. «Մեր յոյսը պէտք է ըլլայ մեզ վրայ, միայն առաջանալ եւ մեռնիլ սուրբ նպատակի համար. այդ է միայն մեր փառքն ու պսակը»: Իսկ Գարեգին Նժդեհը կ'ըսէ. «Ինքն իրեն յարգող ժողովուրդը իր ինքնապաշտպանութեան յոյսը կը դնէ նախ ի՛ր բազուկի, ի՛ր գէնքի վրայ: Իր ուժերէն զատ ամէն ինչի ապաւինող ժողովուրդն արժանի չէ անկախ հայրենիք ունենալու, ազատ ապրելու»: Իրենց այս խօսքերով, մեր Ֆիզայինները

կը սորվեցնեն մեզի, թէ մեր հաւատքի ու հայրենիքի պաշտպանութեան համար մեր ուժերն պէտք է ապաւինիլ: Արդարեւ, Սարգարապատի, Բաշ-Ապարանի եւ Ղարաքիլիսէյի հերոսամարտերը մէկ յստակ բան ցոյց տուին հայ ժողովուրդին, որ հայ հողը ու հայ մարդը՝ հայուն բազուկով ու հայուն հրացանով միայն կրնան ու պէտք է պաշտպանուին ու ազատագրուին:

3) Մայիսեան հերոսամարտերուն շնորհիւ էր որ կարելի եղաւ Արեւելեան Հայաստանին մէջ վերականգնել հայկական անկախ պետականութիւնը: Պէտք չէ մեր ուշադրութենէն վրիպի, թէ արիւնալի կռիւներէ ետք միայն, 1918 թուականի Մայիսի 28-ին, թշնամին ճանչցաւ մեր հայրենիքն ու հայրենիքի անկախութիւնը: Մեր առաջին հանրապետութիւնը ափսէի մը վրայ շարունակեցաւ մեզի: Մեր արիւնով զայն ձեռք ձգեցինք: Առանց հայու արեան՝ չկայ հայոց հողի փրկութիւն: Առանց հայու զէնքին՝ ո՛չ ոք պիտի ճանչնայ հայն ու հայուն իրաւունքը: Մայիսեան հերոսամարտերը սորվեցուցին մեզի, որ զօրաւորը միայն կրնայ իր կամքը պարտադրել, զօրաւորը միայն կրնայ ճանչցուիլ եւ ընդունուիլ, զօրաւորին միայն ազատութիւն կը տրուի: Աշխարհը զօրաւորները միայն կը ճանչնայ, այդ զօրաւորներէն ըլլանք մենք:

4) Սարգարապատի, Բաշ-Ապարանի եւ Ղարաքիլիսէյի հերոսամարտերը միացուցին Արեւմտահայ ու Արեւելահայ ճակատները, որովհետեւ մահու ու կենաց հարց կար: Յեղասպանուած արեւմտահայերը եւ ցեղասպանուելու վախը ապրող արեւելահայերը մատներու նման բաժան-բաժան էին, բայց երբ միացան՝ բռունցք կազմեցին ու յաղթեցին թուրքին: Մայիսեան հերոսամարտերը հաստատեցին, թէ հաւաքական պայքարի ժամանակ անկարելի է պարտութեան մատնել մեր ժողովուրդը: Մայիսեան հերոսամարտերը սորվեցուցին մեզի, որ մեր զօրութիւնը՝ մեր միութեան ու միասնականութեան մէջ կը կայանայ:

5) 1895-96 տարիներուն, Սուլթան Համիտ Բ.ի հրամանով ջարդի ենթարկուեցան աւելի քան 300.000 հայորդիներ, բռնի իսլամացուեցան 100.000 հայեր, եւ տարագրուեցան 100.000 հայեր: 1909-ի ապրիլի 1-4ի միջեւ, Կիլիկիայի Ատանա քաղաքին մէջ ջարդի ենթարկուեցան 30.000 հայորդիներ: 1915-ի ապրիլ 24-ին ցեղասպանութեան մէկ ու կէս միլիոն անմեղ հայեր: Այս բոլորը մեծ յուսախաբութեան եւ յուսալքութեան ենթարկեցին մեր ազգի զաւակները: Կոտրեցաւ շատերուն բարոյական զօրութիւնը: Սարգարապատի, Բաշ-Ապարանի եւ Ղարաքիլիսէյի հերոսամարտերուն ժամանակ մեր ձեռք ձգած յաղթանակներուն շնորհիւ բարձրացաւ հայ ժողովուրդի բարոյականը, եւ մեր ազգի զաւակներուն մօտ վերստին զօրացաւ պայքարի հոգին, մարտական կորովը, կռուելու պատրաստակամութիւնը, յաղթելու կամքը: Մայիսեան հերոսամարտերը եկան ապացուցանելու եւ համոզելու մեզ, որ մենք կրնանք յաղթել մեզմէ շատ աւելի հզօր թուրքին: Քրիստափոր Միքայէլեան, թէպէտ

վախճանած 1905 թուին, եւ թէպէտ կը խօսէր Համիտեան ջարդերու ժամանակ տեղի ունեցող հերոսամարտերուն մասին, կարծէք սակայն, մայիսեան հերոսամարտերու հերոսներուն մասին էր նաեւ որ կը խօսէր, երբ մարգարէաշունչ հոգիով մը կ'ըսէր. «Հայ Յեղափոխական Դաշնակցութիւնը իր գիտակցական զոհերով, իր հերոսական կռիւներով, իր նահատակներով, ի հարկէ մաքրեց հայ ճակատէն խոշոր մասը այն սարսափելի անարգանքին, որ անոր վրայ դրոշմած էր՝ բարոյապէս մաշող, փայփայող, անողորմ պատմական անցեալը»: Այո՛, մայիսեան մեր հերոսներն էին, որոնք ոչխարերու նման մորթուելու անարգանքը վերցուցին մեր ազգի ճակատէն:

6) Մայիսեան հերոսամարտերը տակաւին կը շարունակուին: Այսօր մեզմէ իւրաքանչիւրը հերոսամարտի մէջ է: Երբ օտար ափերու վրայ անաղարտ կը պահենք մեր ազգային ինքնութիւնը՝ մասնակից եղած կ'ըլլանք մայիսեան հերոսամարտերուն: Երբ հայրենի հողը շունինք մեր ոտքին տակ, բայց հայրենի հողին սէրը վա՛ն կը պահենք մեր սրտին մէջ՝ մայիսեան հերոսամարտութիւն է այդ: Երբ անսխալ հայերէն կը խօսինք եւ մեր զաւակներուն ալ կը սորվեցնենք անսխալ հայերէն խօսիլ՝ մայիսեան հերոսամարտութիւն է այդ: Երբ կը սիրենք, կը պատուենք, կը մեծարենք հայերէն լեզուն, հայ գիրն ու գիրքը՝ մայիսեան հերոսամարտութիւն է այդ: Երբ հաւատարիմ կը մնանք Քրիստոսի ու քրիստոսապաշտ մեր հայրերու ձայնին, մեր նահատակներու արեան կանչին, մեր Ֆիդայիներու ուղիին՝ մայիսեան հերոսամարտութիւն է այդ: Երբ կը քալենք Արամ Մանուկեանի եւ Գէորգ Սուրէնեանց կաթողիկոսի հայրանասիրութեան ու ազգասիրութեան կաժաններէն՝ մայիսեան հերոսամարտութիւն է այդ:

Վերջապէս, այսօր իւրաքանչիւր հայ կոշուած է քաջ զինուորի նման իր մէկ ձեռքին մէջ հրացան ունենալու, իսկ միւս ձեռքին մէջ՝ Տիրոջ խաչը, որպէսզի հրացանով յաղթենք մեր երեւելի ու մարմնաւոր թշնամիներուն, իսկ խաչով՝ մեր աներեւոյթ ու անմարմին թշնամիներուն: Ա՛յս եղած է մեր պատմութիւնը դարեր շարունակ: Ըլլանք զինուորները քրիստոսապաշտ ու հայրենապաշտպան մեր հայրերուն: Ըլլանք զինուորները Ղեւոնդ Երէցի խաչին եւ զինուորները Վարդան Մամիկոնեանի, Նիկոլ Աղբալեանի եւ Խրիմեան Հայրիկի սուրին: Ըլլանք զինուորները Արամ Մանուկեանի եւ Գէորգ Ե. Սուրէնեանց կաթողիկոսի հայրենասիրութեան, եւ բարձր պահենք մեր կեանքին մէջ աստուածասիրութեան խաղը ու հայրենասիրութեան դրօշակը:

ՎԱՂԻՆԱԿ Ծ. ՎՐԴ. ՄԵԼՈՅԵԱՆ

ՊԱՇՏՈՆԱԿԱՆՔ

ՎԵՅԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ ՀԱՆԴԻՊՈՒՄ ՈՒՆԵՑԱԲ ՌԱՅԻ ՊԱՏՐԻԱՐԷԻՆ ՀԵՏ

Չորեքշաբթի, 3 Մայիս 2023-ի երեկոյեան, Մարոնիթ եկեղեցւոյ կեդրոնատեղի՝ Պէրթէի մէջ հանդիպում մը կայացաւ Արամ Ա. Վեհափառ Հայրապետին եւ Ռայի Պատրիարքին միջեւ: Հանդիպումին ներկայ էր Հայկական Երեսփոխանական Պլոքի ներկայացուցիչ՝ Երեսփոխան Յակոբ Բագրատունի:



Այս հանդիպումը մաս կը կազմէր վերջին երեք ամիսներու ընթացքին, Լիբանանի նախագահական ընտրութեան շուրջ տեղի ունեցած խորհրդակցութիւններուն ու քննարկումներուն:

Յայտնենք, որ յիշեալ հանդիպումէն առաջ, Վեհափառ Հայրապետին այցելած էր Լիբանանեան Ոյժեր կուսակցութեան ներկայացուցիչը՝ խորհրդակցելու նախագահական ընտրութեան հարցին շուրջ:

**Ն.Ս.Օ.Տ.Տ. ԱՐԱՄ Ա. ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ
ՈՂՋՈՅՆԻ ԳԻՐԵՐԸ՝
ԳԱՆԱՏԱՅԻ ԵՒ ՅՈՒՆԱՍՏԱՆԻ ՎԱՐՉԱՊԵՏՆԵՐՈՒՆ**

Գանատայի Հայոց Թեմին կատարած իր Հովուապետական այցելութենեն Մայրավանք վերադարձին, Վեհափառ Հայրապետը ողջոյնի յատուկ նամակ մը յղեց Գանատայի վարչապետ՝ ճասթին Թրուտոյին եւ իր ջերմ գնահատանքը յայտնեց Արցախի ժողովուրդին ինքնորոշման գծով անոր ցուցաբերած զօրակցութեան, ինչպէս նաեւ՝ Գանատայի հայութեան նկատմամբ անոր կատարած դրական արտայայտութիւններուն համար:

Յայտնենք, որ շուրջ երկու շաբաթներ առաջ Վեհափառ Հայրապետը հանդիպում մը ունեցած էր վարչապետին հետ, նախ՝ առանձին եւ ապա՝ իրեն ընկերացող պատուիրակութեան ներկայութեան:



27 Յունիս 2023-ին, Նորին Սրբութիւնը շնորհաւորութեան յատուկ գիր մը ուղղեց Յունաստանի վարչապետ՝ Զիրիաքոս Միցոթաքիսին, որուն ղեկավարած կուսակցութիւնը վերջին ընտրութիւններուն յաղթանակ ապահոված էր, եւ հետեւաբար, վարչապետին՝ իր ներկայ պաշտօնին վրայ վերահաստատումը դարձած էր բնական: Յաջողութիւն մաղթելով անոր առաքելութեան մէջ, Վեհափառ Հայրապետը յոյս յայտնեց, որ նոր ծրագիրներու եւ նախաձեռնութիւններու ճամբով, ան պիտի կարենայ փայլուն էջ մը բանալ Յունաստանի ժողովուրդին կեանքէն ներս:

Նշենք, որ շուրջ երկու ամիսներ առաջ, Յունաստանի Հայոց Թեմին կատարած Հովուապետական այցելութեան ընթացքին, Նորին Ս. Օծութիւնը հանդիպում ունեցած էր վարչապետին հետ:

**ՎԵՐԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ ՀԵՌԱԶԱՅԼԱՅԻՆ
ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹԻՒՆ
ՈՒՆԵՑԱԲ ԱՐՑԱԽԻ ՆԱԽԱԳԱՅԻՆ ՀԵՏ**

Ուրբաթ, 30 Յունիս 2023-ին, հեռաձայնային հաղորդակցութիւն մը կայացաւ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոսին եւ Արցախի Հանրապետութեան Նախագահ՝ Արայիկ Յարութիւնեանի միջեւ: Նորին Ս. Օծութիւնը անգամ մը եւս վերահաստատեց Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան ամբողջական զօրակցութիւնը Արցախի մեր ժողովուրդին: Ապա, Նորին Սրբութիւնը տեղեակ պահեց Նախագահը վերջին շրջանին Յունաստանի ու Գանատայի վարչապետներուն եւ Կիպրոսի Նախագահին հետ Արցախի հարցին գծով իր ունեցած խորհրդակցութիւններուն եւ յատկապէս յիշեալ անձնաւորութիւններուն մօտեցումներուն մասին:



Նախագահ Յարութիւնեան, իր կարգին, անդրադարձաւ Արցախին դիմագրաւած ներկայ մարտահրաւերներուն: Երկու խօսակիցներն ալ կարեւորութեամբ շեշտեցին Արցախի ինքնորոշման իրաւունքը ամուր պահելու հրամայականը:



ՀՈՎՈՒԱՊԵՏԱԿԱՆ ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆՆԵՐ

**Ն.Ս.Օ.Տ.Տ. ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ
ՔՈՒԷՅԹԻ ԵՒ ՇՐՋԱԿԱՅԻՑ ՀԱՅՈՑ ԹԵՄԷՆ ՆԵՐՍ**

Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Արժանընտիր Գահակալ՝ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոս 2023 թուականին հովուապետական այցելութիւններ կը կատարէ Կաթողիկոսութեան թեմերուն՝ հիմնական օրակարգ ունենալով Սփիւռքի վերակազմակերպումը, հրամայական ծրագիր մը՝ որուն ուղղուածութիւնը Նորին Սրբութիւնը այս տարուան հռչակագիրով մանրամասնած է:

Բնականաբար, իւրաքանչիւր հովուապետական այցելութեան ընթացքին, Վեհափառ Հայրապետը տեսակցութիւններ կ'ունենայ տուեալ համայնքի հաւատացեալ ժողովուրդին, կառոյցներու, մարմիններու, կրթական, մշակութային եւ քաղաքական պատասխանատուներու հետ, ինչպէս նաեւ՝ եկեղեցիներու առաջնորդներու եւ երկրի բարձրաստիճան պաշտօնակատարներուն հետ:

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ ԻՐ ՀՕՏԻՆ ՄՕՏ

Երեքշաբթի, 9 Մայիս 2023-ին, Վեհափառ Հայրապետը հնգօրեայ այցելութեամբ ուղղուեցաւ Քուէյթ՝ ընկերակցութեամբ գաւազանակիր՝ Հոգ2. Տ. Սարգիս Վրդ. Աբրահամեանին եւ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան



Ազգ. Կեդրոնական Վարչութեան Քաղաքական Ժողովի համա-ատենապետ՝ Ստեփան Տէր Պետրոսեանին:

Նորին Սրբութիւնը Քուէյթի միջազգային օդակայանին մէջ պաշտօնապէս դիմաւորուեցաւ Քուէյթի եւ Շրջակայից Հայոց Թեմի Կաթողիկոսական Փոխանորդ՝ Գերպ. Տ. Պետրոս Ծ. Վրդ. Մանուէլեանի, Քուէյթի մէջ Լիբանանի Դեսպան՝ Ահմատ Արաֆայի, Հայաստանի Հանրապետութեան Արտակարգ եւ Լիազօր Դեսպան՝ Սարմէն Պաղտասարեանի, Ծոցի երկիրներու Պապական Նուիրակ՝ Եուճին Արք. Նիւճընթի, քուէյթահայ ազգայիններու եւ մարմիններու ներկայացուցիչներու կողմէ:

ՔՐԻՍՏՈՆԵԱՅ ՀԱՄԱՅՆՔՆԵՐՈՒ ՀԱԻԱՔԱԿԱՆ ԱՂՕԹՔ

Նոյն օրը երեկոյեան, Նորին Ս. Օծուեան նախագահութեամբ Քուէյթի Յոյն Ուղղափառ Եկեղեցւոյ մէջ տեղի ունեցաւ միջ-եկեղեցական շնորհակալական աղօթք՝ կազմակերպութեամբ Քուէյթի Եկեղեցիներու առաջնորդներուն: Արդարեւ, Յոյն Ուղղափառ Եկեղեցւոյ յարկին տակ ներկայ էին Հայ եւ եօթը այլ քրիստոնեայ համայնքներու՝ Յոյն Ուղղափառ, Յոյն Կաթողիկ, Ղպտի Ուղղափառ, Ղպտի Կաթողիկ, Աւետարանական, Լատին եւ Մարոնիթ առաջնորդներն ու հաւատացեալներու հոծ բազմութիւն մը:

Այս առիթով յանուն Անտիոքի Յոյն Ուղղափառ Պատրիարքին, բարի գալուստի խօսք արտասանեց Քուէյթի Յոյն Ուղղափառ Համայնքի Առաջնորդ՝ Մեթրոպոլիտ Ղաթթաս Հազիմ եւ ողջունեց Արամ Ա. Կաթողիկոսի այցը:



Իր կարգին, Արամ Ա. Կաթողիկոս պատգամեց ու իր խոր գոհունակութիւնը յայտնեց Քուէյթի մէջ ի տես քրիստոնեայ համայնքներու վայելած լայն ազատութեան, ուր կրօնական համակեցութեան գեղեցիկ մթնոլորտ մը կը պարզուի շնորհիւ երկրի ղեկավարութեան եւ ժողովուրդին: Նորին Սրբութիւնը նաեւ շեշտեց, որ Քրիստոնէական համայնքները Քրիստոսով մէկ եկեղեցի են, եւ անսալով Քրիստոսի պատուէրին, պէտք է աղօթքով, խորհրդակցութեամբ ու գործակցութեամբ արտայայտեն եկեղեցւոյ ամբողջական միութիւնը:

Արարողութեան աւարտին հաւատացեալները մասնակցեցան աշահամբոյրի եւ բարի գալուստ մաղթեցին Վեհափառ Հայրապետին:

ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆ ԼԻԲԱՆԱՆԻ ԴԵՍՊԱՆԱՏՈՒՆ

Չորեքշաբթի, 10 Մայիս 2023-ին, Վեհափառ Հայրապետն ու իրեն ընկերակցող պատուիրակութիւնը այցելեցին Լիբանանի Դեսպանատուն, ուր ջերմօրէն դիմաւորուեցան Լիբանանի Դեսպան՝ Ահմատ Արաֆայի կողմէ: Նորին Սրբութեան Քուէյթ այցելութեան առիթով, Լիբանանի Դեսպանին յատուկ հրաւերով, դեսպանատան մէջ կազմակերպուեցաւ ճաշկերոյթ, ուր ներկայ գտնուեցան բարձրաստիճան հիւրեր, լիբանանեան եւ Հայ համայնքներու ներկայացուցիչներ, Հոգեւոր Պետեր եւ դեսպաններ:

Վեհափառ Հայրապետը վեր առաւ Լիբանանի իւրայատուկ դիմագիծը՝ որպէս կրօններու եւ մշակոյթներու համերաշխ համակեցութեան երկիր, եւ



այս ծիրէն ներս բարձր գնահատեց նաեւ Քուէյթի ղեկավարութիւնն ու ժողովուրդը, որոնց շնորհիւ կրօններու համակեցութեան գեղեցիկ օրինակ մը դարձած է Քուէյթը եւս, ուր հայերը նոյնպէս կը վայելեն լայն ազատութիւն:

Նորին Սրբութիւնը իր խօսքին մէջ գնահատանքով անդրադարձաւ Լիբանանի ծաղկման ու զարգացման ծրագիրներուն մէջ Քուէյթի ունեցած ներդրումին: Ան յիշելով, որ Հայ համայնքը Լիբանանի եօթը գլխաւոր համայնքներէն մէկն է, ընդգծեց, որ Լիբանանի հայութիւնը եղած է, կը մնայ ու պիտի շարունակէ մնալ Լիբանանի առաւել բարգաւաճման բոլոր ծրագիրներուն եւ աշխատանքներուն մէջ իր գործօն մասնակցութիւնը բերող համայնք:

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ ԱԶԳ. ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻՆ ՄԷՋ ԸՆԴՈՒՆԵՑ ԻՐԱՆԻ ԴԵՍՊԱՆԸ

Նոյն օրը, Իրանի Իսլամական Հանրապետութեան Դեսպան՝ Մուհամմէտ Իրանի եւ անոր քաղաքական հարցերու խորհրդատուն, Վեհափառ Հայրապետին այցելութիւն տուին Քուէյթի Ազգ. Առաջնորդարանին մէջ: Հանդիպման ներկայ էր նաեւ Քուէյթի եւ Շրջակայից Հայոց Թեմի Կաթողիկոսական Փոխանորդը:



Նկատի ունենալով, որ Դեսպանը նախապէս Լիբանանի մօտ Իրանի Դեսպանը եղած էր, խօսակցութիւնը առաւելաբար կեդրոնացաւ Լիբանանի նախագահական ընտրութեան հարցին շուրջ: Այս ծիրէն ներս, Նորին Սրբութեան

եւ Դեսպանին միջեւ տեսակէտներու փոխանակում տեղի ունեցաւ: Դեսպանը գնահատելով Լիբանանի հայութեան դրական դերակատարութիւնը, շեշտեց կողմերու միջեւ մօտեցման դրական դեր կատարելու կարեւորութիւնը:

ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆ՝ ԱԶԳ. ՎԱՐԺԱՐԱՆ

Հինգշաբթի, 11 Մայիս 2023-ին, Նորին Ս. Օծութիւնը այցելեց Քուէյթի Ազգ. Վարժարան, ուր շերմօրէն դիմաւորուեցաւ Վարժարանի Տնօրէնութեան, Հոգաբարձութեան, Ուսուցչական կազմին եւ աշակերտութեան կողմէ՝ բարի գալուստ մաղթող պաստառներով, երգերով ու արտասանութիւններով:



Սփիւռքի վերակազմակերպման նուիրուած այս տարուան ակնարկելով՝ Քուէյթի Ազգ. Վարժարանի աշակերտութիւնը հակիրճ կերպով ներկայացուց վարժարանին առօրեայ աշխատանքը, մաքառումը, երբեմն նոյնիսկ հոսանքին հակառակ ընթանալու վճռակամութիւնը՝ իբրեւ Սփիւռքի պայմաններու մէջ գոյատեւող հայկական ազգային վարժարան մը:

Արամ Ա. Կաթողիկոս բարձր գնահատեց Ծոցի երկիրներուն մէջ գործող միակ ազգային ամէնօրեայ վարժարանին տարած հսկայական աշխատանքը, խրախուսեց ուսուցիչներն ու աշակերտները, որ նոյն թափով շարունակեն իրենց ազնիւ ու նուիրական առաքելութիւնը:

Ապա, Նորին Սրբութիւնը այցելեց վարժարանի «Արեգակ» մանկապարտէզ, ուր փոքրիկները Հայրապետական Մաղթանքի կատարումով, ազգային

երգերով ու արտասանութիւններով դիմաւորեցին Հայոց Հայրապետը: Ան իր հայրական օրհնութիւնը տուաւ մանկապարտէզի փոքրիկներուն եւ բարձր գնահատեց տնօրէնութեան եւ ուսուցչական կազմին կողմէ կատարուող նուիրական աշխատանքը:

Նորին Ս. Օծութիւնը հանդիպում ունեցաւ նաեւ վարժարանի տնօրէնութեան եւ ուսուցչական կազմին հետ, ուր լսեց անոնց միտքերն ու մտահոգութիւնները եւ իր հայրական թելադրանքները փոխանցեց անոնց:

ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ԴԵՍՊԱՆԱՏՈՒՆ

Նոյն օրը, Հայաստանի Հանրապետութեան դեսպանատան մէջ Արամ Ա. Կաթողիկոս հանդիպում ունեցաւ Դեսպան Սարմէն Պաղտասարեանի հետ, որ դիմաւորեց զինք ու ջերմօրէն ողջունեց Նորին Ս. Օծութեան այցելութիւնը Քուէյթ եւ մանաւանդ ներկայութիւնը՝ դեսպանատունէն ներս:



Հանդիպման ընթացքին զրոյց տեղի ունեցաւ Քուէյթի եւ Հայաստանի միջեւ վարդացող յարաբերութիւններուն եւ անդրադարձ կատարուեցաւ այս ծիրէն ներս քուէյթահայութեան դերին մասին:

«Ս. ՆԵՐՍԷՍ ՇՆՈՐՀԱԼԻ» ՍՐԱՀԻ ԲԱՑՈՒՄ ԵՒ «ԿԻԼԻԿԵԱՆ ԱՍՊԵՏ»Ի ՇՔԱՆՇԱՆՈՎ ՊԱՐԳԵՒԱՏՐՈՒՄ

Ս. Ներսէս Շնորհալի Հայրապետի վախճանման 850 ամեակին առիթով համահայկական տարողութեամբ յատուկ նշումներ ու հանդիսութիւններ տեղի կ'ունենան աշխարհի տարածքին: Այս առիթով, Քուէյթի եւ Շրշակայից Հայոց Թեմը Սրբոց Վարդանանց եկեղեցւոյ ներքնասրահը վերանորոգելով՝ զայն վերանուանեց «Ս. Ներսէս Շնորհալի» սրահ եւ պաշտօնական բացումը նախատեսեց Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Վեհափառ Հայրապետի օրհնաբաշխ հովուապետական այցելութեան միջոցին:



Արդ, Հինգշաբթի, 11 Մայիսի երեկոյեան, Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոս բացումը կատարեց Սրբոց Վարդանանց եկեղեցւոյ վերանորոգուած եւ Շնորհալի Հայրապետին անունով կնքուած ներքնասրահին:

Յայտնենք, որ «Ս. Ներսէս Շնորհալի» սրահին վերանորոգման բարերարութիւնը ստանձնած էին քուէյթահայ ազգայիններէն՝ Տէր եւ Տիկ. Կիրակոս եւ Սիլվա Գույումճեանն ու զաւակունք:

Սրահի բացումէն ետք, Թեմի Կաթողիկոսական Փոխանորդ՝ Գերպ. Տ. Պետրոս Ծ. Վրդ. Մանուէլեան խօսք առաւ ու շնորհակալութիւն յայտնեց նախ

Վեհափառ Հայրապետին եւ ապա Տիար Կիրակոս Գույումճեանին, որ ընդառաջելով Թեմի փափաքին՝ ստանձնեց սրահի վերանորոգման բարերարութիւնը: Հուսկ, ընթերցուեցաւ Նորին Ս. Օծութեան Սրբատառ Կոնդակը, ուր Նորին Սրբութիւնը կ'ըսէր. «Քաջածանօթ եմք այն սիրոյն ու նախանձախնդրութեան, գոյս ցուցաբերած էք միշտ, եւ կը շարունակէք ցուցաբերել ընդհանրապէս Հայ եկեղեցւոյ եւ յատկապէս Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան նկատմամբ: Ուրախութեամբ կը վկայեմք, թէ այդ սէրն ու նախանձախնդրութիւնը դուք գիտցաք գործնապէս արտայայտել նաեւ Քուէյթի Հայոց Թեմէն ներս: Արդարեւ, երկար տարիներէ ի վեր Քուէյթ հաստատուած ըլլալով, Ձեր կարեւոր ներդրումը ունեցաք Թեմի կազմաւորման մէջ, եւ որպէս գործօն անդամ ազգային մարմիններուն, ձեր նիւթական օժանդակութիւնը չիսնայեցիք՝ ի խնդիր Թեմի առաւել բարգաւաճման: Օժանդակութեան ձեռք երկարեցիք ո՛չ միայն Սրբոց Վարդանանց եկեղեցւոյ եւ Ազգ. Վարժարանին, այլ նաեւ ձեր հիմնած «Ներսէս Շնորհալի» մրցանակին նամբով քաջալեր հանդիսացաք ուսումնատեւնչ երիտասարդներու ու պատանիներու: Հայ թէ օտար մամուլի էջերուն մէջ ձեր ստորագրած յօդուածներով, Դուք պայքարեցաք ի խնդիր մեր ժողովուրդի արդար իրաւունքներու ձեռքբերման: Մենք կը հաւատանք, որ այս ծիրէն ներս ձեր տարած հետեւողական նիւթով միշտ արծարծ պիտի պահէք մեր ժողովուրդի արդար դատը, յատկապէս օտար շրջանակներէ ներս»:

Հանդիսութեան աւարտին, Վեհափառ Հայրապետը իր գնահատանքը յայտնեց Տիար Կիրակոս Գույումճեանին եւ կոչ ուղղեց ազգայիններուն՝ առաւելագոյն շափով օգտակար դառնալու համայնքի ծրագիրներուն:

Յայտնենք, որ Տիար Գույումճեանին «Կիլիկեան Ասպետ» շքանշանը շքանորոգուեցաւ Շաբաթ, 13 Մայիս 2023-ին, ի պատիւ Նորին Սրբութեան տրուած պաշտօնական ճաշկերոյթի ընթացքին:

ՀԱՆԴԻՊՈՒՄ՝ ԱԶԳ. ԵՒ ՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐՈՒ ՀԵՏ

Նոյն օրը երեկոյեան, Նորին Սրբութիւնը «Ս. Ներսէս Շնորհալի» սրահին մէջ հանդիպում ունեցաւ քուէյթահայ գաղութի ազգային եւ միութենական մարմիններու անդամներուն հետ եւ Սփիւռքի վերակազմակերպման տարուան աշխատանքներու ծիրէն ներս, անոնց փոխանցեց իր Հայրապետական թելադրանքներն ու պատկերացումները, ինչպէս նաեւ լսեց անոնց յառաջիկայ ծրագիրները, առաջարկներն ու մտահոգութիւնները:

Հանդիպման ընթացքին ազգային մարմիններու եւ միութենական կազմակերպութիւններու անդամները խօսք առնելով, կիսեցին Նորին Ս. Օծութեան մտահոգութիւնները եւ իրենց կարգին արտայայտուեցան գաղութը



դիմագրաւող տազնապներուն մասին: Վեհափառ Հայրապետը պատասխանելով ներկաներուն կողմէ ուղղուած հարցումներուն, իր խօսքը կեդրոնացուց մեր կառույցները վերանորոգման ենթարկելու հրամայականին վրայ, միշտ հարցերը դիտելով ներկայ պայմաններու լոյսին տակ, եւ շեշտեց քուէյթահայ երիտասարդութիւնը Հայ համայնքի կեանքէն ներս ներգրաւելու անհրաժեշտութիւնը:

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ ԿԸ ՊԱՏԳԱՄԷ ՍՐԲՈՑ ՎԱՐԴԱՆԱՆՑ ԵԿԵՂԵՑԻՆ ՆԵՐՍ

Ուրբաթ, 12 Մայիս 2023-ի առաւօտուն, քուէյթահայութիւնը խուններամ ներկայութեամբ համախմբուած էր Սրբոց Վարդանանց եկեղեցւոյ շրջափակին մէջ՝ ժողովրդային ընդունելութեամբ բարի գալուստ մաղթելու Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Սրբազնագոյն Հայրապետին: Նորին Ս. Օծութիւնը հանդիսաւոր թափօրով մուտք գործեց եկեղեցի, ուր իր նախագահութեամբ մատուցուեցաւ Ս. եւ Անմահ Պատարագ: Ս. Պատարագը մատուցեց Հոգշ. Տ. Սարգիս Վրդ. Աբրահամեան: Ներկայ էին դեսպաններ, պաշտօնական հիւրեր, քուէյթահայ ազգայիններ, ազգային եւ միութենական մարմիններու ներկայացուցիչներ եւ հաւատացեալներու հոծ բազմութիւն մը:

Ս. եւ Անմահ Պատարագի ընթացքին, Նորին Սրբութիւնը իր Հայրապետական պատգամին մէջ իր ուրախութիւնն ու գոհունակութիւնը յայտնեց անգամ



մը եւս Քուէյթի եւ Շրջակայից Հայոց Թեմի ժողովուրդին կողքին ըլլալուն համար: Ան քուէյթահայութեան կեանքին անդրադառնալով՝ շեշտեց, թէ գաղութէն ներս դրական ու գօտեանդիչ երեւոյթները նկատելի են, ապա բարձր գնահատեց Թեմի Կաթողիկոսական Փոխանորդ՝ Գերպ. Տ. Պետրոս Մ. Վրդ. Մանուէլեանի աշխատանքն ու ժողովուրդին կողքին ըլլալու կարողութիւնը, որուն շնորհիւ Հայր Սուրբը կարճ ժամանակուան մէջ սիրելի դարձած էր գաղութի զաւակներուն: Որպէս գնահատանքի արտայայտութիւն, Վեհափառ Հայրապետը Կաթողիկոսական Փոխանորդին Ս. եւ Անմահ Պատարագի ընթացքին եպիսկոպոսական խոյր կրելու իրաւունք շնորհեց: Այս առիթով Նորին Սրբութիւնը գնահատեց նաեւ գաղութի Հոգեւոր Հովիւ՝ Արժ. Տ. Արտակ Ա. Քհնյ. Քէհեայեանի երկարամեայ ծառայութիւնը քուէյթահայ գաղութի կեանքին մէջ, որ շարունակութիւնն է Թեմի առաջին Հոգեւոր Հովիւ՝ լուսահոգի Տ. Պարոյր Ա. Քհնյ. Սարգիսեանի նուիրեալ ծառայութեան:

Իր պատգամին մէջ Նորին Ս. Օծութիւնը ողջունեց Հայաստանի եւ Յունաստանի դեսպանները՝ անդրադառնալով Հայ եւ Յոյն ժողովուրդներու պատմութեան խորերէն եկող եղբայրական յարաբերութիւններուն:

Ապա, ան համապարփակ կերպով բացատրեց Քրիստոսի «Ես եմ ճամբան» (ՅՆ 14.6) խօսքը: Նորին Սրբութիւնը, ընդգծելով ճամբայ հասկացողութեան երկու հիմնական գաղափարները, յայտնեց, որ ճամբան մարդկային կեանքին մէջ կարելիութեանց խորհրդանիշ է: Քրիստոս ինքզինք ճամբայ հոշակեց, որովհետեւ առ Աստուած դառնալու կարելիութիւնը ընծայեց Աստուծմէ հեռացած մարդուն: Իր պատգամին երկրորդ կէտին մէջ, Արամ Ա.

Կաթողիկոս պարզեց, թէ ամէն ճամբայ ունի նպատակ: Մեր առօրեայ կեանքին մէջ մեր դիմաց կը բացուին զանազան ճամբաներ, որոնք մարդս անորոշութեան կ'առաջնորդեն: Քրիստոս մարդուն այլազան ճամբաներ չյայտնեց, այլ՝ մէկ ու ճշմարիտ ճամբայ: Հետեւաբար, Քրիստոսի ճամբով ընթանալուն նպատակը մէկ է՝ հասնիլ յաւիտենական կեանքին, այլ խօսքով՝ փրկութեան:

Ս. Պատարագի աւարտին, հաւատացեալներ Վեհափառ Հայրապետին օրհնութիւնը աշահամբոյրով ստացան:

ՀԱՆԴԻՊՈՒՄ՝ ԳԱՂՈՒԹԻ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐՈՒՆ ՀԵՏ

Ուրբաթ, 12 Մայիս 2023-ին, Քուէյթի հայ երիտասարդութեան հետ ունեցած իր հանդիպումին այսպէս յայտարարեց Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոս. «Առանց երիտասարդութեան կենսատու ներկայութեան, մեր կեանքը պիտի կորսնցնէ իր ուժականութիւնն ու կենսունակութիւնը»:

Հանդիպումին ներկայ էին աւելի քան 80 քուէյթահայ երիտասարդներ՝ համալսարանական եւ համալսարանաւարտ, Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Ազգ. Կեդրոնական Վարչութեան Քաղաքական Ժողովի համա-ատենապետ՝ Ստեփան Տէր Պետրոսեան եւ Կաթողիկոսարանի Միջին Արեւելքին միջ-եկեղեցական եւ միջ-կրօնական Բաժանմունքի Վարիչ՝ Հոգշ. Տ. Սարգիս Վրդ. Աբրահամեան:

Հանդիպման սկիզբը խօսք առաւ Թեմի Երեսփոխանական Ժողովի երիտասարդագոյն անդամ՝ Յակոբ էմրազեանը: Ան ըսաւ, որ Վեհափառ Հայրապետը միշտ յատուկ կարեւորութիւն տուած է երիտասարդութեան՝ ընդգծելով երիտասարդութեան կարեւոր ներդրումը Հայ կեանքէն ներս: Ապա, Նորին Ս. Օծութիւնը ընդհանուր գիծերով ներկայացուց ճարտարագիտութեամբ տիրապետուած ներկայ ընկերութիւնը՝ յիշեցնելով, որ համաշխարհայնացումը սոսկ տնտեսական եւ տեղեկատուական մարզերուն առնչուած երեւոյթ չէ, այլ էապէս մշակոյթ է, որուն մաս կը կազմենք բոլորս: Այս մշակոյթէն հեռու մնալ կարելի չէ. անոր դէմ պայքարիլ դարձեալ՝ կարելի չէ. սակայն անոր մաս կազմելով հանդերձ՝ մեր ինքնութիւնը պահելը հրամայական է, միեւնոյն ատեն՝ դժուար: Սա իւրաքանչիւր Հայուն ու մանաւանդ Հայ երիտասարդին համար պէտք է դառնայ մարտահրաւէր, շեշտեց Նորին Սրբութիւնը:

Արամ Ա. Կաթողիկոս անդրադարձաւ նաեւ Հայ կեանքէն ներս երիտասարդութեան դերին՝ շեշտելով, որ մեր կեանքի բոլոր մակարդակներուն վրայ եւ բոլոր բնագաւառներէն ներս, երիտասարդութեան ներկայութիւնը կենսական է, այլապէս մեր կեանքը պիտի կորսնցնէ իր ներքին կենսունակութիւնը: Յիշեալ հարցերուն մասին Նորին Սրբութիւնը յաճախ իր կեանքի փորձառութենէն քաղելով՝ օրինակներու անդրադարձաւ:

Ապա, երկխօսութիւն մը տեղի ունեցաւ Արամ Ա. Կաթողիկոսին եւ երի-

տասարդներուն միջեւ: Վեհափառ Հայրապետը երիտասարդներուն կողմէ արծարծուած հարցումներուն ու մտահոգութիւններուն, որոնք այլազան երեւոյթներու առնչուած էին՝ Հայաստան, Արցախ, Սփիւռք, ճարտարագիտութիւն, երիտասարդութիւն եւ եկեղեցի, անհրաժեշտ լուսաբանութիւններ կատարեց:

Հանդիպման աւարտին, Քուէյթի եւ Շրջակայից Հայոց Թեմի Կաթողիկոսական Փոխանորդ՝ Գերպ. Տ. Պետրոս Մ. Վրդ. Մանուէլեան խօսք առնելով՝ շնորհակալութիւն յայտնեց Վեհափառ Հայրապետին, անոր ընծայած այս պատեհ առիթին համար, ինչպէս նաեւ երիտասարդութիւնը եւ ընդհանրապէս ընկերութիւնը դիմագրաւող հարցերուն գծով Նորին Սրբութեան տուած սպառիչ լուսաբանութեանց համար:

ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆ

ՎԱՏԻԿԱՆԻ ԴԵՍՊԱՆԱՏՈՒՆ

Շաբաթ, 13 Մայիս 2023-ին, Վեհափառ Հայրապետը, իրեն ընկերակցող պատուիրակութեան հետ, այցելեց Ծոցի երկիրներու Վատիկանի դեսպանատուն, ուր ջերմօրէն դիմաւորուեցաւ Դեսպան եւ Պապական Նուիրակ՝ Եուճին Արք. Նուճընթի կողմէ:



Հանդիպման ընթացքին, Նորին Սրբութիւնն ու Պապական Նուիրակը գրուեցին շրջանը յուզող հարցերու եւ տարածաշրջանին մէջ քրիստոնեայ համայնքներու գործունէութեանց մասին:

ՀԱՆԴԻՊՈՒՄ՝ ՆԱԽԿԻՆ ՎԱՐՉԱՊԵՏԻՆ ՀԵՏ

Հովուապետական այցելութեան ընթացքին, Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոս բարեկամական հանդիպում ունեցաւ Քուէյթի նախկին վարչապետ՝ Շէյխ Նասէր Ալ-Մուհամմէտ Ալ-Ահմէտ Ալ-Ճապէր Ալ-Մուպարաք Ալ-Սապահին հետ:

Յայտնենք, որ Շէյխ Նասէրը միաժամանակ Ֆրանսֆոնի մօտ Քուէյթի ներկայացուցիչն է, ինչպէս նաեւ կարեւոր ներկայութիւն է երկրի քաղաքական կեանքին մէջ ու Վեհափառ Հայրապետին անձնական բարեկամն է:



Հանդիպման ներկայ էին Թեմի Կաթողիկոսական Փոխանորդը, Քուէյթի մօտ Լիբանանի Դեսպանը, Ազգ. Իշխանութեան ներկայացուցիչները եւ Կաթողիկոսարանի Միջին Արեւելքի միջ-եկեղեցական եւ միջ-կրօնական Բաժանմունքի Վարիչը:

Բարեկամական մթնոլորտի մէջ տեղի ունեցած հանդիպման ընթացքին անդրադարձ կատարուեցաւ Քուէյթի մէջ Հայ համայնքին, Լիբանանի ներկայ կացութեան եւ ընդհանրապէս արաբական աշխարհին մէջ Քուէյթի դերակատարութեան:

Նշենք, որ երկրէն բացակայութեան պատճառով, Վեհափառ հայրապետը առիթ չունեցաւ հանդիպում ունենալու գահաժառանգին հետ:

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ՃԱՇԿԵՐՈՅԹ՝

Ի ՊԱՏԻՒ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ

Շաբաթ, 13 Մայիս 2023-ին, Քուէյթի «Սալուա Սապահ» ճաշասրահէն ներս տեղի ունեցաւ ի պատիւ Վեհափառ Հայրապետին Քուէյթի Ազգ. Վարչութեան կազմակերպած պաշտօնական ճաշկերոյթը, որ քուէյթահայութիւնը համախմբեց Նորին Սրբութեան շուրջ, գեղեցիկ երեկոյով մը եզրափակելով Քուէյթ կատարած հովուապետական հնգօրեայ այցելութիւնը:

Ընթրիքին ներկայ էին Քուէյթի քրիստոնեայ համայնքներու առաջնորդներ, դեսպաններ, պաշտօնական հիւրեր, քուէյթահայ ազգայիներ, ազգային եւ միութենական մարմիններու ներկայացուցիչներ եւ գաղութի զաւակներ:

Երեկոն սկիզբ առաւ Վեհափառ Հայրապետին աղօթքով եւ Քուէյթի ու Հայաստանի Հանրապետութեանց քայլերգներով, որմէ ետք Ազգ. Վարչութեան անդամ՝ Դալար Գալէմքէրեան-Տաղըլեան իր բացման խօսքին մէջ ըսաւ. «Վեհափառ Տէր, ձեր թոյլտուութեամբ, կ'ուզեմ հաստատել, որ ձեր անձամբ ներկայութիւնը եւ մանաւանդ ձեր կատարած ա՛յս հովուապետական այցելութեան զուգահիւսումը 2023-ի «Սփիւռքի Տարի — Ինքնաքննութենէ Վերակազմակերպում»ի ձեր հռչակումին, ձեր թելադրանքները, յատկապէս մեզմէ շատերուն, երբեմն ինքնակեղրոն կամ երերուն քայլերով քալած ճամբուն վրայ, մեծ լուսարձակ մը բացաւ, իւրաքանչիւրս պահ մը կանգ առնել տուաւ՝ մտածել տալով, թէ համաշխարհայնացման այս դարուն, ուր այժմէականութիւնը եւ նորօրեայ կենցաղը մեզ դէպի ո՛ւր կ'առաջնորդեն: Ձեր յորդորները պահ մը զգաստութեան ու զգօնութեան ազդարարը դարձան: Յիշեցուցին, որ Սփիւռքը չի՛ կրնար գոյատեւել, եթէ սփիւռքահայը կ'ապրի եսակեղրոն կեանքով եւ նորօրեայ կեանքին փոթորկած ալիքներուն մէջ երերալով»:

Ապա, յաջորդաբար հրաւիրուեցան գեղարուեստական յայտագիրի մասնակիցները, որոնք հայկական մշակոյթի գանձարանէն ներկայացուցին հետեւեալ կտորները.- «Բարի Հայրիկ» երգը հնչեցուց Յակոբ Թադոյեան, որուն յաջորդեց ասմունք՝ Գէորգ Էմինի «Մեմֆ» բանաստեղծութիւնը՝ Կասիա Աբիկեանի կատարողութեամբ, ապա Լիլա Կարապետեան մեներգեց «Երազ Իմ Երկիր Հայրենի» երգը եւ Ալինա Քէօշկէրեան-Պէքէրէճեան ասմունքեց Վահագն Դաւթեանի «Հաւատում եմ Քեզ» բանաստեղծութիւնը:

Երեկոյի ընթացքին, յանուն Քուէյթի Ազգ. Իշխանութեան, Ազգ. Վարչութեան Ատենապետ՝ Տոքթ. Գրիգոր Թովմասեան այս առիթով արտասանած իր խօսքին մէջ նախ շնորհակալութիւն յայտնեց Վեհափառ Հայրապետին՝ անցնող օրերուն քուէյթահայութեան կողքին ըլլալուն, գործօն մարմինները գնահատելուն, երիտասարդութիւնը խրախուսելուն եւ իր Հայրապետական պատ-

գամն ու թելադրանքները գաղութին փոխանցելուն համար, ապա, վեր առնելով Նորին Ս. Օծութեան երկարամեայ բացառիկ գործունէութիւնը՝ Տոքթ. Թովմասեան ըսաւ. «Թոյլ տուէք, այսօր, անգամ մը եւս հիացմունքով խոնարհիլ Ձերդ Սրբութեան աւելի քան յիսուն տարիներու ընթացքին արձանագրած բազում իրագործումներուն դիմաց: Իրագործումներու շարքը կ'երկարի՝ Աստուծոյ Ս. Սեղանի սպասարկումէն մինչեւ մեր ազգային բեմերուն եւ միջազգային բեմահարթակներու վրայ արդարութեան ու պահանջատիրութեան ձայնը հնչեցնելը: Որպէս անխոնջ Ղեկավար, Առաջնորդ եւ Հայրապետ, երկար տարիներու ընթացքին դուք օրինակ հանդիսացաք բոլորիս: Որպէս Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան երկարամեայ Գահակալ, Ձեր եզակի կարողութեամբ եղաք հաւատքի առաքեալ, ազգային ծառայութեան նուիրեալ առաջնորդ եւ հմուտ դիւանագէտ: Այս բոլորը մէկ անձի մէջ խտացուած գտնելը, կը հաւատանք, որ Աստուծոյ պարգեւն է՝ մեր ազգին եւ մանաւանդ՝ Սփիւռքին: Այսօր, խոնարհաբար կանգնելով Ձերդ Սրբութեան յիսուն տարիներու փորձառութեան գանձարանին առջեւ, կը տեսնենք հոգեւոր եւ ազգային արժէքներու օրինակելի դաստիարակը, անձնուէր ուսուցիչը, ժիր մտաւորականը, հմուտ քարոզիչը, ազգի իրաւունքներուն մեծագոյն պահանջատէրը, անխոնջ պայքարողը, միջ-եկեղեցական յարաբերութիւններու ծիրէն ներս անզուգական հեղինակութիւնը, բայց մանաւանդ՝ բազմահազար հայորդիներու սիրելի Հայրապետը»:

Ապա, Քուէյթի եւ Շրջակայից Հայոց Թեմի Կաթողիկոսական Փոխանորդ՝ Գերպ. Տ. Պետրոս Մ. Վրդ. Մանուէլեան խօսք առնելով՝ նախ բոլորին հիացմունքն ու հպարտութիւնը արտայայտեց Վեհափառ Հայրապետին նկատմամբ, երբ անցնող օրերուն տարբեր տեսակցութիւններու ընթացքին գաղութի ազգայինները առիթ ունենալով մօտէն ճանչնալու Վեհափառ Հայրապետը, բոլորը յայտնած էին, թէ իրենց իսկ խօսքերով՝ «բախտաւորութիւն է այսպիսի Կաթողիկոս մը ունենալը»: Ապա, Գերպ. Հայր Սուրբը շնորհակալութիւն յայտնեց Նորին Սրբութեան՝ Թեմը իրեն վստահելուն համար՝ նշելով, թէ սիրով եւ յանձնառութեամբ կը կատարէ այս սիրելի Թեմին Կաթողիկոսական Փոխանորդի իր ծառայութիւնը: Խօսելով քուէյթահայ գաղութին մասին, Գերպ. Հայր Սուրբը ըսաւ. «Այս գաղութը ծառայասէր, եկեղեցասէր եւ ազգասէր գաղութ է, որ ընտանիքի մը կը նմանի, որ ունի իր տեսակ-տեսակ դժուարութիւնները, բայց այդ բոլորէն վեր եւ անդին՝ ունի սէր եւ ջերմութիւն՝ իրար հանդէպ: Այս գաղութը ի՛ր ջանքերով, հակառակ ամէն տեսակի դժուարութեանց, մինչեւ օրս դպրոց եւ եկեղեցի կը պահէ, շնորհիւ իր ազգային եւ միութենական մարմիններուն, որոնք կամաւորաբար կը ծառայեն, որպէսզի կանգուն պահեն մեր զոյգ կառոյցները՝ Սրբոց Վարդանանց եկե-

ղեցին եւ Ազգ. Վարժարանը»: Գերպ. Հայր Սուրբը նաեւ շնորհակալութիւն յայտնեց Ազգ. Վարչութեան անդամներուն, որոնք աւելի քան երկու ամիս շարունակ աշխատեցան եւ բարձր մակարդակով կազմակերպեցին Վեհափառ Հայրապետին հովուապետական այցելութեան այս հինգ օրերը:

Աւարտին, Նորին Սրբութիւնը իր խօսքին մէջ բարձր գնահատեց Կաթողիկոսական Փոխանորդը, որ նուիրումով, յանձնառութեամբ եւ անկեղծութեամբ կը ծառայէ Քուէյթի եւ Շրջակայից Հայոց Թեմին: Ան ըսաւ. «Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան փառքը եւ պատիւը ծառայութիւնն է: Ինչպէս Քրիստոս ըսաւ՝ "Ես աշխարհ եկայ ո՛չ թէ ծառայութիւն ստանալու, այլ՝ ծառայելու": Երբ մենք այս գիտակցութեամբ կը կազմաւորեմք մեր հոգեւորականները եւ կ'ուղարկեմք ժողովուրդին՝ անոնց համար մէկ ճամբայ կայ. միայն՝ ծառայութիւն»:

Վեհափառ Հայրապետը շեշտեց, որ մեր եկեղեցական եւ ազգային կեանքին մէջ ըսելիքներ շատ կան, սակայն ըսելիքներով չլեցնենք, այլ՝ ընելիքներով հարստացնենք մեր համայնքային կեանքը: Ան իր կեանքէն գեղեցիկ յուշապատում մը ընելով՝ բացայայտեց, թէ ա՛յս եղած է իր կեանքի ուղեցոյցը, որովհետեւ ըսելիքները կը շոգիանան, բայց ընելիքներն են, որոնք կազմակերպութիւններ կը զօրացնեն ու ազգեր կը հզօրացնեն: Վեհափառ Հայրապետը այս առիթով մէջբերեց Ամենայն Հայոց Բանաստեղծ՝ Յովհաննէս Թումանեանի տողերը՝ «մահը մերն է, մենք՝ մահինը, մարդու գո՛րծն է միշտ անմահ»:



Այսպիսով եզրափակուեցան Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Վեհափառ Հայրապետին հովուապետական այցելութեան հինգ օրերը, որոնք պատմական էին քուէյթահայ գաղութին համար՝ լեցուն Նորին Սրբութեան տիրական ներկայութեամբ, հայրական սիրով եւ Հայրապետական օրհնութիւններով:

Ն.Ս.Օ.Տ.Տ. ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ ԳԱՆԱՏԱՅԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԷՆ ՆԵՐՍ

Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Արժանընտիր Գահակալ՝ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոսի Գանատա հովուապետական այցելութիւնը ընթացք առաւ 1 Յունիսին Մոնթրէալի մէջ եւ տեւեց մինչեւ 16 Յունիս:

Նշենք, որ Նորին Սրբութեան շքախումբին մաս կը կազմէին Դպրեւանքի Տեսուչ՝ Հոգշ. Տ. Պարոյր Վրդ. Շէրնէզեանն ու Կաթողիկոսութեան Ազգ. Կեդրոնական Վարչութեան Քաղաքական Ժողովի համա-ատենապետ՝ Գրիգոր Մահսէրէճեանը: Իսկ Գանատայի մէջ Նորին Ս. Օծութեան շքախումբին միացան, բնականաբար, Գանատայի Հայոց Թեմի Առաջնորդ՝ Գերշ. Տ. Բաբգէն Արք. Չարեանը, եւ մերթ-ընդ-մերթ Ազգ. Կեդրոնական Վարչութեան անդամները, Գանատայի Հայոց Թեմի Ազգ. Վարչութիւնը, Թեմի եկեղեցիներու հոգաբարձութեան եւ գաղութէն ներս գործող կազմակերպութեանց ներկայացուցիչներ:



ԺԱՄԱՆՈՒՄ

Նորին Ս. Օծութիւնը Մոնթրէալ ժամանեց Չորեքշաբթի, 31 Մայիս 2023-ին՝ ընկերակցութեամբ Հոգշ. Տ. Պարոյր Վրդ. Շէրնէզեանին եւ Քաղաքական Ժողովի համա-ատենապետ՝ Գրիգոր Մահալապեանին, ու Գանատայի միջազգային օդակայանին մէջ դիմաւորուեցաւ Գանատայի Հայոց Թեմի Առաջնորդ՝ Գերշ. Տ. Բարգէն Արք. Չարեանին, Գերշ. Տ. Սուրէն Արք. Գաթարոյեանին, Լիբանանի Հանրապետութեան Հիւպատոս՝ Անթուան Իիտին, Հոգեւորականաց դասուն, Ազգ. Կեդրոնական Վարչութեան անդամ՝ Բժիշկ Փիրայր Պասմաճեանին, Կրօնական Ժողովի եւ Ազգ. Վարչութեան անդամներուն, կազմակերպիչ յանձնախումբին եւ եկեղեցիներու հոգաբարձական կազմերուն կողմէ:

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ Ա. ՅԱԿՈՒ ԱՌԱՋՆՈՐԴԱՆԻՍՏ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՄԷՋ

Արամ Ա. Վեհափառ Կաթողիկոսին Գանատա հովուապետական այցելութիւնը սկիզբ առաւ Հինգշաբթի, 1 Յունիս 2023-ի երեկոյեան՝ Ա. Յակոբ Առաջնորդանիստ Մայր Եկեղեցի հանդիսաւոր այցելութեամբ:

Միաբան ու քահանայ հայրերէ եւ դպրաց դասերէ կազմուած Հայրապետական թափօրը, Հ.Մ.Ը.Մ. «ԿԱՄՔ» մասնաճիւղի շեփորախումբին եւ



սկառուներու առաջնորդութեամբ, հասաւ Ս. Յակոբ Առաջնորդանիստ Մայր Եկեղեցւոյ մուտքը, եւ Նորին Սրբութիւնը աղ ու հացի աւանդական օրհնութենէն ետք, «Հրաշափառ» շարականի երգեցողութեամբ մուտք գործեց եկեղեցի եւ հանդիսապետեց Կանոնական աղօթքին:

Արարողութեան ներկայ էին Ազգ. Կեդրոնական Վարչութեան անդամները, Գանատայի Հայոց Թեմի Ազգ. Վարչութիւնը, Թեմի եկեղեցիներու հոգաբարձութեան եւ գաղութէն ներս գործող կազմակերպութեանց ներկայացուցիչներն ու հաւատացեալ ժողովուրդը:

Արարողութեան աւարտին, Նորին Սրբութեան բարի գալուստ մաղթեց ու անոր օրհնաբեր այցելութեան համար, յանուն գանատահայոց, երախտագիտութիւն յայտնեց Առաջնորդ Սրբազան Հայրը:

Ուստի, Նորին Ս. Օծութիւնը առաջին հերթին իր հայրական օրհնութիւնը փոխանցեց Առաջնորդ Սրբազանին, Թեմի Հոգեւորականաց դասուն, Կրօնական ժողովին ու Ազգ. Վարչութեան, գործակից միութիւններուն եւ համայնքին: Ապա, Նորին Սրբութիւնը իր խօսքը կեդրոնացուց ծառայութեան մեծութեան վրայ՝ անդրադառնալով հովիւ-հօտ յարաբերութեան կարեւորութեան: Շարունակելով, ան լուսարձակի տակ բերաւ Պօղոս Առաքեալի Ա. Կորնթացիներու 13.13 համարին մէջ շեշտուած քրիստոնէական հիմնական երեք սկզբունքները՝ հաւատք, յոյս եւ սէր եւ յայտնեց, որ այս մեր կեանքի նշանաբանը պիտի ըլլայ. «Ամէն օր Հայ եկեղեցին երեկոյեան ժամերգութեան ընթացքին իր հաւատացեալներուն անունով կ'աղօթէ՝ Ով Տէր, աւելցուր մեր մէջ հաւատքը, յոյսը եւ սէրը, ինչպէս նաեւ՝ առաքիճի գործերը: Այս պարզ աղօթքին մէջ խտացած է քրիստոնէական կեանքին իմաստն ու նպատակը: Հաւատքը, յոյսը եւ սէրը քրիստոնէայ մարդու կեանքին առանցքը կը կազմեն եւ իր կեանքին այս երեք տարածքները իրենք զիրենք կ'արտայայտեն աստուածահանոյ գործերու նամբով: Չմոռնանք, որ մկրտութեան ժամանակ, կնքահայրը մանուկին անունով կը խնդրէ՝ հաւատք, յոյս եւ սէր: Սա պարագայական խնդրանք մը չէ. Այլ՝ կը կրկնենք, մեր կեանքին խորք, իմաստ ու ինքնութիւն տուող, կեանքը ապրելու ու իրագործելու էական կերպն է:

Հաւատք մեր անձերէն վեր՝ Աստուծոյ նկատմամբ, Աստուծոյ պատկերին համաձայն ստեղծուած ըլլալու եւ Աստուծոյ ապաւինելու գիտակցութենէն բխող:

Յոյս՝ վաղուան նկատմամբ: Քրիստոնէութիւնը սոսկ անցեալ ու ներկայ չէ՝ միայն, այլ նաեւ ապագայ՝ Քրիստոսի երկրորդ գալուստը սպասող: Յոյսն է որ քրիստոնէայ մարդը իր ներկայ պայմաններէն դուրս կը բերէ եւ ապագային նայելու ու ապագան կերտելու յանձնառութիւնը կը ներշնչէ:

Սէր՝ Աստուծոյ եւ մեր նմանին նկատմամբ: Աստուած ո՛չ միայն սիրոյ աղբիւր է, այլ իր սէրէն մղուած մարդուն համար իր արիւնը թափեց եւ փոխադարձ սիրոյ պատգամը տուաւ:

Վերջապես, ֆրիստոնեայ մարդը ինքնիրմով ու ինքնիրեն համար ապրող մարդը չէ: Իր հաւատքը, յոյսը ու սէրը պէտք է կեանքի վերածուի՝ գործնապէս բարի գործերով, նուիրեալ ծառայութիւններով: Ինչպէս Առաքեալ կ'ըսէ՝ հաւատքը առանց գործի մեռեալ տարր է: Քրիստոնէական հասկացողութեամբ հաւատքը, յոյսն ու սէրը իրենց ամբողջական ու հարազատ իմաստը կը ստանան՝ երբ կեանքով ու ծառայութեամբ կը քարգմանուին:

Այսօր եկած ենք Գանատայի մեր Թեմը հովուապետական այցելութեամբ եւ Մեր առաջին աղօթքը կ'ուղղենք առ Աստուած, ըսելով. «Ո՛վ Տէր, աւելցուր մեր մէջ, մեր անհատական թէ հաւաքական կեանքին մէջ, հաւատքը, յոյսն ու սէրը, որպէսզի կարենանք մեր կեանքը Աստուծոյ ներկայութեամբ ապրիլ, հօգորացնել, պայծառակերպել, որպէսզի կարենանք մեր կեանքը բարի գործերով, եկեղեցանուէր ու ազգաշէն ծառայութիւններով լեցնել»:

Հայ ժողովուրդին դիմագրաւած ահաւոր տագնապներուն դիմաց՝ մենք պիտի շարունակենք մեր հաւատքի, յոյսի, սիրոյ նամբան. այդ նամբան մենք պիտի արժեւորենք մեր հաւատարմութեամբ, ամբողջական նուիրումով, ծառայութեամբ, հաւաքական կեանքը լեցնելով այնպիսի արժեքներով ու առաքինի գործերով, որոնք Աստուծոյ ներկայութիւնը մեր ժողովուրդի կեանքի մէջ կը դարձնեն հօգորութեան աղբիւր», *ըսաւ ան:*

Վեհափառ Հայրապետը անդրադարձաւ նաեւ երիտասարդութեան՝ համայնքային կեանքի բոլոր մակարդակներու վրայ գործօն մասնակցութիւն բերելու կարեւորութեան վրայ՝ ընդգծելով, որ երիտասարդութիւնը նոր աւիւնն ու հայեցակէտ կը բերէ:

Եկեղեցական արարողութեան աւարտին, ներկաները աջահամբոյրով ստացան Նորին Սրբութեան օրհնութիւնը:

ԱՅՅՅԵԼՈՒԹԻՒՆ՝ Ս. ՅԱԿՈԲ ԿՐԹԱԿԱՆ ՕՃԱԽՆԵՐ ԵՒ «ՀՈՐԻԶՈՆ» ՇԱԲԱԹԱԹԵՐԹԻ ԽՄԲԱԳՐԱՏՈՒՆ

Ուրբաթ, 2 Յունիս 2023-ի առաւօտուն, Արամ Ա. Վեհափառ Հայրապետը, իր շքախումբին ու Մոնթրէալի գաղութէն ներս գործող զանազան մարմիններու ներկայացուցիչներու ընկերակցութեամբ, այցելեց Ս. Յակոբ Ազգ. Վարժարանի «Արամ եւ Պերճուհի Մարգարեան» մանկամասը, Հ.Օ.Մ.ի Ծաղկոց «Սարաֆեան» նախակրթարան եւ «Բասդրմաճեան» երկրորդական վարժարան:

Նորին Սրբութիւնը աւանդական աղ ու հացով դիմաւորուեցաւ, շրջեցաւ դասարաններն ու շրջափակը ու մօտէն ծանօթացաւ աշակերտներու առօրեային: Մանկամասուրի ու ծաղկոցի այցելութեան ընթացքին, աշակերտները իրենց սորված երգերով, պարերով ու արտասանութիւններով գողտրիկ յայտագիր մը ներկայացուցին Վեհափառ Հայրապետին:



Մանկամսուրի ու ծաղկոցի այցելութենէն ետք, նախակրթարանի ու երկրորդական վարժարանի աշակերտները հաւաքուած էին դպրոցին բակը, ուր կոկիկ գեղարուեստական յայտագիր մը գործադրուեցաւ: Աշակերտութեան կողմէն բացման խօսքի արտասանութենէն ետք, Վարժարանի Տնօրէնուհի՝ Լոռի Ապրաքեան, տնօրէնութեան, ուսուցչական կազմին եւ աշակերտութեան անունով, բարի գալուստ մաղթեց Նորին Սրբութեան:

Խօսք առաւ Առաջնորդ Սրբազան Հայրը ու նշեց, որ Վեհափառ Հայրապետին հովուապետական այցելութիւններուն մէջ յատուկ տեղ կը գրաւէ ազգային վարժարաններ այցելութիւնը, որովհետեւ Հայ ժողովուրդի հովուապետը կը հաւատայ Հայ դպրոցին կարեւորութեան ու առաքելութեան:

Ապա, Վեհափառ Հայրապետը բեմ բարձրացաւ ու ողջունեց Ս. Յակոբ Ազգ. Վարժարանի տնօրէնութիւնը, ուսուցչական կազմը եւ աշակերտները, ու շեշտեց՝ «Հայ դպրոցը պարզ շէնք չէ՛: Հայ դպրոցը ոգի՛ է, մարդակերտումի ու հայակերտումի դարբնո՛ց է: Մե՛նք ա՛յս ոգիով կը սնանկեմք եւ կը շաղախուիմք Հայ դպրոցէն ներս, որպէսզի երբ մեծնանք՝ մեր ազգի՛ն ծառայեմք: Հայ Դպրոցը Հայրենիք, Եկեղեցի եւ Ընտանիք է»: Նորին Ս. Օծութիւնը գնահատեց Հայ ծնողները, ուսուցիչներն ու բարերարները, որոնց գերագոյն զոհողութեամբ է որ կը պահուի Հայ դպրոցը:



Նոյն օրը, Վեհափառ Հայրապետը իր շքախումբին ընկերակցութեամբ այցելեց «Հորիզոն» շաբաթաթերթի խմբագրատունը, ուր հիւրընկալուեցաւ «Հորիզոն» շաբաթաթերթի Վարիչ-խմբագիր՝ Վահագն Գարագաշեանին եւ անձնակազմին կողմէ:

**ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐ՝ ԹԵՄԻ ԱԶԳ. ՎԱՐՉՈՒԹԵԱՆ,
Հ.Յ.Դ. ԲԻԻՐՈՅԻ ՈՒ ԿԵԴՐ. ԿՈՄԻՏԷԻ
ՊԱՏՈՒԻՐԱԿՈՒԹԵԱՆՑ ՀԵՏ**

Նոյն օրը, յետմիջօրէին, Առաջնորդ Սրբազան Հայրն ու Ազգ. Վարչութիւնը հանդիպում ունեցան Նորին Ս. Օծութեան հետ: Հանդիպման ներկայ էին Ազգ. Կեդր. Վարչութեան Քաղաքական Ժողովի համա-ատենապետ՝ Գրիգոր Մահ-սէրէճեանն ու Վարչութեան անդամ՝ Բժիշկ Ժիրայր Պասմաճեանը: Հանդիպման ընթացքին, Նորին Սրբութիւնը անդրադարձաւ Գանատահայ Սփիւռքին ու զայն շրջապատող մարտահրաւէրներուն:

Աւելի ուշ, Հ.Յ.Դ. Բիւրոյի ներկայացուցիչ՝ Յակոբ Տէր Խաչատուրեան, Բիւրոյի անդամ՝ Ռաֆֆի Տօնապետեան եւ Հ.Յ.Դ. Գանատայի Կեդր. Կոմիտէի ներկայացուցիչ՝ Մհեր Գարագաշեան, Կեդր. Կոմիտէի անդամներ՝ Սարօ Տէր Պետրոսեան, Մարալ Նազարեան եւ Յովիկ Թիւֆէնքճեան, հանդիպում ունեցան Վեհափառի Հայրապետին հետ՝ ներկայութեամբ Առաջնորդ Սրբազան Հօր եւ Բժիշկ Ժիրայր Պասմաճեանին:

Հանդիպման ընթացքին քննարկուեցան Արցախի ու Հայաստանի Հանրապետութեանց քաղաքական իրավիճակն ու առկայ ճգնաժամը, ինչպէս նաև արժարժուեցան Գանատայի Հայ համայնքի ու Միջին Արեւելքի հայկական համայնքներու դիմագրաւած մարտահրաւէրները:

ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԸ

ԼԱԻԱԼԻ Ս. ԳԷՈՐԳ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՄԷՋ

Նորին Արքեպիսկոպոս, Հայրապետական թափօրով շրջապատուած, 2 Յունիս 2023-ի երեկոյեան, Հ.Մ.Ը.Մ. Լաւալի մասնաճիւղի շեփորախումբին ու սկառուներու առաջնորդութեամբ հասաւ Լաւալի Ս. Գէորգ եկեղեցի եւ ըստ աւանդութեան, «Հրաշափառ» շարականի երգեցողութեամբ մուտք գործեց եկեղեցի, ուր տեղի ունեցաւ Կանոնական Աղօթք:

Բարգէն Արքեպիսկոպոս խօսք առնելով, ըսաւ. «Անցնող եօթը տարիներուն, Վեհափառ Հայրապետը իր բարոյական ներկայութեամբ, իր գրութիւններով եւ պատգամներով, համազգային թէ՛ այլապէս տագնապներու ընթացքին, իր քաջ կեցուածքով ուղորդեց մեզ չուսահատելու եւ չտկարանալու: Ան իբրեւ հայր ու հովուապետ թելադրեց վերականգնիլ, վերակազմակերպուիլ, վերահզօրանալ, վերաշխուժանալ եւ մանաւանդ՝ շարունակել մեր պայքարը բոլոր բնագաւառներէն ներս, որպէսզի կարենանք ոտքի եւ կենսունակ մնալ ու հայութեամբ շնչել, հա՛յօրէն ապրիլ ու հայութեա՛ն համար պայքարիլ»:



Ապա Նորին Ս. Օծութիւնը պատգամեց, ըսելով. «Բոլորս կը պատկանինք նոյն եւ մէկ ժողովուրդին, նոյն եւ մէկ Հայրենիքին, եկեղեցիին ու դատին: Մեր ժողովուրդի կեանքին մէջ մէկուսեան գաղափարը պէտք է դիտել զանազանութեան մէջ: Մէկուսիւնը պէտք է ամուր պահենք՝ որպէս հաւատարմութեան, ամբուսեան եւ գորութեան աղբիւր: Հոն է մեր անցեալը, մեր ներկան եւ մանաւանդ՝ հոն է երաշխիքը մեր ապագային: Մեր ժողովուրդը միայն անցեալին նայող ու ներկային մէջ ապրող ժողովուրդ չէ՛, այլ անցեալով զօրացած, ներկայի փորձառութեամբ թրծուած, ապագային նայող, ապագային քաջող ժողովուրդ է՝ որպէս մէկ ամբողջութիւն: Այս մէկ ամբողջութեան ծիրէն ներս պէտք է դիտել, արժեւորել եւ ուղղել մեր հաւաքական կեանքը»:

Անդրադառնալով Աստուածաշունչի սփռած լոյսին տակ քրիստոնէավայել կեանք ապրելուն, ան շեշտեց, որ իբրեւ քրիստոնէաներ, Աստուածաշունչը միայն պէտք չէ կարգանք, այլ՝ Աստուածաշունչը իր արժէքներով, սկզբունքներով, ուսուցումներով պէտք է ապրինք: «Աստուածաշունչը մեր կեանքին որա՛կն է: Աստուածաշունչը մեր կեանքին նամբա՛ն է: Աստուածաշունչը մեր կեանքին խորք, ինքնութիւն ու նպատակ տուող Աստուծոյ յայտնութի՛ւնն է: Հետեւաբար պէտք է նայինք Աստուածաշունչին, որպէսզի մեր կեանքը միշտ կերպով ըմբռնենք ու ապրինք»:

Եկեղեցական արարողութեան աւարտին, ներկաները աջահամբոյրով ստացան Հայոց Հայրապետին օրհնութիւնը:

Ս. ԵՒ ԱՆՄԱՀ ՊԱՏԱՐԱԳ ՈՒ ՄԻՋ-ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԱՂՕԹՔ «ՊՈՆ ՓԱՍԹԷՕՐ» ԵԿԵՂԵՑԻՈՅ ՄԷՋ

Շաբաթ, 3 Յունիս 2023-ի երեկոյեան, նախագահութեամբ Արամ Ա. Կաթողիկոսին, Լաւալի «Պոն Փասթէօր» եկեղեցւոյ մէջ մատուցուեցաւ Ս. եւ Անմահ Պատարագ: Ս. Պատարագը մատուցեց Ամերիկայի Միացեալ Նահանգներու Արեւելեան Հայոց Թեմի Առաջնորդ՝ Գերշ. Տ. Անուշաւան Արք. Դանիէլեան:

Վեհափառ Հայրապետին աղօթակից էին Գանատայի Հայոց Թեմի Առաջնորդ՝ Գերշ. Տ. Բաբգէն Արք. Չարեանը, Կրօնական Ժողովի Ատենապետ Գերպ. Տ. Գեղարդ Մ.Վրդ. Քիւսպէկեանը, ինչպէս նաեւ միաբան եւ քահանայ հայրերը:

Ս. Պատարագին ներկայ էին Գանատայի մէջ Պապական Նուիրակ՝ Գերպ. Տ. Իվան Ժիրքովիչը, Մոնթրէալի Արքեպիսկոպոս՝ Քրիսթիան Լէբինը, Ռումանիոյ Ուղղափառ Եկեղեցւոյ Առաջնորդ՝ Իան Եպս. Քասիանը, Անկլիքան Եկեղեցւոյ Եպիսկոպոսուհի՝ Մերի Իրուին Կիպսընը, Մարոնիթ Եկեղեցւոյ Առաջնորդ՝ Փօլ Մարուան Թապէթ Եպս.ը, Յոյն Կաթողիկ Առաջնորդ՝ Միլատ Ալ ժաուրջ Եպս.ը, Կաթողիկ Եպիսկոպոսական Ժողովի Քարտուղար՝ Փիէռ Միւրէյ Եպս.ը,



Լաւալի Հայ Աւետարանական Եկեղեցւոյ նախկին Հովիւ Վեր. Մարտիրոս Էլչէնճեանը, Լաւալի Հայ Աւետարանական Եկեղեցւոյ այցելու Հովիւ՝ Վեր. Աւետիս Պոյնարեանը եւ Մոնթրէալի Հայ Աւետարանական Ա. Եկեղեցւոյ Հովիւ Վեր. Ճորճ Տապոն, ինչպէս նաեւ Հայաստանի Հանրապետութեան Դեսպանունոհի՝ Անահիտ Յարութիւնեանը, Հայաստանի Հանրապետութեան Մոնթրէալի Պատուոյ Հիւպատոս՝ Լեւոն Աֆէլջեանը, Քեպէքի Խորհրդարանի անդամ՝ Սոնա Լախոյեան Օլիվիէն, Լաւալի Քաղաքապետարանի անդամ՝ Սեդա Թօփուզեանը, Ազգ. Կեդր. Վարչութեան համա-ատենապետ՝ Գրիգոր Մահսէրէճեանը, Վարչութեան անդամ՝ Բժիշկ Ժիրայր Պասմաճեանը, Գանատայի Հայոց Թեմի Ազգ. Վարչութեան անդամները, Հ.Յ.Դ. Բիւրոյի ներկայացուցիչ՝ Յակոբ Տէր Խաչատուրեանը, Հ.Յ.Դ. Կեդր. Կոմիտէի ներկայացուցիչ՝ Մհեր Գարագաշեանը, գործակից միութիւններու ներկայացուցիչները եւ հաւատացեալ ժողովուրդը:

Հոգշ. Տ. Յակոբ Վրդ. Եագուպեան ողջունեց հիւրերը եւ հերթաբար հրաւիրեց օտար հոգեւորականները, որպէսզի արտասանեն Վեհափառ Հայրապետին իրենց բարի գալուստի խօսքերը:

Ապա, Թեմի Առաջնորդ Սրբազան Հայրը ողջունեց ներկայութիւնը բոլոր հոգեւորականներուն, որոնք Ս. Պատարագին մասնակից եւ Վեհափառ Հայրապետին աղօթակից դարձան: Իր խօսքի աւարտին, ան հրաւիրեց Նորին Սրբութիւնը, որպէսզի փոխանցէ իր Հայրապետական պատգամը:

Նորին Ս. Օծութիւնը փառք եւ գոհութիւն յայտնեց Աստուծոյ, որ մէկտեղած է իր զաւակները: Ապա ողջունեց հոգեւորականաց ներկայութիւնը եւ ըսաւ, որ անոնց ներկայութիւնը Քրիստոսով մէկ ըլլալու մեծագոյն նշանն է: Մէջբերելով միջ-եկեղեցական ժողովներու ընթացքին երգուող հոգեւոր երգը, որ կ'ըսէ. «Մէկ ենք Քրիստոսով», ան ըսաւ՝ «Մենք կը պատկանինք Քրիստոսի եկեղեցոյ: Միջ-եկեղեցական շարժումին միջոցաւ միասին ըլլալու գիտակցութիւնը պէտք է խորանայ մեր մէջ: Այսօր մենք կ'ապրինք համաշխարհայնացած աշխարհի մէջ, ուր բաժանումի պատեր չկան այլեւս: Երկխօսութիւնը վերացական ըմբռնում չէ, այլ մաս կը կազմէ մեր առօրեայ կեանքին: Մենք ո՛չ միայն կը համագոյակցինք, այլ միասին կ'ապրինք՝ դիմագրաւելով նոյն տագնապներն ու մարտահրաւերները: Հետեւաբար, զանազանութեամբ յատկանշուող ներկայ ընկերութեան մէջ, պէտք է յարգենք ուրիշներուն աւանդութիւններն ու ըմբռնումները, միշտ նկատի ունենալով ընկերութեան ընդհանրական սկզբունքներն ու արժէքները»:

Պատգամէն ետք, հոգեւորականները բարձրացան Ս. Խորան եւ Վեհափառ Հայրապետին նախագահութեամբ կատարուեցաւ միջ-եկեղեցական աղօթք:

**ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ՃԱՇԿԵՐՈՅԹ՝
Ի ՊԱՏԻՒ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ**

Կիրակի, 4 Յունիս 2023-ի երեկոյեան, Մոնթրէալի «Փլազա Վոլարէ» սրահին մէջ տեղի ունեցաւ պաշտօնական ճաշկերոյթ՝ ի պատիւ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Վեհափառ Հայրապետին: Ճաշկերոյթին ներկայ էին Միացեալ Նահանգներու Արեւելեան Հայոց Թեմի Առաջնորդ Սրբազան Հայրը, Հայաստանի Հանրապետութեան դեսպանուհին, Մոնթրէալի մէջ Հայաստանի Հանրապետութեան Պատուոյ Հիւպատոսը, Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Ազգ. Կեդր. Վարչութեան համա-ատենապետն ու Գանատայի Հայոց Թեմի անդամը, Հ.Յ.Դ. Բիւրոյի ներկայացուցիչը, Գանատայի Հայոց Թեմի Ազգ. Վարչութեան



ատենապետը, Կրօնական Ժողովի եւ Ազգ. Վարչութեան անդամներն ու գործակից միութիւններու ներկայացուցիչները:

Ճաշկերոյթի հանդիսավար՝ Արազ Եաղճեան բացման խօսքով հանդէս եկաւ եւ երախտագիտութիւն յայտնեց Վեհափառ Հայրապետին՝ անոր նուիրուածութեան եւ ծառայութեան համար: Ծաշկերոյթի ընթացքին գեղարուեստական կոկիկ յայտագիր մը ներկայացուցին՝ երգչուհի Յասմիկ Գասպարեան եւ դաշնակահար Խաչատուր Ղազարեան:



Ապա, Հայաստանի Հանրապետութեան դեսպանուհի՝ Անահիտ Յարութիւնեան բարի գալուստ մաղթեց Նորին Սրբութեան եւ փոխանցեց իր սրտի խօսքը:

Գերշ. Տ. Բաբգէն Արք. Չարեան իր կարգին խօսք առաւ եւ շնորհակալութիւն յայտնեց բոլոր անոնց, որոնք կամաւոր աշխատեցան Ծաշկերոյթին յաջողութեան համար: Ան իր երախտագիտութիւնը յայտնեց Նորին Սրբութեան, որ միշտ նեցուկ կը կանգնի Սփիւռքի հզօրացման ու նշեց, որ այս իմաստով Հայոց Հայրապետը Սրբատառ Կոնդակով անցնող երկու տարիները Սփիւռքի տարի հռչակած է: Սրբազան Հայրը իր խօսքը եզրափակեց ընդգծելով՝ «Եթէ Սփիւռքը զօրաւոր է, Հայաստանը զօրաւոր կը մնայ: Եթէ Սփիւռքը զօրաւոր է, Արցախը զօրաւոր կը մնայ»:

Ծաշկերոյթի ընթացքին գնահատուեցան անոնք, որոնք երկար տարիներէ ի վեր կը ծառայեն Մեծն Մոնթրէալի համայնքին: Վեհափառ Հայրապետի





ձեռամբ «Կիլիկեան Իշխան»ի շքանշան ստացան՝ Շաբէ Կէօնճեան, Մանուկ Զուխաճեան, «Կիլիկեան Ասպետ»ի շքանշան ստացան՝ Ժան Մկրտիչեան, Վիգէն Սարգիսեան, Լեւոն Պէնկեան, Հերմինէ Մանուկեան, Յակոբ Լախոյեան եւ «Մեսրոպ Մաշտոց»ի շքանշան ստացան՝ Մհեր Գարագաշեան, Թորոս Պապիկեան եւ Տիբի Թորիկեան:

Նորին Ս. Օծութիւնը իր բարձր գնահատանքը յայտնեց բոլոր շքանշանակիրներուն՝ անոնց կատարած երկար ծառայութեան համար ու ըսաւ. «Ինչ որ Անթիլիասի մէջ կը կատարուի, մեր գաղութներուն եւ համայնքներուն ծառայութիւնն է: Փառք Աստուծոյ, որ գործակից բոլոր միութիւններու եւ հաստատութիւններու նպատակն ալ նոյնն է՝ ծառայել մեր գաղութներուն»:



Հովուապետը իր մտահոգութիւնը յայտնեց մեր գաղութներուն դիմագրաւած մարտահրաւերներուն առնչութեամբ. «Մեր հաստատութիւնները ինքնաբերականութենէ անցնելով պէտք է իրականութեան յարմարին եւ ի հարկին փոփոխութիւն կատարեն»: Խօսքը ուղղելով երիտասարդութեան, Նորին Ս. Օծութիւնը շեշտեց՝ «Մեր երիտասարդութիւնը միայն մեր ապագան չեն, այլ՝ մեր ներկան են»: Աւարտին, Նորին Սրբութիւնը միութեան կոչ ուղղեց՝ մանաւանդ Հայաստանի, Արցախի եւ Սփիւռքի համար:

Ճաշկերոյթը իր աւարտին հասաւ «Կիլիկիա» մաղթերգի երգեցողութեամբ:

**ԱՅՑՅԵԼՈՒԹԻՒՆ՝ ԼԻՔԱՆԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՀԻԻՊԱՏՈՍԱՐԱՆ**

Երկուշաբթի, 5 Յունիս 2023-ի առաւօտուն, Արամ Ա. Կաթողիկոս իր շքախումբին հետ այցելեց Լիբանանի Հանրապետութեան հիւպատոսարան, ուր ջերմօրէն հիւրընկալուեցաւ հիւպատոս Անթուան Իտի կողմէ:

Շքախումբին մաս կը կազմէին Գանատայի Հայոց Թեմի Առաջնորդ Սրբազան Հայրը, Հայր Պարոյրը, Հայաստանի Հանրապետութեան Մոնթրէալի մէջ Պատուոյ Հիւպատոսը, Ազգ. Կեդր. Վարչութեան համա-ատենապետը, Գանատայի Հայոց Թեմի Ազգ. Վարչութեան Ատենապետը, Հ.Յ.Դ. Բիւրոյի ներկայացուցիչը եւ Հ.Յ.Դ. Կեդր. Կոմիտէի ներկայացուցիչը:

Բարի գալուստի խօսքին մէջ հիւպատոսը շնորհակալութիւն յայտնեց Հայոց Հայրապետին, որ ընդառաջած է Մոնթրէալի մէջ Լիբանանեան հիւպատոսարան այցելութեան հրաւերին եւ ըսաւ, որ Լիբանանի մէջ Հայ ժողովուրդը յատուկ տեղ ունի լիբանանցի ժողովուրդին համար՝ նշելով, որ Հայ ժողովուրդը եղած է Լիբանանի պատմութիւնը կերտող ժողովուրդներէն մէկը:

Վեհափառ Հայրապետը իր կարգին շնորհակալութիւն յայտնեց հիւպատոսին, որ այս մօտեցումը ունի Հայ ժողովուրդին նկատմամբ: «Լիբանանցի ժողովուրդը Հայոց Յեղասպանութենէն հողապրած հայորդիները ընդունեց իր երկրին մէջ եւ երբեք խտրութիւն չդրաւ», ըսաւ ան՝ ընդգծելով, որ Լիբանանահայութիւնը անտարբեր չէ մնացած Լիբանանի դժուարին օրերուն եւ ներդրում ունեցած է Լիբանանի ամէնէն փայլուն շրջանին:

Հանդիպման ընթացքին անոնք անդրադարձան Լիբանանի տնտեսական ներկայ դժուարութիւններուն:



ՀԱՆԴԻՊՈՒՄ ԳՈՐԾԱԿԻՑ ՄԻՈՒԹԻԻՆՆԵՐՈՒ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐՈՒՆ ՀԵՏ

Նոյն օրը երեկոյեան, Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոս Ս. Յակոբ Ազգ. Վարժարանի «Բասդրմաճեան» սրահին մէջ հանդիպեցաւ Մեծն Մոնթրէալի մէջ գործող գործակից միութիւններու ներկայացուցիչներուն հետ: Մեկնելով Վեհափառ Հայրապետի 2023 տարուան հռչակագիրէն, կազմակերպուած էր «Սփիւռք» աշխատանքային հանդիպում մը, որուն ընթացքին արծարծուեցան Սփիւռքի վերակազմաւորման համար կատարուելիք աշխատանքները: Աշխատանքային հանդիպման նպատակն էր քաջալերել ինքնաճանաչողութիւնն ու երկխօսութիւնը՝ Սփիւռքի դիմագրաւած մարտահրաւէրներուն մասին եւ որոնել մարտահրաւէրները յաղթահարելու միջոցները:

Գանատայի Հայոց Թեմի Առաջնորդ՝ Բաբգէն Արք. բացումը կատարեց հանդիպման՝ ներկայացնելով «Սփիւռքի Տարի» հռչակման առթիւ Ազգ. Առաջնորդարանի գործունէութիւնը: Ան վեր առաւ Վեհափառ Հայրապետի հռչակագիրէն բաժին մը, ուր Նորին Ս. Օծութիւնը կը խօսի հզօր Սփիւռք ունենալու հրամայականին մասին ու ըսաւ. «Պէտք է վերարժեւորել եւ սերտել մեր կատարելիք աշխատանքները, որպէսզի կարենանք կազմաւորել աւելի պայծառ եւ հզօր ապագայ ունեցող Սփիւռք մը: Պէտք է ըլլանք իրատես եւ տեսնենք մեր Սփիւռքին նոր մարտահրաւէրները ու պէտք է միասնական ոգիով կեդրոնանալ եւ սերտել, թէ ինչպէս կրնանք այդ բոլոր մարտահրաւէրները դիմագրաւել»: Ապա, Առաջնորդ Սրբազան Հայրը հրաւիրեց Նորին Ս. Օծութիւնը, որպէսզի փոխանցէ իր պատգամը:



Նորին Սրբութիւնը իր ուրախութիւնը յայտնեց գործակից միութիւններու պատասխանատուներուն, ներկայացուցիչներուն, մանաւանդ՝ երիտասարդ պատասխանատուներուն հետ հանդիպելու առիթին համար. «Ես կը հաւատամ, որ երիտասարդներն են, որոնք յաջողութեամբ պիտի դիմագրաւեն շատ մը մարտահրաւերներ: Պէտք է զանոնք առաւել եւս ներգրաւել եւ ոչ թէ զանոնք պահել հանդիսատեսի դիրքին վրայ», ըսաւ Վեհափառ Հայրապետը: Ան շեշտեց կարեւորութիւնը ինքնաճանաչողութեան եւ մէկ ըլլալու գաղափարին. այդպիսով կարելի է տեսնել ճշմարտութիւնը, նշեց ան: «Զեմք կրնար անտարբեր մնալ այս բոլոր մարտահրաւերներուն դիմաց, այդ իսկ պատճառով անցնող երկու տարիները «Սփիւռքի Տարի» հռչակեցի: Այսպէս միասնաբար իրապաշտ ըլլալով կարենանք վստահեցնել, որ մեր Սփիւռքը կը մնայ ապրող իրականութիւն», շեշտեց Հայոց Հայրապետը: «Պէտք է պատշաճացնենք եւ բարեփոխենք մեր մօտեցումները եւ այդպիսով տեսնել այսօրուան Սփիւռքին դիմագրաւած մարտահրաւերները: Պէտք է մենք զմեզ միացնենք մեր ապրած շրջանակին մէջ, բայց պէտք է նաեւ ամուր պահենք մեր ինքնութիւնն ու մշակոյթը», թելադրեց Նորին Սրբութիւնը:

Հանդիպման աւարտին, ներկաները առիթ ունեցան իրենց հարցումները ուղղել Վեհափառ Հայրապետին:

ԱՅՅԵԼՈՒԹԻՒՆ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ԴԵՍՊԱՆԱՏՈՒՆ

Երեքշաբթի, 6 Յունիս 2023-ի առաւօտուն, Արամ Ա. Վեհափառ Հայրապետը, իր շքախումբին հետ, այցելեց Հայաստանի Հանրապետութեան դես-



պանատուն, ուր հիւրընկալուեցաւ Հայաստանի Հանրապետութեան Դեսպանուհի՝ Անահիտ Յարութիւնեանի եւ դեսպանատան անձնակազմին կողմէ: Շքախումբին մաս կը կազմէին Գանատայի Հայոց Թեմի Առաջնորդ Սրբազան Հայրը, Թեմի Կրօնական Ժողովի Ատենապետը, Հայր Պարոյրը եւ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Ազգ. Կեդր. Վարչութեան Քաղաքական Ժողովի համա-ատենապետը:

Դեսպանուհին բարի գալուստ մաղթեց Վեհափառ Հայրապետին եւ շնորհակալութիւն յայտնեց հրաւերին ընդառաջման համար:

Նորին Սրբութիւնը իր խօսքին մէջ ըսաւ. «Տարբեր մօտեցումները պէտք է շփոթել մեր միասնականութեան հետ: Տարբերութիւններ կան, սակայն հիմնական եւ ընդհանրական հարցերու շուրջ պէտք է մեր ժողովուրդը իր հաւաքական կամքը արտայայտէ»:

ԱՅՅԵԼՈՒԹԻՒՆ՝ ԼԻԲԱՆԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ԴԵՍՊԱՆԱՏՈՒՆ

Աւելի ուշ, Նորին Ս. Օծութիւնը, իր շքախումբին հետ, այցելեց Լիբանանի Հանրապետութեան Դեսպանատուն: Վերոնշեալ շքախումբին հիւրաբար միացաւ Հայաստանի Հանրապետութեան դեսպանուհին:

Դեսպան Ֆատի Զիատէն եւ դեսպանատան անձնակազմը ընդունեցին Նորին Սրբութիւնը: Դեսպանը բարի գալուստ մաղթեց Հայոց Հայրապետին եւ շնորհակալութիւն՝ հրաւերին ընդառաջման համար:

Հանդիպման ընթացքին արծարծուեցան Լիբանանի ներքաղաքական հարցերն ու տիրող տնտեսական ճգնաժամը:



ՀԱՆԴԻՊՈՒՄ՝ ԳԱՆԱՏԱՅԻ ՎԱՐՉԱՊԵՏ ՃԱՍԹԻՆ ԹՐՈՒՏՈՅԻ ՀԵՏ

Երեքշաբթի, 6 Յունիս 2023-ի երեկոյեան, Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոս հանդիպում ունեցաւ Գանատայի Վարչապետ՝ Ճասթին Թրուտոյի հետ: Հանդիպումին ներկայ էին նաեւ Գանատայի Արտաքին Գործոց Նախարար՝ Մելանի Ճոլի, Գանատայի Հայոց Թեմի Առաջնորդ՝ Գերշ. Տ. Բաբգէն Արք. Զար-



եան, Հ.Յ.Դ. Բիւրոյի ներկայացուցիչ՝ Յակոբ Տէր Խաչատուրեան եւ Հ.Յ.Դ. Գանատայի Կեդր. Կոմիտէի ներկայացուցիչ՝ Մհեր Գարագաշեան:

Հանդիպման առանցքը կազմեց Արցախի ներկայ իրավիճակը, Ազրայէջճանի շրջափակումը եւ Գանատայի դիրքորոշումը՝ ԵԱՀԿ-ի միջոցով խաղաղ եւ արդար լուծման խթանման, որ հիմնուած է Հելսինքիի մէջ կնքուած եզրափակիչ Աքթին սկզբունքներուն վրայ, որ կը ներառէ ինքնորոշման սկզբունքը: Անոնք նաեւ արծարծեցին՝ Գանատա-Հայաստան երկկողմանի չարաբերութեան հզօրացումը, Միջին Արեւելքի մէջ հայկական գաղութներուն վերա-



բերեալ հարցերը եւ տարածաշրջանին մէջ խաղաղ համակեցութեան եւ միջ-կրօնական երկխօսութեան խթանման կարեւորութիւնը:

Նորին Սրբութիւնն ու Գանատայի Վարչապետը յայտնեցին փոխադարձ երախտագիտութիւն եւ արտայայտեցին խաղաղութեան, արդարութեան եւ հանդուրժողականութեան համար պայքարելու իրենց յանձնառութիւնը: Անոնք նաեւ ընդգծեցին մարտահրաւերներու լուծման համար իրենց մնայուն համագործակցութեան կարեւորութիւնը:



ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ ԹՈՐՈՆԹՈՅԻ Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՄԷՋ

Չորեքշաբթի, 7 Յունիս 2023-ի երեկոյեան, Հայրապետական թափօրը՝ առաջնորդութեամբ եկեղեցականաց, սարկաւազաց եւ դպրաց դասուն, ինչպէս նաեւ Հ.Մ.Ը.Մ. Թորոնթոյի մասնաճիւղի շեփորախումբին ու սկաուտներուն եւ Գանատայի Երիտասարդական Միութեան, հասաւ Թորոնթոյի Ս. Աստուածածին եկեղեցի:



«Հրաշափառ» շարականի երգեցողութեամբ Արամ Ա. Կաթողիկոս, ընկերակցութեամբ Առաջնորդ Սրբազան Հօր եւ Ա.Մ.Ն. Արեւմտեան Հայոց Թեմի Առաջնորդ՝ Գերշ. Տ. Թորգոմ Եպս. Տօնոյեանին, մուտք գործեց Ս. Աստուածածին եկեղեցի, ուր տեղի ունեցաւ Կանոնական Աղօթք: Սոյն արարողութեան ներկայ էին միջ-եկեղեցական հետեւեալ կրօնական պետերը.- Ղպտի Ուղղափառ Եկեղեցւոյ Առաջնորդ՝ Անպա Մինա Եպս., Գանատայի Անկլիքան Եկեղեցւոյ Առաջնորդ՝ Լինտա Արք. Նիքքլս, Հայ Կաթողիկէ Համայնքի Հոգեւոր Հովիւ՝ Գերապատիւ Տ. Եղիա Մ.Վրդ. Քիրէճեան, Հայ Առաքելական Եկեղեցւոյ Համայնքի Հոգեւոր Հովիւ՝ Արժ. Տ. Զարեհ Ա. Քհնյ. Զարգարեան, ինչպէս նաեւ՝ Ղպտի Ուղղափառ Եկեղեցւոյ եւ Անկլիքան Եկեղեցւոյ քահանաներ ու սարկաւազներ:

Արարողութեան ներկայ էին Ազգ. Կեդր. Վարչութեան, Գանատայի Հայոց Թեմի Ազգ. Վարչութեան անդամները, տեղւոյն եկեղեցւոյ հոգաբարձութեան եւ գաղութէն ներս գործող կազմակերպութեանց ներկայացուցիչներն ու հաւատացեալ ժողովուրդը:

Գանատայի Հայոց Թեմի Առաջնորդ Սրբազան Հայրը, կանոնական աղօթքէն ետք, խօսք արտասանեց եւ իր երախտագիտութիւնը յայտնեց Վեհափառ Հայրապետին՝ անոր օրհնաբեր այցելութեան առիթով, որմէ ետք Նորին Սրբութիւնը փոխանցեց իր Հայրապետական պատգամը:

Նորին Ա. Օծութիւնը Հայրապետական ջերմ սիրով ողջունեց ներկաները եւ իր հոգեկան անհուն ուրախութիւնը յայտնեց անգամ մը եւս Թորոնթոյի սիրելի զաւակներուն հետ ըլլալուն համար: Երկլեզու իր պատգամին մէջ ան նշեց, որ պատմութեան բազմաթիւ հանգրուաններու ընթացքին, եկեղեցիներուն միջեւ բաժանումներ պարտադրուած են, սակայն եկեղեցիներուն միութիւնը իր ամուր արմատները ունի Աստուծոյ Որդիին մէջ: Այս արմատներուն ամրապնդումը պէտք է ա՛լ աւելի ուժեղացնել, եւ ապրիլ մեզի պարգեւուած այդ շնորհքով: Խօսքը ուղղելով եկեղեցւոյ զաւակներուն, Հայոց Հայրապետը անգամ մը եւս ընդգծեց, որ եկեղեցին գոյութիւն ունի յանուն ժողովուրդի ծառայութեան, եւ ա՛յդ է եկեղեցւոյ առաքելութեան նպատակը. «Քրիստոս ըսաւ՝ ես եկայ աշխարհ ո՛չ թէ ծառայութիւն ստանալու, այլ՝ ծառայելու»: Առ այդ, Արամ Ա. Կաթողիկոս վերաշեշտեց Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան յանձնառութիւնը Հայրենիքի ծառայութեան ու ըսաւ. «Մենք պատրաստ ենք ծառայելու մեր ժողովուրդին, մեր Հայրենիքին, Արցախին՝ մասնակից դառնալով այն բոլոր աշխատանքներուն, որոնց նպատակը մեր Հայրենիքին, Արցախին, ժողովուրդին ընդհանրական շահերուն կենսագործումն է, մեր կեցումաձգներուն առաւել՝ ամրապնդումն է»:

Եկեղեցական արարողութեան աւարտին, տեղի ունեցաւ աջահամբոյր՝ Թորոնթոյի Հայ Կեդրոնի սրահին մէջ:

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ Կ'ԱՅՑԵԼԷ ՆԻԱԿԱՐԱ ՖՈՂԸ, ՄԻԱՑԵԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐ

Թորոնթո իր այցելութեան ընթացքին, Հայոց Հայրապետը առիթը օգտագործեց ու հովուապետական այց մը տուաւ ԱՄՆ-ի սահմաններուն ներքեւ գտնուող Նիակարա Ֆոլզի Հայ գաղութին:

Այս գծով, Հինգշաբթի, 8 Յունիս 2023-ի առաւօտուն, Արամ Ա. Կաթողիկոս, Գանատայի պետութեան կողմէ տրամադրուած ոստիկաններու առաջնորդութեամբ, ուղղուեցաւ դէպի Նիակարա Ֆոլզ՝ ընկերակցութեամբ Գանատայի եւ Ամերիկայի Միացեալ Նահանգներու Արեւմտեան Թեմերու Առաջնորդ Սրբազան Հայրերուն, համա-ատենապետ Տիար Մահսէրէճեանին եւ Հայր Պարոյրին:

Սահմանին վրայ Վեհափառ Հայրապետը դիմաւորուեցաւ Ամերիկայի Միացեալ Նահանգներու Արեւելեան Հայոց Թեմի Առաջնորդ՝ Գերշ. Տ. Անուշաւան Արք. Դանիէլեանին եւ շրջանի ազգայիններուն կողմէ:

Նորին Սրբութիւնը, Միացեալ Նահանգներու ոստիկաններու առաջնորդութեամբ, ուղղուեցաւ Նիակարա Ֆոլզի գերեզմանատուն, ուր տեղի ունեցաւ հոգեհանգստեան պաշտօն՝ տեղի Հայ համայնքի ննջեցեալներու հոգիներու խաղաղութեան համար: Ապա, Նորին Ս. Օծութիւնը այցելեց քաղաքի Ս. Յակոբ եկեղեցին, ուր դիմաւորուեցաւ համայնքի զաւակներուն կողմէ. հոն տեղի ունեցաւ Կանոնական աղօթք, որուն յաջորդեց ճաշ՝ համայնքի զաւակներուն հետ:



Հաւաքի ընթացքին յաջորդաբար խօսք առին հոգաբարձութեան ատենապետը, Նիակարա Ֆուլզի քաղաքապետը եւ Առաջնորդ Սրբազան Հայրը:

Աւարտին, տեղի ունեցաւ յուշանուէրներու փոխանակում, որմէ ետք Վեհափառ Հայրապետը խօսք առնելով իր գնահատանքը յայտնեց ներկաներուն եւ յիշեց Նիւ Եորքի մէջ իր ուսանողութեան օրերուն յաճախակի առիթներով տուած իր այցելութիւնները Նիակարա Ֆուլզի համայնքին: Ան իր գոհունակութիւնը յայտնեց, որ, հակառակ հայերէն լեզուի նահանջին, հայկական աւանդութիւնները միշտ վառ կը մնան համայնքի զաւակներուն մօտ՝ դրական երեւոյթ մը, որուն ականատեսը դարձանք գաղութին կողմէ գեղեցիկ յայտագիրին ներկայացումով, ըսաւ Վեհափառ Հայրապետը:

Իր շքախումբին հետ շրջելէ ետք Նիակարա Ֆուլզի Ամերիկեան եւ Գանատական կողմերը, Արամ Ա. Կաթողիկոս մեկնեցաւ Գէմպրիճ:

**ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹԻՒՆԸ ԳԷՄՊՐԻՃԻ
Ս. ՆՇԱՆ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՄԷՋ**

Ուրբաթ, 9 Յունիս 2023-ի երեկոյեան, հայրապետական թափօրը, եկեղեցականաց, սարկաւազաց եւ դպրաց դասուն, ինչպէս նաեւ Հ.Մ.Ը.Մ. Գէմպրիճի մասնաճիւղի սկաուտներու առաջնորդութեամբ, հասաւ մինչեւ եկեղեցւոյ դուռը եւ «Հրաշափառ» շարականի երգեցողութեամբ մուտք գործեց Ս. Նշան Եկեղեցի, ուր տեղի ունեցաւ Կանոնական Աղօթք:



Արարողութեան ներկայ էին Ազգ. Կեդր. Վարչութեան, Գանատայի Հայոց Թեմի Ազգ. Վարչութեան անդամները, տեղւոյն եկեղեցւոյ հոգաբարձութեան եւ գաղութէն ներս գործող կազմակերպութեանց ներկայացուցիչներն ու հաւատացեալ ժողովուրդը: Վեհափառ Հայրապետը իր պատգամին մէջ ըսաւ. «Հայ եկեղեցին այս օրերուն պիտի նշէ Ս. Գրիգոր Լուսաւորչի Խոր Վիրապէն դուրս գալու տօնը: Ս. Գրիգոր Լուսաւորիչ իր սրբակենցաղ կեանքով ու հոգեւոր յեղափոխութեամբ առանցֆային տեղ գրաւած է մեր ժողովուրդի պատմութեան մէջ: Կարելի չէ հասկնալ մեր ժողովուրդին կեանքը իր զանազան տարածքներով, երեսոյթներով ու իրագործումներով՝ առանց Ս. Գրիգոր Լուսաւորչի լուսաւորիչ յեղափոխութեան:

Իւրաքանչիւր հայու ծանօթ է Ս. Գրիգոր Լուսաւորիչ, յատկապէս անոր տիրական ներկայութիւնը ու վնասկան դերակատարութիւնը Հայաստանի մէջ քրիստոնէութեան պետական կրօն հռչակման մէջ: Գրիգոր Լուսաւորիչով նոր էջ մը բացուեցաւ մեր ժողովուրդի պատմութեան մէջ: Այդ էջը Հայ ժողովուրդի լուսաւորութեան ու պայծառակերպութեան էջն է: Սաղմոսին բառերով՝ խաւարին մէջ մնացող ժողովուրդը նոր լոյս տեսաւ ու բացուեցաւ այդ լոյսին:

Հայ ժողովուրդը ո՛չ միայն բացուեցաւ Բեթղեհէմի լոյսին, այլ՝ այդ լոյսով շաղախեց իր կեանքը իր հոգեմտաւոր ստեղծագործութիւնները, իր կեանքին երկունքներն ու ձգտումները, իր հայրենիքը, իր ողջ լինելութիւնը: Լուսաւորիչով մեր ժողովուրդը դարձաւ լոյսի՝ ժողովուրդ, լուսաւոր ժողովուրդ: Խոր Վիրապի տառապանքէն դուրս գալով, Խոր Վիրապի դառն փորձառութիւնը ապրելով, Խոր Վիրապը լոյսի ու յոյսի աղբիւրի վերածեց Լուսաւորիչ մեր ժողովուրդի կեանքէն ներս:

Այսօր, երբ կը նշենք Լուսաւորչի Խոր Վիրապէն դուրս գալու տօնը, եկե՛ք անդրադառնանք, որ մեր ժողովուրդը ներկայիս կ'ապրի իր կեանքին Խոր Վիրապը՝ խաւարով ու տագնապներով, անորոշութեամբ, անտարբերութեամբ լեցուն Խոր Վիրապ մը:

Այսօր մեր ժողովուրդը Խոր Վիրապ կ'ապրի Հայաստանի մէջ, երբ իր ղեկավարներուն կողմէ մեր հերոսներու արիւնով թրծուած, մեր սուրբերու աղօթքներով շաղախուած Արցախը կը յանձնուի թշնամիին:

Արցախի մեր ժողովուրդը Խոր Վիրապ կ'ապրի, երբ իր աչքերուն դիմաց, իր իսկ հաւատքին ու հանճարին արգասիքը եղող տաճարները, հոգեւոր թէ մշակութային կոթողները կը յանձնուին թշնամիին քանդուելու համար:

Այսօր մեր ժողովուրդը Խոր Վիրապ կ'ապրի Սփիւռքէն ներս, երբ հայու դարաւոր ինքնութեան կորուստը, հայ լեզուի նահանջը, մեր հոգեւոր, մշա-

կութային ու ազգային արժեքներու նկատմամբ անտարբերութիւնը սկսած է դառնալ տիրապետող ներկայութիւն:

Արդ, երբ որեւէ ժամանակէ աւելի հրամայական կարիքը ունինք մեզ խոր վիրապէն դուրս բերող եւ մեր կեանքին առջեւ լուսաւոր ցամաքներ բացող, մեր կեանքը հոգեւոր ու բարոյական արժեքներով պայծառակերպող նոր իմն Գրիգոր Լուսաւորիչներուն:

Որեւէ ժամանակէ աւելի մենք հրամայական կարիքը ունինք մեզ խոր վիրապէն դուրս բերող եւ մեր ժողովուրդի հաւաքական կեանքը ամուր վնասկամութեամբ ու վառ տեսիլքով հզօրացնող հերոսներու:

Այսօր, մենք հրամայական ու անմիջական կարիքը ունինք այնպիսի անձերու, հոգեւոր, ազգային, մտաւորական, որոնք ամբողջական նուիրումով կարենան Հայաստանի ներկան ու ապագան միշտ ուղղութեան մէջ դնել, Արցախի անկախութիւնը ամրօրէն պաշտպանել, եւ լծուիլ Սփիւռքի վերակազմակերպման ու վերակենսաւորման աշխատանքներուն:

Այսօր առաւել քան երբեք, Հայաստան-Սփիւռք-Արցախ եռամիութեան պէտք է տալ նոր շունչ ու ոգի, որպէսզի կարելի դառնայ մեր ազգին ներդրածին ամբողջական մասնակցութեամբ, մեր ազգն ու հայրենիքը առաջնորդել դէպի վերականգնում ու վերածնունդ»:

Եկեղեցական արարողութեան աւարտին տեղի ունեցաւ աջահամբոյր՝ «Փոսթաճեան» սրահին մէջ:

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ՃԱՇԿԵՐՈՅԹ՝ Ի ՊԱՏԻՒ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ

Նոյն օրը երեկոյեան, Գէմպրիճի Հայ Կեդրոնի սրահին մէջ պաշտօնական ճաշկերոյթ սարքուեցաւ՝ ի պատիւ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Վեհափառ Հայրապետին: Ճաշկերոյթին ներկայ էին Միացեալ Նահանգներու Արեւմտեան Թեմի Առաջնորդ Սրբազան Հայրը, Կաթողիկոսութեան Ազգ. Կեդր. Վարչութեան Քաղաքական Ժողովի համա-ատենապետը, Հ.Յ.Դ. Կեդր. Կոմիտէի ներկայացուցիչը, Թեմի Ազգ. Վարչութեան Ատենապետուհին, Կրօնական Ժողովի եւ Ազգ. Վարչութեան անդամները, միաբան հայրեր, Ս. Նշան եկեղեցւոյ հոգաբարձութեան անդամներ, գործակից միութիւններու ներկայացուցիչներ եւ հարաւային Օնթարիոյէն ժամանած հայորդիներ:

Ճաշկերոյթի հանդիսավար Յուլեր Փանոսեանը բացման խօսքով հանդէս եկաւ, բարի գալուստ եւ երախտագիտութիւն յայտնեց Վեհափառ Հայրապետին՝ անոր նուիրուածութեան եւ ծառայութեան համար: Ճաշկերոյթի ընթացքին գեղարուեստական կոկիկ յայտագիր մը ներկայացուեցաւ:



Գանատայի Հայոց Թեմի Առաջնորդ Սրբազան Հայրը բարի գալուստ մաղթեց Նորին Սրբութեան եւ շնորհակալութիւն յայտնեց Ճաշկերոյթի յաջողութեան համար աշխատած կամաւոր ձեռքերուն:

Ճաշկերոյթի ընթացքին, Վեհափառ Հայրապետի կողմէ գնահատուեցան Գէմպրիճի Հայ համայնքի երկարամեայ ծառայողներէն՝ Կարօ Փոսթաճեանը, որ արժանացաւ «Կիլիկեան Իշխան»ի շքանշանին, եւ Վրէժ Գասամանեանը, որ արժանացաւ «Կիլիկեան Ասպետ»ի շքանշանին: Հուսկ, Նորին Ս. Օծութիւնը իր բարձր գնահատանքը յայտնեց Առաջնորդ Սրբազան Հօր, Գանատայի մէջ ծառայող բոլոր հոգեւորականներուն, Կրօնական Ժողովին, Ազգ. Վարչութեան, գործակից միութեանց ներկայացուցիչներուն եւ շքանշանակիրներուն՝ անոնց կատարած երկար տարիներու ծառայութեան համար եւ կարեւորեց աւանդութեան պահպանումը՝ ընդգծելով, որ աւանդութիւնը պահելով պահած կ'ըլլանք նաեւ մեր ինքնութիւնը, միշտ քայլ պահելով ներկայ դարու փոփոխութեանց հետ. «Մեր կառոյցները ինքնաբերական անցնելով պէտք է իրականութեան յարմարին եւ ի հարկին փոփոխութիւն կատարեն», ըսաւ Նորին Ս. Օծութիւնը:

Ճաշկերոյթը իր աւարտին հասաւ «Կիլիկիա» մաղթերգի երգեցողութեամբ:

ՀԱՆԴԻՊՈՒՄ ԹՈՐՈՆԹՈՑԻ ԳՈՐԾԱԿԻՑ ՄԻՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐՈՒՆ ՀԵՏ

Շաբաթ, 10 Յունիս 2023-ի առաւօտուն, Նորին Ս. Օծութիւնը Ս. Աստուածածին եկեղեցւոյ մէջ հանդիպեցաւ Օնթարիոյի մէջ գործող գործակից միութիւններու ներկայացուցիչներուն հետ, որոնց հետ արծարծեց Սփիւռքի վերակազմակերպման ու վերակազմաւորման օրակարգը՝ մեկնած 2023 տարւան հռչակագիրէն:



Աշխատանքային հանդիպման նպատակն էր քաջալերել ինքնաճանաչողութիւնն ու երկխօսութիւնը՝ Սփիւռքի դիմագրաւած մարտահրաւէրներուն առնչուած, եւ մտածել մարտահրաւէրներու յաղթահարման ելքերու մասին:

**ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ՃԱՇԿԵՐՈՅԹ՝
Ի ՊԱՏԻԻ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ**

Շաբաթ, 10 Յունիս 2023-ի երեկոյեան, ի պատիւ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Վեհափառ Հայրապետին, Թորոնթոյի Հայ կեդրոնի սրահին մէջ տեղի ունեցաւ պաշտօնական ճաշկերոյթ՝ ներկայութեամբ Միացեալ Նահանգներու Արեւմտեան Հայոց Թեմի Առաջնորդ Սրբազան Հօր, Լիբանանի Հանրապետութեան Օնթարիոյի մէջ Պատույ Հիւպատոս՝ Գրիգոր Փոսթաճեանին, Օնթարիոյ



նահանգի խորհրդարանի անդամ՝ Արիս Պապիկեանին, Կաթողիկոսութեան Ազգ. Կեդր. Վարչութեան համա-ատենապետին, Հ.Յ.Դ. Կեդր. Կոմիտէի ներկայացուցիչին, Թեմի Ազգ. Վարչութեան Ատենապետուհիին, Կրօնական Ժողովի եւ Ազգ. Վարչութեան անդամներու, Միաբան հայրերու, Ս. Աստուածածին եկեղեցւոյ հոգաբարձութեան եւ գործակից միութիւններու ներկայացուցիչներուն:



Բացման խօսքը արտասանեց Ճաշկերոյթի հանդիսավար՝ Գրիգոր Պէպէճեան: Իսկ Օնթարիոյ նահանգի խորհրդարանի անդամ՝ Արիս Պապիկեան ընթերցեց Օնթարիոյ Վարչապետին բարի գալուստի խօսքը՝ ուղղուած Ն.Ս.Օ. Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոսին: Խօսք առաւ նաեւ Առաջնորդ Սրբազան Հայրը:

Ճաշկերոյթի ընթացքին գեղարուեստական կոկիկ յայտագիր մը ներկայացուեցաւ եւ Կաթողիկոսութեան շքանշաններով, ձեռամբ Հայրապետին, գնահատուեցան Թորոնթոյի համայնքի երկարամեայ ծառայողներէն հետեւեալ ազգայինները. – Վազգէն Թէրզեան, Արմէն Կէտիկեան, Օսիկ Միսիարթինեան, Ժիւլիէթ Ճանպազեան եւ Ժիւլիէթ Սարգիսեան՝ «Կիլիկեան Ասպետ»ի շքանշանով, իսկ Սիլվա Փայիլեան, Յասմիկ Պապեան եւ Ալիս Շիթիլեան՝ «Ս. Մեսրոպ Մաշտոց» շքանշանով:





Նորին Ս. Օծութիւնը իր բարձր գնահատանքը յայտնեց Առաջնորդ Սրբազան Հօր, Գանատայի մէջ ծառայող բոլոր հոգեւորականներուն, Կրօնական Ժողովին, Ազգ. Վարչութեան, Երեսփոխանական Ժողովին, գործակից միութեանց ներկայացուցիչներուն եւ շքանշանակիրներուն՝ անոնց ծառայութեան համար: Հայոց Հայրապետը իր խօսքին մէջ շեշտեց պատկանելիութեան կարեւորութիւնը, ընդգծելով, որ իւրաքանչիւր Հայ պէտք է ունենայ պատկանելիութեան խոր ու ամուր գիտակցութիւն: «Ես կ'ուզեմ երեւ բառերու մէջ խտացնել մեր հայութիւնը՝ ֆանչնալ, փոխանցել եւ մասնակցիլ: Ինքնամանաշողութիւնը կարեւոր է մեզի համար: Պատմութեան պէտք է նայինք, ֆանչնանք մեր անցեալը եւ փոխանցենք նոր սերունդին: Իսկ այս բոլորին կողքին, պէտք է հայութիւնը ապրինք, մեր մասնակցութիւնը բերելով Հայ կեանքին ներս», ըսաւ Նորին Ս. Օծութիւնը:

Ճաշկերոյթը իր աւարտին հասաւ Հայրապետական եւ «Կիլիկիա» մաղթերգներու երգեցողութեամբ:

**ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ Ս. ԵՒ ԱՆՄԱՀ ՊԱՏԱՐԱԳ՝
Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՄԷՋ**

Կիրակի, 11 Յունիս 2023-ի առաւօտուն, Հայրապետական Ս. եւ Անմահ Պատարագ մատուցուեցաւ Թորոնթոյի Ս. Աստուածածին Եկեղեցւոյ մէջ: Վեհափառ Հօր առընթերակայ էին՝ Գերշ. Տ. Բաբգէն Արք. Չարեանն ու Գերշ. Տ. Թորգոմ Եպս. Տօնոյեանը:

Յընթացս Ս. Պատարագին, Վեհափառ Հայրապետը յաւուր պատշաճի պատգամեց Ս. Գրիգոր Լուսաւորչի խոր Վիրապէն ելքի մասին՝ ընդգծելով այն հոգեւոր ու մեծագոյն յեղափոխութիւնը, որ Լուսաւորիչ բերաւ Հայաստան աշխարհ: Նորին Սրբութիւնը յորդորեց հայորդիները չկորսնցել այդ Աստուածային լոյսն ու յոյսը՝ դուրս գալու ներկայ խորվիրապային իրավիճակէն: Ան յայտնեց, որ մեր պատմութեան ամէնէն տագնապալից պահերուն իսկ շղարհեցանք կառչիլ հաւատքին՝ մեր գոյութիւնը դարձնելով հրաշքի համագօր, առ այդ, թէպէտեւ հայկական ներկայ իրավիճակը խոր Վիրապին



խաւարին նման խաւարամած է, հարկ է Ս. Գրիգոր Լուսաւորչի նման գօտեպնդուիլ հաւատքով եւ Աստուծոյ զօրութեամբ հզօրացած դուրս գալ ներկայ խոր Վիրապէն. «Գրիգոր Լուսաւորչի կեանքին այս դէպքը մեր ժողովուրդին համար պէտք է դառնայ պատգամ. պատգամ՝ ո՛չ միայն Խոր Վիրապը ապրելու, այլ խորվիրապեան մեր տագնապը, տառապանքը Աստուածային լոյսով լուսաւորելու, մեր ժողովուրդի կեանքը լուսաւորելու բարոյական, հոգեւոր ու ազգային արժէքներով Հայաստանի եւ Արցախի մէջ եւ ի Սփիւռս աշխարհի: Արդարեւ, յանախ մեր կեանքի պայմանները մեզ կը հեռացնեն Աստուծմէ. Յանախ փառքը, պատիւը եւ նիւթական լայն կարելիութիւնները մեր կեանքէն ներս գԱստուած կը դարձնեն, փաստօրէն, բացակայ: Երկրաւոր կեանքը իր հանոյքներով մարդը յանախ կը մղէ իր կեանքը վերածելու մարդակեդրոն կեանքի: Կ'ուզեմ որ նայինք Ծննդոց գիրքի առաջին էջերուն վրայ նկարագրուած մարդու ստեղծագործութեան դրուագին: Աստուած երբ մարդը ստեղծեց, անոր տալով Իր պատկերը եւ զինք գործակից դարձնելով իրեն, եւ տիեզերքը կառավարելու պարտաւորութիւնը տալով, Աստուծոյ սպասումն էր, որ մարդը իր ապրած օրերուն Աստուծոյ նկատմամբ հաւատարմութիւնը, պատասխանատուութիւնը եւ համարատուութիւնը դարձնէ իր կեանքի ուղեգիծը: Սակայն, ինչպէս Ծննդոցի մէջ կը կարդանք, մարդը մերժեց Աստուծոյ պարգեւը եւ իր կեանքին առանցքը դարձուց իր եսը եւ այդ եսին առնչուած երկրաւոր կեանքի վայելքն ու հանոյքը, փառքը ու պատիւը. Այլ խօսքով՝ գԱստուած հեռացուց իր կեանքէն:



Ուր Աստուած բացակայ է, հոն կը տիրէ չար ու չարիք: Ուր Աստուած բացակայ է, հոն կը տիրէ խաւար ու տառապանք: Ահա թէ ինչու խաւարով ու տագնապով տիրապետուած աշխարհին մէջ, Սաղմոսերգուն համայն մարդկութեան թարգմանը ըլլալով Աստուծոյ կը դառնայ, Աստուծոյ նկատմամբ իր հաւատքը վերահաստատելով, թէ Աստուած ինքն է խաւարին դիմաց մեր կեանքին լոյսը, մահուան դիմաց մեր փրկութիւնը, յուսահատութեան դիմաց մեր յոյսը:

Սաղմոսերգունի ն դարձն առ Աստուած եւ իր հաւատքի վերահաստատումը յիշեցում մըն է մեզի դառնալու Աստուծոյ: Այսօր ահաւոր տագնապներով, դժուարութիւններով, յուսահատութեամբ ու անորոշութեամբ լեցուն է մեր կեանքը:

Պետք է դառնանք Աստուծոյ այն ամուր հաւատքով, որ Աստուած ինքն է մեր կեանքին ապաւենն ու յոյսը: Զմոռնանք, որ Աստուած ինք մեզի դարձաւ Ադամին նամբով. եւ մարդը, Ադամին նամբով մերժեց զԱստուած: Դարձեալ չմոռնանք, որ Աստուած կրկին մարդուն դարձաւ Նոր Ադամին՝ Քրիստոսի նամբով. եւ ոչ միայն մեզի դարձաւ, այլ մեր փրկութեան համար մարդացաւ, եւ իր խաչին ու յարութեան նամբով մարդը հրաւիրեց դառնալու իրեն:

Ահաւասիկ Աստուծոյ պատգամը եկեղեցւոյ նամբով ուղղուած մեզմէ իւրաքանչիւրին՝ դառնալու Աստուծոյ եւ Աստուծոյ ներկայութիւնը ապրելու մեր կեանքին մէջ, Աստուծոյ ներկայութեամբ իմաստաւորելու մեր կեանքը, Աստուծոյ ներկայութեամբ զիրար սիրելու, Աստուծոյ ներկայութեամբ բարիք գործելու»:

**ՀԱՆԴԻՊՈՒՄ Հ.Յ.Դ. «Ս. ԹԵՀԼԻՐԵԱՆ»
ԿՈՄԻՏԵԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐՈՒՆ ՀԵՏ**

Երկուշաբթի, 12 Յունիս 2023-ին, Թորոնթոյի Հայ Կեդրոնին մէջ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Վեհափառ Հայրապետին հանդիպեցան Հ.Յ.Դ. «Ս. Թեհլիրեան» Կոմիտէի ներկայացուցիչները: Հանդիպման ներկայ էին Գանատայի Առաջնորդ

Սրբազան Հայրը, Հ.Յ.Գ. Կեդր. Կոմիտէի ներկայացուցիչները, Ս. Աստուածածին եկեղեցւոյ Հոգեւոր Հովիւներն ու հոգաբարձութեան ներկայացուցիչները:

Անոնք Նորին Սրբութեան ներկայացուցիչն գաղութին մէջ կատարուելիք յառաջիկայ ծրագիրները եւ ստացան անոր օրհնութիւնները:

ԳԵՂԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ ՅԱՅՏԱԳԻՐ Ի ՊԱՏԻ ԿԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ

12 Յունիս 2023-ի երեկոյեան, «Համազգային» թատերասրահին մէջ գեղարուեստական յայտագիր մը սարքուեցաւ՝ ի պատիւ Վեհափառ Հայրապետին, մասնակցութեամբ՝ Թորոնթոյի Ս. Աստուածածին եկեղեցւոյ «Զարեհ Ազնաւորեան» եւ «Մեղրիկ Բարիքեան» դպրաց դասերուն, Համազգայինի «Դլածոր» մասնաճիւղի «Հայ Աստղեր» մանկապատանեկան երգչախումբին, «Գուսան» երգչախումբին եւ «Էրեբունի» պարախումբին:



Աւարտին, Նորին Ս. Օծութիւնը իր խօսքին մէջ բարձրօրէն գնահատեց բոլոր մասնակիցները եւ անդրադարձաւ Հայ մշակոյթի ու անոր առաւել զարգացման կարեւորութեան մասին:

ԱՅՅԵԼՈՒԹԻՒՆ՝ Հ.Օ.Մ.-Ի ԱՄԷՆՕՐԵԱՅ ՎԱՐԺԱՐԱՆ

Երեքշաբթի, 13 Յունիս 2023-ի առաւօտուն, Նորին Ս. Օծութիւնը, ընկերակցութեամբ իր շքախումբին ու Թորոնթոյի գաղութէն ներս գործող զանազան մարմիններու ներկայացուցիչներուն, այցելեց «Ռուբինա» մանկամսուր, «Պապայեան» Մանկապարտէզ, «Գոլլեան» նախակրթարան եւ «Լափոյեան»

երկրորդական վարժարան եւ շրջելով դպրոցին զանազան բաժինները, աշակերտութեան հետ եղաւ դասարանին ու բակին մէջ՝ յորդորելով հայերէն խօսիլ եւ հայօրէն ապրիլ:

Հայոց Հայրապետին ընդունելութեան համար աշակերտները գեղարուեստական գեղեցիկ յայտագիր մը պատրաստած էին՝ երգերով, պարերով եւ նուագով: Ապա, Հ.Օ.Մ.-ի Ամէնօրեայ Վարժարանի Տնօրէն՝ Ռաֆֆի Սարգիսեան տնօրէնութեան, ուսուցչական կազմին եւ աշակերտութեան անունով բարի գալուստ մաղթեց Վեհափառ Հայրապետին վարժարանէն ներս, որմէ ետք Բաբգէն Սրբազան խօսք առաւ, ըսելով. «Մեր զաւակները ո՛չ միայն գիտութեամբ կը հարստանան, այլ մանաւանդ հայութեա՛մբ կը թրծուին, հայութեա՛մբ կը շնչեն եւ վստահ եմ, որ վաղը հայութեա՛ն համար պիտի պայքարին», ու խօսքին աւարտին բեմ հրաւիրեց Նորին Սրբութիւնը:

Վեհափառ Հայրապետը ողջունեց Հ.Օ.Մ.-ի Ամէնօրեայ Վարժարանի տնօրէնութիւնը, ուսուցչական կազմն ու աշակերտները: Ոգեշնչուած մթնոլորտէն, ան ըսաւ. «Գանատայի երկու դպրոցներուն մէջ ես տեսայ կանոնաւորութիւն, բծախնդրութիւն, նախանձախնդրութիւն եւ մանաւանդ հայու ապրող ոգի: Ինչ որ Հայ դպրոցէն ներս կը կատարուի, սովորական կրթական գործ չէ, այլ՝ առաքելութիւն է: Հայ դպրոցը ոգի՛ է, մարդակերտումի ու հայակերտումի դարբնո՛ց է»: Նորին Ս. Օծութիւնը գնահատեց Հայ ծնողները, ուսուցիչներն ու բարերարները, որոնց գերագոյն զոհողութեամբ է որ կը պահուի հայ դպրոցը:

ԴԱՍԱԽՕՍՈՒԹԻՒՆ

ԹՈՐՈՆԹՈՅԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻՆ ՄԷՋ

Երեքշաբթի, 13 Յունիս 2023-ի երեկոյեան, Արամ Ա. Կաթողիկոս, Թորոնթոյի Համալսարանի Ս. Երրորդութիւն մատրան մէջ ներկայացուց «Ս. Ներսէս Շնորհալին եւ Միջ-Եկեղեցական Շարժումը» նիւթը՝ կազմակերպութեամբ Թորոնթոյի համալսարանի «Թրինիթի» Գոլէճի Աստուածաբանական Բաժանմունքի Ուղղափառ Քրիստոնէութեան Դպրոցի Ղեկավար՝ Ճեֆրի Վրդ. Ռետիի:

Բացման խօսքով հանդէս եկաւ Հոգշ. Տ. Վարդան Մ. Վրդ. Թաշճեան, ապա խօսք առաւ Հայր Ճեֆրի Ռետին, որ բարի գալուստ մաղթեց Վեհափառ Հայրապետին ու հակիրճ ներկայացուց Նորին Սրբութեան ներդրումը միջ-



եկեղեցական մարզին մէջ, որմէ ետք բեմ հրաւիրեց Նորին Ս. Օծութիւնը՝ ներկայացնելու օրուան նիւթը:

Արամ Ա. Կաթողիկոս ներկայացուց Ս. Ներսէս Շնորհալիին կեանքն ու աւանդը ու շորս հիմնական մակարդակներու վրայ՝ աստուածաբանական, եկեղեցաբանական, եկեղեցիներու միութեան եւ վերջապէս՝ միջ-եկեղեցական, ինչպէս նաեւ հակիրճ կերպով անդրադարձաւ միջ-եկեղեցական ներկայ փուլին՝ մատնանշելով Ներսէս Շնորհալիին հեռատեսութիւնը շարժումին ընդմէջէն եկեղեցիներու միութեան ու կարեւորեց եկեղեցիներու միութիւնը:

Աւարտին, Նորին Սրբութիւնը պատասխանեց բոլոր հարցումներուն:

ԳԱՆԱՏԱՅԻ ԵԿԵՂԵՑԻՆԵՐՈՒ ԽՈՐՀՈՒՐԴԻ ԸՆԴՀ. ՔԱՐՏՈՒՂԱՐԸ ՀԱՆԴԻՊԵՑԱԻ ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹԵԱՆ

Թորոնթոյի համալսարանէն ներս Նորին Ս. Օծութեան տուած դասախօսութեանէն ետք, Վեհափառ Հայրապետին հանդիպեցաւ Գանատայի Եկեղեցիներու Խորհուրդի Ընդհ. Քարտուղար՝ Փիթըր Նոթպուլմը:

Ան թէ՛ դասախօսութեանէն ետք ունեցած իր հրապարակային արտայայտութեան ընթացքին եւ թէ՛ առանձնաբար անդրադարձաւ Նորին Սրբութեան կարեւոր դերին միջ-եկեղեցական շարժումէն ներս: Արամ Ա. Կաթողիկոս ընդհ. քարտուղարին յայտնեց, որ միջ-եկեղեցական շարժումը ներկայ ժամանակներուն կարիքը ունի նոր օրակարգի, նոր ոճի եւ նոր մեթոտի: Եկեղեցիներու միջեւ երկխօսութեան ընթացքին, անհրաժեշտ է կարեւորութեամբ նկատի ունենալ միջ-եկեղեցական հարցերը եւ ընդհանրապէս ներկայ ընկերութիւնը դիմագրաւող խնդիրները:



ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ ԸՆԴՈՒՆԵՑ Ռ.Ա.Կ.Ի ԿԵԴՐ. ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ԱՏԵՆԱՊԵՏ՝ ՄԱՅՔ ԽԱՐԱԿԵԱՆԸ

Հինգշաբթի, 15 Յունիս 2023-ին, Արամ Ա. Կաթողիկոս ընդունեց այցելութիւնը Ռ.Ա.Կ.-ի Կեդր. Վարչութեան Ատենապետ՝ Մայք Խարապեանին:

Խարապեան Վեհափառ Հայրապետին զեկուցեց վերջերս Հայաստանի մէջ իր ունեցած հանդիպումներուն մասին՝ պարզելով Հայաստանի դիմագրաւած

ներքին եւ արտաքին մարտահրաւերները: Հանդիպումը առիթ հանդիսացաւ նաեւ անդրադարձ կատարելու Հայաստան-Արցախ-Սփիւռք գործակցութեան ներկայ հանգրուանին:

Հայոց Հայրապետը շեշտեց ժամանակակից պատմութեան մեր ներկայ հանգրուանին համախմբուելու անհրաժեշտութիւնը՝ յատկապէս Արցախի ինքնավարութիւնը պաշտպանելու հրամայականին գծով: Այս ուղղութեամբ Նորին Սրբութիւնը կենսական նկատեց Սփիւռքի եւ մասնաւորաբար Հնչակեան, Հ.Յ.Դ. Եւ Ռամկավար կուսակցութեանց դերը Սփիւռքի շրջագծէն ներս:



ՀԱՆԴԻՊՈՒՄ ԹՈՐՈՆԹՈՅԻ ՄԷՋ ԼԻԲԱՆԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՊԱՏԻՈՅ ՀԻԻՊԱՏՈՍԻՆ ՀԵՏ

Արամ Ա. Կաթողիկոս իր հովուապետական այցելութեան ընթացքին տեսակցեցաւ նաեւ Թորոնթոյի մէջ Լիբանանի Հանրապետութեան Պատուոյ Հիւպատոս՝ Գրիգոր Փոսթաճեանին հետ: Այցելութեան ներկայ էին Գանատայի Հայոց Թեմի Առաջնորդ Սրբազան Հայրն ու Վեհափառ Հայրապետի շքախումբը:

Հայոց Հայրապետը նաեւ ճաշի հիւրը եղաւ հիւպատոսին:



ՀԱՅ ԴԱՏ

**ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ ՀԱՅՐԱՎԵՏՈՒԿԱՆ Ս. ԱԹՈՐ, աշխարհատարած թեմ-
երով, Ազգ. իշխանություններով ու յարակից կառույցներով ու միություններով,
իր ամբողջական զորակցությունը կը յայտնէ Արցախի Հանրապետության
Ազգ. ժողովի յայտարարության, մերժելով՝ Արցախի Հանրապետությունը
Ազրայէջճանի հողային ամբողջականության մաս նկատելու որեւէ մտայնում
ու ճիգ եւ այս պարագային՝ յատկապէս Հայաստանի Հանրապետության
վարչապետին ու իշխանության կողմէ:**

Մեծի Տանն Կիլիկիոյ Հայրապետական Ս. Աթոռ, աշխարհատարած թեմ-երով, Ազգ. իշխանություններով ու յարակից կառույցներով ու միություններով, իր ամբողջական զորակցությունը կը յայտնէ Արցախի Հանրապետության Ազգ. ժողովի յայտարարության, մերժելով՝ Արցախի Հանրապետությունը Ազրայէջճանի հողային ամբողջականության մաս նկատելու որեւէ մտայնում ու ճիգ եւ այս պարագային՝ յատկապէս Հայաստանի Հանրապետության վարչապետին ու իշխանության կողմէ:

Արդարեւ, 10 Դեկտեմբեր 1991-ին համաժողովրդային քուէարկութեամբ Արցախը ինքնիշխանութեան իր հաւաքական կամքը արդէն արտայայտած է եւ ապա Հայաստանի Հանրապետության Գերագոյն Խորհուրդը 8 Յուլիս 1992-ին վերաշեշտած է Արցախի ինքնիշխանութիւնը:

Միջազգային օրէնքին համաձայն ժողովուրդ մը ինքնորոշման իրաւունք ունի: Հետեւաբար, Արցախի ժողովուրդի ինքնորոշման արդար իրաւունքը չի կրնար զոհը դառնալ շրջանէն ներս համապարփակ խաղաղութեան հաստատման եւ Ազրայէջճանի հողային ամբողջականութիւնը ճանչնալու փորձերուն:

Հարկ է ըլլալ արթուն, հեռատես ու մանաւանդ՝ միակամ: Արցախը Ազրայէջճանի հողային ամբողջականութեան մաս կազմելով ո՛չ միայն պիտի վըտանգուի Արցախի ժողովուրդին ապահովութիւնը, այլ նաեւ Հայաստանի գերիշխանութիւնը ու անվտանգութիւնը:

Մեր պատմութեան ներկայ ճակատագրական հանգրուանին, կոչ կ'ուղղենք մեր ժողովուրդի զաւակներուն համախմբուելու եւ զօրակցելու Արցախին:

ԴԻԻԱՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԱՐԱՆԻ

23 Մայիս 2023

Անթիլիաս, Լիբանան

ՏՕՆԱԿԱՆ

**ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՄԱՂԹԱՆՔ՝
ՆՈՒԻՐՈՒԱԾ ՀԱՅԱՍՏԱՆԻ Ա. ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ
ԱՆԿԱԽՈՒԹԵԱՆ**

Կիրակի, 28 Մայիս 2023-ին, Անթիլիասի Մայրավանքի Ս. Գրիգոր Լուսավորիչ Մայր Տաճարին մէջ Ս. Եւ Անմահ Պատարագի մատուցմամբ, Հանրապետական Մաղթանքի կատարումով եւ Սարգարապատի հերոսամարտին զոհուած հերոսներու հոգիներուն հոգեհանգստեան կարգով յիշատակուեցաւ Հայաստանի առաջին Հանրապետութեան հիմնադրութեան 105 ամեակը՝ հանդիսապետութեամբ Ս. Աթոռոյս Գահակալ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Վեհափառ Հայրապետին: Ապա, Հայաստանի անկախութեան եւ Վեհափառ Հայրապետին անուանակոչութեան տօներուն առիթով կոկիկ յայտագիր մը տեղի ունեցաւ Վեհարանի դահլիճին մէջ, ուր Նորին Սրբութիւնը ներկայ ժողովուրդին փոխանցեց իր Հայրապետական ոգեշունչ պատգամը:



Ս. Պատարագի ընթացքին, Նորին Ս. Օծութեան գլխաւորութեամբ խումբ մը միաբան հայրեր Ս. Խորան բարձրացան, ուր Վեհափառ Հայրապետին ձեռամբ կատարուեցաւ Հանրապետական Մաղթանք եւ Հայաստանի Հանրապետութեան դրօշի օրհնութեան կարգ: Խորանին վրայ կանգնած միաբան հայրերն ու Նորին Սրբութիւնը աղօթք բարձրացուցին առ Աստուած ու հայցեցին Անոր օրհնութիւնն ու փրկութիւնը եւ խնդրեցին, որ Տէրը ամուր ու անսասան պահէ Հայ ազգին Հանրապետութիւնը եւ իմաստութիւն տայ իշխանութեան պատասխանատուութիւն ունեցողներուն: Հուսկ, տեղի ունեցաւ հոգեհանգստեան պաշտօն՝ Սարգարապատի հերոսամարտին զոհուած հերոսներու հոգիներուն:

Ապա, օրուան պատարագիչ Հայր Սուրբը՝ Հոգշ. Տ. Առաքել Աբղ. Գատէհճեան, մեկնելով Հոգեգալստեան տօնէն, յաւուր պատշաճի քարոզեց՝ մէջբերելով Մատթէոսի Աւետարանէն 14:16 համարը, ուր կը նշուի Քրիստոսի խոստումը Ս. Հոգին աշխարհ դրկելու մասին՝ որպէս յաւիտենական Մխիթարիչ մահկանացուներու: Ան ըսաւ, որ Քրիստոսի Համբարձումէն ետք վախ կը տիրէր առաքեալներուն ու աշակերտներուն մէջ, որոնք չէին համարձակեր դուրս գալ Վերնատունէն ու Յիսուսի խօսքը քարոզել, մինչեւ որ եկաւ հոգեգալստեան օրը ու անոնք զօրացան ճշմարիտ Մխիթարիչով: Այս զօրութեամբ է, որ առաքեալները կարողացան սահմաններ կտրել, դէմ դնել ամէնէն բռնատէր թագաւորներուն ու տարածել ճշմարտութիւնը՝ հասնելով մինչեւ նահատակութիւն: Ան դիտել տուաւ, որ առաքեալները Ս. Հոգիին զօրութիւնը ձեռնադրութեան ճամբով փոխանցեցին համայն աշխարհին. եւ այսօր, Ս. Հոգին է, որ կ'առաջնորդէ մեր եկեղեցին:

Հոգշ. Հայր Սուրբը նշեց նաեւ, որ մեր նախահայրերը պատմութեան բոլոր դժուարութիւնները յաղթահարեցին շնորհիւ Ս. Հոգիին զօրութեան ու կերտեցին Մայիս 28-ի անկախութիւնը, Հայոց Յեղասպանութենէն միայն երեք տարի ետք, ունենալով Ս. Հոգիին խորհրդանիշ Սրբալոյս Միւռոնը իրենց ճակատներուն: Ան վստահեցուց, որ քաջարի հայորդիք ներկայիս բոլոր պատերազմները եւս, մանաւանդ Արցախի մէջ, կը մղեն Մխիթարիչին զօրութեամբ: Քարոզի աւարտին, ան բոլորին անունով խոնարհեցաւ անոնց նահատակութեան առջեւ եւ աղօթք բարձրացուց, որ Ս. Հոգին մխիթարէ մեր ազգի սգաւորները, զօրացնէ մեր սրտերը, բանայ մեր ազգի ղեկավարներուն ու իշխանաւորներուն աչքերը եւ լուսաւորէ մեր Հայրենիքին երկնակամարը:

Յաւարտ Ս. Պատարագին, Հայրապետական թափօրն ու հաւատացեալները ուղղուեցան Վեհարանի դահլիճ, ուր տեղի ունեցաւ Մայիս 28-ի եւ Վեհափառ Հայրապետին անուանակոչութեան նուիրուած գեղարուեստական յայտագիր՝ Դպրեվանքի սաներուն կատարողութեամբ:

Հոգշ. Տ. Աւետիք Վրդ. Տէր Կարապետեան ընթերցեց ուղերձ մը, որով ընդգծեց ազատութեան եւ անկախութեան մենաշնորհումը Աստուծմէ տրուած անժխտելի իրականութիւն մը ըլլալը: Ան նշեց, որ իւրաքանչիւրիս ազատութիւնը կը դադրի հոն, ուր այլոց ազատութիւնը ոտնակոխ կ'ըլլայ ու դիտել տուաւ, որ Հայրենիքին անկախութիւնը վեր է բոլոր անձնական շահերէ: Որքան որ «փարատմներո» սրտերը կարծրանան, պիտի գան «Մովսէսներ», որոնք իրենց ժողովուրդին համար ծովեր պիտի ճեղքեն, յայտնեց ան՝ շարունակելով Պօղոս առաքեալին Բ. Կորնթացիներու նամակին 3:17 համարէն՝ «ուր ու Տիրոջ Հոգին ներկայ է՝ հոն ազատութիւն է»: Հայր Աւետիք խօսեցաւ Արամ Մանուկեան հերոսի արժանիքներուն մասին եւ արձագանգելով զօրավար Սիլիկեանին՝ Ա. Մանուկեանի մասին տուած պատգամին՝ նշեց, որ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան առաքելութեան կիզակէտն է Հայ ազգին անկախութեան ու ազատութեան կռուաններուն՝ Հայաստան-Արցախ-Սփիւռք միութիւնը ամուր պահելը:



Անկախութեան տօնին առիթով, Վեհարանի Դահլիճին մէջ, Վեհափառ Հայրապետը Ս. եւ Անմահ Պատարագին յաջորդած տօնախմբութեան ընթացքին ուղղեց իր Հայրապետական պատգամը: Ան նշեց, որ Մայիս 28-ը սովորական տօն մը չէ, այլ կը խորհրդանշէ անկախութեան համար պայքարելու մեր ժողովուրդին վճռակամութիւնը, մինչեւ իսկ՝ արեան գնով: Այս գիտակցութեամբ ու ոգիով պէտք է նշել Մայիս 28-ի անկախութեան տօնը: Նորին Սրբութիւնը դիտել տուաւ, որ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութիւնը միշտ հաւատարիմ մնաց Մայիս 28-ի ոգիին ու տեսլականին՝ նոյնիսկ ամէնէն

դժուար օրերուն, «Մեր կեանքի վերիվայրումներուն ու պեկոծումներուն մէջ, Մայիս 28-ը, այլ խօսքով ազատ, անկախ ու ամբողջական Հայաստանը, ամբողջական հայութեամբ, մեր Ս. Աթոռին համար միշտ մնաց ո՛չ միայն զգացական արտայայտութիւն, այլ նաեւ՝ ազգային գաղափարախօսութիւն: Այս տեսլականով ու հաւատքով Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութիւնը սերունդներ կազմաւորեց»:

Խօսելով Հայրենիքի ներկայ իրավիճակին մասին, Արամ Ա. Կաթողիկոս նշեց, որ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութիւնը անտարբեր ու լուռ չի կրնար մնալ: Փաստօրէն լքուած են Արցախը՝ դարաւոր հողը հայրենեաց, եւ արցախցին: Հայաստանի եւ մանաւանդ Հայաստանի իշխանութեան շրջանակներու մօտեցումներուն նկատմամբ լուռ չի կրնար մնալ մեր Ս. Աթոռը, յատկապէս երբ կը խօսուի Ազրպէյճանի հողային պահանջներուն տեղի տալու եւ անոր հողային ամբողջականութիւնը ճանչնալու մասին. «Արդեօք կը մտածե՞նք այս մօտեցման քննիչ ու վտանգաւոր հետեւանքներուն մասին: Արցախը լքուած է եւ Հայաստանը կոչ կ'ուղղէ Արցախին եւ Ազրպէյճանին բանակցելու իրարու հետ: Նման կրատրական եւ անտարբեր մօտեցում Հայաստանի կողմէ պիտի վտանգէ Արցախի ինքնիշխանութիւնը եւ նոյնիսկ՝ Արցախի գոյութիւնը»:

Վեհափառ Հայրապետը նաեւ մերժեց շրջանառութեան մէջ մտած վերջին բանաձեւումները, ուր կը խօսուի ազգային եւ պետական շահերու տարբերութեան եւ այդ տարբերութեան ընդունման մասին: Ան կտրականապէս մերժեց ու զայն համարեց քաղաքական հեռեւորակոսութիւն՝ ընդգծելով Աստուածաշնչական պատգամը, թէ անկախութիւնն ու ազատութիւնը Աստուածատուր պարգեւ են եւ որեւէ ազգ ու անհատ իրաւունք չունի բռնաբարելու ու անտեսելու զանոնք. «Արցախի մեր ժողովուրդը 32 տարի առաջ զանազան առիթներով իր ինքնիշխանութիւնը որոշած ու հաստատած է եւ միշտ իր կեցուածքին վրայ ամուր կը մնայ: Հետեւաբար, այսօր մենք պէտք է անդրադառնանք, թէ ի՞նչ կը նշանակէ ազգային շահեր ու պետական շահեր իրարմէ անջատելը: Նման մօտեցում խտտոր կը համարուի մեր ժողովուրդի պատմութեան եւ ինքնահասկացողութեան», յայտնեց ան:

Վերջապէս, Արամ Ա. Կաթողիկոս անգամ մը եւս վերահաստատեց Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան ամբողջական զօրակցութիւնը Արցախին, անոր ժողովուրդին ու պայքարին:

Տօնախմբութիւնը աւարտեցաւ Հայրապետական մաղթերգներով եւ «Կիլիկիա» օրհներգով:

ՄԻՋ-ԵԿԵՂԵՑԱԿԱՆ

ՄԱՍՆԱԿՑՈՒԹԻՒՆ՝ Ե.Հ.Խ.Ի ԿԵԴՐ. ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ԺՈՂՈՎԻՆ

Զորքաբաժնի, 21 Յունիս 2023-ին, ժընեւի (Զուլիցերիա) մէջ բացումը կատարուեցաւ Ե.Հ.Խ.Ի նորընտիր Կեդր. Վարչութեան առաջին նիստին: Յանուն Հայ եկեղեցւոյ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան եւ օրհնութեամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոսին, ժողովին իրենց մասնակցութիւնը բերին Գերշ. Տ. Նարեկ Արք. Ալեքմէզեան եւ Գերպ. Տ. Հրանդ Մ. Վրդ. Թահանեան:

Ժողովին հիմնական օրակարգն էր Ե.Հ.Խ.Ի 11-րդ համաժողովէն բխած հարցերուն գծով ռազմավարական ուղղութիւններ ճշդել:

Յայտնենք, որ Վեհափառ Հայրապետը նախագահ է Ե.Հ.Խ.Ին՝ ներկայացընելով Միջին Արեւելքը եւ Արեւելեան Ուղղափառ եկեղեցիներու ընտանիքը:

Եկեղեցիներու Համաշխարհային Խորհուրդի (Ե.Հ.Խ.) նորընտիր Կեդրոնական Վարչութեան անդրանիկ ժողովը գումարուեցաւ 21-27 Յունիս 2023-ին, ժընեւի մէջ՝ յետ Գերմանիոյ Քարլսրու քաղաքին մէջ գումարուած «Քրիստոսի Սէրը Աշխարհը Կը Մղէ Հաշտութեան եւ Միասնութեան» թեմայով 11-րդ համաժողովին:

Դիտորդի հանգամանքով նաեւ մասնակցեցաւ Զուլիցերիոյ մէջ Կաթողիկոսարանի միջ-եկեղեցական յարաբերութեան ներկայացուցիչ՝ Փրոֆ. Թենի Փիրրի-Սիմոնեան: Նշենք, որ Գարլա Խիժոյեան կը շարունակէ վարել Ե.Հ.Խ.Ին մէջ Միջին Արեւելքի բաժինի պատասխանատուի իր պաշտօնը:

Կեդրոնական Վարչութեան լիազումար նիստերը կեդրոնացան համաժողովէն բխած որոշումները իրականցնելու համար ռազմավարութիւն ճշդելու վրայ՝ առաջնահերթութիւնները գործունէութիւն դարձնելու եւ համաշխարհային գետնի վրայ Ե.Հ.Խ.Ի ներգործութիւնը աւելի ազդու դարձնելու համար: Ժողովի ընթացքին, Կեդրոնական Վարչութիւնը վաւերացուց չորս եկեղեցիներու անդամագրութեան առաջին հանգրուանը, ինչպէս նաեւ՝ 2023-2030 տարեշրջանի ծրագիրները:

Ժողովը ընտրեց յառաջիկայ 8 տարուան համար տարբեր յանձնաժողովներու եւ մարմիններու անդամները: Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութենէն ընտրուեցան հետեւեալները.- Ռիթա Աստիկեան՝ «Երիտասարդներ Միջ-Եկեղեցական Շարժումին Մէջ» յանձնաժողովին, Դոկտ. Նորա Պայրազտարեան՝ «Եկեղեցին՝ Միջազգային Հարցերու Մէջ» յանձնաժողովին, Հայր Հրանդ՝ «Միջ-Եկեղեցական Ուսում եւ Կազմաւորում» յանձնաժողովին եւ Նարեկ Սրբազան՝ «Համաձայնութեան եւ Համագործակցութեան Մնայուն Յանձնախումբ»ին մէջ:

ԳԻՏԱԺՈՂՈՎ

**ԱՆԹԻԼԻԱՍԻ ՄԱՅՐԱՎԱՆՔԻՆ ՄԷՋ
ԳԻՏԱԺՈՂՈՎ՝ ՇՆՈՐՀԱԼԻ ՀԱՅՐԱՊԵՏԻ
850 ԱՄԵԱԿԻՆ ԱՌԻԹՈՎ**

Հովանաւորութեամբ եւ նախագահութեամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոսին եւ կազմակերպութեամբ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան «Կիլիկիա» Մատենադարանին, Ուրբաթ, 26 Մայիս 2023-ին, Անթիլիասի Մայրավանքի «Կիլիկիա» Թանգարանի սրահին մէջ, Ս. Ներսէս Շնորհալի Հայրապետին վախճանման 850 ամեակը նշուեցաւ միօրեայ գիտաժողովով:

Բացման խօսքը արտասանեց «Կիլիկիա» Մատենադարանի Մատենադարանապետի օգնական՝ Հոգշ. Տ. Առաքել Աբղ. Գատէհճեան, որ բարի գալուստ մաղթելէ ետք ընդգծեց ձեռնարկին կարեւորութիւնը ու ըսաւ, որ Ս. Ներսէս Շնորհալին արժանի է «պայծառաշող աստղ» կոչումին, քանի որ ամենուրէք լուսաւորած է իր գործերով, իր մեկնողական ժառանգութեամբ, աստուածաբանական գաղափարներով, հայաշունչ շարականներով, ծիսական բարեփոխումներով, հայոց պատմութեան ճակատագրական հանգրուանին իր առած





քայլերով եւ միջ-եկեղեցական յարաբերութեան մէջ իր դիւանագիտութեամբ:

Գիտաժողովը ընթացաւ երկու մասերով, ուր հինգ զեկուցաբերներ յաջորդաբար ներկայացուցին Շնորհալի Հայրապետը՝ հետեւեալ կերպով.- Հոգշ. Տ. Պարոյր Վրդ. Շէրնէզեան՝ «Ս. Ներսէս Շնորհալի Հովուապետը», Փրոֆ. Վահէ Թորոսեան՝ «Ս. Ներսէս Շնորհալին եւ Կիլիկիան Հայկական Պետութիւնը», Գերշ. Տ. Շահան Արք. Սարգիսեան՝ «Ս. Ներսէս Շնորհալի Մեկնիչը», Գերշ. Տ. Նարեկ Արք. Ալեէմէզեան՝ «Ս. Ներսէս

Շնորհալի Էփրամնիսար», իսկ Գերշ. Տ. Կոմիտաս Արք. Օհանեան՝ «Ս. Ներսէս Շնորհալի Ծիսագէտ/Շարականագիրը»:

Առաջին նիստին Դպրեվանքի Տեսուչ՝ Հոգշ. Տ. Պարոյր Վրդ. Շէրնէզեան ներկայացուց «Ս. Ներսէս Շնորհալի Հովուապետը» նիւթը, որուն վերլուծման համար օգտագործեց հիմնականօրէն «Թուղթ Ընդհանրական»ը: Հովուապետին հոգեմտաւոր եւ ղեկավարի կազմաւորման մասին խօսելով նշեց, որ Ներսէս Շնորհալի ազդուած է մեծ եղբօր՝ Գրիգոր Պահլաւունի Կաթողիկոսէն, ինչպէս նաեւ Քեսունի կարմիր վանքի վանահօր՝ Ստեփանոս Մանուկ Գիտնականէն: Ինչ կը վերաբերի Հայրապետին հովուապետական նկարագիրին՝ մեկնելով «Թուղթ Ընդհանրական»էն, ան յայտնեց, որ յորդորներով լեցուն այս Թուղթին մէջ կը դրսեւորուի Կաթողիկոսին հովիւի շունչը, եկեղեցւոյ մասին իր տեսլականը եւ ծառայութեան իր մօտեցումը, ինչպէս նաեւ կ'երեւի իր հօտը լաւապէս ճանչցող եւ քաղաքական կացութենէն քաջատեղեակ ըլլալը: Ապա, անդրադարձաւ այն կարեւոր դէպքերուն եւ հանգրուաններուն, որոնք որոշիչ դեր եւ ազդեցութիւն ունեցած են Ս. Ներսէսի «Թուղթ Ընդհանրական» նամակին վրայ:



Երկրորդ նիստին, Մաշտոցեան Մատենադարանի եւ Ազգ. Ակադեմիայի Պատմութեան ինստիտուտի գիտաշխատող՝ Փրոֆ. Վահէ Թորոսեան զեկու-

ցեց «Ս. Ներսէս Շնորհալին եւ Կիլիկիան Հայկական Պետութիւնը» նիւթը: Ան պատմական ակնարկ մը նետեց նախքան Գրիգոր Բ.ի՝ Ս. Ներսէս Շնորհալիի եղբօր Կաթողիկոս ընտրութիւնը, որմէ ետք անդրադարձաւ Շնորհալի Հայրապետին դիւանագէտի առաքելութեան: Փրոֆ. Թորոսեան յայտնեց, որ Բագրատունեաց թագաւորութեան անկումէն ետք, Բիւզանդական Կայսրութիւնը թիրախ դարձուցած էր Կաթողիկոսութեան տկարացումը եւ հիմնականօրէն կը հետապնդէր Քաղկեդոնի դաւանանքի պարտադրումը: Այս ծրագիրին յաջողութեան համար կայսրութիւնը դիմած էր հայրապետանոցը Կոստանդնուպոլիս աքսորելու, Կաթողիկոսի ընտրութիւնը արգիլելու, հայ իշխանները կայսրութեան մայրաքաղաք կանչելով Քաղկեդոնի ընդունումը պարտադրելու: Եկեղեցիներու միութեան անյաշող փորձերէ ետք եւ ընդառաջելով Կարսի թագաւոր՝ Գագիկ Բ.ի խնդրանքին, Կայսրը վերջապէս արտօնած էր Կաթողիկոսի ընտրութիւնը, որուն հետեւանքով ընտրուած էր Գրիգոր Բ.ը՝ Ներսէս Շնորհալիի եղբայրը: Թորոսեան խօսեցաւ Ռուբինեան Իշխանապետութեան բացակայութեան՝ Կաթողիկոսութեան քաղաքական պատասխանատուութեան ստանձնումին եւ այդ առաքելութեան սկզբունքներուն մասին, որոնք կ'արտացոլան եկեղեցւոյ՝ Կիլիկիոյ հայկական պետութեան ստեղծման ակունքներուն մէջ ըլլալը եւ Ներսէս Շնորհալիին՝ պետականութիւն կերտած հայ հոգեւորականի կերպար ըլլալը:



Երրորդ նիստին, «Կիլիկիա» Մատենադարանի Մատենադարանապետ՝ Գերշ. Տ. Շահան Արք. Սարգիսեան ներկայացուց «Ս. Ներսէս Շնորհալի Մեկնիչ» թեման: Ան ամփոփ կերպով նկարագրեց Շնորհալի Հայրապետի մեկնողական գործունէութիւնը՝ մեկնելով Մատթէոսի Աւետարանին անոր մեկնութենէն, հաստատելով, որ Հայրապետին գործերուն գրեթէ բոլոր էջերուն վրայ Ս. Մատենանին ուղղակի, անուղղակի, մասնակի կամ յարասական, պարզաբանական կամ բացատրական դրսեւորումները կը գտնենք: Խօսելով մեկնո-

ղական արուեստին մասին, Սրբազան Հայրը նախ բաղդատական մը ըրաւ մեկնութեան ու մեկնաբանութեան միջեւ ու ականարկ մը նետեց նախաշնորհալիական մեկնողական գործունէութեան վրայ, որմէ ետք խորացաւ Հայրապետին մեկնողական աշխատանքներուն մէջ՝ ընդգծելով անոր գործերուն արժէքը: Ան ըսաւ, որ Շնորհալի մեկնիչին մեկնողական ժառանգութիւնը հարուստ է ու ցարդ իր թարմութիւնը կը պահէ, ու նշեց, որ Հայրապետը «Արծաթ դարու» պայծառագոյն դէմքերէն մէկն է՝ իր գրական ստեղծագործութեան թէ՛ քանակական, թէ՛ որակական եւ թէ՛ խորքային դիտանկիւններով:

Կէսօրին, գիտաժողովի մասնակիցները վանական ճաշով հիւրընկալուեցան Կաթողիկոսարանի սեղանատան մէջ:



Չորրորդ նիստին զեկոյց ներկայացուց Կաթողիկոսարանի Միջ-եկեղեցական Յարաբերութիւններու Յանձնախումբի Ատենապետ՝ Գերշ. Տ. Նարեկ Արք. Ալեքմէզեան, նիւթ ունենալով «Ս. Ներսէս Շնորհալի էփիմէնիսար»: Ան դիտել տուաւ, որ Շնորհալի Հայրապետին միջ-եկեղեցական գործունէութիւնը հայ ազգին համար եկեղեցական եւ քաղաքական կարեւոր ձեռքբերումներ արձանագրելու կողքին՝ զայն կը դնէ համաշխարհային էքիմէնիզմին կեդրոնը. Նարեկ Սրբազան Հայրը մէջբերեց Շնորհալիի վախճանման 800

ամեակին առիթով Արամ Ա. Կաթողիկոսի (այն ժամանակ՝ Վարդապետի) ստորագրած յօդուածին հետեւեալ տողերը. – «Շնորհալի մեր այսօրուան էփիմէնիզմը կանխած է ուր դարերով: 20-րդ դարը ապրած է 12-րդ դարուն մէջ»՝ ընդգծելու համար սուրբին թէ՛ իմաստութիւնը, թէ՛ ալ յառաջապահ ըլլալը: Սրբազան Հայրը առաւելաբար խօսեցաւ Հայ, լատին, յոյն եւ ասորի եկեղեցիներուն հետ յարաբերութիւններուն մասին ու Շնորհալիի գործունէութիւնը գնահատեց եօթը բնագաւառներու ընդմէջէն:

Հինգերորդ նիստին, Մայր Տաճարի Լուսարարապետ՝ Գերշ. Տ. Կոմիտաս Արք. Օհանեան զեկոյցեց «Ս. Ներսէս Շնորհալի Ծիսագէտ-Շարականագիրը» նիւթը: Սրբազան Հայրը խօսեցաւ Հայրապետին ծիսական բարեկարգութեան եւ շարականագրական յօրինումներու գործունէութեան մասին՝ նշելով, որ Շնորհալի պրպտեց ու հաւաքեց հին դարերու Հայ եկեղեցւոյ պաշտամունքին ժամագիրքի մեր հեղինակներուն գործերը, աղօթքները, շարականները եւ ձեռնարկեց անոնց շունչին տակ նոր ժամակարգութիւն մը յառաջացնելու, որ ուղեցոյց պիտի դառնար դարեր ետք եւ բոլոր ժամանակներուն համար: Ան

դիտել տուաւ, որ Ներսէս Շնորհալի Ս. Գիրքին քաջածանօթ էր ու տիրապետած էր բանաստեղծական տաղաչափական արուեստին, որուն համար կարողացաւ իրագործել ծիսագիտական ու շարականագրական վիթխարի գործը: Նկատի ունենալով, որ Շնորհալի օգտագործած է ամբողջ Հայ եկեղեցւոյ պատմութեան ատաղձը, Սրբազան Հայրը վստահեցուց, որ ան կորուստէ փրկած է բազմաթիւ ձեռագիրներ:



Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Վեհափառ Հայրապետը միօրեայ գիտաժողովի ավարտական նիստին, կատարեց ամփոփ եզրակացուցիչ վերլուծական մը եւ իր պատգամը փոխանցեց:

Նորին Սրբութիւնը առաջին հերթին իր բարձր գնահատանքը յայտնեց Շահան Սրբազան Հօր, որուն ղեկավարութեամբ իրականացաւ այս գիտաժողովը, ինչպէս նաեւ՝ դասախօսներուն եւ Դպրեվանքի Ընծայարանի սաներուն: Վերջիններս զեկոյցներու ավարտին Շնորհալի Հայրապետին հոգեւոր գանձերէն, շարականներէն ու աղօթքներէն պատառիկներ մատուցեցին:

Ապա, ընդգծեց, որ Ս. Ներսէս Շնորհալի մեր ժողովուրդին ու եկեղեցւոյ դարաւոր պատմութեան էջերուն վրայ մնայուն ներկայութիւն եղած է, ներկայութիւն է եւ պիտի ըլլայ: Ան նշեց, որ արժեւորում կատարելու համար հարկ է համապարփակ ու իրապաշտ կերպով մօտենալ անձի կամ դէմքերու՝ զանոնք դիտելով իրենց ժամանակին ու միջավայրին մէջ: Այս ըսելով, ան ընդգծեց, որ Կիլիկեան աշխարհը մեր պատմութեան մէջ նորութիւն մըն էր մեզի համար՝ տարբեր Հայաստանէն, ինչպէս նաեւ՝ պարտադրուած իրականութիւն մը, ուր ստիպուած էինք օտարին հետ միասին ապրիլ, ուստի պատմաբաններ Շնորհալի Հայրապետին կեանքն ու վարքը պէտք է դիտեն այս պրիսմակէն, նշեց ան: Նորին Ս. Օծութիւնը շարունակեց, ըսելով, որ Շնորհալի եկեղեցւոյ մտածողութիւնը, ներկայութիւնը, ծառայու-



ած իրականութիւն մը, ուր ստիպուած էինք օտարին հետ միասին ապրիլ, ուստի պատմաբաններ Շնորհալի Հայրապետին կեանքն ու վարքը պէտք է դիտեն այս պրիսմակէն, նշեց ան: Նորին Ս. Օծութիւնը շարունակեց, ըսելով, որ Շնորհալի եկեղեցւոյ մտածողութիւնը, ներկայութիւնը, ծառայու-



Թիւնը դուրս բերաւ վանքի նեղ սահմաններէն ու տարաւ ժողովուրդին: Ասիկա ցցուն կերպով կը տեսնենք մեր ծէսի արդիականացման ու ժողովրդականացման մէջ: Շնորհալին ծէսը մեր ժողովուրդին կեանքին մէջ ներկայութիւն դարձուց, որովհետեւ տեսաւ, որ ժողովուրդին ինքնութեան պահպանման մէջ վճռական դեր ունէր եկեղեցին, հաստատեց Վեհափառ Հայրապետը:

Անդրադառնալով եկեղեցւոյ միութեան հարցին, Արամ Ա. Կաթողիկոս յայտնեց, որ խնդիրը գոյութիւն ունէր Շնորհալի Հայրապետէն առաջ եւ ունեցաւ անկէ ետք, հետեւաբար պէտք է լայն հասկացողութեամբ նայիլ հարցին ու հասկնալ, որ Քաղկեդոնի մեր մերժումը նաեւ մեր ժողովուրդին ինքնուրոյնութիւնը պահելու համար էր, որուն մէջ մենք տեսանք մեր գոյութեան երաշխիքը: Ան դիտել տուաւ, որ Շնորհալի Հայրապետ կը կարեւորէր եկեղեցիներու միութիւնը, սակայն մեկնելով Հայ ժողովուրդի անվտանգութեան պահպանումէն: Հայ եկեղեցւոյ դաւանաբանական կեցուածքը որեւէ ժամանակէ եւ ոեւէ Հայրապետէ աւելի յստակ ու պարզ եւ ամբողջական կերպով Շնորհալի բանաձեւած ու արտայայտած է՝ երկու աստուածաբանական բնոյթ ունեցող գրութիւններու՝ «Գիր Հաւատոյ Խոստովանութեան»ի եւ «Սահմանֆ Հաւատոյ»ի ճամբով: Վեհափառ Հայրապետը ընդձեց, որ Շնորհալիի մօտեցումը եկեղեցակերտն ու դաւանակերտն չէր, այլ՝ քրիստոսակերտն:

Վերջաւորութեան, Նորին Սրբութիւնը երեք կէտերու մէջ ամփոփեց Ս. Ներսէս Շնորհալիի աւանդը՝ Հայ եկեղեցւոյ վերանորոգում եւ վերակարգաւորում, միջ-եկեղեցական յարաբերութեանց ծաւալում եւ եկեղեցի-պետութիւն յարաբերութիւն ուղենշային դիտարկումներով:

Նշենք, որ գիտաժողովը ուղիղ սփռուեցաւ Cilicia TV-ի facebook-ի էջէն եւ youtube-ի կայանէն:

**ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԵԱՆ
ՄԱՍՆԱԿՑՈՒԹԻՒՆԸ ԵՐԵՎԱՆԻ ՄԷՋ ԿԱՅԱՑԱԾ Ս. ՆԵՐՍԷՍ
ՇՆՈՐՀԱԼԻ ՀԱՅՐԱԿԵՏԻ 850-ԱՄԵԱԿԻ ԳԻՏԱԺՈՂՈՎԻՆ**

Ս. Ներսէս Շնորհալի Հայրապետի վախճանման 850-ամեակին նուիրուած Ս. Աթոռիս գահակալ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Վեհափառ Հայրապետին Սրբատառ Կոնդակի հրապարակումին ընդառաջ, նախ՝ Անթիլիասի Մայրավանքին մէջ Սրբազան համերգ եւ գիտաժողով իրականացնելէ ետք, Երեւանի Մաշտոցեան Մատենադարանի նախաձեռնած գիտաժողովին, յանուն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան, իր մասնակցութիւնը բերաւ Գերշ. Տ. Շահան Արք. Սարգիսեանը («Կիլիկիա» Մատենադարանի մատենադարանապետ եւ հնատիպներու ու ձեռագիրներու բաժանմունքներու տեսուչ), 21 Յունիս 2023-ին:

Սրբազան Հայրը, բացման պահուն Տէրունական Աղօթքը արտասանելէ ետք, ընթերցեց Վեհափառ Հայրապետին Օրհնութեան Գիրը: Վեհափառ Հայրապետը իր Օրհնութեան Գիրին մէջ յատկապէս ըսաւ. «Բարձր կը գնահատեմ ու ջերմօրէն կ'ողջունեմ՝ հայ եկեղեցւոյ մեծագոյն հայրապետներէն Սուրբ Ներսէս Շնորհալիի մահուան 850 ամեակին առիթով Մաշտոցեան Մատենադարանին կողմէ կազմակերպուած ներկայ միջազգային գիտաժողովը:

«Ծանօթ իրողութիւն է, որ Շնորհալի Հայրապետը իր եզակի ստեղծագործական վաստակով կարելոր ներդրում բերած է մեր եկեղեցւոյ աստուածաբանական մտածողութեան, դաւանաբանական կեցուածքին, ծէսի կազմաւորման եւ ընդհանրապէս հայ մատենագրութեան հարստացման: Վստահ եմ, որ ներկայ գիտաժողովը առիթ պիտի հանդիսանայ վերլուծելու Ներսէս Շնորհալիի իւրայատուկ տեղը հայ մատենագրութեան եւ ընդհանրապէս հայ մշակոյթի «Արծաթէ Դար»ուն մէջ»:

Այս առիթով Շահան Արքեպիսկոպոս Նորին Սրբութեան Հայրապետական Սրբատառ Կոնդակէն յատուկ օրինակ մը նուիրեց Մատենադարանին, ինչպէս նաեւ մասնագէտներու բաժնուեցաւ Արամ Վարդապետի Շնորհալի Աստուածաբան էքզիմենիստի վերաբերող ուսումնասիրութիւնը գրքոյկէն եւ անգլերէն ընդարձակ աշխատասիրութեանէն՝ «Saint Nerses The Gracious And Church Unity» օրինակներ:

Նշենք, որ Սրբազան Հայրը զեկուցեց «Ս. Ներսէս Շնորհալի Աստուածաշունչ Մատենանի Մեկնիչը» նիւթը եւ մասնակցեցաւ երեք օրերու քննարկումներուն, իսկ փակման նիստին իր գնահատանքի խօսքն ու առաջարկները ներկայացուց:

**ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԻՒՆԸ
ՄԱՍՆԱԿՑԵՑԱԲ «ՀԱՅԱՍՏԱՆ» ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ
ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՏԱՐԵԿԱՆ ԺՈՂՈՎԻՆ, ԵՐԵՒԱՆԻ ՄԵՁ**

«Հայաստան» Համահայկական Հիմնադրամի հոգաբարձուներու տարեկան ժողովը տեղի ունեցաւ Երեւանի նախագահական ապարանքին մէջ, Շաբաթ 24 Յունիս 2023-ին: Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Վեհափառ Հայրապետին օրհնութեամբ, յանուն Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան, Գերշ. Տ. Շահան Արք. Սարգիսեանը իր մասնակցութիւնը բերաւ:

Ժողովը հիմնականին մէջ լսեց եւ քննարկեց 2022 տարուան իրագործուած ծրագիրներուն եւ անոնց տնտեսական հաշուետուութեան մասին, հաստատեց 2023 տարուան պիւտճէն, ինչպէս նաեւ վաւերացուց վերանորոգուած կանոնագրութիւնը՝ նախորդ տարուան քննարկումներէն եւ յատուկ յանձնախումբի կողմէ վերատեսութեան ենթարկուելէ ետք:

Նշենք, որ մեր Ս. Աթոռը «Հայաստան» Համահայկական Հիմնադրամի հիմնադիր անդամ է եւ անցնող տարիներուն իր գործօն մասնակցութիւնը բերած է եւ կը շարունակէ զօրակցիլ մեր ժողովուրդին եւ մեր հայրենիքին՝ Հայաստանի եւ Արցախի հանրապետութեանց:



ԴՊՐԵՎԱՆՔ**ՀՈԳԵՄՏԱԲՈՐ ԿԵԱՆՔԸ ԴՊՐԵՎԱՆՔԷՆ ՆԵՐՍ**

• *Չորեքշաբթի, 3 Մայիս 2023-ին, Միջին Արեւելքի Աստուածաբանական Կեդրոններու եւ Դպրեվանքերու Միութեան ներկայացուցիչ՝ Տէր Միշէլ Քամպար այցելութիւն տուաւ Դպրեվանք եւ ներկայացուց Մ.Ա.Ա.Կ.Դ.Մ.-ի պատմականը, առաքելութիւնն ու գործադրուող ծրագիրը: Ասիկա առիթ հանդիսացաւ, որ սաները լուսաբանական հարցումներու ճամբով ա՛լ աւելի իմանան սոյն առաքելութեան մասին: Նշենք, որ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Դպրեվանքը մասնակից է Մ.Ա.Ա.Կ.Դ.Մ.-ի ծրագիրներուն:*



- Նոյն օրը, աւելի ուշ, դերասան Վարդան Ազնաւուրեան այցելեց Դպրեվանք ու մտերմիկ զրոյցի ճամբով ներկայացուց թատրոնի արուեստին կա-րեւորութիւնը ու թատերական վարժութիւններ կատարեց սաներուն հետ: Ասիկա քաջալերեց սաները, որ փափաք արտայայտեն մօտիկ ապագային թատերական ներկայացում մը պատրաստելու:

- Ուրբաթ, 5 Մայիս 2023-ին, նախաձեռնութեամբ Դպրեվանքի Տեսչու-թեան եւ կազմակերպութեամբ Ուսանողական Խորհուրդին, «Բրաբիոն Տու-մանեան» սրահին մէջ, լիբանանեան եւ լիբանանահայ մակարդակներու վրայ վաստակ վայելող դերասան, բեմադրիչ եւ թեքնիք պատասխանատու՝ Յակոբ Տէր Ղուկասեան Հայ թատրոնի մասին դասախօսութիւն մը տուաւ:

Ընծայարանի սաներէն՝ Յովհաննէս Պայտունեան արտասանեց բացման խօսքը, ուր շեշտը դրաւ Հայ թատրոնին ո՛չ միայն արուեստի ու մշակոյթի հարստութիւն ըլլալուն, այլ նաեւ՝ ազգային ու հոգեւոր ինքնութեան կռուան ըլլալուն վրայ: Բացման խօսքէն ետք, Տէր Ղուկասեան մանրամասնօրէն անդրադարձաւ Հայ մշակոյթի մէջ Հայ թատրոնի դերակատարութեան, ինչ-պէս նաեւ լիբանանեան թատերական կեանքին մէջ Հայ դերասաններու ու բեմադրիչներու ներդրումին, որոնց ճանաչողութիւնը եւ արժեւորումը սա-կայն ցաւ ի սիրտ բաւարար չէ, ըսաւ ան:

Աւարտին, Դպրեվանքի Տեսուչ՝ Հոգշ. Տ. Պարոյր Վրդ. Շէրնէզեան իր խօս-քը փոխանցեց ու Դպրեվանքի մեծ ընտանիքին անունով յուշանուէր մը յանձ-նեց Յակոբ Տէր Ղուկասեանին:



• Ուրբաթ, 12 Մայիս 2023-ին, Դպրեվանք հրաւիրուած էր Հայկազեան Համալսարանի Արհեստագիտութեան բաժանմունքի պատասխանատու Շանթ Ստեփանը, որ զեկուցեց արհեստագիտութեան նորութիւններուն մասին:

Բացման խօսքը արտասանեց ընծայարանի սան՝ Բրշ. Հրակ Սրկ. Գրտան-եանը, իսկ ձեռնարկի աւարտին Տեսուչ Հայր Սուրբը իր խօսքը արտասանեց ու Դպրեվանքի մեծ ընտանիքին անունով յուշանուէր մը յանձնեց դասախօսին:

ԴՊՐԵՎԱՆՔԵԱՆ ԶՈՒԱՐԹ ԵՐԵԿՈՅ

Տարիներու քաղցր աւանդութեան համաձայն եւ Դպրեվանքի ուսումնակրթական տարեշրջանի փակման առիթով, Դպրեվանքի Դ. ընծայարանի աւարտական սարկաւազներուն կազմակերպութեամբ, Ուրբաթ, 16 Յունիս 2023-ին, տեղի ունեցաւ աւանդական «Զուարթ Երեկոյ»-ն, որ ամէն տարի կը սպասուի մեծ խանդավառութեամբ:

Զուարթ երեկոյեան ընթացքին, դպրեվանեցիները երեք խումբերու բաժնուելով՝ «Ռուբինեաններ», «Սիւնիք» եւ «Առիւծներ» անուններով, զանազան խաղերու ճամբով հաճելի ժամանց անցուցին, ցուցաբերեցին իրենց տաղանդներն ու ձիրքերը եւ ստեղծեցին զուարճալի ու երջանիկ մթնոլորտ մը: Երեկոն ճոխացաւ զանազան երգերով ու պարերով:

Խաղերու աւարտին, «Առիւծներ» խումբը յաղթանակի դրօշը բարձրացուց՝ խումբերուն միջեւ բարձրագոյն նիշը ապահովելով:

ՏԱՐԵՎԵՐՋԻ ՈՒՍՈՒՑՉԱԿԱՆ ԺՈՂՈՎ

Շաբաթ, 24 Յունիս 2023-ին, Դպրեվանքի «Նունէ եւ Նինարէ Նազարեան» մատենադարանին մէջ տեղի ունեցաւ Դպրեվանքի 93-րդ ուսումնակրթական տարեշրջանի ամավերջի ուսուցչական ժողովը:



Ժողովը սկիզբ առաւ Տէրունական աղօթքով, որմէ ետք Դպրեվանքի Տեսուչ՝ Հոգշ. Տ. Պարոյր Վրդ. Շէրնէզեան ողջունեց ուսուցիչները եւ իր բարձր գնահատանքը յայտնեց անոնց ամբողջ տարուան ընթացքին տարած արդիւնաւէտ գործունէութեան համար:

Ժողովը քննարկեց անցած տարուան գործունէութիւնը եւ աշակերտութեան արդիւնաբերութիւնը, ինչպէս նաեւ՝ յառաջիկայ տարուան կրթական ծրագիրը:

ԱՐԵՒՄՏԱՀԱՅԵՐԷՆ ՈՒԻՔԻՓԵՏԻԱՅԻ ԲԱԺԱՆՄՈՒՆՔԷՆ ԳՆԱՀԱՏԱՆՔ

Երեքշաբթի, 27 Յունիս 2023-ի երեկոյեան, Դպրեվանքին մէջ տեղի ունեցաւ Արեւմտահայերէն Ուիքիփետիայի հարթակին մէջ ներդրում ունեցող ընծայարանական սաներուն գնահատագիրի բաշխումը:

Դպրեվանքի Հայերէն լեզուի ուսուցիչ՝ Տիկ. Սեւան Դանիէլեան-Մկրեանի ջանքերով, Դպրեվանքի Ընծայարան բաժնի սաները գնահատելի աշխատանք կատարեցին:

Դպրեվանքի Տեսուչ՝ Հոգշ. Տ. Պարոյր Վրդ. Շէրնէզեանի ձեռամբ, բաժնուեցան մասնակցող ուսանողներուն գնահատագրերը:

ԴՊՐԵՎԱՆՔԻ 93-ՐԴ ԿՐԹԱԿԱՆ-ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐԵՇՐՋԱՆԻ ԱՄԱՎԵՐՋԻ ՀԱՆԴԷՍ

Մարդակերտման ու հայակերտման անփոխարինելի կրթական ու հոգեւոր կառոյց Դպրեվանքը, այս տարի եւս յաջողութեամբ բոլորեց իր ուսումնական-կրթական տարեշրջանը: Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Պիքֆայայի Ս. Աստուածածին Վանքին մէջ, Հինգշաբթի, 29 Յունիս 2023-ին երեկոյեան, գեղեցիկ հանդիսութեամբ կատարուեցաւ աւարտական Դ. Ընծայարանի վկայականաց բաշխումը՝ նախագահութեամբ եւ ձեռամբ՝ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Վեհափառ Հայրապետին: 93-րդ ամավերջի հանդէսին ներկայ էին Միաբան ու Քահանայ հայրեր, պետական ու ազգային երեսփոխաններ, լիբանանահայ կրթական, մշակութային ու մարմնակրթական միութիւններու ներկայացուցիչներ, Դպրեվանքի ուսուցչական կազմը, ծնողներ եւ Դպրեվանքի բարեկամներ ու բարերարներ:

Հանդիսութիւնը ընթացք առաւ Դպրեվանքի քայլերգով, որմէ ետք Միաք Մեծարենցի «Կիրակմուտ» բանաստեղծութիւնը արտասանեց Բրշ. Նշան Սրկ. Անտրեան եւ դաշնամուրի վրայ «Թռչէի մտքով տուն» նուագեց Բրշ. Վահէ Սրկ. Ֆիլիքեան:

Ուղերձ արտասանեց աւարտական դասարանէն Նշան Սրկ.ը, որ յուզում-

նախառն խօսքերով արտայայտեց Դ. Ընծայարանի աշակերտներուն զգացումները: Ան վստահեցուց, որ Դպրեվանքէն ստացած գիտելիքներն ու ոգին հպարտութեան լիառատ աղբիւրներ են, ու անոնք հպարտ են, որ Դպրեվանք-ձուլարանէն անցնելով՝ անխոնջ հայրապետներու ու նուիրեալ եկեղեցականներու ժառանգորդը դարձած են: Ան իր երախտագիտութիւնը յայտնեց Վեհափառ Հայրապետին եւ մաղթեց, որ Աստուած արեւշատ օրեր պարգեւէ անոր: Ան շնորհակալութիւն յայտնեց նաեւ նախկին ու ներկայ տեսչական կազմերուն, ուսուցիչներուն, ծնողներուն եւ բոլոր անոնց, որոնք կ'աջակցին Դպրեվանքի առաքելութեան:


Ուղերձին յաջորդեց գեղարուեստական կոկիկ յայտագիր մը «Արմաշ» երգչախումբի կատարողութեամբ՝ ղեկավարութեամբ Դպրեվանքի Հսկիչ՝ Հոգշ. Տ. Ազատ Աբղ. Ֆիլիքեանի եւ դաշնամուրի ընկերակցութեամբ՝ Յասմիկ Գասպարեանի: «Արմաշ»ը ներկայացուց փունջ մը շարականներ, մէջ առ մէջ Բրշ. Վարդան Սրկ. Ասայեանի կողմէն գօտեպնդիչ խօսքերու արտասանութեամբ: Երգչախումբը նաեւ երգեց «Ճախարակ»ը՝ Լեւոն Սեդրակեանի նուագակցութեամբ: Գեղեցկօրէն ներկայացուցեցան «Սուրբերու Աշխարհ», «Իմ Հայրենիք Վան» եւ «Վերականգնիր Կիլիկիա» երգերը: Բրշ. Հրակ Սրկ. Գրտանեան նրւագեց «Պիմկէտ»ը եւ Գարլօ Մարտիրոսեանը՝ «Քոչարի» եւ «Երկինքն Ամպել է»:

Հուսկ, Դպրեվանքի Տեսուչ՝ Հոգշ. Տ. Պարոյր Վրդ. Շէրնէգեան արտասանեց տեսչական խօսքը: Ան առաջին հերթին, փառք եւ շնորհակալութիւն յայտնեց Աստուծոյ՝ Անոր պարգեւած օրհնութիւններուն համար եւ ըսաւ, որ այնպէս ինչպէս աւանդութեան համաձայն Դպրեվանքի տարեշրջանը սկըսանք Թարգմանչաց վարդապետներու տօնակատարութեամբ, նոյնպէս ալ Թարգմանչաց մեծ վարդապետներուն՝ Ս. Սահակի եւ Ս. Մեսրոպի տօնին յաջողութեամբ կը դարձնենք Դպրեվանքի 93-րդ ուսումնական-կրթական տարեշրջանի վերջին էջը: Տեսուչ Հայր սուրբը շարունակեց՝ ըսելով, որ Դպրեվանքի կրթութիւնը ազգին ու եկեղեցւոյ յօգուտ է, հետեւաբար, այս գիտակցութեամբ է, որ աւարտականներ՝ Նշան Սրկ.ը դիմած է կուսակրօն քահանայութեան ձեռնադրման, իսկ Հրակ Սրկ.ը՝ ամուսնացեալ քահանայութեան ծառայութեան: «Ահաւասիկ, Դպրեվանքի առաքելութեան ցուցանիշը, որուն ընդմէջէն կը տեսնենք, թէ դպրեվանքին գիտէ ինքզինք նուիրել ազգին ու եկեղեցիին՝ ձեռք տալով Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան համատարած եւ բազմաձաւալ գործունէութեան: Այնքան ատեն, որ Աստուծոյ շնորհքը, Ս. Աստուածածինի բարեխօսութիւնը, Կաթողիկոսութեան ծառայական ոգին ու տեսչականը, Վեհափառ Հայրապետին նուիրական ծաղկուն եւ առաջնորդող ասան մեր ուղեկիցն ու նեցուկն են, այս կրթօճախը պիտի մնայ անդադրում ձուլարանը», ըսաւ ան: Վերջապէս, Հոգշ. Հայր Սուրբը իր երախտագիտութիւնը յայտնեց Նորին Սրբութեան, տեսչական եւ ուսուցչական կազ-

մերուն, Դպրեվանքի տիկնանց յանձնախումբին եւ աշակից միութիւններուն ու հաստատութիւններուն:

Ապա, Տեսուչ Հայր Սուրբը բեմ հրաւիրեց Նորին Ս. Օծութիւնը, որպէսզի Նշան եւ Հրակ Սրկ.ներուն յանձնէ վկայականները եւ փոխանցէ իր Հայրապետական պատգամը:

Արամ Ա. Կաթողիկոս Հայրապետական բիւր օրհնութեամբ ու ջերմ գնահատանքով ողջունեց Դպրեվանքին անցեալն ու ներկայ կեանքը արժեւորող ու հարստացնող նուիրեալները, ինչպէս նաեւ՝ Տեսուչ Հայր Սուրբը, տեսչական կազմը, ուսուցիչները, բարերարները, տիկնանց ու խնամակալ խորհուրդներն ու Դպրեվանքի բարեկամները: Ան ընդգծեց, որ Դպրեվանքը սոսկ կրօնագիտական դասերով լեցուն կրթական կառույց մը չէ, այլ եզակի եւ իւրայատուկ առաքելութեամբ հաստատութիւն մըն է, ուր առաջին հերթին, հայկականութիւնը, իր բովանդակ էութեամբ, կենդանի պահող կրթութիւն կը ջամբէ եւ երկրորդ՝ մարդ պատրաստելու նպատակասլաց առաքելութիւն կը տանի: Նորին Սրբութիւնը յայտնեց, որ պատմագիտական, կրօնագիտական, աստուածաբանական, գիտական, հայագիտական եւ այլ նիւթեր սերտ ներդաշնակութեամբ կը դասաւանդուին Դպրեվանքէն ներս ու հոն կազմաւորուած աշակերտները ապագային իրենց ուսումը կը շարունակեն ցանկացած երկրի բարձրորակ համալսարաններու մէջ՝ միշտ ու միշտ վեհ նպատակ ունենալով ազգին ու եկեղեցւոյ ծառայութիւնը: Բարձր ուսման հիմքը, ոգին ու խորքը կը դրուին Դպրեվանքին մէջ, շեշտեց Հայոց Հայրապետը: «Եզակի կրթական կառույց մըն է Դպրեվանքը, ուր յիշեալ բոլոր նիւթերը տարբեր շեշտաւորումներով եւ միշտ մեր ժողովուրդին ու աշխարհին համապատասխան մօտեցումով կը փոխանցուին մեր աշակերտներուն: Դպրեվանքը ուսուցում չի տար միայն, այդ ուսուցումէն անդին մարդուն մէջ մա՛րդը, հա՛յը, նուիրուած, ծառայատէր, եկեղեցատէր, ազգատէր ա՛նձը կը կազմաւորէ, որպէսզի երթայ եւ ինքզինք արժեւորէ, ինքզինք կենսագործէ՝ ծառայութեամբ միայն. մեր ծառայութիւնը մեր փառքն ու պատիւն է, մեր նպատակն է», ընդգծեց Նորին Սրբութիւնը:



Շարունակելով իր խօսքը՝ Վեհափառ Հայրապետը անդրադարձաւ այն ուժականութեան մասին, որ իւրաքանչիւր դպրեվանեցի կը զարգացնէ իր մէջ ուսանողութեան տարիներուն. այնպէս ինչպէս Քրիստոսի առաքեալները, որոնք փոքր թիւ մը ըլլալով հանդերձ՝ հոգեւոր յեղափոխութիւն կատարեցին աշխարհով մէկ, նոյնպէս ալ դպրեվացիները, ծառայութեան ճամբով կոչուած են ըլլալու մէկական առաքեալներ՝ եկեղեցւոյ, ազգին ու հայրենիքին նուիրեալ, ըսաւ ան:

Նորին Ս. Օծութիւնը իր խօսքին մէջ հակիրճ կերպով անդրադարձաւ վերջին հովուապետական այցելութիւններուն ընթացքին իր ունեցած տպաւորութիւններուն՝ մանաւանդ, որ «Սփիւտֆի Տարի»ի հոշակագիրին առիթով զանազան աշխատանքային հանդիպումներ ունեցած էր գաղութներու կառույցներուն եւ առհասարակ ժողովուրդին հետ: Այս իմաստով, Նորին Սրբութիւնը ընդգծեց մարդուժի պակասը, բոլոր ոլորտներուն մէջ, եւ կոչ ուղղեց համայն հայութեան՝ այս իրողութեան քաջատեղեակ ըլլալով ծրագրաւորել յառաջիկայի հայապահպանման եւ հայուն գոյատեւման երաշխիքը ապահովող ծրագիրները:

Աւարտին Վեհափառ Հայրապետը իր գնահատանքը յայտնեց Դպրեվանքի տեսչութեան եւ ուսուցչական կազմին ու եզրափակեց խօսքը՝ թելադրելով վերահաստատել ու վերամրապնդել մեր նուիրեալ մասնակցութիւնը Դպրեվանքի սրբազան առաքելութեան:

Հանդիսութիւնը աւարտեցաւ Վեհափառ Հայրապետի արտասանած «Պահպանիչ» աղօթքով:



ՏԵՍՉԱԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ

*Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոս,
Գերշ. Սրբազան հայրեր,
Գերպ. եւ Հոգշ. Հայր Սուրբեր,
Լիբանանահայ կազմակերպութիւններու, միութիւններու եւ հաստատու-
թիւններու ներկայացուցիչներ,*

Յարգելի հիւրեր, ծնողներ եւ ներկաներ

*Ահաւասիկ այսօր, երբ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Դպրե-
վանքի 93-րդ ուսումնակրթական տարեշրջանի փակման հանդիսութիւնը եւ
վկայականաց բաշխումը կը կատարենք, մեր աչքերը գոհունակ սրտով կը
բարձրացնենք առ մեր Տէրը եւ Փրկիչը, փառք եւ շնորհակալութիւն յայտնե-
լու իր օրհնութեան եւ շնորհքին համար, որոնցմէ մեզ չզրկեց, այլ՝ զանոնք
առատօրէն պարգեւեց մեզի, որպէսզի այսօր կարենանք վայելել մարդա-
կերտման այս նուիրական դարբնոցին արգասիքը: Սոսկ պատահականու-
թեան կամ զուգահիւսութեան արդիւնք չէ, որ այսօրուան այս ամսվերջի
հանդէսը կը համընկնի այն օրուան, երբ Հայ Եկեղեցին կը տօնէ Թարգմանիչ*



*Սուրբ Վարդապետներուն՝ Սահակ
Պարթեւ Հայրապետին եւ Մեսրոպ
Մաշտոցին տօնը, որոնք իրենց սուրբ
առաքելութեամբ հայկականութեան
դրոշմով կնքեցին մեր ազգի պատ-
մութիւնն ու մշակոյթը: Այնպէս ինչ-
պէս աւանդութեան համաձայն Դպրե-
վանքի տարեշրջանը կը սկսի Թարգ-
մանչաց վարդապետներու տօնակա-
տարութեամբ, ահաւասիկ նոյն սուր-
բերու տօնակատարութեան օրը յաջո-
ղութեամբ կը դարձնենք Դպրեվանքի
93-րդ ուսումնակրթական տարեշրջա-
նի վերջին էջը, որ Մեծի Տանն Կի-
լիկիոյ Կաթողիկոսութեան առաքելու-
թեան բազմաժառանգ հատորին իւրայա-
տուկօրէն ցայտուն էջերէն մէկն է:*

*Այո, ուսումնակրթական տարեշրջան մը եւս յաջողութեամբ արձանագ-
րուեցաւ Դպրեվանքի անզուգական առաքելութեան մէջ, որովհետեւ մեր սի-
րելի դպրեվանեցիները տարի մը եւս ոչ միայն գիտելիքներ ամբարեցին եւ
անոնցմով ուսուցան, այլեւ՝ այս սուրբ յարկին առաքելութեան իմաստը*

առաւել եւս հասկացան եւ անոր ջամբած ծառայութեան ոգիով թրծուեցան: Մեր աշակերտները իրենց ամէնօրեայ աղօթական կեանքով՝ ժամերգութիւններով, Ս. Աստուածածին վանքը դարձուցին նստավայրը անմար խունկի մը, որ կը բարձրանայ Հայ ժողովուրդին եւ համայն աշխարհի զաւակներուն համար: Անոնք, իրենց տուներէն հեռու, այս հոգեւոր տան մէջ ապրեցան եղբայրական ջերմութեամբ եւ եղան մէկ ընտանիք: Իրենց գիտակցութեան մէջ արթուն մնաց հայու արդար պահանջքն ու անլուելի ձայնը, դատն ու պայքարը՝ ի դիմաց մեր դարաւոր հարուստ եւ անկոտորում կամքի ու սխրանքի պատմութեան: Հայ մշակույթը մնայուն շրջուն բոյրը դարձաւ Դպրեվանքեան կեանքին մէջ: Այս բոլորը եւ աւելին՝ ի խնդիր Հայ Եկեղեցւոյ, հայ ազգի եւ մեր հայրենիքի ապագային:

Դպրեվանքի յոյժ կարեւոր առաքելութիւնը, եւ անոր յաջողութիւններով լեցուն տարեշրջանը կարելի չէր իր բարի աւարտին հասցնել, եթէ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան առաքելութեան խթանող ու խանդավառող ոգին գոյութիւն չ'ունենար: Մեր Կաթողիկոսութեան նպատակասլաց առաքելութեան ոգին մեզ կը դարձնէ միատարր եւ համագործակցող հաւաքականութիւն, մեզ կը մղէ նուիրուելու, ծառայելու եւ իրագործումներ ձեռք բերելու: Ահա այդ հաւաքականութեան մասին է, որուն կ'ուզեմ այժմ երախտագիտութեամբ անդրադառնալ, եւ որուն առաջնորդն ու զայն գլխաւորողն ու անխոնջ հովանաւորողն է՝ Ս. Աթոռոյս Գահակալ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Վեհափառ Հայրապետը:

Որդիական երախտագիտութեան անհուն զգացումներս արտայայտելու պարտքը ունիմ նախ եւ առաջ Նորին Սրբութիւն Վեհափառ Հայրապետին, որուն անմիջական հոգատարութեան, հսկողութեան, առաջնորդութեան եւ քաջալերանքին ներքոյ, Տեսչութիւնս, ի մասնաւորի՝ խոնարհաբար անարժանս, այս տարի եւս յաջողեցանք արդիւնաբեր տարեշրջան մը բոլորել Դպրեվանքէն ներս: Վեհափառ Հայրապետին օրհնութեամբ եւ ճիգերով, հակառակ տնտեսական բոլոր տեսակի տագնապներուն, Դպրեվանքի աշակերտները ոչ մէկ բանէ զրկուեցան, այլ ընդհակառակն, ունեցան լաւագոյնը, որ պէսզի Դպրեվանքի առաքելութիւնը զօրանայ ու ծաղկի: Թող Աստուած քաջառողջ եւ արեւշատ օրեր պարգեւէ Հայոց Հայրապետին, որպէսզի իր առաջնորդութեամբ եւ հովանաւորութեամբ կարենանք շարունակել այս նուիրական եւ պատասխանատու ծառայութիւնը:

Դպրեվանքի յաջողութեան գրաւականներէն մէկն է նաեւ ունենալ աշխուժ, գործունեայ եւ նուիրեալ գործակիցներ: Այս գծով կ'ուզեմ գոհունակութեան խօսք արտայայտել Դպրեվանքի հսկիչ հայր սուրբերուն, Աւետիք Վրդ. Տէր Կարապետեանին, Գէորգ Վրդ. Գարակէօզեանին եւ Ազատ Աբդ. Ֆիլիքեանին, որոնք ոչ միայն եղան լաւ գործակիցներ, այլեւ հոգատար ու

արթուն հսկիչներ մեր թանկագին Դպրեվանեցիներուն համար իրենց օրն ու ցերեկը շինաշէլով: Այստեղ կ'ուզեմ նաեւ մեր եղբայրական շնորհակալութիւնը յայտնել Ս. Աստուածածին վանքի վանահօր՝ Գերպ. Տ. Շնորհք Մ. Վրդ. Աշըգեանին, որուն գործակցութիւնն ու աջակցութիւնը անբաժան դարձան մեր Դպրեվանքեան առօրեայ առաքելութեան մէջ:

Դպրեվանքի ուսուցիչ ըլլալ, ինծի համար, կը նշանակէ ուխտաւոր ուսուցիչ դառնալ, որովհետեւ մեր պատուարժան ուսուցչական կազմի միաբան թէ աշխարհական ուսուցիչները, յատկապէս Լիբանանի մէջ տիրող զանազան տագնապներով եւ մարտահրաւէրներով լեցուն այս օրերուն, ուխտաւորի մը նման բարձրացան Պիքֆայա, իրենց մտքէն, հոգիէն ու սրտէն բաժին հանելու մեր սիրելի տղոց: Այո, ուխտաւոր են, որովհետեւ Աստուծոյ հանդէպ իրենց զգացած պարտաւորութենէն մղուած նուիրումով կը բարձրանան հոս, իրենց ունեցածը բերելով Դպրեվանքի գանձանակին, Դպրեվանքեան հոգեւոր մթնոլորտէն քաջալերուած եւ անով զօրացած: Եթէ հայ ուսուցիչը արժանի է ամէն տեսակի պատիւի ու գնահատանքի, այսօր աւելի քան երբեք, Լիբանանի այս ներկայ կացութեան մէջ ան արժանի է շատ աւելիին: Հետեւաբար, Աստուած թող ինք վարձահատոյց ընէ ձեզ, սիրելի Սրբազան Հայրեր, միաբանակից եղբայրներ եւ պատուարժան ուսուցիչներ:

Արամ Ա. Վեհափառ Հայրապետի օրհնութեամբ, 2018 թուականէն ի վեր դպրեվանքեան մեր ընտանիքէն ներս «մայրական աչք» դառնալու առաքելութիւնը կը տանին խումբ մը հոգատար տիկիներ, որոնք իրենց տուն-զաւակ-թոռնիկները ձգած, ամէն տեսակի աջակցութիւն կը ցուցաբերեն Դպրեվանքի զաւակներուն: Թոյլ տուէք, Դպրեվանքի տեսչութեան եւ աշակերտութեան անունով մեր խորին շնորհակալութիւնները յայտնել Դպրեվանքի Տիկնանց Խորհուրդի ծառայասէր անդամներուն, որոնց ժրաջան աշխատանքին շնորհիւ շարք մը ծրագիրներ յաջողացինք ու տակաւին կ'աշխատինք յաջողցնել ի խնդիր Դպրեվանքի բարօրութեան: Զեր վարձքը կատար ըլլայ:

Տակաւին կան բազմաթիւ հաստատութիւններ, միութիւններ, ընտանիքներ եւ անհատներ, որոնք կը հետեւին Դպրեվանքի առաքելութեան եւ անսակարկօրէն իրենց աջակցութիւնն ու քաջալերանքը կը ցուցաբերեն մեզի: Ամերիկայի Միացեալ Նահանգներէն մինչեւ Լիբանան քանի՛ հայ անհատներու եւ կազմակերպութիւններու սէրն ու քաջալերանքը վայելեցինք այս տարի եւս, որոնց համար Դպրեվանքի մեծ ընտանիքը անհունօրէն երախտապարտ է:

Անցնող շաբաթներուն, անարժանաբար պատիւը ունեցայ ընկերակցելու Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Վեհափառ Հայրապետին, դէպի Գանատայի Հայոց Թեմ իր հովուապետական այցելութեան: Ականատես եղայ, թէ ինչպէս մեր ժողո-

վուրդի գաւակները կը դիտեն մեր կաթողիկոսութիւնը՝ Նորին Սրբութիւն Վեհափառ Հայրապետին ընդմէջէն: Զգացի այն ակնկալութիւններն ու պահանջները, որոնք մեր Սփիւռքի գաղութները ունին Կիլիկիոյ Կաթողիկոսութենէն, որուն մէջ յոյժ կարեւոր դեր ունի Դպրեվանքը՝ իր մարդակերտումի եւ հայակերտումի առաքելութեամբ: Այսօր, Սփիւռքի գաղութները կ'ընդլայնին, սակայն գործուն մարդուժը կը պակսի ամէն տեղ՝ այնպէս ինչպէս Աւետարանի բառերը կ'ըսեն. «Հունձքը շատ է, սակայն մշակները՝ քիչ»: Այս գիտակցութեամբ է, որ Դպրեվանքը լծուած է պատրաստելու երիտասարդ այնպիսի մարդուժ, որ ի պատասխան Վեհափառ Հայրապետի կոչին եւ ի խնդիր մեր Սփիւռքի գաղութներու գոյատեւման եւ յառաջդիմութեան՝ պատրաստ է երթալ ժողովուրդին եւ անոր բոլոր տեսակի՝ հոգեւոր թէ ազգային կարիքներուն գորհացում տալ: Առ այդ, Դպրեվանքի առաքելութեան ձօնուած որեւէ բնոյթի աշակցութիւն, անպայմանօրէն կը նպաստէ Սփիւռքի անդամատանները ծաղկեցնելու նպատակով մշակներ հասցնելու մեր աշխատանքին:

Այս, տարի Դպրեվանքը ունի երկու աւարտականներ, որոնք ութը տարիներու Դպրեվանքի ուսումը աւարտելէ ետք, ահաւասիկ այսօր կու գան իրենց Դպրեվանքեան ուսման եւ կազմաւորման ճանապարհորդութեան արգասիքը վայելելու: Դպրեվանքէն ներս անոնք սորվեցան, թէ ինչ որ ստացան այս սուրբ յարկին տակ, միայն իրենց չի պատկանիր, այլ՝ ազգին ու եկեղեցիին, ինչ որ նաեւ կը նշանակէ, թէ իրենց կեանքը այլեւս կը պատկանի նոյնպէս ազգին ու եկեղեցիին: Այս գիտակցութեամբ, Նշան Սրկ. Անտրեանը դիմած է Դպրեվանքի տեսչութեան, որպէսզի երբ Վեհափառ Հայրապետը յարմար ժամանակը նկատէ, զինք կուսակրօն քահանայ ձեռնադրէ, իսկ Հրակ Սրկ. Գրտանեանը ընտրած է ամուսնացեալ քահանայութեան ծառայութիւնը: Ահաւասիկ, Դպրեվանքի առաքելութեան ցուցանիշը, որուն ընդմէջէն կը տեսնենք թէ դպրեվանեցիին գիտէ ինքզինք նուիրել ազգին ու եկեղեցիին, ձեռք տալով Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան համատարած եւ բազմածաւալ գործունէութեան: Սիրելի աւարտական սարկաւազներ, Կիլիկիոյ Կաթողիկոսութեան դիմաց բացուած դաշտը ընդարձակ է եւ ունի համազգային տարողութիւն: Դաշտին հողը ծարաւ է մեր հոգեւոր գանձերուն, քրիստոնէական եւ ազգային վեհ արժէքներուն, եւ համախմբուելու ուժին: Այս բոլորը միայն խոնարհ ծառայութեամբ է, որ կրնաք տանիլ մեր սիրելի ժողովուրդին: Աստուծոյ պատկերն ու նմանութիւնը ձեր վրայ, Քրիստոսի հանդէպ հաւատքը ձեր սրտին մէջ, Ս. Հոգիին շնորհքը ձեր ներսիդին, Կիլիկիոյ Կաթողիկոսութեան դիմագիծով, Դպրեվանքեան ոգիով, Քրիստոնէական եւ ազգային վեհ արժէքներով գացէք անշահախնդիր կերպով ծառայելու մեր ազգին՝ ինքնավստահ, հաստատ եւ խոնարհութեամբ: Վարակեցէք ծառայու-

թեան սէրը մեր ժողովուրդին մէջ, որպէսզի մեր ժողովուրդը մնայ իր ամուր հիմերով, միասնական եւ բարգաւաճ:

Այնքան ատեն, որ Աստուծոյ շնորհքը, Ս. Աստուածածինի բարեխօսութիւնը, Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան ծառայական ոգին ու տեսլականը, Վեհափառ Հայրապետին նուիրական ծաղկուն եւ առաջնորդող ասան մեր ուղեկիցն ու նեցուկն են, այս կրթօճախը պիտի մնայ անդադրում ձուլարանը, որ կը պատրաստէ ապագայի հոգեւոր թէ՛ ազգային ղեկավարները, որոնք կը ծառայեն միայն ու միայն մեր հաւաքական կեանքի վեհ արժէքները վեր պահելու եւ զանոնք կենսաւորելու համար, Սփիւռքեան եւ հայրենի կեանքին մէջ:

Վեհափառ Տէր, ահաւասիկ պահը հասած է, որպէսզի Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Դպրեվանքի 93-րդ ուսումնակրթական տարեշրջանը իր եզրափակիչ կնիքը ստանայ ձեր հայրական օրհնութեամբ եւ հայրապետական պատգամով: Առ այդ կը հրաւիրենք ձեզ, որպէսզի մեր աւարտական սարկաւազներուն յանձնէք իրենց վկայականները, ինչպէս նաեւ ձեր հայրապետական պատգամը փոխանցէք բոլորիս:

ՊԱՐՈՅՐ ՎՐԴ. ՇԷՐՆԷՋԵԱՆ
ՏԵՍՈՒՉ ԴՊՐԵՎԱՆՈՒՑ



ՁԵՌՆԱԴՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԴՊՐԱՅ ԵՒ ԿԻՍԱՍԱՐԿԱԳՆԵՐՈՒ ՁԵՌՆԱԴՐՈՒԹԻՒՆ՝ ԱՆԹԻԼԻԱՍԻ ՄԱՅՐԱՎԱՆՔԻՆ ՄԷՋ

Դպիրներու եւ կիսասարկաւագներու ձեռնադրութիւնը Հայ եկեղեցւոյ առաքելութեան ծառայութեան համար նուիրական աստիճան ստանալու առաջին քայլերն են: Այս տարի 15 նոր ընծաներ կը միանան Հայ եկեղեցւոյ դպիրներու եւ կիսասարկաւագներու դասուն, օրհնութեամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Սրբազնագոյն Կաթողիկոսին: Ձեռնադրութեան արարողութիւնը տեղի ունեցաւ Կաթողիկոսարանի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր Տաճարին մէջ, յընթացս Ս. եւ Անմահ Պատարագին, ձեռամբ՝ «Կիլիկիա» Մատենադարանի, հնատիպերու ու ձեռագիրներու բաժանմունքներու Տեսուչ՝ Գերշ. Տ. Շահան Արք. Սարգիսեանի եւ խարտաւիլակութեամբ Դպրեվանքի Հսկիչ՝ Հոգշ. Տ. Ազատ Աբղ. Ֆիլիքեանի:





Արդարեւ, կիսասարկաւագ ձեռնադրուեցան Մինաս Ճանսրզեան, Յակոբ Սրապոնեան, Յովհաննէս Պալտունեան եւ Աբրահամ Պալտունեան. իսկ դպիր՝ Յովիկ Խաչիկեան, Հրաչ Պէրպէրեան, Պետրոս Պետրոսեան, Քրիստափոր Գալէշեան, Ժան Օբչաօղլեան, Համբիկ Գալրպճեան, Յակոբ Դանիէլեան, Յակոբ Պուճիքեան, Արմէն Չափարեան, Գրիգոր Իսկէնեան եւ Ալպէր Տիապ:

Արարողութեան աւարտին, ձեռնադրիչ Սրբազան Հայր իր պատգամը փոխանցեց՝ մեկնելով ձեռնադրութեան ընթացքին կարգացուած Մարկոսի Աւետարանէն (Մր 10.15), ուր կը նկարագրուի Յիսուսի ջերմ վերաբերմունքը մանուկներուն հանդէպ՝ եզրակացնելով. «Ով որ Աստուծոյ արխայութիւնը չ'ընդունիր մանուկի մը պէս, չի՛ կրնար հոն մտնել»:

Ապա, Սրբազան Հայրը պարզաբանեց բնաբանին բառերը. «Աստուծոյ արխայութիւնը՝ Անոր կամքն ու ներկայութիւնն է, ընդունիլ, համաձայնիլ եւ հնազանդիլ. «մանուկ»ը՝ յարաբերաբար իր ծնողքը՝ հայրն ու մայրը կը ճանչնայ որպէս տէր, պաշտպան եւ հոգատար՝ զինք սիրող: Այս նոյն սկզբունքով, մեր Աստուածը մեզի կը ներկայանայ հիմնական երեք յատկանիշերով: Ուրեմն, անհրաժեշտ է փոխակերպուիլ՝ մանկանալ, ուրախութեամբ վստահիլ Տիրոջ, Իրեն յանձնուիլ, Իր կոչին ու Իր կամքին ընդառաջ երթալ, որպէսզի արքայութեան ժառանգորդ ըլլանք:

Ձեռնադրութիւնը կը կատարուի որպէս ընդառաջում Տիրոջ հրաւերին, սակայն պէտք է գիտակցիլ մեր կեցած տեղին՝ սրբութեան, որ արքայութեան նախամուտն է, ուր կը վարժուինք հաւատքով, լրջութեամբ եւ բծախնդրութեամբ մասնակցիլ պաշտամունքին, որ ամէն հաւատացեալի նուիրական

պարտականությունն է, առաելագոյն չափով դպրեվանեցի ժառանգաւորներուն եւ ընծայարանականներուն, որոնք Տիրոջ ու Իր ժողովուրդին ծառայութեան կը պատրաստուին:

Այս առթիւ ձեռնադրիչ Սրբազան Հայրը շնորհաւորեց նորոգ ձեռնադրեալները, Դպրեվանքի տեսչութիւնն ու ուսուցչական կազմը՝ յաջողութիւն մաղթելով Տիրոջ անդաստանին հաւատաւոր նոր մշակներու պատրաստութեան աշխատանքին մէջ:

Ձեռնադրութեան արարողութենէն ետք, Ս. Սեղանին սպասարկութիւնը կատարեցին նորընծայ դպիրներն ու կիսասարկաւագները:

ՍԱՐԿԱՒԱԳԱՑ ԶԵՌՆԱԴՐՈՒԹԻՒՆ

Օրհնութեամբ եւ նախագահութեամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Վեհափառ Հայրապետին, Կիրակի, 21 Մայիս 2023-ին, Անթիլիասի Մայրավանքի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր Տաճարին մէջ սարկաւագական ձեռնադրութիւն տեղի ունեցաւ յընթացքս Ս. եւ Անմահ Պատարագին՝ ձեռամբ Յունաստանի Հայոց Թեմի Առաջնորդ՝ Գերշ. Տ. Գեղամ Արք. Խաչերեանի եւ խարտաւիլակութեամբ Դպրեվանքի Հսկիչ՝ Հոգշ. Տ. Աւետիք Վրդ. Տէր Կարապետեանի:

Սարկաւագական կարգ ստացան Դպրեվանքի Բ. Ընծայարանի աշակերտներ՝ Վարդան Կիս.Սրկ. Ասայեան, Վահէ Կիս.Սրկ. Ֆիլիքեան, Հրակ Կիս.Սրկ. Թաշճեան եւ Դրօ Կիս.Սրկ. Կիւլէսէրեան:



Ընծայեալները, խարտաւիլակ Հայր Սուրբին առաջնորդութեամբ, ծնրադիր բարձրացան Ս. Խորան, ուր անոնց անբիծ կեանքին մասին վկայութիւններ տրուելէ ետք, հրապարակաւ հրաժարեցան աշխարհէն ու աշխարհիկէն եւ ուխտեցին նուիրուիլ Հայ եկեղեցւոյ եւ Ս. Սեղանի ծառայութեան: Ապա, ձեռնադրիչ Սրբազան Հայրը անոնց ուսերուն վրայ դրաւ Քրիստոսի լուծը խորհրդանշող Ս. ուրարները եւ ոգեշունչ աղօթքներով անոնց տուաւ Ս. Աւետարան ընթերցելու, սկիհի վերաբերում կատարելու ու բուրվառով Աստուծոյ անուշ բոյրը խնկելու իշխանութիւնը:

Ձեռնադրութենէն ետք, Սրբազան Հայրը յաւուր պատշաճի փոխանցեց օրուան պատգամը: Անոր քարոզին առանցքը Ս. Հոգին՝ Մխիթարիչը, ղրկելու մասին Քրիստոսի տուած խոստումն էր առաքեալներուն, քաղուած Յովհաննու Աւետարանէն. «Բայց Մխիթարիչը՝ Ս. Հոգին, որ Հայրս ձեզի պիտի ղրկէ իմ անունովս, Անիկա ձեզի ամէն ինչ պիտի սորվեցնէ եւ յիշեցնէ ինչ որ ես ձեզի ըսի» (Յճ 14.26): Խօսելով Ս. Հոգւոյ դերակատարութեան մասին՝ Սրբազան Հայրը յիշեցուց երկրաւոր առաքելութեան վերջին հանգրուանի ընթացքին Քրիստոսի խոստումները, թէ Մխիթարիչը պիտի գայ եւ մխիթարէ, առաջնորդէ, քաջալերէ ու ներշնչէ...: Ապա համապարփակ բացատրութիւն տուաւ Ս. Երրորդութեան՝ Հօր, Որդիին եւ Ս. Հոգիին, սակայն մէկ Աստուածութեան ու մէկ բնութեան նկատմամբ մեր ունեցած հաւատքին մասին: Սրբազան Հայրը անդրադարձաւ Ս. խորհուրդներուն՝ մկրտութեան, դրոշմի, պսակի ընդմէջէն Ս. Հոգիին դերակատարութեան: Ձեռնադրութիւնը եւս, այս պարագային սարկաւազականը, կը ներառուի եկեղեցւոյ սրբազան խորհուրդներու շարքին: Յիշեալ բոլոր խորհուրդները, Ս. Հոգիին առաջնորդութեամբ ու զօրութեամբ կ'օգնեն մեզի, որպէսզի մեր հաւատքի կեանքը ապրինք, զարգացնենք ու ուճացնենք, ըսաւ ան:

Ապա, խօսքը ուղղելով նորընծայ սարկաւազներուն՝ ըսաւ, որ այսօր դուք կոշուեցաք դպրութենէ սարկաւազութեան: Մինչեւ օրս դուք՝ իբրեւ դպիրներ, ունէիք եկեղեցական պարզ ու խոնարհ պատասխանատուութիւն, սակայն այս պահէն սկսեալ ձեր պատասխանատուութիւնը եղաւ ենթակայական, այսինքն ձեր սպասաւորութիւնը այլեւս ենթականերուն է, անոնց հոգիներուն է՝ սակայն ո՛չ ուղղակիօրէն, այլ օգնականի՝ սարկաւազի հանգամանքով: Սրբազան Հայրը երեք յորդորդներ փոխանցեց նորընծայ սարկաւազներուն եւ թելադրեց, որ իրենց մտապաստառին վրայ մնայուն կերպով դրոշմուին անոնք.-

ա) Դուք Քրիստոսի ձեռքէն ստացաք ձեր ուսին վրայ դրուած Ս. ուրարը. ամէն անգամ, երբ զայն կրէք ձեր ուսերուն վրայ, թող այն վերյիշեցման առիթ ըլլայ ձեզի այս իրողութեան:

բ) Ուրարը Քրիստոսի ծառայութեան քաղցր լուծին խորհրդանիշն է. այսօր դուք կը ստանաք զայն ձեր ձախ ուսերուն վրայ, որովհետեւ ձախ ուսը տկար կողմ է, եւ սարկաւագութիւնը՝ իբրեւ Հայ եկեղեցւոյ երեք կարգերուն անդրանիկն ու խոնարհը, դուք՝ իբրեւ օգնականներ, զայն կը կրէք ձեր ծառայական առաքելութեան սկզբնաւորութեան, որպէսզի յետագային, աւելի բարձր պատասխանատուութեամբ, այն դառնայ քահանայական փորուրար եւ ապա եկեղեցւոյ բարձրագոյն աստիճանի պատասխանատուութեան ստանձնումով՝ եպիսկոպոսական եմիփորոն:

գ) Դուք դարձաք սարկաւագները Հայ եկեղեցւոյ, Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Դպրեվանքին: Ձեր ծառայութիւնը Կիլիկեան մեր Ս. Աթոռին նկարագիրը պէտք է ունենայ: Յետ այսու ձեր ծառայութեամբ է, որ մարդիկ պիտի ճանչնան ձեր պատկանելիութիւնը եւ գիտնան, որ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Միաբանութենէն ու Դպրեվանքէն ստացած ծառայական ոգի ունիք:

Քարոզի աւարտին, ձեռնադրիչ Գեղամ Արք. շնորհաւորեց Դպրեվանքի տեսչութիւնն ու ուսուցչական կազմը եւ նորընծայ սարկաւագներուն ծնողներն ու պարագաները եւ աղօթք բարձրացուց առ ամենաբարին Աստուած, որ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութիւնը պահէ հաստատուն, Դպրեվանքը՝ զօրեղ եւ Կիլիկեան Ուխտեալ Միաբանութիւնը՝ բարգաւաճ:

Ս. Պատարագէն ետք, նոր ընծայեալ սարկաւագները, ձեռնադրիչ Սրբազան Հօր գլխաւորութեամբ եւ շաբաթ մը առաջ դպրութեան ու կիսասարկաւագութեան ձեռնադրութիւն ստացած Դպրեվանքի աշակերտները, բարձրացան Վեհարան, ուր Վեհափառ Հայրապետը իր Հայրապետական ու հայրական օրհնութիւնն ու շնորհաւորանքը փոխանցեց անոնց:



ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ

ԿԱԹՈՂԻԿՈՍԱՐԱՆԻ ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ԿԵԴՐՈՆԻ ՎԿԱՅԱԿԱՆԱՑ ԲԱՇԽՈՒՄ

Չորեքշաբթի, 24 Մայիս 2023-ի երեկոյեան ժամը 5:00-ին, Անթիլիասի Մայրավանքի Վեհարանի դահլիճին մէջ, նախագահութեամբ Ս. Աթոռոյս Գ-հակալ՝ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոսի եւ ներկայութեամբ Կեդրոնի տնօրէնին, ուսուցչական կազմին եւ յանձնախումբին, յաջողութեամբ պսակուեցաւ Կաթողիկոսարանի Հայագիտական Կեդրոնին կրթական 2022-2023 տարեշրջանը եւ երեք տարուան ծրագիրը աւարտած 13 ուսանողներ վկայականներ ստացան՝ ձեռամբ Նորին Ս. Օծութեան:

Առաջին հերթին խօսք առաւ Կեդրոնի Տնօրէն՝ Ահարոն Շիրաշումեան: Ան նշեց, որ «Հայագիտական Կեդրոնի յաջողութեան գաղտնիքը կը գտնուի մեր բանիբուն Վեհափառ Հայրապետին կողմէ հայագիտական մարզին ընծայած կարեւորութեան եւ զայն մեր առօրեայ ապրումներէն ներս ցոլացնելու իր ճիգին ու աշխատանքին մէջ»: Տիրաշումեան շնորհակալութիւն յայտնեց Կեդրոնի յանձնախումբին՝ իր բժախնդիր եւ հետեւողական աշխատանքին համար, որուն հետեւանքով կարելի կ'ըլլայ Հայագիտական Կեդրոնը վերածել հոգեւոր, ազգային, կրթական, մշակութային արժէքներու պահպանութեան եզակի վայրի մը: Վերջապէս, ան իր խօսքը ուղղեց ուսանողներուն, որոնք պարտաճանաչօրէն հետեւեցան դասընթացքներուն՝ յաղթահարելով զանազան դժուարութիւններ եւ մաղթեց, որ անոնք շարունակեն ծառայել ազգային-հոգեւոր արժէքներուն: Աւարտին, ան իր որդիական երախտագիտութիւնը յայտնեց Վեհափառ Հայրապետին, միաբան հայրերուն, ուսուցիչներուն, Կաթողիկոսարանի նախկին եւ ներկայ դիւանապետներուն, Կեդրոնի քարտուղարութեան, ուսուցչական կազմին եւ բոլոր անոնց, որոնք իրենց ներդրումը ունեցան տարուող աշխատանքներուն մէջ:

Տնօրէնին խօսքէն ետք ուսանողներուն անունով ուղերձ կարդաց Արշալոյս Չուլճեան-էլէյճեան, որ ուրախութիւն յայտնեց Կեդրոնին մէջ երեք տարի շարունակ վաստակաշատ ուսուցիչներու կողմէ հայագիտական ուսում ստանալուն եւ վկայուելուն համար: Այս իմաստով ան եւս իր երախտագիտութիւնը յայտնեց Նորին Ս. Օծութեան, Տնօրէնին, Կեդրոնի քարտուղար՝ Մարլէն էվինկիւլեանին եւ յուզումնախառն զգացումներով յիշեց Կեդրոնի նախկին Տնօրէն՝ հանգուցեալ Ժիրայր Դանիէլեանը:

Հուսկ, Նորին Սրբութիւնը, առաջին հերթին, իր խոր գոհունակութիւնը յայտնեց՝ ի տես Կաթողիկոսարանի Հայագիտական Կեդրոնի այս տարեշրջա-

նի հունձքին, որ կու գայ մեր ազգային գործունէութեան դաշտ առաքելու 13 վկայեալ ուսանողներ: Ընդգծելով հայագիտական ուսմանց յոյժ կարեւորութիւնը, յատկապէս մերօրեայ կեանքի պայմաններու լոյսին տակ՝ ան շեշտեց Կաթողիկոսարանի այս Կեդրոնը ծաւալելու եւ ամէն ջանք ի գործ դնելու ու զայն պահպանելու մեր Ս. Աթոռին հաստատակամութիւնը: Ան ըսաւ, որ Սփիւռքի մէջ հազուագիւտ կարելի է գտնել նման կեդրոններ. ուստի, մենք ջանք պիտի շինայենք Կաթողիկոսարանի Հայագիտական այս Կեդրոնը աւելի հզօրացնելու եւ անոր գործունէութիւնը աւելի ընդլայնելու, որովհետեւ մեր ազգը կայ ու կը գոյատեւէ պահելով ու սերունդէ սերունդ փոխանցելով մեր լեզուն, մշակոյթը, հարուստ պատմութիւնը, մեր բազմադարեան գրականութիւնը եւ եկեղեցական ու ազգային արժէքները:

Իր խօսքի աւարտին, Նորին Սրբութիւնը բարձր գնահատեց այս սրբազան առաքելութեան լծուած Կեդրոնի Տնօրէնը, ուսուցչական կազմն ու յանձնախումբը: Ան յիշեցուց անոնց ստանձնած պատասխանատուութեան լրջութիւնը եւ վստահեցուց, որ ինք անձնապէս եւ Կաթողիկոսարանի բոլոր մարմիններն ու կառույցները պատրաստ են սատարելու Կեդրոնի ծաղկման բոլոր աշխատանքներուն: Վերջապէս, ան իր Հայրական ու Հայրապետական Օրհնութիւնն ու շնորհաւորանքը փոխանցեց 13 աւարտական աշակերտներուն եւ յորդորեց, որ Կեդրոնէն առած իրենց ուսումն ու գիտելիքները ի գործ դնեն մեր ազգային արժէքներու ու իտէալներու տարածման աշխատանքին մէջ:

Ապա տեղի ունեցաւ վկայականաց բաշխումը: Յայտնենք, որ այս տարուան հունձքը կը բաղկանար հետեւեալ ուսանողներէն.- Անի Չամբերթեան-Տէտէյեան, Արշալոյս Չուճեան-Էլէյճեան, Արփի-Թալին Կոնճեան, Իշխուն Մկրտիչեան-Մահտէսեան, Թալին Քէօզկէրեան, Լենա Ստեփան-Մարգարեան, Լիզա Բանճարճեան-Թէլվիզեան, Խաժակ Պոյաճեան, Մարալ Խաչատուրեան-Իշխանեան, Մարինա Քէլէշեան-Հանտեան, Մարօ Գազանճեան-Թագեան, Մէյրի-Ռիթա Մինասեան եւ Պէթի Ինճէյեան-Պալապանեան:



ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ

ՍՐԲԱԶԱՆ ՀԱՄԵՐԳ՝ 20ՆՈՒԱԾ Ս. ՆԵՐՍԷՍ ՇՆՈՐՀԱԼԻ ՀԱՅՐԱԳՊԵՏԻ ՎԱԽՃԱՆՄԱՆ 850-ԱՄԵԱԿԻՆ

«Ներկայ տարին Ս. Ներսէս Շնորհալի Հայրապետի վախճանման 850-ամեակն է: Իր հարուստ իրագործումներով եւ հոգեմտաւոր մեծ վաստակով Ս. Ներսէս Շնորհալի եղած է Հայ եկեղեցւոյ մեծագոյն ու բազմաշնորհ հայրապետներէն մէկը: Իր եզակի արժանիքներով, Շնորհալին առանցքային ներկայութիւն դարձած է յատկապէս մեր եկեղեցւոյ ծիսական, աստուածաբանական, դաւանաբանական, միջ-եկեղեցական ու երաժշտական մարզերէն, եւ ընդհանրապէս հայ մշակոյթի անդաստանէն ներս»: Այս հաստատումով կը սկսի Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոսի Հայրապետական Սրբատառ Կոնդակը, որ ընթերցուեցաւ Գերշ. Տ. Կոմիտաս Արք. Օհանեանի կողմէ, Հինգշաբթի, 25 Մայիս 2023-ին, Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր Տաճարին մէջ, Կաթողիկոսարանի «Շնորհալի» երգչախումբի մեծանուն սուրբին ձօնած սրբազան համերգին սկիզբը:





Արդարեւ, բարձր տնօրինութեամբ Արամ Ա. Կաթողիկոսին, Կաթողիկոսարանիս մէջ կը նշուի Ս. Ներսէս Շնորհալի Հայրապետի յօբելինականը երկու հիմնական ձեռնարկներով, որոնց առաջինը Կաթողիկոսարանի «Շնորհալի» երգչախումբին կատարողութեամբ այս սրբազան համերգն է: Ի դէպ, երգչախումբը իր անուանումը ստացած է Շնորհալի Հայրապետի 800 ամեակին առիթով՝ Երջանկայիշատակ Տ.Տ. Խորէն Ա. Կաթողիկոսի կողմէ:

Շարունակելով կոնդակը, Նորին Սրբութիւնը կը յայտնէ, որ «հոգեմտաւոր հսկայ հարստութիւն մը ժառանգած է մեր եկեղեցին Ս. Ներսէս Շնորհալիէն. անկրկնելի ժառանգ մը, որ իր կարեւորութիւնը, իւրայատկութիւնն ու թարմութիւնը կը շարունակէ պահել մինչեւ մեր օրերը: Ան եղած է մեր պատմութեան այն բացառիկ հոգեւորականներէն մէկը, որ իր սրբակենցաղ կեանքով ու Հայ եկեղեցւոյ առաքելութեան ամբողջական նուիրումով, նոյնիսկ իր կենդանութեան, մեր ժողովուրդին կողմէ «Սուրբ» որակուած է: Բազմավաստակ Հայրապետին տրուած է «Շնորհալի» կոչումը, ո՛չ միայն իր ստեղծագործական վաստակի քանակին ու տեսակին, այլ մանաւանդ որակին համար»: Կոնդակին մէջ կը նշուի նաեւ սուրբին ներդրումը մեր եկեղեցւոյ ծիսակատարութեան հարստութեան, արդիականացումին եւ ժողովրդականացումին, եկեղեցւոյ բաժանման հիմնական պատճառ դարձած Քրիստոսաբանական հարցերու պարզաբանումին, նախարարական տոհմերու հակամարտութիւններու լուծման եւ յոյն, լատին ու ասորի եկեղեցիներուն եւ Հայ եկեղեցւոյ միջեւ յարաբերութիւններու ծաւալման մէջ: Մեծի Տանն Կիլիկոյ Կաթողիկոսութիւնը միջ-եկեղեցական եւ միջ-կրօնական յարաբերութեանց մէջ շատ բան կը պարտի Շնորհալի Հայրապետի թողած կտակին:

Քառաձայն երգչախումբին ղեկավարն էր՝ Հոգշ. Տ. Զաւէն Վրդ. Նաճարեան՝ ընկերակցութեամբ դաշնակահար Համբիկ Մարտիրոսեանի, տուտուկահար Գէորգ Քէշիշեանի եւ ջութակէ ու թաւջութակէ բաղկացած նուագախումբի:

Հայրապետական թափօրին մուտքէն ետք, համերգը ընթացք առաւ «Տէրունական Աղօթք»ով, որմէ ետք բացման խօսքով հանդէս եկաւ Գերպ. Տ. Ստեփանոս Մ. Վրդ. Փաշայեան, որ լուսարձակի տակ առաւ սուրբին վաստակը: Ան ըսաւ, որ Շնորհալի Հայրապետին դերակատարութիւնը անգնահատելի է յատկապէս մեր եկեղեցւոյ եկեղեցական երաժշտութեան բնագաւառէն ներս: Ան հեղինակած է բազմաթիւ շարականներ, տաղեր ու մեղեդիներ, որոնք կը վկայեն Ս. Ներսէսի ստեղծագործական միտքի յորդառատութիւնն ու ճկունութիւնը: Խօսելով սուրբին անունը կրող երգչախումբին մասին՝ Հայր Ստեփանոս դիտել տուաւ, որ «Շնորհալի» երգչախումբը տարիներ շարունակ ծաղկեցուցած ու պանծացուցած է Հայ երգը, մանաւանդ՝ Հայ Հոգեւոր երգը, մասնակից դառնալով Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան առաքելութեան իրականացման: Ս. Պատարագի երգեցողութեան կողքին, երգչախումբը նաեւ հանդէս կու գայ ազգային ու ժողովրդական երգերով՝ հայկական ու տեղական բեմերէն: Վերջապէս, Հայր Սուրբը իր խօսքին մէջ ընդգծեց Վեհափառ Հայրապետին հոգատարութիւնը՝ երգչախումբին առաքելութեան ծաւալման աշխատանքներուն մէջ:

«Շնորհալի» երգչախումբին երգացանկը պարունակեց «Նոր Ծաղիկ»՝ մենակատարութեամբ Շողիկ Թորոսեանի եւ տուտուկի ընկերակցութեամբ Գ. Քէշիշեանի, «Ո՛վ է Որպէս»՝ մենակատարութեամբ Ղազար Քէօշկէրեանի եւ շուրի ընկերակցութեամբ Գ. Քէշիշեանի, «Իմաստութիւն», «Զօն», «Այսօր Աննա», «Քահանայ» եւ «Ի Վերին Երուսաղէմ», փունջ մը շարականներ՝ «Յիշեսցով», «Անբաժանելի», «Առաւօտ Լուսոյ», «Առաքելոյ Աղանոյ», «Որ Պատուեալ Զօրութեամբ», «Արեգակն Արդար», ինչպէս նաեւ՝ «Գովեա Երուսաղէմ», «Նայեաց Սիրով», «Նորաստեղծեալ», «Օրհնեալ է Աստուած», «Որ Զխորհուրդ», «Ամէն Հայր Սուրբ», «Ի քէն Հայցմենք» եւ «Ետուր Ըմպել», որոնք գրուած ու մշակուած են մեծ սուրբին կողմէ: Նշենք, որ մէջ ընդ մէջ Կաթողիկոսարանի «Նարեկացի» մանկապատանեկան երգչախումբի փոքրիկներէն երեք անդամներ «Հաւատով Խոստովանիմ»էն հատուածներ արտասանեցին:

Զեռնարկը իր աւարտին հասաւ Նորին Ս. Օծութեան «Պահպանիչ» աղօթքով:

ԻԻՐԱՅԱՏՈՒԿ ԴԱՍԱԽՕՍՈՒԹԻՒՆ՝ «ԹԱԳԱԴՐՄԱՆ ԾԷՍԸ ԿԻԼԻԿԵԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԷՋ»

Հովանավորութեամբ եւ Օրհնութեամբ Ս. Աթոռոյս Գահակալ՝ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Վեհափառ Հայրապետին եւ կազմակերպութեամբ «Կիլիկիա» Մատենադարանին, Երեքշաբթի, 30 Մայիս 2023-ի երեկոյեան ժամը 6:30-ին, Կաթողիկոսարանիս «Կիլիկիա» սրահին մէջ տեղի ունեցաւ իր բնոյթին մէջ իւրայատուկ դասախօսութիւն մը՝ «Թագադրման Ծէսը Կիլիկեան Հայաստանի Մէջ» վերնագիրով, զոր ներկայացուց Մաշտոցեան Մատենադարանի եւ Ազգ. Ակադեմիայի Պատմութեան ինստիտուտի գիտաշխատող՝ Փրոֆ. Վահէ Թորոսեան: Դասախօսութեան իրենց մասնակցութիւնը բերին Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Միաբան Հայրերը, Դպրեվանքի ընծայարանական սաները եւ յիշեալ նիւթով հետաքրքրուած անձեր:

Բացման խօսքով հանդէս եկաւ «Կիլիկիա» Մատենադարանի Մատենադարանապետի օգնական՝ Հոգշ. Տ. Առաքել Աբղ. Գատէհճեանը, որ անդրադառնալով դասախօսութեան իւրայատուկութեան՝ ըսաւ. «Դասախօսութիւնը իւրայատուկ կ'որակեմ, որովհետեւ այս նիւթին մասին նախապէս չէ խօսուած կամ այսքան մասնագիտական ներկայացում չէ կատարուած: Դասախօսութիւնը իւրայատուկ է նաեւ այն իմաստով, որ անոր առաջին ներկայացումը տեղի կ'ունենայ նոյնինքն Կաթողիկոսարանէն ներս, ինչ որ մեծ ուրախութիւն ու հպարտութիւն է մեր Ս. Աթոռին համար»: Ապա, Հոգշ. Հայր Սուրբը հակիրճ կենսագրականը ներկայացուց Փրոֆ. Վահէ Թորոսեանին: Դպրեվանքեցիներ երգեցին «Թագաւոր երկնաւոր» շարականը, որմէ ետք բեմ հրաւիրուեցաւ օրուան դասախօսը:

Փրոֆ. Թորոսեան իր դասախօսութիւնը ներկայացուց արհեստագիտութեան օժանդակութեամբ (Power Point) եւ իր զեկոյցը ճոխացուց նիւթին աղերսուած հայկական մանրանկարներէ զատուած հետաքրքրական նմուշներով: Ան պատմական ակնարկով մը ներկաները տեղափոխեց Հայոց Պատմութեան անցեալի թագաւորական իշխանութեան ժամանակները: Թագաւորութեան եւ թագի ստանձնումի տարբեր ձեւեր, թագադրման կարգին, ծէսին, օծման եւ յարակից խնդիրներ, պատմամատենագրական տուեալներու հիմնավորումներով ու մասնագիտական վերլուծումով, սակայն դիւրահաղորդ բացատրութիւններով, հրամցուեցան ներկաներուն: Մանրամասնօրէն խօսե-

ցաւ Սսոյ Հայր Մաշտոցին (Կիլիկիոյ Կաթողիկոսութեան ձեռագրական հարստութենէն) եւ թագադրման կանոնի սկզբնաւորութեան, թարգմանութիւնը լատինական եւ բիւզանդական աւանդութիւններէն, բնագիրները, փոփոխութիւնները, յատկապէս Կիլիկիոյ Հայկական պետութեան ժամանակաշրջանին ընթացակարգը եւ հայկականացումը:

Աւարտին, Փրոֆ. Թորոսեան սիրայօժար պատասխանեց ներկաներուն կողմէ ուղղուած հարցումներուն:

Յանուն Վեհափառ Հայրապետին եւ ներկաներուն, շնորհակալութեան եւ գնահատանքի խօսք արտասանեց Մատենադարանապետ՝ Գերշ. Տ. Շահան Արք. Սարգիսեանը՝ շեշտելով, որ Կաթողիկոսարանին կողմէ նմանօրինակ կենսական կարեւորութիւն ներկայացնող դասախօսութիւններ կազմակերպելը կը ձգտի մեր պատմութիւնը խորապէս ճանչնալ, ո՛չ միայն անցեալը հասկնալ, այլ մանաւանդ մեր ապագային հանդէպ լաւատես գիտակցութիւն ձեւակերպել:

Ուրախութեամբ կ'ուզենք յայտնել, թէ Փրոֆ. Վահէ Թորոսեան սոյն նիւթը ամբողջական աշխատասիրութեամբ ծրագրած է մօտիկ ապագային հատորով մը ի լոյս ընծայել:



Հ.Ե.Հ.Ո.Մ.

Հ.Ե.Հ.Ո.Մ.-Ը ԻՐ ԱՌԱՔԵԼՈՒԹԵԱՆ ՄԷՋ

ԲԱՆՈՒՈՐՆԵՐՈՒ ՕՐ

Երկուշաբթի, 1 Մայիս 2023-ին, Բանուորներու օրուան առիթով, Հ.Ե.Հ.Ո.Մ.-ականները ունեցան իրենց աւանդական դաշտագնացութիւնը՝ ժուրթ էլ-Պալլութ գիւղին մէջ, ընկերակցութեամբ Հ.Ե.Հ.Ո.Մ.-ի Հոգեւոր Խորհրդատու՝ Հոգշ. Տ. Զաւէն Վրդ. Նաճարեանի: Երեկոյեան, անոնք այցելեցին «Թռչնոց Բոյն», ուր մտերմիկ հանդիպում ունեցան Տեսուչ՝ Հոգշ. Տ. Տաճատ Վրդ. Աշրգեանի ու որբանոցի անձնակազմին հետ:

ԼԻԲԱՆԱՆԻ ՆԱՀԱՏԱԿԱՑ ՕՐ

Շաբաթ, 6 Մայիս 2023-ի յետմիջօրէին, Հ.Ե.Հ.Ո.Մ.ը մասնակցեցաւ Հ.Յ.Դ. «Զաւարեան» Ուսանողական եւ Լիբանանի Երիտասարդական Միութեանց կազմակերպած Լիբանանի նահատակաց օրուան նուիրուած քայլարշաւին ու միութեան անունով ծաղկեպսակ մը զետեղեց Լիբանանի Նահատակաց յուշարձանին առջեւ:

ԴԱՍԱԽՕՍՈՒԹԻՒՆ ԴՐԱՄԱՎԱՐՈՒԹԵԱՆ ԱՐՀԵՍՏԱԳԻՏՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

Նոյն օրը, Շաբաթ, 6 Մայիս 2023-ի երեկոյեան, Հ.Ե.Հ.Ո.Մ.-ի 60-ամեակին նուիրուած ձեռնարկներուն ծիրին մէջ, անոնք հանդիպեցան նախկին Ատենապետ՝ Ռազմիկ Միքայէլեանի հետ, որ ներկայացուց դրամավարութեան արհեստագիտութեան մասին դասախօսութիւն մը:

ՀԱՅԿԱԿԱՆ ԻՆՔՆՈՒԹԵԱՆ ԱՇԱԿԵՐՏԱԿԱՆ ՈՒԽՏԵՐԹ

Հովանաւորութեամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոսին եւ կազմակերպութեամբ Հայ Եկեղեցւոյ Համալսարանական Ուսանողներու Միութեան, Շաբաթ, 13 Մայիս, 2023-ին տեղի ունեցաւ հայկական ինքնութեան աշակերտական

ուխտերի՝ մասնակցութեամբ լիբանանահայ վարժարաններու աշակերտներուն: Ուխտաւորները այցելեցին Կիլիկիոյ Կաթողիկոսարան, Պիքֆայայի Ս. Աստուածածին Վանք, Հայ Կաթողիկէ Զմմառու Վանք եւ Թուչնոց Բոյնի որբանոց, ուր աղօթք բարձրացնելով առ Աստուած, խաղաղութիւն, իմաստութիւն եւ երկնառաք օրհնութիւն հայցեցին, մանաւանդ՝ հայոց աշխարհին համար:



Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր Տաճարին մէջ բարի գալուստի խօսք արտասանեց Հ.Ն.Հ.Ո.Մ.-ի Հոգեւոր Խորհրդատու՝ Հոգշ. Տ. Զաւէն Վրդ. Նաճարեան, որմէ ետք Տէրունական աղօթքով ընթացք առաւ ուխտերի: Մայրավանքին մէջ աշակերտները այցելեցին «Կիլիկիա» Թանգարան եւ ապա մեկնեցան դէպի Պիքֆայայի Ս. Աստուածածին Վանք:

Պիքֆայայի մէջ զիրենք դիմաւորեց Դպրեվանքի հսկիչներէն՝ Հոգշ. Տ. Աւետիք Վրդ. Կարապետեանը, որ անդրադարձաւ վանքին հիմնադրութեան, պատմութեան ու գործունէութեան, ինչպէս նաեւ՝ դպրեվանեցիներու առօրեային: Ուխտաւորներուն հետ հանդիպեցաւ նաեւ Դպրեվանքի Տեսուչ՝ Հոգշ. Տ. Պարոյր Վրդ. Շէրնէզեանը եւ բարձր գնահատեց Հ.Ն.Հ.Ո.Մ.-ի նախաձեռնութիւնը:

Հուսկ, ուխտաւորները ուղղուեցան Հայ Կաթողիկէ Զմմառու Վանք ու դիմաւորուեցան Զմմառու Միաբանութեան Դպրեվանքի Տեսուչ՝ Հայր Գրիգոր Վրդ. Պատիշահի կողմէ: Ան անդրադարձաւ վանքին պատմութեան, յատկանշական պատմական հարստութիւններուն, Միաբանութեան Հիմնադիր՝ Աբրահամ Պետրոս Ա. Արծիւեան Պատրիարքի կեանքին, մատենադարանին, Թանգարանին եւ գինեգործարանի գործունէութեան: Աւարտին, մասնակիցները շրջեցան Վանքի Թանգարանն ու գինեմառանը:

Վերջապէս, աշակերտները հասան «Թռչնոց Բոյն» ու շրջեցան Հայոց Յեղասպանութեան նուիրուած «Արամ Պէգիբեան» թանգարան: Ապա, անոնք առիթ ունեցան նաեւ ժամանակ անցնելու «Թռչնոց Բոյն»-ի փոքրերուն հետ:

«ՀԱՅ ԵԿԵՂԵՑԻՆ ՈՒ ՀԱՅ ԵՐԻՏԱՍԱՐԴԸ» ԹԵՄԱՅՈՎ Բ. ՀԱՄԱԳՈՒՄԱՐԸ

Հայ Եկեղեցւոյ Համալսարանական Ուսանողներու Միութեան (Հ.Ե.Հ.Ո.Մ.) 60 ամեակի «Ապագային Նայող Ու Ապագային Գացող Հայ Համալսարանականը» խորագիրով ձեռնարկներու ծիրին մէջ, Շաբաթ, 20 Մայիս 2023-ին, օրհնութեամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոսին, Պիքֆայայի Ս. Աստուածածին Վանքին մէջ տեղի ունեցաւ ուսանողական համագումարներու շարքին երկրորդը՝ «Եկեղեցին Ու Հայ Երիտասարդը» թեմայով: Հ.Ե.Հ.Ո.Մ.ի կազմակերպութեամբ սոյն համագումարներու շարքին հովանաւորն է «Գալուստ Կիւլպէնկեան» Հիմնարկութեան Հայկական Համայնքներու Բաժանմունքը: Համագումարին ներկայ էին աւելի քան 100 համալսարանական երիտասարդներ՝ ներկայացնելով լիբանանահայ երիտասարդական ու ուսանողական կազմակերպութիւններն ու միութիւնները:



Բացման խօսքով հանդէս եկաւ Հ.Ե.Հ.Ո.Մ.ի Վարչութեան անդամ՝ Ֆիլիփ Սրկ. Ժինեան, որ լուսարձակի տակ առաւ Վեհափառ Հայրապետին յատուկ գուրգուրանքն ու քաջալերանքը երիտասարդ սերունդին, մանաւանդ երբ

հարցը կը վերաբերի լսելու անոնց մտահոգություններն ու կեցուածքները: Ժինեան ապա անդրադարձաւ Հայ եկեղեցի-երիտասարդութիւն կապին, քաջալերեց անոր առաւել ամրապնդումը եւ դիտել տուաւ այսօրուան կարիքները ու երիտասարդներուն մասնակցութեան ու դերակատարութեան անհրաժեշտութիւնը եկեղեցւոյ կեանքին մէջ: Իր խօսքի աւարտին, ան հրաւիրեց Նորին Սրբութիւնը՝ իր Հայրական պատգամը փոխանցելու եւ երիտասարդներուն հետ զրոյց ունենալու՝ «Հայ եկեղեցիմ Ու Հայ Երիտասարդը» թեմայով:



Նորին Ս. Օծութիւնը առաջին հերթին իր ուրախութիւնը յայտնեց ի տես երիտասարդներուն ներկայութեան, որ պերճախօս վկայութիւն սեպեց երիտասարդութեան եկեղեցւոյ հետ ունեցած կապին ու ընդգծեց, որ երիտասարդութիւնը հեռու չէ եկեղեցիէն, ինչպէս շատեր մեքենաբար կը յայտարարեն: Ան քաջալերեց եկեղեցի-երիտասարդ յարաբերութեան մօտենալ տարբեր հայեցողութիւններով ու յատկապէս նշեց, որ եկեղեցին ինք պէտք է մօտենայ երիտասարդութեան:

Բանախօսութեան առաջին բաժինով, Արամ Ա. Կաթողիկոս մանրամասնեց եկեղեցի հասկացողութիւնը, որ հաւատացեալներու հաւաքականութիւնն է, քան՝ շէնքը, ծէսը եւ դաւանանքը. ուստի, զուգահեռ եկեղեցւոյ եկեղեցաբանական սահմանումին, որ Քրիստոսի խորհրդանշական մարմինն է, եկեղեցին Քրիստոսի անունով քով-քովի եկած հաւատացեալներու խումբն է, ըսաւ ան: «Եկեղեցիմ իմօրհմ կ'ըլլայ, երբ կ'երթայ իր ժողովուրդիմ՝ առաքե-

լուրջ Ժողովուրդին մշակութային ինքնության հետ քրիստոնեության փոխ-յարաբերությունը, իբրև յատկանշական երևույթ, մանաւանդ ուղղափառ եկեղեցիներուն պարագային, ինչպիսին է Հայ եկեղեցին: Այս ըսելով՝ Նորին Սրբութիւնը անդրադարձաւ Հայ Ժողովուրդի կեանքի մայր էջին վրայ եկեղեցւոյ ներկայութեան ու հրաւիրեց երիտասարդները այս դիտանկիւնէն մօտենալու հարցին:



Խօսելով երիտասարդ-եկեղեցի կապին մասին, Նորին Սրբութիւնը մերժեց բացարձակ բացասական եւ յոռետեսական մօտեցումները. այնուամենայնիւ, կեանքի ներկայ պայմանները ժողովուրդը նուազ մօտ կը պահեն եկեղեցւոյ, ըսաւ ան՝ զայն վերագրելով ներկայ դարուս կենցաղին, մարդու ինքնահասկացողութեան, մտածելակերպին եւ գործելակերպին փոփոխութիւններուն: «Այսօր մաքրը շատ աւելի խոր կերպով անձամօթ դարձած է ինքնիւր նկատմամբ» նշեց ան ու շեշտը դրաւ ճարտարագիտութեան արագ փոփոխութեան հետեւանքով մարդուն՝ օրուան փոփոխութեան հետ քայլ չպահելու երևույթին:

Նորին Ս. Օծութիւնը հաստատեց, որ եկեղեցին ինք պէտք է առնէ երիտասարդութեան մօտենալու առաջին քայլը. իսկ ինչ կը վերաբերի երիտասարդին, ապա անոր մօտեցումը պէտք է իրապաշտ եւ հաւասարակըշուած ըլլայ: Խօսելով տարբեր սերունդներու յարաբերութեան մասին՝ ան ըսաւ, որ երէց սերունդը թելադրողի դերի մէջ պէտք չէ ըլլայ, իսկ երիտա-

սարգը հարկ է լսել ու սորվի երէցներուն փորձառութիւններէն եւ ունենայ իր ներդրումը:

Նիստի աւարտին մասնակիցները առիթը ունեցան Վեհափառ Հայրապետին ուղղելու իրենց հարցումները եւ բաժնելու իրենց կարծիքները, մանաւանդ արժէքներու փոփոխութեան, ընտանիք հասկացողութեան, Սփիւռքի վերակազմակերպման մէջ երիտասարդին դերակատարութեան գծով:

Համագումարի երկրորդ նիստը «Ամուսնական Կեանքն Ու Հայ Երիտասարդը» թեմայով կլոր սեղան էր՝ մասնակցութեամբ Հոգշ. Տ. Պարոյր Վրդ. Շէրնէզեանի, Գերպ. Հ. Սեպուհ Վրդ. Կարապետեանի եւ Վերապատուելի ժիրօ Դազարեանի, զրուցավար ունենալով Գերպ. Տ. Ստեփանոս Ծ. Վրդ. Փաշայեանը, որ ամփոփ կերպով ներկայացուց դասախօս հոգեւորականները: Ապա, երեք դասախօսները իրենց փորձառութիւններէն ու մասնագիտութիւններէն մեկնելով՝ աւելի հարստացուցին զրոյցը ու հարցերու պատասխան տուին: Հայր Պարոյրը անդրադարձաւ 21-րդ դարու նորածեւ ամուսնութիւններուն, Հայր Սեպուհը՝ ամուսնութիւնը իբրեւ Աստուածային եւ եկեղեցական խորհուրդ, իսկ Վերապատուելի ժիրօն՝ ամուսնական կեանքին ընդմէջէն «մեմֆ»ի գաղափարին:



Կլոր սեղանի ընթացքին առաւելաբար արծարծուեցաւ ամուսնութիւնը մարդկային կեանքին ամենանուիրական եւ ամենակարեւոր հանգրուաններէն մէկը ըլլալու պարագան, որովհետեւ կեանքի ընթացքին յեղաշրջում մըն է որ տեղի կ'ունենայ: Երկու անհատներ իրար կապուելով՝ կը սկսին իրարու հետ ապրիլ. ալ անձնական ոչ մէկ բան կը մնայ իրենց միջեւ, «եա»ն ու

«դուն»ը կը դառնան «մենք», որ սահմանուած է ամբողջ կեանքի տեւողութեան շարունակուելու: Հայ եկեղեցին ամուսնութիւնը դիտած է որպէս խորհուրդ, որովհետեւ գոյատեւման պայմանականը ինքնին ամուսնութիւնն ու որդեծնութիւնն է: Պսակին նպատակն ու իմաստը սուրբ ու խորիմաստ է: Քննարկումներու նիւթ դարձաւ նաեւ սէրը եւ շեշտուեցաւ, որ ան պարզապէս ֆիզիքական յարաբերութիւնը չէ ամուսնացեալ զոյգին միջեւ եւ ոչ ալ ամուսնական կեանքին նպատակը, այլ հոգեկան այն ամուր կապն ու զգացումն է, որ զոյգը անբակտելիօրէն իրար կը միացնէ ու որդեծնութեամբ զայն կը յաւերժացնէ:



Համագումարի վերջին բաժինով, Քրիստին Դանիէլեան-Սարգիսեան եւ Մարիա Եագուպեան-Քէշիշեան խօսեցան եկեղեցւոյ կեանքին մէջ ընկերային ծառայութեան կարեւորութեան մասին: Անոնք յայտնեցին, որ ընկերային ծառայութիւնը եկեղեցւոյ առաքելութեան անբաժան ու անբաժանելի մասն է: Անոր հիմնական նպատակն է ընկերութեան կեանքին մէջ բարօրութիւն ստեղծել: Ինչ կը վերաբերի ընկերային ծառայողին, ապա ան իր գիտութեամբ եւ մարզումով կը ձգտի հասկնալ իրեն դիմողներուն զգացական, ընկերային, ֆիզիքական եւ նիւթական կարիքները: Հակիրճ ներկայացումէն ետք, տեղի ունեցաւ աշխատանոց (workshop) մը: Երիտասարդները բաժնուեցան հինգ խումբերու, որոնցմէ իւրաքանչիւրը ընտրեց ընտանեկան/ընկերային հարց մը եւ աշխատանոցի ճամբով լուծումներ ու առաջարկներ ներկայացուց:

Համագումարը իր աւարտին հասաւ մասնակից երիտասարդներուն Պիք-Ֆայայի Ս. Աստուածածին Վանքի համանուն մատրան մէջ երեկոյեան ժամերգութեան մասնակցութեամբ:

Յայտնենք, որ այս առիթով երիտասարդներուն բաժնուեցաւ Վեհափառ Հայրապետին անգլերէն լեզուով հեղինակած «The Armenian Church» գիրքէն: Նորին Սրբութիւնը այս գիրքը գրած է երիտասարդներուն մատչելի ոճով, որուն մէջ ան կը ներկայացնէ Հայ եկեղեցւոյ պատմութիւնը, առաքելութիւնը, կառուցը, գործելաոճը, նուիրապետութիւնը, եւայլն...:

ԵՐԳԻ ՄՐՑՈՒՄ Հ.Ե.Հ.Ո.Մ.-Ի 60 ԱՄԵԱԿԻ ԱՌԹԻԻ

Օրհնութեամբ եւ ներկայութեամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոսին եւ կազմակերպութեամբ Հ.Ե.Հ.Ո.Մ.-ին, Շաբաթ, 27 Մայիս 2023-ի առաւօտուն, «Կիլիկիա» թանգարանի սրահին մէջ տեղի ունեցաւ Հ.Ե.Հ.Ո.Մ.-ի 60 ամեակին առիթով նախաձեռնուած երգի մրցումին վերջին հանգրուանը՝ «Երգը՝ Արուեստ եւ Ինքնութիւն» խորագիրով: Դատական կազմի անդամներն էին՝ Տիար Կարօ Աւէսեան, Տիկ. Շողիկ Թորոսեան եւ Տիկ. Պէթի Սալխանեանը:

Բացման խօսքով հանդէս եկաւ Հ.Ե.Հ.Ո.Մ.-ի վարչութեան անդամներէն՝ Բրշ. Պօղոս Սրկ. Տօնիկեանը, իսկ փակման խօսքը արտասանեց Հոգեւոր Խորհրդատու՝ Հոգշ. Տ. Զաւէն Վրդ. Նաճարեան:



Տեղի ունեցաւ նաեւ գեղարուեստական կոկիկ յայտագիր. Զուլթակահար՝ Ծաւի Թորիկեան նուագեց «Կռունկ»-ը, իսկ Հ.Ե.Հ.Ո.Մ.-ական դաշնահակար՝ Ներսէս Զուլճեան նուագեց «Վաղարշապատ»-ը:

Մրցոյթին առաջին երեք դիրքերը գրաւեցին՝ Արամ Տէր Պետրոսեան, Կարէն Գազանճեան, Ղազար Քէօշկէրեան եւ Կայէլ Ապուսէֆեան:

ԼՈՒՐԵՐ ԿԱԹՈՂԻԿՈՍԱՐԱՆԷՆ

**ԳԱՆԱՏԱՅԻ ՆՈՐԱՆՆԱԿ ԴԵՍՊԱՆԸ
ԱՅՑԵԼԵՑ ՎԵՅԱՓՈՒ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ**

Ուրբաթ, 5 Մայիս 2023-ին, Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոս ընդունեց այցելությունը Լիբանանի մօտ Գանատայի նորանշանակ Դեսպան՝ Սթեֆանի Մըքքալըմին: Հանդիպման ներկայ էին Ազգ. Կեդր. Վարչության Քաղաքական Ժողովի համա-ատենապետ՝ Գրիգոր Մահերեճեանն ու Դեսպանին քաղաքական հարցերու խորհրդականը:

Նկատի ունենալով, որ Դեսպանին առաջին այցելությունն էր Մայրավանք՝ Վեհափառ Հայրապետը ընդհանուր գիծերով ներկայացուց Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսության կառոյցներն ու առաքելությունը: Ապա, Նորին Սրբությունը կեդրոնացաւ Լիբանանի ու Գանատայի Հայ համայնքներու ներքին դրուածքին ու գործունէութեան վրայ: Բնականաբար, հանդիպման ընթացքին անդրադարձ կատարուեցաւ նաեւ Լիբանանի դիմագրաւած մարտահրաւերներուն:

Դեսպան Մըքքալըմ իր կարգին գնահատեց Հայ համայնքին գործօն մասնակցությունը Լիբանանի քաղաքական կեանքին եւ դրուատիքով արտայայտուեցաւ Գանատայի հայութեան մասին՝ շեշտելով անոր ունեցած դրական ներդրումը բազմակրօն, բազմամշակոյթ ու բազմացեղ գանատական ընկերութեան:

**ՆՈՐԻՆ Ս. ՕՏՈՒԹԻՒՆԸ ԸՆԴՈՒՆԵՑ
ՊԱՊԱԿԱՆ ՆՈՒՐԱԿԸ**

Շաբաթ, 6 Մայիս 2023-ին, Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Վեհափառ Հայրապետը ընդունեց Լիբանանի մօտ Պապական Նուիրակ՝ Փաուլօ Պորճիա Եպիսկոպոսը:

Վեհափառ Հայրապետին եւ Պապական Նուիրակին միջեւ խորհրդակցությունները առաւելաբար կեդրոնացան Լիբանանի ներքին կացութեան եւ մասնաւորաբար նախագահական ընտրութեան վրայ: Այս ծիրէն ներս եղան տեղեկություններու ու տեսակետներու փոխանակում՝ կարեւորութեամբ շեշտելով շուտափոյթ նախագահական ընտրություն կատարելու հրամայականը:

Յայտնենք, որ Պապական Նուիրակը Ն.Ա. Ֆրանսիս Պապին կողմէ նամակ մը յանձնեց Նորին Սրբութեան:

**ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹԻՒՆԸ ԸՆԴՈՒՆԵՑ
ՎԱՏԻԿԱՆԻ ՄՕՏ ԼԻԲԱՆԱՆԻ ԴԵՍՊԱՆԸ**

Կիրակի, 7 Մայիս 2023-ին, Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Վեհափառ Հայրապետը Մայրավանքի գրասենեակին մէջ ընդունեց Վատիկանի մօտ Լիբանանի Հանրապետութեան Դեսպան՝ Դոկտ. Ֆարիտ Ալ-Խազէնը:

Հանդիպման ընթացքին քննարկումի նիւթ դարձան Լիբանան-Վատիկան յարաբերությունները, Լիբանանի ներկայ տագնապալի իրավիճակն

ու նախագահական ընտրության հետ առնչուած հարցեր:

**ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԸ ԸՆԴՈՒՆԵՑ
ԲԵՐԻՈՅ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ ԱՌԱՋՆՈՐԴ՝
ԳԵՐԸ. Տ. ՄԱԿԱՐ ԵՊՍ. ԱՇԳԱՐԵԱՆԸ**

Երկուշաբթի, 8 Մայիս 2023-ին, Արամ Ա. Կաթողիկոս Մայրավանքի գրասենեակին մէջ ընդունեց Բերիոյ Հայոց Թեմի Առաջնորդ՝ Գերշ. Տ. Մակար Եպս. Աշգարեանը: Առաջնորդ Սրբազան Հայրը Վեհափառ Հայրապետին զեկուցեց Թեմին կատարած աշխատանքները, յատկապէս՝ երկրաշարժին պատճառով ստեղծուած դժուար պայմաններուն մէջ:

Նորին Ս. Օծուփինը գոհունակութեամբ հաստատեց, որ Առաջնորդ Սրբազան Հօր գլխաւորութեամբ, Ազգ. Իշխանութիւնը եւ քոյր կազմակերպութիւններու մարմինները հետեւողական ու նուիրեալ աշխատանք կը կատարեն՝ օգտակար հանդիսանալու մեր ժողովուրդի կարիքներուն: Արամ Ա. Կաթողիկոս միաժամանակ յիշեցուց, որ յատուկ կարեւորութիւն անհրաժեշտ է տալ Քէսապի, Լաթաքիոյ, Ճէզիրէի եւ այլ շրջաններու մեր ժողովուրդի կարիքներուն՝ միշտ նկատի ունենալով առաջնահերթութիւնները:

Այս առիթով Վեհափառ Հայրապետը իր բարձր գնահատանքը յայտնեց երկրաշարժին յառաջացուցած վնասներուն դարմանման ծիրէն ներս Սուրիոյ հայութեան կատարուող օժանդակութիւններուն՝ թեմերու, կազմակերպութիւններու ու ազգայիններու կողմէ, եւ յիշեցուց, որ երբ մեր ազգին մէկ մասը կարիքը ունի օգնութեան, անհրաժեշտ է համազգային ճիգով օգտակար հանդիսանալ անոր:

**ՎԵՅԱՓԱՐ ՀԱՅՐԱՊԵՏԸ ԸՆԴՈՒՆԵՑ
ՈԱՅԻ ՊԱՏՐԻԱՐԹԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉԸ**

Երեքշաբթի, 16 Մայիս 2023-ի երեկոյեան, Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Վեհափառ Հայրապետը իր գրասենեակին մէջ ընդունեց Մարոնիթ եկեղեցւոյ Պետ՝ Ռայի Պատրիարքին անձնական ներկայացուցիչ՝ Փօլ Մայահ Արքեպիսկոպոսը:

Հանդիպման ընթացքին խօսակցութիւնը առաւելաբար կեդրոնացաւ Լիբանանի նախագահական ընտրութեան հարցին վրայ: Արքեպիսկոպոսը Վեհափառ Հայրապետին զեկուցեց անցնող շաբթուան ընթացքին Պքերքէին ունեցած խորհրդակցութիւնները յիշեալ հարցին գծով: Որոշուեցաւ Նորին Սրբութեան եւ Պատրիարքին միջեւ խորհրդակցութիւնները շարունակել:

**ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹԻՒՆԸ ԸՆԴՈՒՆԵՑ
ԱԶՈՒՆԻԷԻ ԱԶԳ. ԲՈՒԺԱՐԱՆԻ
ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹԻՒՆԸ**

Ուրբաթ, 19 Մայիս 2023-ին, Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Վեհափառ Հայրապետին այցելեց Ազունիէի Ազգ. Բուժարանի խնամակալութիւնը: Խնամակալութեան Ատենապետ՝ Յակոբ Լատոյեան լայն զեկոյց մը ներկայացուց Նորին Սրբութեան՝ խնամակալութեան տարած աշխատանքներուն եւ յառաջիկայ ծրագիրներուն մասին:

Նորին Ս. Օծուփինը իր բարձր գնահատանքը յայտնեց խնամակալութեան՝ ցարդ կատարուած աշխատանքներուն համար, յատկապէս ներկայ ընկերատնտեսական դժուար պայմաններուն մէջ: Վեհափառ Հայրապետը շեշտեց, որ անհրաժեշտ է

Ազգ. Բուժարանին մասին լայն եւ հետեւողական տեղեկություններ փոխանցել մեր ժողովուրդին: Ան նաեւ թելադրեց, ընթացիկ կարիքներու ընթացք տալու առընթեր, նաեւ յատուկ ծրագիրներ մշակել, որպէսզի աւելի լայն կարելիություններ ստեղծուին բուժարանի ծառայութեան:

Ներկայ տարին 100 ամեակն է բուժարանի հիմնադրութեան: Այս առիթով, խնամակալութիւնը կը ծրագրէ կարգ մը ձեռնարկներ կազմակերպել, որպէսզի կարելի ըլլայ նախ իր յարգանքը արտայայտել բոլոր անոնց, որոնք այս կարեւոր հաստատութեան ճամբով ծառայած են մեր ժողովուրդին, եւ ապա՝ ապահովել մեր ժողովուրդին նիւթական նեցուկը՝ տնտեսական դժուարություններ դիմագրաւող ազգային կարեւոր այս հաստատութեան, որպէսզի անոր ծառայութիւնը դառնայ աւելի կազմակերպ ու արդիւնաբեր:

**ՎԱՏԻԿԱՆԻ ՄՕՏ ԼԻԲԱՆԱՆԻ ԴԵՍՊԱՆԸ
ԵՒ Ա.Ս.Ն.Ի ՄՕՏ ԼԻԲԱՆԱՆԻ
ՆԱԽԿԻՆ ԴԵՍՊԱՆԸ ԱՅՑԵԼԵՑԻՆ
ՆՈՐԻՆ Ս. ՕԾՈՒԹԵԱՆ**

Չորեքշաբթի, 17 Մայիս 2023-ին, Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոս ընդունեց Վատիկանի մօտ Լիբանանի Հանրապետութեան Դեսպան՝ Դոկտ. Ֆարիտ Ալ-Խազէնը: Ապա, Նորին Ս. Օծութեան այցելեց Ամերիկայի Միացեալ Նահանգներու մօտ Լիբանանի նախկին Դեսպան՝ Դոկտ. Սիմոն Քարամը:

Յիշեալ հանդիպումներուն ընթացքին քննարկման նիւթ դարձան Լիբանանի ընկերատնտեսական կացութիւնը եւ յատկապէս նախագահական ընտրութեան հարցը:

**ՎԵՅԱՓՈՒ ՀԱՅՐԱՊԵՏԸ ԳԵՈԱԶԱՅՆԱՅԻՆ
ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹԻՒՆ ՈՒՆԵՑԱՒ
ՆՈՐԻՆԱՆ ՊԱՏՐԻԱՐԵԻՆ ԳԵՏ**

Երկուշաբթի, 29 Մայիս 2023-ին, Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Վեհափառ Հայրապետը ժընեւէն հեռաձայնային հաղորդակցութիւն մը ունեցաւ Երուսաղէմի Հայոց Պատրիարք՝ Ն.Ա.Տ. Նուրհան Արք. Մանուկեանի հետ:

Նորին Սրբութեան եւ Պատրիարքին խորհրդակցութեանց առանցքը հանդիսացաւ Երուսաղէմի Պատրիարքութեան պատկանող «Կովերու Պարտեզ»ին շուրջ վերջերս ծագած խնդիրը: Արամ Ա. Կաթողիկոս Պատրիարքին ուշադրութեան յանձնեց այս հարցին գծով մեր ժողովուրդին եւ շրջանին հետ առնչութիւն ունեցող երկիրներուն մօտ յառաջացած մտահոգութիւնը: Պատրիարքը վստահեցուց Նորին Ս. Օծութիւնը, որ «Կովերու Պարտեզ»ին շուրջ կայացած համաձայնութիւնը չեղեալ համարելու ուղղութեամբ արդէն իսկ սկսած է գործնական քայլերու դիմել:

**ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ
ՎԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԵԱՆ ՄԻԱԲԱՆՈՒԹԵԱՆ
ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԸ ՄԱՍՆԱԿՑԵՑԱՆ
Ս. ԷԶՄԻԱԾՆԻ ՄԻԱԲԱՆԱԿԱՆ
ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻՆ**

5-11 Յունիս 2023-ին, Ամենայն Հայոց Կաթողիկոսութեան կեդրոնատեղի՝ Ս. Էջմիածինի մէջ կայացաւ Կաթողիկոսութեան միաբանական համագումարը (Աբդ., Վրդ., Ծ.Վրդ.)՝ «Սուրբ Էջմիածինը Որպէս Առաքելութիւն» խորագրեալ: Ընդառաջելով Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի հրաւերին, Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոսին տնօրինութեամբ եւ օրհնութեամբ յիշեալ համագումարին

Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան ուխտեալ Միաբանութիւնը ներկայացուցին Գերպ. Ս. Ստեփանոս Ծ. Վրդ. Փաշայեանն ու Հոգշ. Տ. Յովակիմ Վրդ. Բանճարճեանը:

Համագումարի ծրագիրը կ'ընդգրկէր եկեղեցւոյ առաքելութեան այժմեական նիւթերու առնչուած դասախօսութիւններ, խմբային քննարկումներ, Տաւուշի եւ Գեղարքունեաց թեմերու հովուական այցելութիւններ, գոհուած, վիրաւորուած ու տեղահանուած արցախցի ընտանիքներու այցելութիւններ եւ մասնակցութիւն եկեղեցական հոգեպարար արարողութիւններու ու Ս. Պատարագներու:

Միաբանական այս համագումարին իր Հայրապետական օրհնութեան խօսքը փոխանցեց Գարեգին Բ. Կաթողիկոսը: Իր խօսքին մէջ ան յատկապէս ըսաւ, որ պէտք է նախանձախնդիր ըլլանք մեր խօսքին, գործին ու քայլերուն մէջ, սրբագրենք մեր թերացումները՝ միշտ պահելով հոգեւորականին վայել ու պատշաճ դիրքն ու կեցուածքը, բարի օրինակ հանդիսանալով մարդոց, հանապազ սէր եւ հոգատարութիւն դրսեւորելով մեր ժողովուրդին հանդէպ:

Ներկայ էր նաեւ եւ այս առթիւ իր խօսքը փոխանցեց Կոստանդնուպոլսոյ Հայոց Պատրիարք Ն.Ա.Տ. Սահակ Արք. Մաշալեան:

Յաջորդ նիստին, Նուիրապետական Աթոռներու ներկայացուցիչները արտասանեցին իրենց սրտի խօսքերը: Յանուն Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան խօսք առաւ Ստեփանոս Ծ. Վրդ.ը: Առաջին հերթին, ան Արամ Ա. Վեհափառ Հայրապետին եղբայրական ողջոյնները փոխանցեց Գարեգին Բ. Կաթողիկոսին եւ Հայրապետական օրհնութիւնը՝ միաբանական համագումարին: Այս առիթով, յանուն Մեծի

Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան ուխտեալ Միաբանութեան, Գերպ. Հայր Սուրբը իր գոհունակութիւնը յայտնեց եւ ըսաւ, որ նման հաւաքներ առիթ կը հանդիսանան Հայ եկեղեցւոյ սպասաւորներու, մօտէն ծանօթանալու իրար, գաղութային ու համայնքային մարտահրաւերներն ու դժուարութիւնները առաւել եւս իմանալու՝ օգտուելով մէկու միւսին փորձառութենէն եւ միասնաբար քննարկելու ու լուծումներու ուղիներ որոնելով՝ վերադառնալու մեր ծառայութեան վայրերը, ալ աւելի զօրացած ու գօտեպնդուած: Իր խօսքին մէջ ան յատկապէս շեշտեց. «Այսօր, Հայ եկեղեցւոյ հոգեւոր մշակներս կոչուած ենք առաւել եւս համախմբուելու եւ համախմբումի կոչ ուղղելու մեր ժողովուրդին եւ ամուր կենալու Արցախի մեր սիրելի ժողովուրդի ինքնորոշման իրաւունքին եւ Հայաստանի անվտանգութեան ու հողային ամբողջականութեան կողքին: Եկեղեցին միշտ եղած է Հայրենիքին հետ ու պետութեան կողքին: Որպէս Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Միաբանութիւն, այս գիտակցութենէն ու յանձնառութենէն մղուած՝ լծուած ենք մեր եկեղեցւոյ սրբազան առաքելութեան»:

**ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹԵԱՆ
ՀՈՎԱՆԱՌՐՈՒԹԵԱՄԲ
ԱՐՄԵՆՕՖԱՍ-Ի ՀԱՆԴԻՊՈՒՄ
ԺԸՆԵՒԻ ՄԷՋ**

Շաբաթ, 24 Յունիս 2023-ին, Ժընևէի մէջ, Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Վեհափառ Հայրապետին օրհնութեամբ հանդիպում մը կայացաւ ԱՐՄԵՆՕՖԱՍ-ի Ձուիցերիոյ անդամներուն միջեւ:

Հանդիպումին ներկայ էին նաեւ Ձուիցերիոյ աւետարանական եկեղեցիներու միութեան նախագահուհի՝

Դոկտ. Ռիթա Ֆամոս եւ ԱՐՄԵՆՕ-ՖԱՍ-ի ատենապետուհի՝ Փրոֆ. Թենի Փիրրի-Սիմոնեան:

Հանդիպումը առիթ հանդիսացաւ ընդհանուր արժեւորում կատարելու ԱՐՄԵՆՕՖԱՍ-ի անցնող տասնամեակներու գործունէութեան, ապա որոշուեցաւ առաջնահերթութիւններու նոր ծրագիր մը մշակել յառաջիկայ շրջանին համար: Այս ծիրին մէջ հանդիպում մը տեղի պիտի ունենայ Վեհափառ Հայրապետին եւ Դոկտ. Ֆամոսին միջեւ եւ պիտի ճշդուին յանձնախումբին նոր անդամները:

**ԱՐԱՍ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ ԸՆԴՈՒՆԵՑ
ՍՈՑԵԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ
ՀՆՉԱԿԵԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ
ԿԵՂՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ**

Երեքշաբթի, 27 Յունիս 2023-ին, Սոցեալ Դեմոկրատ Հնչակեան Կուսակցութեան (Ս.Դ.Հ.Կ.) կեդրոնական վարչութիւնը, գլխաւորութեամբ վարչութեան Ատենապետ՝ Դոկտ. Համբիկ Սարաֆեանին, հանդիպում մը ունեցաւ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Վեհափառ Հայրապետին հետ:

Հանդիպումը առիթ հանդիսացաւ անդրադարձ կատարելու Հայաստանը, Արցախը եւ ընդհանրապէս Հայ ժողովուրդը դիմագրաւող ներկայ տագնապներուն ու մարտահրաւերներուն: Յատուկ կարեւորութեամբ շեշտուեցաւ մեր ժողովուրդի ներկայ ճակատագրական հանգրուանին համազգային խորհուրդ մը կազմելու հրամայականը, որպէսզի կարելի ըլլայ համահայկական ճիգով դիմակալել Հայրենիքին ու ազգին սպառնացող վտանգները:

Նոյն օրը, Քսան Կախատաններու 108 ամեակին առիթով, Հնչակեան Կու-

սակցութեան կազմակերպած հանդիսութեան յանուն Վեհափառ Հայրապետին ներկայ գտնուեցաւ՝ Հոգշ. Տ. Յովակիմ Վրդ. Բանճարձեանը:

**ՄԻԱԲԱՆ ՀԱՅՐԵՐ ԿԸ ՄԱՍՆԱԿՑԻՆ
ԹՈՒԱՅԻՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԵԱՆ
ՅԱՏՈՒԿ ԴԱՍԱԽՕՍՈՒԹԵԱՆ**

Ուրբաթ, 30 Յունիս 2023-ի առաւօտուն, Աստուածաշունչի Ընկերութեան (Bible Society) հովանաւորութեան ներքոյ գործող Լիբանանի Մէջ Քրիստոնէայ Հրատարակիչներու Միութեան նախաձեռնութեամբ տեղի ունեցաւ թուային հրատարակութեան (Digital publishing) յատուկ դասախօսութիւն մը, որ ներկայացուցաւ երկու բաժիններով, շուրջ 4 ժամ տեւողութեամբ: Յայտնենք, որ Լիբանանի մէջ գործող 18 հրատարակչատուններէն 25 անձեր մասնակցած էին յիշեալ նախաձեռնութեան: Դասախօսութիւնը կեդրոնացած էր արուեստական բանականութեան (Artificial Intelligence) բարուք օգտագործման եւ թուային հրատարակութեան արհեստավարժ կերպով պատրաստութեան վրայ:

Օրհնութեամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոսին, յանուն Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան իրենց մասնակցութիւնը բերին Քրիստոնէական Դաստիարակութեան Բաժանմունքի Վարիչ եւ «Հասկ» Պաշտօնաթերթի Խմբագիր՝ Գերայ. Տ. Ստեփանոս Ծ. Վրդ. Փաշայեան, Միջին Արեւելքի միջ-եկեղեցական եւ միջ-կրօնական Բաժանմունքի Վարիչ՝ Հոգշ. Տ. Սարգիս Վրդ. Աբրահամեան եւ Քրիստոնէական Դաստիարակութեան Բաժանմունքի Վարիչի Օգնական՝ Հոգշ. Տ. Արմէն Աբդ. Գալաճեան:

**ՊԱՏԱՐԱԳ ԵՒ ՔԱՐՈԶ
Ս. ԱԹՈՌՈՅՍ ՄԻԱԲԱՆՆԵՐՈՒՆ ԿՈՂՄԷ**

ԿԻՐԱԿԻ, 7 ՄԱՅԻՍ 2023: ԻԹ. ՕՐ ՅԻՆԱՆՑ: ՏՕՆ ԵՐԵՒՄԱՆ Ս. ԽԱԶԻՆ:

Կաթողիկոսարանի Ս. Գրիգոր Լուսավորիչ Մայր Տաճարին մէջ պատարագեց եւ քարոզեց՝ Գերպ. Տ. Փառէն Ծ. Վրդ. Վարդանեան:

ԿԻՐԱԿԻ, 14 ՄԱՅԻՍ 2023: ԼԶ. ՕՐ ՅԻՆԱՆՑ:

Կաթողիկոսարանի Ս. Գրիգոր Լուսավորիչ Մայր Տաճարին մէջ պատարագեց՝ Գերպ. Տ. Ստեփանոս Ծ. Վրդ. Փաշայեան: Դպրաց եւ Կիսասարկաւագաց ձեռնադրուիւնը կատարեց եւ յաւուր պատշաճի քարոզեց՝ Գերշ. Տ. Շահան Արք. Սարգիսեան:

ԿԻՐԱԿԻ, 21 ՄԱՅԻՍ 2023: ԽԳ. ՕՐ ՅԻՆԱՆՑ: ԵՐԿՐՈՐԴ ԾԱՂԿԱԶԱՐԴ:

Կաթողիկոսարանի Ս. Գրիգոր Լուսավորիչ Մայր Տաճարին մէջ պատարագեց, Սարկաւագաց ձեռնադրուիւնը կատարեց եւ յաւուր պատշաճի քարոզեց՝ Գերշ. Տ. Գեղամ Արք. Խաչերեան:

ԿԻՐԱԿԻ, 28 ՄԱՅԻՍ 2023: Ծ. ՕՐ ՅԻՆԱՆՑ: ՏՕՆ ԳԱԼՍՏԵԱՆ ՀՈԳԻՈՅՆ ՍՐԲՈՑ: ՀՈԳԵԳԱԼՈՒՍՏ (ՊԵՆՏԵԿՈՍՏԷ):

Կաթողիկոսարանի Ս. Գրիգոր Լուսավորիչ Մայր Տաճարին մէջ պատարագեց եւ քարոզեց՝ Հոգշ. Տ. Առաքել Աբղ. Գատէճեան:

ԿԻՐԱԿԻ, 4 ՅՈՒՆԻՍ 2023: Ը. ՕՐ ՀՈԳԵԳԱԼՍՏԵԱՆ: ՍԿԻԶԲՆ ՅԱՐՈՒԹԵԱՆ ԿԻՒՐԱԿԷՒՑ:

Կաթողիկոսարանի Ս. Գրիգոր Լուսավորիչ Մայր Տաճարին մէջ պատարագեց եւ քարոզեց՝ Հոգշ. Տ. Աւետիք Վրդ. Տէր-Կարապետեան:

ԿԻՐԱԿԻ, 11 ՅՈՒՆԻՍ 2023: Բ. ԶԿՆԻ ՀՈԳԵԳԱԼՍՏԵԱՆ: ՏՕՆ Է ԿԱԹՈՒՂԻԿԷ ԵԿԵՂԵՑԻՈՑ ՍՐԲՈՑ ԷՋՄԻԱԾՆԻ:

Կաթողիկոսարանի Ս. Գրիգոր Լուսավորիչ Մայր Տաճարին մէջ պատարագեց եւ քարոզեց՝ Հոգշ. Տ. Ազատ Աբղ. Ֆիլիքեան:

ԿԻՐԱԿԻ, 18 ՅՈՒՆԻՍ 2023: Գ. ԶԿՆԻ ՀՈԳԵԳԱԼՍՏԵԱՆ:

Կաթողիկոսարանի Ս. Գրիգոր Լուսավորիչ Մայր Տաճարին մէջ պատարագեց եւ քարոզեց՝ Գերպ. Տ. Վաղինակ Ծ. Վրդ. Մելոյեան:

ԿԻՐԱԿԻ, 25 ՅՈՒՆԻՍ 2023: Դ. ԶԿՆԻ ՀՈԳԵԳԱԼՍՏԵԱՆ:

Կաթողիկոսարանի Ս. Գրիգոր Լուսավորիչ Մայր Տաճարին մէջ պատարագեց եւ քարոզեց՝ Հոգշ. Տ. Վիգէն Վրդ. Տալլըճեան: